ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ. Օ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԲԱՆԱՎԵՃԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՎԵՍՏ

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ
ՔՆՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՕՆԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԲԱՆԱՎԵՃԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՎԵՍՏ. ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՔՆՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

ՀՏԴ 1/14
ԳՄԴ 87
Հ 854

**Աշխատանքը նվիրվում է
Երևանի պետական համալսարանի
հիմնադրման 100-ամյակին:**

*Հրատարակության են երաշխավորել
ԵՊՀ փիլիսոփայության պատմության, տեսության և
դրամաբանության ամբիոնը,
փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
գիտական խորհուրդը:*

Գրախոսներ՝

Փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Ալեքսանդր Մանասյան
Փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սեյրան Զաքարյան
Փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հասմիկ Հովհաննիսյան
Քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գարիկ Քեռյան

Հովհաննիսյան Հովհաննես Օնիկի
Հ 854 Բանավեճի տեսություն և արվեստ. փիլիսոփայական քննախոսություն/Հ. Օ. Հովհաննիսյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2019, 286 էջ:

Աշխատանքում վերլուծվում, մեկնաբանվում են բանավեճի էությունը, դրա տեսական հիմնահարցերը և գործնական տեսանկյունները: Հետազոտվում են այդ հարցերի վերաբերյալ փիլիսոփայական ժառանգության առանցքային դրվագները, բանավեճի տրամաբանական և արտատրամաբանական՝ էթիկական, լեզվախոսքային, պերճախոսական, արարողակարգային, իմացաբանական, մեթոդաբանական առանձնահատկությունները: Վերհանվում և վերլուծվում են մտավոր պայքարի կառուցողականությունը երաշխավորող պայմաններն ու գործիքակազմը, կիրառվող մարտավարական միջոցներն ու ապակառուցողական հնարքները, վերջիններիս դիմագրավման սկզբունքները:

Նախատեսված է մտավոր հաղորդակցման, բանավեճի, փաստարկման, ճարտասանության հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների, բուհական և հետբուհական կրթական հաստատությունների սովորողների համար:

ՀՏԴ 1/14
ԳՄԴ 87

ISBN 978-5-8084-2412-8

© ԵՊՀ հրատ., 2019
© Հովհ. Հովհաննիսյան, 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 7

ԳԼՈՒԽ 1. ԲԱՆԱՎԵՃԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ 12
1.1. Բանավեճի տեսության հարցերը Հին աշխարհում 12
1.1.1. Հին Հունաստան 12
1.1.2. Հին Հնդկաստան 25
1.1.3. Հին Չինաստան 31
1.2. Բանավեճի տեսության հարցերը միջին դարերում 40
1.3. Բնավեճի տեսության հարցերը նոր և նորագույն շրջանում 50

ԳԼՈՒԽ 2. ՎԵՃ / ԲԱՆԱՎԵՃԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ 60
2.1. Ի՞նչ է վեճը: Դրա սահմանումները 60
2.2. Բանավեճ և փաստարկում 70
2.3. Վեճի տեսակները և դրանց դասակարգումը 81

ԳԼՈՒԽ 3. ԲԱՆԱՎԵՃԻ ԻՄԱՑԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐԸ 99
3.1. Մտավոր պայքարը որպես իմացության անհրաժեշտ պայման և օրինաչափություն 99
3.2. Բանավեճը գիտական գիտելիքի բնագավառում 106
3.3. «Ամեն ինչ լավ մեթոդի մեջ է...» 114
3.4. Բանավեճի մեթոդը ուսումնադաստիարակչական գործընթացում 124

ԳԼՈՒԽ 4. ԲԱՆԱՎԵՃԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ԿԱՆՈՆՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ 139
4.1. Տրամաբանականի և արտատրամաբանականի երկընտրանքը 139
4.2. Տրամաբանության ուժը 142
4.2.1. Կանոնավոր մտածողության հիմնարար սկզբունքները 142
4.2.2. Սահմանման կարևորությունն ու կանոնավորությունը 146
4.2.3. Փաստարկներին ներկայացվող պահանջներ: Օպտիմալության կանոնը 149
4.2.4. Ապացուցում և հերքում 151

4.2.5. Համատեքստային և ենթատեքստային գործոններ 160
4.3. Արտատրամաբանական գործոններ 166
4.3.1. Նախնական համաձայնության սկզբունքը 166
4.3.2. Հանդուրժողականությունն ու հարգանքը ընդդիմախոսի անձի և այլընտանքային տեսակետների նկատմամբ 169
4.3.3. Ապակենտրոնական ուղղվածություն 172
4.3.4. Կառուցողական քննադատություն 173
4.3.5. Ճիշտ լսել-հասկանալու կարևորությունը 174
4.3.6. Հարց ու պատասխանի մշակույթ 175
4.3.7. Խոսքի մշակույթ 178
4.4. Պերճախոսական հնարներ.....187
4.4.1. Կրկնություն.....188
4.4.2. Պատկերավոր խոսք 189
4.4.3. Հռետորական հարց 191
4.4.4. Աստիճանավորում 193
4.4.5. Հակադրություն.....194
4.4.6. Բումերանգ կամ հակադարձ հարված.....194
4.4.7. Հիպերբոլաներ և մեյոզիսներ 196
4.4.8. Հումորն ու սրամտությունը բանավեճի ընթացքում.....197
4.4.9. Փոխանունություն կամ մետոնոմիա.....200
4.4.10. Ելույթի կառուցման եղանակները.....202

ԳԼՈՒԽ 5. ՀՆԱՐՔՆԵՐԸ ՎԵՃԻ ԺԱՄԱՆԱԿ.....206
5.1. Հնարքների էությունը: Դրանց դասակարգումը 206
5.2. Թույլատրելի կամ «մարտավարական» հնարքներ 211
5.2.1. «Ուշացած» կամ ձգձգված պատասխան 211
5.2.2. Նախօրոք պատասխան 213
5.2.3. Զգուշավոր ճշգրտումներ.....216
5.2.4. Բանավեճ կամակոր հակառակորդի հետ.....218
5.3. Ապակառուցողական հնարքներ 220
5.3.1. Թեզիսի նենգափոխում.....220
5.3.2. Օգտապաշտական փաստարկ 224
5.3.3. Թվացյալ հերքումներ.....226
5.3.4. Սուտ կամ կիսաճշմարտություն.....228
5.3.5. Սուբյեկտիվ փաստարկ 230

5.3.6. Նախապաշարմունքների և կարծրատիպերի և շահարկում ..231
5.3.7. Փաստարկերի «բազմապատկման» հնարքը 231
5.3.8. Քողարկված փաստարկներ 233
5.3.9. Մանիպուլյացիաներ հեղինակության փաստարկների հետ ..236
5.3.10. Հոգեկան հավասարակշռությունից հանելը 238
5.3.11. «Հոգու ընթերցանություն» 240
5.3.12. «Մոդայիկ» հասկացությունների ու գնահատականների շահարկումը: «Պիտակավորում» 241
5.3.13. Հեգնանք և ծաղր 244
5.3.14. «Շողոքորթ» փաստարկներ 245
5.3.15. Ամոթի շահարկման հնարքը.....247
5.3.16. Ուշադրությունը գլխավոր դրույթից շեղելը 248
5.3.17. Սեփական «առավելությունների» շահարկումները.....249
5.3.18. Անծանոթ հասկացություններով շփոթեցնելու հնարքը 251
5.3.19. «Կանացի» փաստարկ 252
5.3.20. Ուժի փաստարկ.....253
5.4. Ապակառուցողական հնարքների դիմագրավման մեթոդաբանական սկզբունքները 255

ՎԵՐՋԱԲԱՆ 263

ՀԱՎԵԼՎԱԾ 266

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 269

РЕЗЮМЕ 278

SUMMARY.....280

ՈՒՇԱԳՐԱՎ ՄՏՔԵՐ, ԱՖՈՐԻԶՄՆԵՐ ԲԱՆԱՎԵՃԻ ՄԱՍԻՆ 282

ԱՌԱՋԱԲԱՆ

«Վեճերի մեջ ծնվում է ճշմարտությունը,
բայց դրանք կարող են նաև սպանել այն»:
Հին հունական իմաստություն

Անկախ մտավոր պատրաստվածությունից, խառնվածքից ու մասնագիտությունից՝ հանգամանքների բերումով վիճում են բոլորը: Քչերն են, սակայն, հետևում այդ ընթացքում իրենց վարքագծին, մտածում իրենց գործելակերպի, բանավիճելու եղանակի կատարելագործման, առավել արդյունավետ մեթոդների, կանոնների ու սկզբունքների յուրացման մասին: Էլ ավելի քչերն են լրջորեն խորհրդածում բանավեճի էության շուրջ:

Մարդը՝ որպես հասարակական էակ, իր ծրագրերն ու խնդիրներն իրագործելիս հաղորդակցվում է հասարակության այլ անդամների հետ: Նա իր գիտակից գործունեության մեծ մասն անցկացնում է այլոց հետ շփման և հաղորդակցման գործընթացներում: Անկախ նրանից՝ այդ գործունեությունը կրում է քաղաքական, տնտեսական, գիտական, կրթական, մշակութային, թե կենցաղային բնույթ: Ավելին, հարկ է նկատել, որ մարդու վերացական-տրամաբանական մտածողությունը, լինելով հասարակական միջավայրի ու շփումների արդյունք, իր վրա կրում է հաղորդակցության կնիքը և ներքին ձևի տեսակետից երկխոսություն է[1]: Անհատի ռեֆլեքսիան՝ ինքնավերլուծությունը, անգամ, կարելի է դիտարկել որպես յուրօրինակ ***վեճ-մենախոսություն:*** Ուստի չափազանցություն չի լինի պնդել, որ **մարդն իր գիտակից գործունեության 100%-ն է անցկացնում է հաղորդակցման ձևաչափով:**

Հետևաբար, եթե սուբյեկտի գործունեության անկապտելի մաս կազմող հաղորդակցումն արդյունավետ է, նպատակային, խնայողական, ապա շահում է նրա գործունեությունն ընդհանրապես. լինի դա մասնագիտական, հասարակական, քաղաքական, պաշտոնական,

---

[1] Տե՛ս ***Հովհաննիսյան Հ. Օ.,*** Վիճաբանության և փաստարկման փոխհարաբերության հարցի շուրջ: «Բանբեր Երևանի համալսարանի», № 3 (84), 1994 էջ 5:

թե կենցաղային: Բանավեճի հմտություններին տիրապետելը էապես կարևոր է նաև տեղեկատվության օրեցօր ավելացող հակասական հոսքում կողմնորոշելու համար: Եվ ընդհակառակը, հաղորդակցման հմտությունների պակասը, այդ ոլորտում տեղ գտած սխալներն ու թերությունները բացասաբար են անդրադառնում անհատի գործունեության արդյունավետության վրա:

Երբեմն կարող է տպավորություն ստեղծվել, թե հասարակական համակարգի արդյունավետ գործառնության համար կարևոր են սոսկ գլխավոր հաստատությունները (ինստիտուտները)՝ տնտեսությունը, քաղաքականությունը, կրթությունը, ընտանիքը, գիտությունը, կրոնը: Իսկ երկրորդական ինստիտուտների՝ ենթակառուցվածքների, ավանդույթների, սովորույթների, կառուցակարգերի դերակատարությունը սոսկ օժանդակ և ոչ առաջնային նշանակություն ունի:

Իհարկե, մարդու ուղեղը կամ սիրտը կենսաապահովման առումով ավելի կարևոր դերակատարություն ունեն, քան քիթը: Սակայն քթի վնասվածքը, վատ շնչառության պատճառ դառնալով, կարող է ազդել թոքերի աշխատանքի վրա, վերջինս էլ՝ հանգեցնել ուղեղի կաթվածի կամ սրտմկանի ինֆարկտի: Այդպես էլ հասարակական համակարգում կառուցվածքային-ֆունկցիոնալ առումով առաջին հայացքից երկրորդական թվացող բաղադրիչները վատ գործառնության արդյունքում կարող են ոչ միայն նվազեցնել գլխավոր ինստիտուտների արդյունավետությունը, այլև հանգեցնել ճգնաժամային երևույթների: Երկխոսության և բանավեճի մշակույթի կարևորությունն այդ առումով դժվար է գերագնահատել:

Լինելով շրջապատող իրականության իմացության և հաղորդակցման գործընթացներին մեծապես բնորոշ, անկապտելի օրինաչափություն՝ բանավեճերն ու քննարկումները գնալով ավելի են թափանցում հասարակական կյանքի ամենատարբեր, անգամ ավանդաբար պահպանողական համարվող բնագավառները՝ իրենց վրա գրավելով փիլիսոփաների, տրամաբանների, փաստարկման տեսության և հռետորաբանության խնդիրներով զբաղվողների, հոգեբանների, մանկավարժների, սոցիոլոգների, մեթոդաբանների ուշադրությունը:

Վիճաբանությունների յուրօրինակ «պայթյուններ» են նկատվում հատկապես հասարակության զարգացման շրջադարձային, առավելապես ժողովրդավարական վերափոխումներով հարուստ փուլերում, երբ հասարակական կարծիքն ակտիվորեն քննարկում և վերլուծում է տեղի ունեցող իրադարձությունները, փորձում իմաստավորել ու գնահատել կատարվող փոփոխությունները, բուռն վեճերով արձագանքում հնի ու նորի պայքարին, ավանդական արժեքների վերանայմանն ու նորերի արմատավորմանը:

Ազատ, սկզբունքային բանավեճերի առատությունը իմացության զարգացման, հասարակական հարաբերությունների ժողովրդավարացման կարևորագույն գրավականներից ու չափանիշներից մեկն է:

Սակայն միշտ չէ, որ վեճերն ունենում են դրական նշանակություն, նպաստում քննարկվող հարցերի լուծմանը, ճանաչողության առաջընթացին: Ոչ ճիշտ կազմակերպման ու վարման դեպքում դրանք կարող են նաև խճճել հարցերի քննարկումը, վերածվել լուրջ խոչընդոտների: Այդպիսի փաստերով հարուստ է քաղաքակրթության և համաշխարհային մտքի պատմությունը, դրանք խորթ չեն նաև ներկա իրականությանը:

Կյանքի տարբեր բնագավառներում հաղորդակցման մշակույթի բարելավման, մտապայքարի մեթոդական կիրառման հնարավորությունների զարգացման առումներով առանձնակի կարևորվում է բանավեճի գործընթացի, դրա տարբեր կողմերի ու առանձնահատկությունների համակարգված հետազոտությունը, հասարակայնորեն կուտակված փորձի ընդհանրացման հիմքի վրա այդ երևույթների իմաստավորման անհրաժեշտությունը:

Չնսեմացնելով փիլիսոփայության պատմության ընթացքում բանավեճի տեսական և գործնական հարցերի ուսումնասիրման ասպարեզում կուտակված ժառանգության դերն ու նշանակությունը՝ այնուամենայնիվ, պետք է նկատել, որ այդ բնագավառում ուսումնասիրության կարոտ խնդիրները չեն սպառվել: Մասնագետների շրջանում տարակարծությունների տեղիք են տալիս անգամ այնպիսի առանցքային հարցեր, ինչպիսիք են վեճի սահմանման, դրա տարբեր ձևերի ու եղանակների դասակարգմանն առնչվող հարցերը: Զգալի է

բանավեճի իմացաբանական, մեթոդաբանական, տրամաբանական, հոգեբանական, գեղագիտական, պերճախոսական, տեղեկատվական տեսանկյունների, կիրառվող գործիքակազմի վերլուծությանը նվիրված ուսումնասիրությունների անհրաժեշտությունը:

Ներկայացվող աշխատության մեջ փիլիսոփայական-մեթոդաբանական տեսանկյունից վերլուծվում են բանավեճի՝ տեսական և գործնական կարևորություն ունեցող մի շարք հիմնահարցեր: Հետազոտության մեջ դրանք բաժանվել են հինգ խմբի:

Խնդիրների *առաջին խումբը* կապված է փիլիսոփայության պատմության ընթացքում բանավեճի տեսության հարցերի հետազոտման բնագավառում ստեղծված տեսական ժառանգության ուսումնասիրության, կուտակված փորձի, գիտության զարգացման ներկա մակարդակի տեսանկյունից կարևոր ձեռքբերումների արժևորման և իմաստավորման հետ: Դա կարևոր է ոչ միայն տեսական գիտելիքի զարգացման հիմնական փուլերին բնորոշ յուրահատկությունների, համակարգաստեղծ միտումների բացահայտման, այլև կյանքի գործնական պահանջներից բխող և բանավեճի տեսության զարգացման արդի մակարդակով պայմանավորված՝ ներկայիս խնդիրների հետազոտման տեսանկյունից:

Երկրորդ խմբի մեջ մտնում են բանավեճի՝ որպես մտավոր հաղորդակցման առանձնահատուկ եղանակի, էության բացահայտման, դրա սահմանման, փաստարկման հետ առնչությունների, վեճի ձևերի, դրանց յուրահատկությունների ու դասակարգման տարբերակների ուսումնասիրման խնդիրները:

Երրորդ խումբը կազմում են տարակարծություն առաջ բերող հարցերի շուրջ մտքերի փոխանակության գործընթացն արդյունավետ հունով տանելու տրամաբանական հիմնարար սկզբունքների, արտատրամաբանական (հոգեբանական, էթիկական, արարողակարգային, լեզվախոսքային, պերճախոսական) գործոնների ուսումնասիրությունը և դրա հետ կապված մեթոդաբանական բնույթի հարցադրումները:

Չորրորդ խումբը վերաբերում է ճանաչողության, նոր գիտելիքի հայտնաբերման, իմացության զարգացման գործընթացում բանավե-

ճերի կարևոր տեղի ու դերի, ինչպես նաև մտավոր գործունեության, գիտության, կրթության, հասարակական կյանքի այլ ոլորտներում տարակարծություններ առաջացնող հարցերի կապակցությամբ հրապարակային քննարկումների, բանավեճերի մեթոդական կիրառման հնարավորությունների ուսումնասիրությանը:

Հինգերորդ խումբը կազմում են վեճերի ընթացքում գործածվող մարտավարական (թույլատրելի) և ապակառուցողական (անթույլատրելի) զանազան հնարքների, տրամաբանական և հոգեբանական միջոցների ուսումնասիրման, դրանց էության բացահայտման, դասակարգման, ինչպես նաև անազնիվ հնարքների դիմագրավման ու չեզոքացման մեթոդաբանական սկզբունքների հետազոտման խնդիրները:

* * *

Չբացառելով տարակարծություն առաջ բերող հարցերի շուրջ մտավոր պայքարի երևույթն արտացոլող, հայերենում կիրառական «**վեճ**», «**բանավեճ**», «**վիճաբանություն**», «**բանակռիվ**» բառերի[2] իմաստային որոշ նրբերանգներն ու համատեքստային հնարավոր տարբերությունները՝ այնուհանդերձ, տվյալ աշխատության մեջ դրանք գործածվում են որպես հոմանիշներ: Այդպիսի մոտեցման հանգամանալից հիմնավորումը տրված է սույն աշխատության երկրորդ գլխի երրորդ բաժնում:

Միաժամանակ, նկատի ունենալով «**բանավեճ**» տարբերակում *«բան»՝ իմաստ, միտք, խոսք* արմատի առաջին տեղում լինելու և դրանով իսկ ընդգծվել-շեշտադրվելու հանգամանքը, որպես կառուցողական մտապայքարի երևույթն առավել ճշգրիտ բնութագրող տարբերակ, աշխատության վերնագրում ամրագրվել, ինչպես նաև հետագա շարադրանքում առավել գործածվել է «**բանավեճ**» տարբերակը:

---

[2] Հանդիպում են նաև «լեզվակռիվ», «խոսքակռիվ» տարբերակները, որոնք սակայն կիառելի չեն հաղորդակցման կառուցողական, քիչ թե շատ ակադեմիական տարբերակների համատեքստում:

ԳԼՈՒԽ 1
ԲԱՆԱՎԵՃԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1.1. Բանավեճի տեսության հարցերը Հին աշխարհում

1.1.1. Հին Հունաստան

Բանավեճի երևույթի հետազոտման հիմքերը դրվել են դեռևս մարդկային քաղաքակրթության նախաշեմին, հին հունական, հնդկական, չինական փիլիսոփայության տարբեր համակարգերի ու ուսմունքների շրջանակներում, երբ դեռ նոր էր սկսում ձևավորվել գիտական իմացությունը մտածողության և հաղորդակցման առանձնահատկությունների մասին: Հետաքրքրությունը վիճելի հարցերի շուրջ մտքերի փոխանակության գործընթացի նկատմամբ այդպիսի վաղ շրջանում պայմանավորված էր ինչպես իմացաբանական, այնպես էլ ժամանակի հասարակական-քաղաքական իրողություններով:

Շրջապատող իրականության իմացության գործընթացը միշտ էլ աչքի է ընկել բարդությամբ ու հակասականությամբ: Ամենատարբեր փուլերում էլ դրան բնորոշ են եղել տարակարծությունները, հակադիր տեսակետների բախումն ու պայքարը, սկզբունքային քննարկումներն ու բանավեճերը: Դա բացատրվում է ինչպես օբյեկտիվ իրականության բարդությամբ ու հակասական մեկնությունների տեղիք տվող բազմազանությամբ, այնպես էլ ճանաչող սուբյեկտների անհատական տարբերություններով, երևույթների ընկալման և մտածելակերպի նրանց առանձնահատկություններով և, իհարկե, տարամիտվող շահերով:

Արտաքին աշխարհի ճանաչողության ու իմացության գործընթացում մարդն ի սկզբանե ստիպված էր հաղթահարել բազմաթիվ դժվարություններ, վեճերի ու քննարկումների ճանապարհով լուծել զանազան բարդ խնդիրներ: Իսկ ինչպե՞ս բանավիճել, ինչպե՞ս կազմակերպել ու վարել վեճերն ու քննարկումները, որպեսզի դրանք

նպաստեն, ոչ թե խոչընդոտեն մարդկային ճանաչողությանը: Այս հարցը չէր կարող անտարբեր թողնել Հին աշխարհի իմաստուններին: Նրանք, ըմբռնելով վեճերի անխուսափելի և օրինաչափ բնույթը մարդկային իմացության ու հաղորդակցման շրջանակներում, ինչպես նաև դրանց երկակի դերն ու նշանակությունը, սկսեցին հետազոտել վիճելի հարցերի շուրջ մտքերի փոխանակությանը ճանաչողական կողմնորոշում տալու, այն օգտակար ու փոխշահավետ հունով տանելու եղանակներն ու սկզբունքները: Ձեռնամուխ եղան բանավեճի գործընթացի ճիշտ և նպատակային կազմակերպման, արդյունավետ վարման ընդհանուր ու կոնկրետ հանձնարարականների, տրամաբանական, բարոյահոգեբանական օրենքների ու սկզբունքների ուսումնասիրությանը:

Բանավեճի տեսության հարցերի նկատմամբ մեծ հետաքրքրությունը Հին աշխարհում էապես պայմանավորված էր նաև **հասարակական-քաղաքական կյանքի գործնական պահանջներով**: Ժամանակի մշակութային ու քաղաքական խոշորագույն կենտրոններին բնորոշ էր հանրային ակտիվ անցուդարձը, որի անկապտելի մասն էին կազմում քաղաքական, իրավական, գիտական-փիլիսոփայական հրապարակային վիճաբանություններն ու քննարկումները: Դրանց արդյունավետ ու նպատակաուղղված վարման գործնական պահանջներն էլ հենց կարևորագույն խթան հանդիսացան մտավոր պայքարի երևույթի հետազոտման գործընթացի համար:

Պատմությունը ցույց է տալիս, որ բանավեճի տեսության հարցերի ուսումնասիրման բնագավառում ձեռքբերումներն ու հաջողություններն առավել շոշափելի են եղել, հարուստ տեսական ժառանգություն է ստեղծվել այնտեղ, որտեղ փիլիսոփայական-տեսական գիտելիքի զարգացման որոշակի մակարդակին զուգահեռ առկա են եղել նաև նպաստավոր հասարակական-քաղաքական պայմաններ, հասարակայնորեն կուտակված հարուստ փորձ և նշված խնդիրների ուսումնասիրության՝ հասարակայնորեն ձևավորված պահանջմունքներ:

Այդ տեսանկյունից աչքի է ընկնում Հին Հունաստանը, որի ներդրումը բանավեճի տեսության ձևավորման և դրա առանձին հարցերի զարգացման բնագավառում առավել քան ծանրակշիռ եղավ:

Քաղաքական տարբեր հոսանքների ու խմբակցությունների միջև թեժ պայքարը, կենսական նշանակություն ունեցող հարցերի հրապարակային քննարկումները հունական պոլիսների հասարակական-քաղաքական կյանքը մեծապես բնութագրող իրողություններ էին: Մ.թ.ա. 5-րդ դարի կեսերից հելլենական քաղաքակրթության խոշորագույն կենտրոն Աթենքը պատմության մեջ մնացել է որպես ստրկատիրական ժողովրդավարության դասական օրինակ: Այստեղ պետական և հասարակական կառավարումն իրականացվում էր երեք հիմնական ժողովրդավարական ինստիտուտների միջոցով: Բարձրագույն իշխանությունը պատկանում էր ժողովրդական ժողովին (ekklesia[3]), որը հավաքվում էր յուրաքանչյուր տասը օրը մեկ: Ժողովրդական ժողովների միջև ընկած ժամանակահատվածում ընթացիկ հարցերը քննարկվում էին քաղաքի տասը շրջանները հիսունական պատգամավորներով ներկայացնող հինգ հարյուրի ժողովում: Դատական և օրենսդիր գործունեությամբ զբաղվում էր պատմական տարբեր ժամանակահատվածներում մի քանի տասնյակից մինչև վեց հազար անդամներ ունեցող երդվյալների դատարանը (արեոպագ՝ Areios Pagos և հելիայա՝ Heliaia կամ Halia[4])[5]: Հասարակական-քաղաքական հնչեղություն ունեցող կարևորագույն խնդիրներն այդ ատյաններում լուծվում էին հակադիր տեսակետների բացահայտ պայքարի, իրավահավասար բանավեճերի ու քննարկումների ճանապարհով, որոշումներն ընդունվում էին ձայների մեծամասնությամբ:

---

[3] Հուն.՝ ἐκκλησία:

[4] Հուն.՝ Ἄρειος πάγος և Ἡλιαία:

[5] Տե՛ս ***Хропанюк В.Н.,*** Теория государства и права. М., 1993, էջ 80-81: Այդ ժամանակաշրջանում Աթենքում տիրող հասարակական-քաղաքական կարգերի, պետական կառավարման առանձնահատկությունների մասին տե՛ս նաև ***Аристотель,*** Сочинения в 4-х томах, т. 4, М., 1984, էջ 512, 523-525, 571-572; ***Доватур А.И.,*** Политика и политии Аристотеля. М.-Л., 1965, էջ 188-212:

Հունաստանի հանրային և մշակութային աշխույժ կյանքը հարուստ էր նաև գիտական, փիլիսոփայական, աշխարհայացքային, կրոնական ու բարոյագիտական բնույթի վիճաբանություններով, որտեղ հարձակողական ու պաշտպանական միակ միջոցը խոսքն էր: Իսկ այդ միջոցին տիրապետելու, այն լավագույնս գործածելու համար հարկավոր էին որոշակի տեսական ու գործնական գիտելիքներ, ճիշտ մտածելու, մտքերը կուռ և հստակ շարադրելու կարողություն, հրապարակային ելույթներ ունենալու հմտություններ, հռետորական ձիրք, սեփական տեսակետը պաշտպանելու և հակադիր տեսակետները հերքելու, պերճախոսության, խոսքի ու փաստարկման ուժով ներկաներին համոզելու վարպետություն:

Ինչպե՞ս ճիշտ մտածել, ինչպե՞ս ճիշտ շարադրել մտքերը և ինչպե՞ս դա անել տպավորիչ ու ազդեցիկ: Այս երեք հարցերը հուզում էին թե՛ աթենական պոլիտեայի և թե՛ հունական այլ պոլիսների կառավարման գործընթացներում դերակատարություն ստանձնած գործիչներին և որպես հանրային կառավարման գործնական պահանջներից բխող «պատվեր»՝ ներկայացվում ժամանակի իմաստասիրաց դասին:

Այդ երեք «ինչպե՞ս»-ներին ի պատասխան մ.թ.ա. 6-5-րդ դդ. ձևավորվեց սինթետիկ գիտելիքի մի ոլորտ՝ ***դիալեկտիկան***[6]: Վերջինս սաղմնային կերպով իր մեջ պարունակում էր երեք գիտությունների նախադրյալներ: «Ինչպե՞ս ճիշտ մտածել» հարցին ի պատասխան ձևավորվում էր տրամաբանությունը[7]: «Ինչպե՞ս ճիշտ խոսել» հարցին ի պատասխան սաղմնավորվում էր քերականությունը[8]: «Ինչպե՞ս տպավորիչ և ազդեցիկ ելույթ ունենալ լսարանի առաջ» հարցին ի պատասխան մշակվում էր ճարտասանությունը[9]:

Այսպիսով, մի կողմից արտաքին աշխարհի ճանաչողության օբյեկտիվ առանձնահատկությունները, մյուս կողմից՝ հունական

---

[6] Հուն. διαλεκτική՝ հարց ու պատասխանի միջոցով կշռադատելու և բանավեճի արվեստ:
[7] Հուն. λογική, λόγος՝ միտք, կշռադատություն, իմաստ բառից:
[8] Հուն. γραμματική, γράμμα՝ գիր բառից:
[9] Հուն. ῥητορική, ῥήτωρ՝ ճառ ասող, լատ. oris՝ բերան բառերից:

իրականությանը մեծապես բնորոշ ժողովրդավարական ավանդույթները և դրանցով պայմանավորված քաղաքական, իրավական, փիլիսոփայական, աշխարհայացքային վիճաբանությունների, հրապարակային քննարկումների արդյունավետ վարման գործնական պահանջները հանգեցրին գիտելիքի յուրահատուկ բնագավառի՝ դիալեկտիկայի ձևավորմանը, որի առարկան զրուցելու, վիճաբանություն վարելու արվեստն էր[10]:

Հին Հունաստանի իմաստունները, գործնականում լինելով բանավեճի հմուտ վարպետներ ու հռետորներ, զբաղվում էին նաև բանավեճի տեսության հարցերով, այդ երևույթի մեկնաբանությամբ, արդյունավետ հաղորդակցման կանոնների մշակմամբ, գործածվող հնարքների ուսումնասիրությամբ:

Մ.թ.ա. 5-րդ դարի նշանավոր սոփեստներից մեկը՝ Պրոտագորասը, որ հին մտածողների մեջ հայտնի էր որպես վիճաբանության հմուտ վարպետ, վեճի տեխնիկան կատարելագործելուց, դատավիճողների համար տարբեր հնարքներ մշակելուց բացի, իր ստեղծագործություններում անդրադարձել է նաև բանավեճի տեսության մի շարք հիմնախնդիրների: Այդ բնագավառում Պրոտագորասի կարևորագույն ավանդը վեճի առաջացման նրա մեկնաբանությունն է: Ինչպես վկայում է Դիոգենես Լաերտացին, «նա առաջինն ասաց, որ յուրաքանչյուր իրի մասին կա իրար հակադիր երկու կարծիք...»[11]: Պրոտագորասը սովորեցնում էր, որ ցանկացած իրի, երևույթի մասին կարելի է խոսել երկակի, հակադիր տեսանկյուններից, կարելի է ինչ-որ

---

[10] Հետազոտողները նկատում են, որ դիալեկտիկայի, որպես վիճաբանություն վարելու արվեստի, սկզբնական ըմբռնումը ոչ միայն չի հակասում, այլև որոշակի իմաստով համահունչ է դրա, որպես բնության, հասարակության և մտածողության զարգացման առանձնահատկություններն ուսումնասիրող գիտության՝ ավելի ուշ ձևավորված ըմբռնմանը: «Քանզի վիճաբանություն վարելու արվեստը, հայտնաբերելով և ապացուցելով ճշմարտություններ, ավելի ու ավելի էր հանդես գալիս որպես առարկան իր հակասական սահմանումների մեջ ըմբռնելու, այդ սահմանումներն ի մի բերելու, հակադրությունների միասնությանը հասու լինելու կարողություն, վերածվում բնության, հասարակության և մտածողության հետազոտման դիալեկտիկական եղանակի» (տե՛ս История античной диалектики. М., 1972, էջ 30):

[11] Антология мировой философии. В 4-х томах. Ред. колл. В.В. Соколов, В.Ф. Асмус, В.В. Богатов и др., т. 1, ч. 1, М., 1969, էջ 318:

բան հաստատել կամ ժխտել այդ նույնը: Ըստ նրա՝ բոլոր իրերի չափանիշը մարդն է,[12] դրույթների ճշմարտության չափանիշը սուբյեկտիվ է, ճշմարիտ է այն, ինչը տվյալ մարդուն տվյալ պահին այդպիսին է թվում[13]: Հենց դրանով էլ բացատրվում է միևնույն առարկայի մասին հակադիր կարծիքների միաժամանակյա գոյությունը: Այսպիսով, վեճի առաջացման պատճառները հույն իմաստասերն իրավացիորեն տեսնում էր ճանաչող սուբյեկտների զգայական առանձնահատկությունների և առանձին անհատների կենսափորձի միջև եղած տարբերությունների մեջ:

Հին աշխարհում վիճաբանության արվեստի ձևավորման ու զարգացման ասպարեզում զգալի է Զենոն Էլեացու (մ.թ.ա. 5-րդ դ.) ավանդը, որը շրջապատող իրականության և իմացության հակասականությունն ընդգծող իր ապորիաներով ու մտակառույցներով ոչ միայն քննարկումների ու վեճերի անսպառ նյութ առաջարկեց ժամանակակիցներին ու հետագա սերունդներին, այլև փայլուն բանավիճող լինելով հանդերձ, իր ստեղծագործություններում մեծ նշանակություն էր տալիս բանավեճի կանոնների, այդ ընթացքում գործածվող տարբեր հնարների ուսումնասիրությանն ու մշակմանը՝ առանձնակի ուշադրություն դարձնելով դիմացինին հարցեր տալու և նրա պատասխանների վերլուծության եղանակով բանավեճ վարելու սկզբունքների հետազոտությանը (մեթոդ, որը հետագայում զարգացրեց ու կատարելության հասցրեց Սոկրատեսը)[14]:

---

[12] Պրոտագորասի «Ճշմարտություն» աշխատությունը սկսվում էր հետևյալ բառերով. «Բոլոր իրերի չափանիշը մարդն է. գոյություն ունեցողների, որ դրանք գոյություն ունեն և գոյություն չունեցողների, որ դրանք գոյություն չունեն» (Антология мировой философии, т. 1, ч. 1, էջ 316: Տե՛ս նաև ***Диоген Лаэртский,*** О жизни, учениях и изречениях знаменитых философов. М. , 1986, էջ 348; ***Платон,*** Сочинения в четырех томах, т. 2, М., 1993, էջ 203):

[13] Այդ մասին վկայում է նաև Արիստոտելը «Մետաֆիզիկայի» 11-րդ գրքի 6-րդ գլխում. «... նա *(Պրոտագորասը - Հ. Հ.)* պնդում էր, որ մարդը բոլոր իրերի չափանիշն է, նկատի ունենալով միայն հետևյալը, ինչ յուրաքանչյուրին թվում է, այն էլ ճշմարիտ է» (***Аристотель.,*** Сочинения в 4-х томах, т. 1, М., 1975, էջ 281):

[14] Տե՛ս ***Diels H.,*** Die Fragmente der Vorsokratiker. Griechisch und deutsch. Hrsg. v. Kranz W. Bd.1. Berlin, 1951, էջ 247-258:

Զենոնը Պրոտագորասի հետ միասին առաջինն էր, որ նկատելով հաղորդակցման երկխոսության ձևի բացառիկ նշանակությունը բարդ հիմնահարցերի քննարկման համար, լայնորեն կիրառեց և զարգացրեց այն: Նկատի ունենալով այդ իրողությունը, Արիստոտելը Զենոնին հին մտածողների մեջ առանձնացնում էր որպես դիալեկտիկայի հայտնագործող[15]: Սկսած Զենոնից ու Պրոտագորասից, Հին աշխարհի իմաստուններն իմացության զարգացման և գիտելիքի տարածման համար լայնորեն սկսեցին կիրառել երկխոսության մեթոդը՝ իրենց և իրենց հակառակորդների մտքերը շարադրելով հարց ու պատասխանի ձևով: Հին դիալեկտիկայի ամենակարևոր առանձնահատկություններից ու ձեռքբերումներից մեկը հենց նշված մեթոդի, բանավիճելու հարցուպատասխանային եղանակի մշակումն ու զարգացումն է: Այդ բնագավառում առանձնապես մեծ է Զենոն Էլեացու, Պրոտագորասի, Սոկրատեսի, Պլատոնի, Անտիսթենեսի (կինիկյան դպրոց), Էվկլիդեսի (մեգարական դպրոց), Արիստոտելի ունեցած ներդրումը:

Վեճի տեսության շրջանակներում հին մտածողների մյուս կարևոր ներդրումն էլ մի կողմից **սոփեստական, էրիստիկական** և մյուս կողմից՝ **դիալեկտիկական** վեճերի տարբերակումն ու դրանց հակադրումն է: Սոփեստներին, որոնք դիալեկտիկան մեկնաբանում էին որպես զրուցելու և վիճելու այնպիսի արվեստ, որը հնարավորություն է տալիս ապացուցել ցանկացած դրույթ, Սոկրատեսը հակադրեց իր մեթոդը, որի նպատակը նորի իմացությունն ու ճշմարտության հայտնաբերումն է: Նա գտնում էր, որ մտքի արդյունավետ զարգացման համար անհրաժեշտ են առնվազն երկու հոգի: Ճշմարտությունը սովորաբար ծնվում է նպատակաուղղված զրույցների ու բանավեճի ժամանակ: Սոկրատեսը, վարպետորեն վարելով վեճը, աննկատելիորեն հասնում էր նրան, որ զրուցակիցը բախվում էր սեփական դատողություններում թույլ տված սխալների ու հակասությունների հետ և, «անհանգստություն» զգալով, ձեռնամուխ լինում նոր որոնումների: Նա իր մեթոդը (մանտիկա) նմանեցնում էր մանկաբարձուհու արհես-

[15] Տե՛ս ***Диоген Лаэртский,*** О жизни, учениях и изречениях знаменитых философов, էջ 322; 340:

տին: Ինչպես վերջինս օգնում է երեխայի ծնվելուն, այնպես էլ ինքը հմուտ վիճաբանության ու հարցազրույցի միջոցով նպաստում էր զրուցակցի գլխում մտքերի առաջացմանը[16]: Սոկրատեսյան երկխոսությունը սոսկ երկու տեսակետների բախում չէ, այն ավելի շուտ ճշմարտության հայտնաբերմանն ուղղված համատեղ հետազոտություն է: Իր երկխոսություններով Սոկրատեսը դրեց նաև վեճի ժամանակ հասկացությունների սահմանման ու դրույթների ճշգրիտ ձևակերպման պահանջը և մշակեց ու կատարելագործեց էվրիստիկ զրույցի, բանավեճի հարցուպատասխանային մեթոդը, որը տարբեր հարցերի հետ միասին օգնում էր լուծելու նաև հիշյալ խնդիրը: Սոկրատեսյան դիալեկտիկայի արժանիքներից մեկն էլ այն էր, որ նրա մոտ վիճող երկու կողմերն էլ ունեին սկզբունքորեն հավասար իրավունքներ ու հնարավորություններ[17]:

Հին դիալեկտիկայի զարգացման գործում մեծ է նաև հունական փիլիսոփայական մտքի ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ Պլատոնի ավանդը: Լինելով Սոկրատեսի աշակերտն ու հետևորդը՝ Պլատոնը բարձր էր գնահատում երկխոսության հարցուպատասխանային մեթոդը ոչ միայն մտավոր հաղորդակցման, փիլիսոփայական հայացքների հիմնավորված ու փաստարկված շարադրման տեսանկյունից, այլև այն համարում էր «մարդկանց համար հետազոտության առաջին և բոլոր առումներով լավագույն եղանակը»[18]: Նրա ստեղծագործությունները, որ շարադրված են երկխոսության, անկաշկանդ զրույցի ու բանավեճի սկզբունքով, վերլուծության անսպառ նյութ են վիճաբանության ու փաստարկման հարցերով զբաղվող մասնագետների համար: Դրանք հագեցած են ոչ միայն ճանաչողական, իմացաբանական կողմնորոշում ունեցող բանավեճերի, տրամաբանորեն կուռ և ամբողջական, գեղարվեստական առումով բարձրաճաշակ փաստարկման օրինակներով, այլև հարուստ են փաս-

---

[16] Տե՛ս ***Платон,*** Сочинения в четырех томах, т. 2, М., 1993, էջ 201-202:

[17] Սոկրատեսյան մեթոդի ու նրա երկխոսությունների մասին տե՛ս ***Кессиди Ф.Х.,*** Сократ. М., 1988, էջ 58-88; ***Ներսեսյանց Վ. Ս.,*** Սոկրատես: Երևան, 1989, էջ 59-84:

[18] ***Платон,*** Собр. соч., т. 4, М., 1994, էջ. 457:

տարկման և բանավեճի տեսության տարբեր հարցերի վերաբերյալ դատողություններով ու մեկնություններով:

Պլատոնի «Սոփեստ» ստեղծագործության մեջ, օրինակ, բազմաթիվ հարցերի հետ միասին զրուցակիցներն անդրադառնում են նաև վեճի էության խնդրին՝ այն բնորոշելով որպես ***պայքար բառերի ու խոսքի միջոցով*** (ասել է թե՝ որպես բանակռիվ): Խոսելով պայքարի մասին՝ Թեետետոսի զրուցակից Օտարերկրացին առանձնացնում է դրա երկու տարատեսակները՝ մրցությունը և կռիվը (պայքար, մարտ): Կռվի ձևերը նա ևս բաժանում է երկու խմբի: Դրանցից առաջինին բնորոշ է մարմնի պայքարը մարմնի դեմ, իսկ երկրորդում բառերը հանդես են գալիս ընդդեմ բառերի: Կռվի այս երկրորդ տարբերակն էլ հենց վեճն է[19]: Վեճերի բազմությունը, սակայն, նույնպես միատարր չէ: Օտարերկրացին որոշակիորեն տարբերում է նաև վեճի ձևերը: Եթե խոսքերի միջոցով պայքարը «տեղի է ունենում հրապարակայնորեն, և երկար ճառերը հանդես են գալիս երկար ճառերի դեմ, ընդ որում՝ արդարության և անարդարության հարցերի շուրջ, ապա դա դատական վեճ է»: Եթե այն «վերաբերում է մասնավոր զրույցներին և տրոհվում է հարցերի ու պատասխանների», ապա դա հակաճառություն է: Նշվում է նաև, որ կախված նպատակից, վեճի ձևեր են բանակռիվը, դատարկախոսությունը, սոփեստությունը (շահույթի, դրամի նպատակով վարվող վեճը) և այլն[20]:

Պլատոնի երկերում հաճախ են հանդիպում նաև փաստարկման և վիճաբանության տրամաբանական, հոգեբանական, բարոյագիտական կողմերն արտացոլող հասկացությունների, խնդիրների, վեճի կանոնների ու արարողակարգի քննարկումներ, այդ հարցերի շուրջ զրույցներ ու մտորումներ, որոնք չեն կորցրել իրենց գործնական արժեքը նաև մեր ժամանակներում և հետաքրքրություն են ներկայացնում բանավեճի ժամանակակից տեսության զարգացման տարբեր տեսանկյուններից:

Հին աշխարհում դիալեկտիկայի զարգացման ամենակարևոր փուլը, թերևս, կապված է Արիստոտելի անվան հետ: Իր ուսումնասի-

---

[19] ***Платон,*** Собрание сочинений в четырех томах, т. 2, М., 1993, էջ 286:
[20] Տե՛ս նույնը, էջ 286-287:

թություններում նա հենվում էր նախորդների հարուստ ժառանգության, ինչպես նաև հունական պոլիսներում ծաղկող հռետորական արվեստի ձեռքբերումների վրա: Արիստոտելը ժամանակի առումով կարևոր խնդիր էր համարում վիճաբանության վարման օրենքների ու կանոնների մշակումը: Նրա «Անալիտիկաներ» («Վերլուծականք»), «Կատեգորիաներ» («Ստորոգություններ»), «Հռետորություն» աշխատություններում հաճախակի են մտքերն ու քննական դատողությունները հաղորդակցման, զրույցի և բանավեճի տարբեր հիմնահարցերի վերաբերյալ: Իսկ «Տոպիկան» հիմնականում նվիրված է հենց այդ հարցերի արծարծմանը: Այստեղ Արիստոտելը, ուսումնասիրելով հավանական գիտելիքի դերը գիտության մեջ և ճշմարիտ գիտելիքի ստացման հնարավորությունը, մեկնաբանում է դիալեկտիկայի իր ըմբռնումը, նշելով դրա տարբերությունն ապոդիկտիկայից[21] ու էրիստիկայից, բացահայտում է դիալեկտիկական զրույց-բանավեճում փաստարկման հիմնական ձևերն ու սկզբունքները, վերլուծում հարցեր առաջադրողի և դրանց պատասխանողի դերերը վեճի ժամանակ, դիտարկում հարցադրման կանոններն ու եղանակները, նկարագրում բանավիճելու հիմնական ձևերը, սկզբունքներն ու կանոնները, տալիս մի շարք հանձնարարականներ, որոնք շատ կարևոր և էական են մտքերի փոխանակության, զրույցի ու վիճաբանության արդյունավետ վարման տեսանկյունից: Առանձնապես ուշագրավ է «Տոպիկայի» ութերորդ գիրքը, որը լիովին նվիրված է դիալեկտիկական բանավեճերին ու դիալեկտիկայի՝ որպես ճիշտ կշռադատելու և ճշմարտության հայտնաբերման արվեստի հարցերին[22]:

Սոկրատեսի և Պլատոնի պես Արիստոտելը ևս սկզբունքորեն տարբերակում է դիալեկտիկական բանավեճերը սոփեստական ու էրիստիկական վեճերից: Դրանք հակադրելով միմյանց՝ նա ընդգծում է, որ առաջինների համար բնորոշը ճշմարտության հայտնաբերման ձգտումն է, երկրորդի դեպքում գլխավոր նպատակը իմաստունի տպավորություն թողնելն է, երրորդի համար՝ ամեն գնով հաղթանակի հասնելը[23]: Փաստարկման և վիճաբանության սոփեստական եղա-

---

[21] Հին հուն. ἀποδεικτικός՝ ինքնին ակնհայտ, հավաստի:
[22] Տե՛ս ***Аристотель***, Сочинения в 4-х томах, т. 2, М., 1978, էջ 506-531:
[23] Նույնը, էջ 554-555:

նակի քննադատական վերլուծությանն ու դիալեկտիկականից դրա ունեցած տարբերություններին է նվիրված նաև «Տոպիկայի» երկրորդ գրքի հինգերորդ գլուխը[24]:

Զարգացնելով իր նախորդների այն միտքը, թե դիալեկտիկան կարող է որպես միջոց ծառայել հասկացությունների ու սահմանումների ճշգրտման համար, Արիստոտելը նշում է, որ բանավեճի բռնվելուց առաջ անհրաժեշտ է համաձայնության գալ օգտագործվող բառերի ու արտահայտությունների իմաստի շուրջ, որպեսզի մասնակից կողմերը միանշանակ ըմբռնեն միևնույն դրույթները: Այլապես, «եթե հայտնի չէ, թե քանի իմաստով է խոսվում ինչ-որ բանի մասին, ապա հնարավոր է, որ նա, ով պատասխանում է և նա, ով հարցնում է, նկատի ունեն ոչ միևնույն բանը: Իսկ երբ հաստակեցվել է դրույթի իմաստը ..., ապա հարցնողը ծիծաղելի վիճակում կհայտնվի, եթե փաստարկներ ներկայացնի դրույթի դեմ ոչ այն իմաստով, ինչ իմաստով գործածվել է տվյալ դրույթը»[25]: Ուշադրություն հրավիրելով մտավոր հաղորդակցման ընթացքում բազիմաստ բառերի գործածման երևույթի վրա՝ Արիստոտելը քննարկում է նաև դրանք ի շահ վիճողի և ի վնաս ընդդիմախոսի գործադրման հնարավորությունները (որն էլ հաճախ չարաշահում են սոփեստները), ընդգծում է դիալեկտիկական զրույցի ընթացքում հանդիպող բազմիմաստ ու անծանոթ բառերի հստակեցման, պարզեցման անհրաժեշտությունն ու դրա ուղիները[26]:

Բովանդակությամբ «Տոպիկային» մոտ «Սոփեստական հերքումների մասին» աշխատության մեջ, որը երբեմն դիտարկվում է որպես «Տոպիկայի» ինններորդ՝ եզրափակիչ մաս, Արիստոտելը ներկայացնում և վերլուծում է մի ամբողջ խումբ սոփեստական հնարքներ, որոնց դիմում էին հին հույները հրապարակային վեճերի ժամանակ: Նա ցույց է տալիս, որ այդ սոփեստությունների հիմքում ընկած է ձևական տրամաբանության օրենքների ու կանոնների ենթգամիտ խախտումը[27]:

---

[24] Տե՛ս նույնը, էջ 381-382:
[25] Նույնը, էջ 370:
[26] Տե՛ս նույնը, էջ 377-379:
[27] Տե՛ս նույնը, էջ 533-593:

Տրամաբանական հիմնահարցերի ուսումնասիրությանը նվիրված՝ Արիստոտելի աշխատությունները, որ հայտնի են «Օրգանոն» ընդհանուր անվանմամբ, գրված լինելով ժամանակի հունական իրականությանը բնորոշ հրապարակային վեճերի ուսումնասիրման և դրանց կապակցությամբ կոնկրետ հանձնարարականների, արդյունավետ վարման կանոնների մշակման գործնական պահանջների թելադրանքով, շրջադարձային նշանակություն ունեցան հին դիալեկտիկայի զարգացման գործում՝ այն ընդհանուր հայեցողական քննարկումների, դիտարկումների մակարդակից տեղափոխելով տրամաբանորեն կանոնավոր, կոնկրետ-առարկայական ուսումնասիրությունների բնագավառ:

Հին աշխարհում դիալեկտիկայի հարցերի մշակման գործում իր ավանդն ունի նաև ստոիկյան դպրոցը: Այդ տեսանկյունից առանձնապես արժեքավոր է դպրոցի հիմնադիր Զենոն Կիտիոնցու հետևորդների տրամաբանական ուսմունքը, որն, ըստ Դիոգենես Լաերտացու, ընդգրկում էր գիտելիքի երկու հիմնական բնագավառ՝ դիալեկտիկա և ճարտասանություն[28]: Դիալեկտիկայի տակ հասկացվում էր հարցեր առաջադրելու և ընդդիմախոսի կողմից դրանց տրված պատասխանների վերլուծության միջոցով ճիշտ բանավիճելու արվեստ: Ճարտասանությունը մտքերը լավ շարադրելու, ճիշտ խոսելու կարողությունն էր: Ստոիկներն առանձնացնում էին ճարտասանության երեք ձև՝ խորհրդակցական, դատական և գովաբանական: Ճարտասանական արվեստի հիմքում ընկած են փաստարկների ճիշտ ընտրության, մտքերի շարադրման և արտահայտման կարողությունները: Հռետորական խոսքը կամ ճառը սովորաբար բաղկացած է ներածությունից, պատումից, հակառակորդին ուղղված առարկություններից և եզրափակիչ մասից[29]: Խոսքի կարևորագույն արժանիքներն են ճշտությունը, հստակությունը, հակիրճությունը, տեղին

[28] ***Диоген Лаэртский,*** О жизни, учениях и изречениях знаменитых философов, էջ 260:
[29] Տե՛ս նույն տեղում:

(դիպուկ) և գեղեցիկ (ոչ ծամծմված, սովորականից տարբերվող) լինելը[30]:

Ստոիկյան ուսմունքի համաձայն՝ դիալեկտիկայի արվեստին տիրապետելն այնպիսի մի առաքինություն է, որն իր հերթին ենթադրում է մի շարք ուրիշ դրական գծեր ու որակներ: Օրինակ՝ անշտապողականություն (որը վեճի ընթացքում օգնում է որոշել՝ երբ պետք է համաձայնել հակառակորդի հետ, երբ՝ ոչ), շրջահայացություն (որն օգնում է չտարվել ճշմարտանման, շինծու փաստարկներով, նկատել և հերքել դրանք), լրջախոհություն, խուճապի չմատնվելու (չշփոթվելու) կարողություն և այլն: Առանց դիալեկտիկայի իմացության, անգամ իմաստունը չի կարող անթերի լինել կշռադատություններում: Դիալեկտիկան հնարավորություն է տալիս տարբերել կեղծիքն ու ճշմարտությունը, սահմանազատել կասկածելի դատողությունները համոզիչ դրույթներից: Այն օգնում է հարցերը ճիշտ դնելուն և դրանց ճիշտ պատասխանելուն: Դիալեկտիկային տիապետող մարդը կարող է ճիշտ դատել ու կշռադատել ասվածի մասին, արդյունավետ զրուցել և բանավիճել[31]:

Ստոիկները կարևոր նշանակություն էին տալիս նաև ներկայիս իմաստով զուտ տրամաբանական հիմնահարցերի հետազոտությանը: Նրանց դիալեկտիկական ուսմունքի շրջանակներում զգալի տեղ էր հատկացվում պարզ և բարդ դատողությունների, դրանց առանձնահատկությունների, մոդալականության և դատողությունների ճշմարտության երկարժեքության խնդիրների քննարկմանը, տրամաբանական շաղկապների դերի և գործառնման հարցերի, մտահանգման տարբեր ձևերի ու եղանակների ուսումնասիրությանը և այլն[32]: Տրամաբանական բազմաբնույթ հիմնահարցերի հետազոտությունն ու մշակումը ստոիկյան դպրոցի շրջանակներում ևս մի ուրույն ներդրում էր ոչ միայն մտքի ձևերն ու մտածողության առանձնահատկություններն ուսումնասիրող գիտության զարգացման, այլև մտավոր

[30] Նույնը, էջ 264-265:
[31] Նույնը, էջ 261-262:
[32] Տե՛ս նույնը, էջ 265-272:

հաղորդակցման և, մասնավորապես, բանավեճի տրամաբանական առանձնահատկությունների ուսումնասիրության բնագավառում:

1.1.2. Հին Հնդկաստան

Բանավեճի արվեստի և տեսության հարցերը խորթ չեն նաև հին հնդկական փիլիսոփայական մտքի պատմությանը: Հնդիկ մտածողները վաղուց էին նկատել մտավոր հաղորդակցման երկխոսության ձևի առավելություններն ինչպես աշխարհայացքային բարդ հարցերի քննարկման, այնպես էլ կրոնափիլիսոփայական հայացքների շարադրման ու մատուցման տեսանկյունից: Հատկանշական է, որ հնդկական փիլիսոփայական մտքի հնագույն հուշարձանները՝ Ուպանիշադները,[33] նյութի շարադրման ձևով երկխոսություն են, ճշմարտությունը հայտնաբերել ցանկացող երկուսի զրույց:

Չնայած որոշակի պահպանողականությանն ու ավանդական արժեքներին նվիրվածությանը, դեռևս վաղ շրջանում Հնդկաստանում ի հայտ եկան և ձևավորվեցին տարբեր փիլիսոփայական դպրոցներ ու հոսանքներ, որոնց միջև փոխադարձ շփումները, մրցակցությունն ու պայքարը մեծ ազդեցություն ունեցան փիլիսոփայական մտքի հետագա զարգացման վրա՝ նպաստելով տեսական հարուստ ու արժեքավոր ժառանգության ստեղծմանը:

Հնդկական փիլիսոփայական դպրոցներին բնորոշ էր յուրատեսակ փոխներթափանցվածությունը: Դրանցից ամեն մեկը կարևոր նշանակություն էր տալիս մյուսների հայացքների, առանցքային հիմնադրույթների հանգամանալից ուսումնասիրությանն ու քննական վերլուծությանը: Այդ առանձնահատկությունը հին շրջանի փիլիսո-

---

[33] Անվանումն առաջացել է սանսկրիտերեն «ուպա-նի-սադ» արտահայտությունից, որ նշանակում է «մոտ նստել», այսինքն ճշմարտությունը ճանաչելու, նվիրական գիտելիք ստանալու նպատակով ուսուցչի շուրջը նստել, այստեղից էլ հետագայում՝ «գաղտնի, նվիրական ուսմունք» մեկնաբանությունը (տե՛ս Философский энциклопедический словарь. М., 1983, էջ 704; ***Чаттопадхьяя Д.,*** История индийской философии. Пер. с англ. М., 1966, էջ 85-88: (Տե՛ս նաև Древнеиндийская философия. Начальный период. Пер. с санскрита. М., 1972, гл. IV, «Упанишады» / http://psylib.org.ua/books/brodo01/txt06.htm#1 Դիտումը՝ 16.06.2019 թ.):

փայական երկերին հաղորդում էր յուրօրինակ հանրագիտարանային բնույթ՝ հարստացնելով դրանք քննարկվող հիմնահարցերի վերաբերյալ տարբեր դպրոցներում մշակված տեսակետների ու մեկնությունների ուսումնասիրությամբ: Սեփական հայացքների շարադրանքն ու հիմնավորումն այստեղ կառուցվում էր հակամարտ ուսմունքների ու հայեցակետերի քննադատության և բացասման ճանապարհով[34]: Այդպիսի մոտեցումը հիմք հանդիսացավ վիճելի հարցերի շուրջ մտքերի փոխանակության բնագավառում այն արժեքավոր ավանդույթի ձևավորմանը, ըստ որի՝ տարակարծիք կողմերից յուրաքանչյուրը, նախքան իր հայացքների շարադրանքին անցնելը, հանգամանորեն ներկայացնում է հակառակորդի տեսակետը, վերլուծում նրա հիմնական դրույթները, քննադատում և հերքում դրանց օգտին բերված փաստարկներն ու ապացույցները, ապա միայն ձեռնամուխ լինում սեփական գաղափարների և տեսակետների զարգացմանն ու հիմնավոր շարադրանքին: Այդ սկզբունքը, որ խրախուսելի և գործածական է նաև մեր ժամանակներում, հայտնի է որպես բանավեճի հնդկական կանոն կամ եղանակ:

Հին հնդկական իրականությանը մեծապես բնորոշ էին ամենատարբեր բնույթի հրապարակային վեճերն ու վիճաբանությունները, որոնց ընթացքում հաճախ լուծվում էին անգամ անհատ մարդկանց ու առանձին խմբերի ճակատագրեր: Գաղափարական պայքարն ու վիճաբանությունները փիլիսոփայական տարբեր ուսունքների ու դրանց ներկայացուցիչների միջև ևս չէին սահմանափակվում միայն կրոնափիլիսոփայական ստեղծագործությունների շրջանակներում: Շատ դեպքերում դրանք տեղի էին ունենում դեմառդեմ, բացահայտորեն ու հրապարակավ, ստանալով հասարակական հնչեղություն՝ վեր էին ածվում կարևոր իրադարձության: Ռուս հայտնի արևելագետ-հնդկաբան Ֆ. Ի. Շչերբատսկոյը նշում է, որ «Այդպիսի վիճաբանությունները Հին Հնդկաստանի աչքի ընկնող առանձնահատկություններից էին: Դրանք սովորաբար կազմակերպվում էին մեծ ճոխությամբ, թագավորի և պալատականների ներկայությամբ, կրոնավոր-

[34] Տե՛ս ***Чаттерджи С., Датта Д.,*** Введение в индийскую философию. М., 1955, էջ 17-18; 21-22; ***Чаттопадхьяя Д.,*** История индийской философии, էջ 63:

ների ու աշխարհիկ մարդկանց բազմաքանակ լսարանի առաջ: Այդ բանավեճերից կախված էր վանքերի հետագա գոյությունն ու բարգավաճումը: Հաղթող ճանաչվածը ստանում էր թագավորի և իշխանությունների աջակցությունն իր համայնքին, հավաքագրվում էին նոր կողմնակիցներ և հիմնադրվում նոր վանքեր»[35]:

Սեփական տեսակետի հիմնավորման, հակառակորդների հարձակումներից դրա լավագույն պաշտպանության, հրապարակային վիճաբանությունների արդյունավետ վարման գործնական պահանջների թելադրանքով առաջ եկավ մտավոր պայքարի երևույթի համակողմանի ուսումնասիրության և բանավեճի արվեստի կատարելագործման անհրաժեշտություն, որը չէր կարող անտարբեր թողնել հնդիկ մտածողներին: Չնայած ժամանակագրական առումով ավելի ուշ, քան Հունաստանում, Հնդկաստանում ևս ի հայտ եկան մի շարք ստեղծագործություններ, որոնք գործնականում ուղղված էին վերոհիշյալ պահանջների բավարարմանը[36]:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նյայա փիլիսոփայական դպրոցի հիմնադիր Գոթամայի «Նյայա-սուտրա»[37] տրամաբանական տրակտատը (ենթադրաբար՝ մ.թ. սկիզբ), որը զգալի չափով նվիրված է վեճի տեսության հարցերի հետազոտմանն ու հրապարակային վիճաբանությունների վարման տարբեր եղանակների, մեթոդների նկարագրությանը: Հատկանշական է, որ նյայայի

---

[35] ***Щербатской Ф.И.,*** Избранные труды по буддизму. Пер. с англ. М., 1988, էջ 86-87:

[36] Նկատի ունենալով այն փաստը, որ համեմատաբար ուշ շրջանի հնդկական փիլիսոփայական դպրոցներում հանդիպող շատ գաղափարներ, մոտեցումներ, իմացաբանական-տրամաբանական սկզբունքներ (ինչպես, օրինակ, նյայա-վայշեշիկայում՝ ատոմիզմը, սիլլոգիզմի տեսությունը, գոյություն ունեցող ամեն ինչ որոշակի կատեգորիաների մեջ ներառելու միտումը, ունիվերսալիաների տեսությունը, վիճաբանության տեսության տարբեր հարցեր այլն) ավելի վաղ արդեն «քաղաքացիություն» էին ստացել ու զարգացել հին հունական փիլիսոփայության մեջ, որոշ հետազոտողներ առաջ են քաշում մասնագետների կողմից ոչ միանշանակորեն ընդունվող այն վարկածը, որ հնդիկ մտածողները դրանք ընդօրինակել են հին հույներից, նկատելիորեն կրելով նրանց ազդեցությունը (տե՛ս ***Чаттопадхьяя Д.,*** История индийской философии, էջ 222-223; ***Keith A. B.,*** Indian Logic and Atomism. Oxford, 1921, էջ 18):

[37] Սանսկրիտերեն nyaya՝ կշռադատության կանոն, հիմք, մեթոդ, տրամաբանական մտահանգում, տրամաբանություն՝ ընդհանրապես և sutra՝ «թել», հուշագրություն, հակիրճ իմաստալից արտահայտություն, աֆորիզմ բառերից:

համակարգում ուսումնասիրվող տասնվեց փիլիսոփայական կատեգորիաներից ութը (սանշայա, դրիշտանտա, վադա, ջալապա, վիտանդա, չխալա, ջատի, նիգրահաստհանա) անմիջականորեն վերաբերում են վիճաբանության հիմնահարցերին:

Սանշայան (կասկած) արտացոլում է անորոշության այն իրավիճակը, երբ միևնույն իրի, երևույթի վերաբերյալ առկա են տարբեր, միմյանց հակադիր տեսակետներ, որտեղից էլ առաջ է գալիս ամեն մի վիճաբանություն: Վադա, ջալապա և վիտանդա կատեգորիաներն արտացոլում են վեճի տարբեր տեսակների բնութագրերը: Վադան բանավիճելու բարձրագույն ձևն է, որն ընթանում է տրամաբանական կանոնների պահպանմամբ, փոխադարձ հարգանքի ու բարյացակամության մթնոլորտում: Հակամարտ կողմերի գլխավոր նպատակն այստեղ ճշմարտության հայտնաբերումն է: Վիտանդան վեճի ավելի ցածր ձև է՝ հակաճառություն, վեճ հանուն վեճի, որտեղ կողմերից ամեն մեկը քննադատելով և մերժելով հակառակորդի դրույթները, փոխարենը ոչինչ չի առաջարկում: Գերակշռողն այստեղ ոչ կառուցողական, ինքնանպատակ քննադատությունն է, հակառակության ոգին: Ինչ վերաբերում է ջալապային, այն վեճի առավել արատավոր ձև է, տիպիկ սոփեստական վիճաբանություն, որտեղ բացակայում է ճշմարտության հայտնաբերման ձգտումը: Վիճող կողմերի համար գլխավորն ամեն գնով հաղթանակի հասնելն է: Նրանք չեն խորշում անազնիվ հնարքներից ու միջոցներից, աղավաղում են ընդդիմախոսի դրույթները, առաջադրում կեղծ, ոչ էական փաստարկներ և այլն:

Մյուս երեք կատեգորիաները՝ դրիշտանտա, ջատի, չխալա վերաբերում են տեսակետի հիմնավորման բնագավառին: Դրիշտանտան տեսակետի հիմնավորումն է հավաստի փաստերի ու օրինակների միջոցով: Հիմնական պահանջը, որ դրվում է վերջիններիս նկատմամբ, վիճող երկու կողմերի համար էլ ընդունելի լինելն է: Ջատին անբովանդակ, շինծու փաստարկն է, խուսափողական պատասխանը կամ առարկությունը՝ ոչ ըստ էության: Իսկ չխալան հակառակորդի դրույթի սխալականության ապացուցման պատրանք ստեղծելն է՝ նրա արտահայտությունների իմաստը աղավաղելու, նենգափոխելու միջոցով: Վերջին կատեգորիան նիգրահաստհանան

(վճռական փաստարկ) է: Այն արտացոլում է կողմերից մեկի անհաջողության ու պարտության հիմքերը վիճաբանության մեջ[38]:

Այսպիսին է հին հնդկական փիլիսոփայության վեց ուղղադավան դպրոցներից մեկում ուսումնասիրված՝ հրապարակային վիճաբանությունների գործնականորեն կուտակված փորձն ընդհանրացնող և վիճաբանության գործընթացի տարբեր կողմերն արտացոլող կատեգորիաների բովանդակությունը:

Տրամաբանության և բանավեճի տեսության բազմաթիվ հիմնահարցերի վերաբերյալ նյայա փիլիսոփայական դպրոցի շրջանակներում ստեղծված տեսական ժառանգությունն ու ձևավորված ավանդույթները հետագայում մեծ ազդեցություն ունեցան բանավեճի հարցերի հետազոտությամբ զբաղվող հնդիկ մտածողների վրա, որոնք իրենց ստեղծագործություններում տարբեր առիթներով հաճախ էին անդրադառնում «Նյայա-սուտրայում» դիտարկված հիմնախնդիրներին, մշակված ու ձևակերպված հիմնադրույթներին:

Բավականին ուշագրավ են բուդդայական փիլիսոփայության մաղխայմիկա (միջին ուղի) դպրոցի հիմնադիր Նագարջունայի (մ.թ. 2-րդ դ.)՝ տիբեթական թարգմանություններով պահպանված «Հերքումը վեճի ընթացքում» և «Դիալեկտիկական քայքայումը (ցանկացած թեզիսի)» ստեղծագործությունները: Երկու տրակտատներում էլ, Ֆ. Ի. Շչերբատսկոյի վկայությամբ, ներկայացվում և հիմնավորվում է վիճաբանություն վարելու առանձնահատուկ մի մեթոդ կամ տարբերակ, որի էությունը հակառակորդի ցանկացած դրույթի նկատմամբ հարաբերականության չափանիշի կիրառումն է, և այդ եղանակով հիմքերը թուլացնելուց հետո՝ դրա հերքումը[39]: Չկա ոչինչ, որը որոշակի տեսանկյունից չունենա հարաբերական բնույթ: Ուստի, այդ նույն սկզբունքը կիրառելով, կարելի է կասկածի տակ առնել ու հերքել ամեն մի գոյություն ունեցողի իսկությունը: Նշված ստեղծագործություններից առաջինում խոսվում է նաև նյայա համակարգում ըն-

---

[38] Տե՛ս Антология мировой философии, т. 1, ч. 1, էջ 141; 144-145; ***Щербатской Ф.И.,*** Избранные труды по буддизму, էջ 80: Տե՛ս նաև ***Чаттерджи С., Датта Д.,*** Введение в индийскую философию, էջ 147-151:

[39] Ըստ՝ ***Щербатской Ф.И.,*** նշվ. աշխ., էջ 81:

դունված՝ ապացուցման չորս եղանակների մասին, իսկ երկրորդում Նագարջունան ներկայացնում և դիտարկում է Գոթամայի թվարկած տասնվեց հիմնական կատեգորիաները, դրանց նկատմամբ ևս կիրառելով քննադատության իր համընդգրկուն եղանակը[40]:

Ինչպես նկատում է ակադ. Շչերբատսկոյը, սկսած Գոթամայի և Նագարջունայի ժամանակներից, ամեն մի շատ թե քիչ ճանաչված հեղինակ հարկ էր համարում կազմել հրապարակային բանավեճերի վերաբերյալ խորհուրդներ պարունակող՝ դիալեկտիկայի սեփական ձեռնարկը[41]:

Քննարկվող հիմնահարցերի տեսանկյունից հետաքրքրական է մ.թ. 4-րդ դարի հնդիկ մտածողներ Ասանգա և Վասուբանդհու[42] եղբայրների գործունեությունը, ովքեր լինելով տրամաբանական գիտելիքի հայտնի ջատագովներ, կարևոր նշանակություն էին տալիս բանավեճի արվեստի հետազոտությանը՝ բուդդայական փիլիսոփայության շրջանակներում հանդես գալով որպես նյայա փիլիսոփայական դպրոցում ձևավորված հիմնական գաղափարների ու սկզբունքների զարգացնողներ, արժեքավոր ավանդույթների շարունակողներ[43]:

Հնդկաստանում դիալեկտիկայի զարգացման, վեճի տեսության առանցքային հարցերի հետազոտման բնագավառում մեծ է նաև բուդդայական տրամաբանության հիմնադիր Դիգանգայի (մ.թ. 5-6-րդ դդ.), նրա արժանի հետևորդ, փայլուն վիճաբանող և տեսաբան Դհարմակիրտիի (մ.թ. 7-րդ դ.) և այլոց ներդրումը[44]:

---

[40] Տե՛ս նույն տեղում:
[41] Նույնը, էջ 82:
[42] Վասուբանդհուի մասամբ պահպանված աշխատություններից մեկը կոչվում էր «Բնավեճ վարելու արվեստը» և յուրինակ շարունակությունն ու զարգացումն էր նյայա դպրոցի շրջանակներում մշակված սկզբունքների: (Ըստ ***Щербатской Ф.И.,*** նշվ. աշխ., էջ 82-83):
[43] Տե՛ս նույնը, էջ 82-83:
[44] Տե՛ս նույնը, էջ 84-90:

1.1.3. Հին Չինաստան

Փիլիսոփայական միտքը Հին Չինաստանում ևս անմասն չի մնացել բանավեճի արվեստի և տեսության հարցերի ուսումնասիրությունից: Սակայն հարկ է նկատել, որ չնայած չինական փիլիսոփայության հին պատմությանն ու հարուստ ավանդույթներին, բանվեճի տեսության, ինչպես նաև մտածողության, մտավոր հաղորդակցման ու ճանաչողության խնդիրներն այստեղ հետևողական ուսումնասիրման առարկա են դարձել միայն մ.թ.ա. 4-րդ դարի վերջերից: Առավել վաղ շրջանի մտածողներին որոշակի հանգամանքների բերումով լրջորեն չեն հետաքրքրել մտածողության և մտավոր հաղորդակցման գործընթացի առանձնահատկությունները, գիտելիքի տրամաբանական-հասկացութային կառուցվածքը: Հատկանշական է, որ այդ շրջանից մեզ հասած ստեղծագործություններին երբեմն խորթ չեն տրամաբանական անհետևողականությունն ու հակասությունները[45]:

Իմացության գործընթացի և հարակից խնդիրների հետազոտման տեսանկյունից Չինական իրականության մեջ առաջինը շահեկանորեն առանձնանում է Մո-Դիի (կամ Մո-ցզի, որ նշանակում է Մո-ուսուցիչ, մ.թ.ա. 5-4-րդ դդ.) և նրա հետևորդների ուսմունքը, որի հիմնադրույթների տրամաբանորեն ներդաշնակ շարադրանքն ամփոփված է յուրօրինակ կոլեկտիվ ստեղծագործություն հանդիսացող «Մո-ցզի» աշխատության մեջ: Առանձնապես արժեքավոր են ուշ մոիստների (մ.թ.ա. 4-3-րդ դդ.) հայացքները, որոնք հարուստ են տրամաբանական հիմնախնդիրների, ճանաչողության, մտավոր հաղորդակցման և, իհարկե, բանավեճի տեսության տարբեր հարցերի վերաբերյալ ուշագրավ գաղափարներով, մեկնություններով ու դիտարկումներով:

Ըստ մոիստների՝ վեճն առաջանում է միայն այն ժամանակ, երբ գոյություն ունի միևնույն առարկայի վերաբերյալ հայացքների տարամիտում. «[Վիճողներն] արտահայտում են իրենց դատողությունը:

---

[45] Տե՛ս ***Буров В.Г., Титаренко М.Л.,*** Философия Древнего Китая. Вступ. статья в кн.: Древнекитайская философия. Собрание текстов в 2-х томах, т. 1, М., 1972, էջ 53-54:

[Դրանք կարող են վերաբերել մի առարկայի] և լինել նույնական կամ տարբեր: Եթե դատողությունները նույնական են, [ապա չի կարող վեճ լինել]: ...Վեճը ծնվում է [նույն առարկայի վերաբերյալ] տարբեր դատողությունների առկայության դեպքում»[46]: Եվ վերջանում է նրա հաղթանակով, ով պաշտպանում է ճշմարտացի տեսակետը, ում կարծիքը համապատասխանում է իրականությանը[47]: Վիճաբանությունը կարող է անվերջանալի և անիմաստ լինել, երբ երկու դատողություններն էլ ճիշտ չեն[48]:

Մոիստները հակված էին բանավեճը դիտել իբրև ճանաչողական գործընթաց, որի նպատակը պետք է լինի ճշմարտության հայտնաբերումն ու սխալ դրույթների մերժումը: Նրանք հակադրվում էին Չժուան-Չժոուի (Չժուան-ցզի, մ.թ.ա. 4-3-րդ դդ.) այն տեսակետին, ըստ որի՝ անիմաստ է վիճաբանության ընթացքում ճշմարտությանը հետամուտ լինել, քանզի ընդհանրապես անհնար է պարզորոշ սահման անցկացնել ճշմարտության և ոչ ճշմարտության միջև[49]: Մերժելով այդպիսի մոտեցումը՝ ուշ մոիստներն ընդգծում էին, որ կշռադատողի կարևոր խնդիրն է հստակ սահմանազատել ճշմարտությունն ու սուտը[50]: Սովորաբար վիճողներից մեկի դրույթը ճշմարիտ է լինում, մյուսինը՝ կեղծ, «ում դատողությունը համապատասխանում է իրականությանը, նա էլ հաղթում է վեճի ընթացքում»[51]:

Մոիստները, գնահատելով վիճաբանության ճանաչողական հնարավորությունները, կարևոր նշանակություն էին տալիս գործնականում դրա կիրառմանն ու արդյունավետ վարման կանոնների մշակմանը, որոնք հաճախ մեթոդական հիմք էին հանդիսանում ժամանակի սոփեստներին (Հուեյ-Ցի, Գունսուն-Լուն) քննադատելու համար: Նրանք առանձնակի ուշադրություն էին դարձնում հասկացությունների, դատողությունների նմանություններին ու տարբերու-

---

[46] Древнекитайская философия. Собрание текстов в 2-х томах, т. 2, М., 1973, էջ 77:
[47] Նույնը, էջ 71:
[48] Նույնը, էջ 77:
[49] Տե՛ս նույնը, հ.1, էջ 254: Տե՛ս նաև Антология мировой философии, т. 1, ч. 1, էջ 214-215:
[50] Տե՛ս Древнекитайская философия, т. 2, էջ 94:
[51] Նույնը, էջ 77:

թյուններին, հարց ու պատասխանի (հաղորդակցման) ընթացքում դրանց ճշգրտման ու սահմանման անհրաժեշտությանը, կշռադատությունների անհակասականությանը, ինչը հետազոտողներին հիմք է տալիս նկատելու, որ մոիստներն ընդհուպ մոտեցել էին ձևական տրամաբանության համապատասխան օրենքների բացահայտմանը[52]:

Դեռևս Մո-ցզին սովորեցնում էր, որ գործածվող յուրաքանչյուր դրույթ պետք է լինի հիմնավորված, ճշմարիտ (համապատասխանի իրականությունը), ինչպես նաև՝ գործնականում կիրառելի և օգտակար[53]:

Բանվեճի տեսության հարցերի ուսումնասիրման բնագավառում ուշ մոիստների աչքի ընկնող ներդրումներից մեկն էլ մտավոր պայքարի ընթացքում կիրառվող՝ կշռադատության յոթ մեթոդների դիտարկումն է: Այդ մեթոդները՝ **հավանականություն, ենթադրություն (վարկած), ընդօրինակում, համադրություն (կամ զուգադրություն), համեմատություն, հակառակորդի կարծիքի վկայակոչում, տարածում,** ներկայացված են «Մո-ցզի» աշխատության «Փոքր ընտրություն» գլխում[54]:

Հավանականությունն այնպիսի կշռադատություն է, որի դեպքում ճշմարտությունը վերցվում է մասնակիորեն, չի ընդգրկվում ամբողջովին: Այսինքն, դատողությունը լրիվ չի հիմնավորվում: Ենթադրությունը՝ որպես կշռադատության եղանակ, կառուցվում է դեռևս չհիմնավորված փաստարկների վրա: Ընդօրինակումն այնպիսի փաստարկների առաջադրումն է, ինչպիսիք ճշմարիտ են եղել համանման իրադրություններում: Համադրության մեթոդի դեպքում տվյալ իրը բացատրվում է մեկ ուրիշ իրի նկարագրության միջոցով: Համեմատության ժամանակ առդրվում ու նմանեցվում են երկու հասկացություններ, որոնք կշռադատությունների ընթացքում սկսում են գործածվել միասին: Երբեմն սեփական տեսակետի ճշմարտացիությունն ապացուցելու և համոզիչ դարձնելու համար վկայակոչում են

[52] Տե՛ս նույնը, հ. 1, էջ 69:
[53] Նույնը, հ. 1, էջ 196:
[54] Նույնը, հ. 2, էջ 94-98:

հենց հակառակորդ կողմի դրույթները: Վիճաբանությունների ժամանակ բավականին գործածական է կշռադատության մեկ այլ՝ տարածման մեթոդը, որի հիմքում, ըստ էության, ընկած է առավել ընդհանուր դրույթներից մասնավոր դատողությունների բխեցման սկզբունքը:

Ակնհայտ են կշռադատության, սեփական տեսակետի պաշտպանության ընթացքում կիրառվող՝ վերը նշված մեթոդների նմանություններն ու ընդհանուր գծերը համանմանության, դեդուկցիայի (արտածման) և ինդուկցիայի (մակածության) մեթոդների հետ: Դրանցից ամեն մեկն ունի իր առանձնահատկությունները, արդյունավետ կիրառման իր շրջանակներն ու կանոնները, որոնց անտեսումը, ըստ չին մտածողների, կարող է հանգեցնել անցանկալի սխալի կամ խորամանկության ու կեղծիքի[55]: «Փոքր ընտրություն» գլխում ներկայացվում և վերլուծվում են թվարկված մեթոդների ոչ ճիշտ կիրառման, ինչպես նաև սխալ և սոփեստական բնույթի կշռադատությունների որոշ տարբերակներ, տիպական դեպքեր ու առանձին օրինակներ: Դրանց էության բացահայտման կապակցությամբ մոիստներն առաջարկում են (բացահայտ կամ համատեքստի միջոցով) բառերի բազմիմաստության երևույթի, կշռադատությունների ընթացքում հասկացությունների ու դատողությունների նույնության պահանջի, ընդհանուրի և մասնավորի փոխհարաբերության խնդիրների վերաբերյալ սեփական ըմբռնումներն ու մեկնությունները, կատարում արժեքավոր ընդհանրացումներ:

Չնայած ժամանակակից չափանիշներով ուշ մոիստների ձեռքբերումների պարզունակությանը՝ մ.թ.ա. 4-3-րդ դարերի համատեքստում նրանց հայացքներն առաջընթաց մեծ քայլ էին մտածողության ուսումնասիրման, ճանաչողության տեսության և վիճաբանության հարցերի հետազոտման բնագավառում: Մոիստների տեսակետներն ու գաղափարներն այդ ասպարեզում, լինելով հին չինական փիլիսոփայական մտքի ձեռքբերումների յուրովի ընդհանրացման արդյունք,

[55] Տե՛ս նույնը, էջ 95:

անգերազանցելի մնացին չինական իրականության մեջ ընդհուպ մինչև 19-րդ դարը[56]:

Բավականին հետաքրքրական է նաև դաոսիստական դպրոցի ականավոր ներկայացուցիչ Չժուան-Չժոուի տեսական ժառանգությունը[57]: Այստեղ ևս հանդիպում են տրամաբանական հիմնախնդիրների, վիճաբանության տեսության հարցերի վերաբերյալ արժեքավոր գաղափարներ ու դիտարկումներ, Մո-Դիի ու նրա հետևորդների հայացքների առնչությամբ ուշագրավ դիտողություններ: Չժուան-ցզիի և մոիստների անգիջում մրցակցությունն ու փոխադարձ քննադատությունը կարևոր նշանակություն ունեցավ երկուստեք հայացքների զարգացման գործընթացի վրա՝ խորացնելով ճանաչողության և վիճաբանության տեսության տարբեր հարցերի, վիճահարույց դրույթների համակողմանի հետազոտությունն ու նպաստելով դրանց վերաբերյալ եղած տեսակետների փաստարկվածության կատարելագործմանը:

Ըստ արժանվույն պետք է գնահատել, այսպես կոչված, «անունների» (նոմինալիստների) տրամաբանական-սոփեստական դպրոցի ներկայացուցիչներ Հուեյ-Շիի[58] (մ.թ.ա. 4-րդ դ.), Գունսուն-Լունի[59] (մ.թ.ա. 4-3-րդ դդ.) ու նրանց համախոհների ունեցած ներդրումը ճանաչողության, վերացական մտածողության ու մտավոր հաղորդակցման երևույթների ուսումնասիրման բնագավառում: Ինչպես Զենոն Էլեացին ու Հին Հունաստանի սոփեստները, նրանք ևս իրենց «ապորիաներով», պարադոքսային թվացող մտակառույցներով (օր.՝ «Չվի մեջ փետուրներ կան[60]», «Սպիտակ ձին ձի չէ[61]» և այլն) ու սոփես-

---

[56] Տե՛ս Древнекитайская философия. Собрание текстов в 2-х томах. Т. 1, М., 1972. Т.1, էջ 55:

[57] Տե՛ս նույնը, էջ 248-294:

[58] Հուեյ-Շիի ստեղծագործությունները չեն պահպանվել: Նրա հայացքներն ու տեսակետները մասամբ ներկայացված են Չժուան-ցզիի, Սյուն-ցզիի ստեղծագործություններում (տե՛ս նշվ. ժողովածուն, հ. 1, էջ 275-276; 292-294; հ.2, էջ 148; 183):

[59] Գունսուն-Լունի տեսական-փիլիսոփայական ժառանգությանը կարելի է ծանոթանալ չինական փիլիսոփայության հնագույն տեքստերի նույն ժողովածուում, հ. 2, էջ 58-65:

[60] Նշվ. ժողովածու, հ. 1, էջ 293:

[61] Նույնը, հ. 2, էջ 59:

տական բնույթի կշռադատություններով վեր հանեցին ու առանձնակի սրությամբ ներկայացրին բազմաթիվ հիմնախնդիրներ ու խորիմաստ հարցադրումներ շրջապատող երևույթների իմացության հակասականության, ընդհանուրի և մասնավորի, բացարձակի ու հարաբերականի, վերջավորի ու անվերջի փոխհարաբերության առանձնահատկությունների վերաբերյալ, դրանով իսկ ոչ միայն զգալիորեն խթանելով տեսական գիտելիքի զարգացումն ու հետազոտություններն այդ բնագավառներում, այլև մեծապես նպաստելով բանավեճի տեխնիկայի կատարելագործմանն ու դիալեկտիկական արվեստի զարգացմանը Հին Չինաստանում:

***

Այսպիսով՝ Հին աշխարհի իմաստունները դրեցին տարակարծություն առաջ բերող հարցերի շուրջ մտքերի փոխանակության երևույթի ուսումնասիրման հիմքերը, առաջադրեցին ու մշակեցին մի շարք առանցքային հարցեր ու խնդիրներ՝ մեծապես կանխորոշելով բանավեճի տեսության հետագա զարգացման ուղիներն ու սկզբունքները: Ընդհանրացնելով նախորդ շարադրանքը՝ կարելի է առանձնացնել բանավեճի տեսության հարցերի ուսումնասիրման բնագավառում նրանց կարևորագույն ձեռքբերումներն ու հին դիալեկտիկային առավել բնորոշ առանձնահատկությունները:

Վաղ շրջանի մտածողները յուրովի ներկայացրեցին վեճի ծագումնաբանությունը՝ նշելով միևնույն երևույթի մասին տարբեր, անգամ իրար հակասող կարծիքների գոյության փաստը և դրանց առաջացման հոգեբանական, իմացաբանական ու տրամաբանական հիմքերը:

Փորձեր արվեցին տարբեր տեսանկյուններից դասակարգելու վեճերի ստվարածավալ բազմությունը: Այն սկզբունքորեն բաժանվեց երկու մասի. սահման անցկացվեց մի կողմից կառուցողական (դիալեկտիկական), մյուս կողմից՝ ապակառուցողական (սոփեստական և էրիստիկական) վեճերի միջև:

Հին աշխարհի իմաստասերներն ընդգծեցին դիալեկտիկական բանավեճի իմացաբանական ու մեթոդաբանական նշանակությունը

իրականության ճանաչողության և ճշմարտության հայտնաբերման գործում: Սկսեցին այն մեթոդաբար կիրառել նոր գիտելիքի ստացման, գործածվող հասկացությունների ու սահմանումների ճշգրտման նպատակով: Հունաստանում ծնվեցին «Վեճը ճշմարտության հայրն է», «Վեճերի մեջ է ծնվում ճշմարտությունը» աֆորիստիկ ձևակերպումները:

Մշակվեցին և կատարելագործվեցին սեփական հայացքների փաստարկման, դրանց ճշմարտացիության և հակառակորդի դրույթների սխալականության մեջ ներկաներին համոզելու որոշ «դասական» եղանակներ ու սկզբունքներ, ինչպիսիք են՝ հակառակորդին իր իսկ կշռադատություններում թույլ տված հակասությունների մեջ մերկացնելը, նրա դրույթների ու ակնհայտ իրողությունների, գիտականորեն հիմնավորված փաստերի միջև անհամապատասխանությունների բացահայտումը: Դրվեցին բանավեճի արդյունավետությունը երաշխավորող արարողակարգային այնպիսի սկզբունքների մշակման հիմքերը, ինչպիսիք են, օրինակ, ընդդիմախոսի ու նրա դրույթների նկատմամբ հարգալից վերաբերմունքը, կողմերի լիակատար փոխըմբռնման պահանջն արտացոլող՝ վեճի հնդկական կանոնը, ըստ էության և հակիրճ խոսելու կարևորությունը և այլն:

Հայտնաբերվեցին ու մշակվեցին բանավեճի մի շարք ձևական-տրամաբանական կանոններ, բարոյական սկզբունքներ, ինչպես նաև տրամաբանական, հոգեբանական ու հռետորական բնույթի բազմաթիվ հնարներ, որոնք չեն կորցրել իրենց գործնական նշանակությունը և այսօր էլ գրավում են հետազոտողների ուշադրությունը: Եվ ընդհանրապես, բանավեճի խնդիրների հետազոտման կարևորագույն արդյունքը Հին աշխարհում պետք է համարել տրամաբանական գիտության և հռետորական արվեստի հիմնադրույթների ձևավորումը:

Այդ շրջանի մտածողների կարևոր ներդրումներից մեկն էլ բանավեճի հարցուպատասխանային մեթոդի հետ կապված՝ վեճի մեջ հարցի տեղի ու դերի, դրա նշանակության հետազոտումն էր: Խնդիր, որն այսօր դարձել է ժամանակակից տրամաբանական գիտության

բնագավառներից մեկի՝ հարցերի տրամաբանության ուսումնասիրման առարկան:

Հին դիալեկտիկան աչքի էր ընկնում նաև որոշակի առանձնահատկություններով, որոնք զգալիորեն պայմանավորում էին դրա բովանդակությունն ու գործնական ուղղվածությունը: Վիճաբանության հարցերի դիտարկման սկզբնական շրջանում քննարկումների ու ուսումնասիրությունների հիմնական առարկան բանավոր վեճն էր, կենդանի հաղորդակցումը: Դա պայմանավորված էր տվյալ ժամանակահատվածում գիտությամբ զբաղվող մարդկանց միջև հաղորդակցման միջոցների ու եղանակների զարգացածության ցածր մակարդակով, երբ մտքերի ու գաղափարների հաղորդման ամենատարածված ձևն անմիջական շփումն էր, այս կամ այն գաղափարների հիմնավորման ու հերքման ամենաընդունելի և առավել հարմար եղանակը՝ մտքերի բանավոր փոխանակումը: Հին հնդկական «սուտրաները» սկզբնապես հենց այդպիսի զրույցների ու վեճերի համառոտակի, որոշակիորեն կապակցված աֆորիզմների ձևով հուշագրության արդյունք էին[62]: Թերևս նշված իրողությամբ է բացատրվում նաև այն փաստը, որ հին հեղինակներն իրենց հայացքները շարադրելիս մեծամասամբ դիմել են զրույցի ու երկխոսության մեթոդին:

Ժամանակի դիալեկտիկայի առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ այդ շրջանում որպես վեճի միասնականացված, ընդհանուրի կողմից ընդունելի տրամաբանական ձև հանդես էր գալիս մտքերի փոխանակման հարցուպատասխանային տարբերակը: Այն ուներ որոշակի առավելություններ: Նախ, հնարավորություն էր տալիս բազմակողմանիորեն բացահայտել սեփական և հակառակորդի տեսակետների էությունը, թեր ու դեմ փաստարկների հիմնավորվածությունը: Թույլ էր տալիս կարգավորել քննարկումը, զսպում էր սոփեստներին, որոնք հաճախ հանդես էին գալիս որպես խոսքառատ հռետորներ: Պլատոնի երկխոսություններում քիչ չեն այն դրվագները, որտեղ Սոկրատեսը պնդում է զրույցի վարման հենց այդպիսի եղանակի վրա: «Պրոտագորաս» երկխոսության մեջ Սոկրատեսի կողմնակիցն այսպես է ձևակերպում նրա պահանջը. «...թող նա

[62] Տե՛ս ***Чаттерджи С., Датта Д.,*** Введение в индийскую философию, էջ 22-23:

(Պրուդագորասը - Հ.Հ.) զրուցի հարցնելով և պատասխանելով, ոչ թե ամեն հարցի ի պատասխան երկարաշունչ ճառեր արտասանի, շեղվելով իր դրույթներից, չցանկանալով դրանք հիմնավորել և այնպես ընդարձակվելով, որ ունկնդիրների մեծամասնությունն անգամ մոռանում է, թե ինչումն էր հարցը»[63]:

Վիճաբանության վարման նշված եղանակը, սակայն, ուներ նաև որոշակի թերություններ: Սահմանափակվելով հարց ու պատասխանների շրջանակներում՝ այն երբեմն (հատկապես, երբ կողմերից մեկը պարտավոր էր միայն դրական կամ բացասական լակոնիկ պատասխաններ տալ ընդդիմախոսի հարցերին) կաշկանդում էր երկխոսության մասնակիցներից մեկի ակտիվությունը և խիստ կրճատում նրա հնարավորությունները՝ ստիպելով մտքերը շրջել այն ուղղությամբ, որը ձեռնատու էր հակառակորդին: Իսկ դա ոչ միշտ էր նպաստում ճշմարտության հայտնաբերմանը և հաճախ չարաշահվում էր սոփեստների ու անազնիվ վիճողների կողմից: Բավական է հիշատակել Հին Հունաստանից մեզ հասած այնպիսի «գլուխկոտրուկ», ինչպիսին ստախոսի պարադոքսն է, որի հարցադրմանը տրված թե՛ դրական, և թե՛ բացասական պատասխանները պատասխանողին կանգնեցնում են փակուղու առաջ: Կամ էլ՝ սոփեստական բնույթի այն հարցը, թե «դադարե՞լ ես արդյոք հորդ ծեծելուց», որին տրված թե՛ դրական և թե՛ բացասական պատասխանները մի մարդու կողմից, որը երբեք չի ծեծել իր հորը, չեն կարող ճշմարիտ ու տեղին լինել:

Այդ ամենով հանդերձ, հարցուպատասխանային երկխոսությունը, որպես մտքերի ու հայացքների շարադրման առանձնահատուկ սկզբունք, ուներ իր անվիճելի դրական կողմերը, որոնք հետագայում օգտագործվեցին Վերածննդի ժամանակաշրջանի հումանիստների կողմից: Այդ մեթոդը նրանց տալիս էր միևնույն առարկայի վերաբերյալ տարբեր տեսակետները համադրելու ու համեմատելու, խնդրո առարկան համակողմանիորեն ուսումնասիրելու և դրա մասին իրենց կարծիքն արտահայտելու հնարավորություններ[64]:

---

[63] ***Платон,*** Собр. соч. в 4-х томах, т. 1, М., 1990, էջ 448:
[64] Տե՛ս История диалектики XIV-XVIII вв. М., 1974, էջ 54:

1.2. Բանավեճի տեսության հարցերը միջին դարերում

Միջնադարը պատմության մեջ հայտնի է իբրև կրոնական հայացքների ու գաղափարախոսության տիրապետության, գիտական գիտելիքի ու մտածողության բնագավառում որոշակի տեղատվության ժամանակաշրջան: Սակայն սխալ կլիներ կարծել, թե միջին դարերում պաշտոնական կրոնի դոգմաների ու սխոլաստիկական մտածելակերպի գերակայության պայմաններում գիտական միտքն իսպառ կանգ էր առել, և որ այդ ժամանակահատվածը որևէ հետաքրքրություն չի ներկայացնում փաստարկման տեխնիկայի կատարելագործման, բանավեճի հարցերի ուսումնասիրման տեսանկյունից:

Իհարկե, ոչ այն ընդգրկմամբ ու ծավալներով, ինչպես Հին Հունաստանում, այնուամենայնիվ, միջնադարյան իրականությանն էլ խորթ չէին վեճերն ու բանավեճերը: Գիտական-աշխարհիկ միտքը, թեև համեմատաբար ավելի կաշկանդված պայմաններում, շարունակում էր գոյատևել ու մաքառել: Իսկ այդ պայքարը հաճախ էր բանավեճերի ձև ստանում: Դրանք լինում էին ոչ միայն արտաքին բնույթի (ուղղված պաշտոնական կրոնի գաղափարախոսության ու դոգմաների դեմ), այլև ներքին՝ գիտական բնույթի (տարբեր հոսանքների ու առանձին մտածողների միջև): Հավատի դոգմաներն ու հիմնադրույթներն էլ իրենց հերթին հիմնավորման, արտաքին ոտնձգություններից պաշտպանության կարիք ունեին: Քրիստոնեական կրոնի ջատագովների, եկեղեցական դասի շատ մտածողների բազմաթիվ ստեղծագործություններ ունեին հենց այդպիսի ուղղվածություն:

Միջնադարյան իրականությանը բնորոշ էին նաև սուր բախումներն ու վեճերը կրոնական, դավանաբանական հարցերի շուրջ: Արդեն 5-րդ դարի վերջում, 6-րդ դարի սկզբներին միաբնակների (մոնոֆիզիտների) և երկաբնակների (դիոֆիզիտների) միջև անհաշտ վեճերը տրոհել էին քրիստոնեական աշխարհը: Ավելի ուշ՝ սխոլաստիկական փիլիսոփայությանը հատուկ էր նոմինալիզմի ու ռեալիզմի տևական պայքարն ու մրցակցությունը: Այդպիսի վեճերն ու հակամարտություններն արտացոլվում էին կրոնափիլիսոփայական, դավանաբանական տարբեր ստեղծագործություններում ու երկերում: Եվ,

չնայած դրանք անմիջականորեն չէին շոշափում բանավեճի ու փաստարկման տեսությանն առնչվող խնդիրներ, մեծապես նպաստեցին և իրենց անվիճելի ավանդն ունեցան ապացուցման, հերքման ու փաստարկման եղանակների կատարելագործման, տեխնիկայի զարգացման գործում:

Ժամանակի մշակութային կենտրոններում, պալատական պատերից ներս հաճախ էին կազմակերպվում գիտական և կրոնական բնույթի քննարկումներ ու բանավեճեր:

Մատթեոս Ուռհայեցու՝ 10-12-րդ դդ. պատմական իրադարձությունները ներկայացնող «Ժամանակագրության» մեջ հանդիպում են վկայություններ այդպիսի բանավեճերի մասին: Նա պատմում է, թե մի անգամ հարկ եղավ որոշ խնդիրներ պարզել և, չբավարարվելով հույն գիտնականների մեկնություններով, Բյուզանդիայի Վասիլ կայսրը «դիմեց Հայաստան՝ շահնշահ Հովհաննեսին և հայոց կաթողիկոս տեր Սարգսին, թախանձագին խնդրեց և իր մոտ բերել տվեց հայոց վարդապետ Սամվելին՝ քաջագիտակ և երևելի մի մարդու, նրան հրավիրեց ատյան՝ բանավիճելու հունաց վարդապետների հետ»: Երբ հույն վարդապետները պարտվեցին, այն ժամանակ «կայսրը Կիպրոսից բերել տվեց եբրայեցոց վարդապետ Մուսիին: Այդ ճարտարաբան և բազմահմուտ մարդը կանգնեց ատյանում Վասիլ կայսեր դիմաց և սկսեց բանախոսել տոմարական արվեստի մասին: Նա խայտառակեց հունաց երկրի բոլոր իմաստուններին, հերքեց նրանց [ասածները] և գովեց հայոց վարդապետ Սամվելի խոսքերը: Կայսրը, հունաց վարդապետների դեմ սաստիկ զայրացած, շատերին կարգալույծ և պատվազուրկ արեց, իսկ հայոց վարդապետին պատվական նվերներով հայոց երկիրն ուղարկեց»[65]:

Միջին դարերում Կոստանդնուպոլիսը քաղաքական և մշակութային խոշոր կենտրոն էր: Բյուզանդական կայսրերն իրենց մայրաքաղաքի դռները լայն բաց էին արել հայ, ասորի և այլազգի գիտնականների ու արվեստագետների առաջ: Մեզ հասած տեղեկություններ-

---

[65] ***Մատթեոս Ուռհայեցի,*** Ժամանակագրություն: Գրաբ. բնագիրը՝ Մ. Մելիք-Ադամյանի և Ն. Տեր-Միքայելյանի: Աշխարհաբ. թարգմ. և ծանոթագր.՝ Հ. Բարթիկյանի: Երևան, 1991, էջ 51-53: Տե՛ս նաև էջ 35:

րի համաձայն՝ այստեղ ժամանակի աչքի ընկնող մտածողների հետ իր ուժերն է չափել հայազգի Դավիթ իմաստասերը (5-6-րդ դդ.), որը հաղթելով իր մրցակիցներին, մեծ համբավ ու հռչակ է ձեռք բերել՝ արժանանալով «Անհաղթ» և «Եռամեծ» տիտղոսներին[66]:

Բյուզանդական մայրաքաղաքի գիտական բանավեճերին հաճախակի էին մասնակցում և հյուրընկալվում բազմաթիվ հայ մեծանուն գիտնականներ, կրոնական և քաղաքական գործիչներ: Անդրադառնալով բյուզանդական կայսեր պալատում կրոնաղավանաբանական հարցերի շուրջ քաղաքական նկատառումներով ծայր առած բանավեճին Գագիկ Բ Բագրատունու մասնակցությանը և ներկայացնելով հայ եկեղեցու դավաբանական սկզբունքերի հիմնավորվածության օգտին նրա փաստարկները[67]՝ Մատթեոս Ուռհայեցին հայոց արքային բնութագրում է որպես իմաստասիրական հարցերում հզոր, հռետորական արվեստին քաջագիտակ և բանավեճերում անպարտելի մարդու: «Նա բանավիճում էր հոռոմ վարդապետների հետ, իսկ երբ լինում էր Կոստանդնուպոլսում, Սուրբ Սոֆիայի ատյանն էր բարձրանում: Նա կատարելապես գիտակ էր Աստծո Հին և Նոր Կտակարաններին, շատ ճարտարախոս մարդ էր»[68]: Դառնալով Գրիգոր Մագիստրոս Պահլավունուն և Ատրներսեհ իշխանին՝ պատմիչ-ժամանակագիրը գրում է. «Նմանապես և Գրիգոր Պահլավունին՝ Վասակի որդին, որը նույնպես մեծ գիտելիքների տեր մարդ էր: Հոռոմց տված նրա պատասխանները հիացմունք էին պատճառում: Նա անչափ կրթված, բոլոր գիտություններն ուսումնասիրած, Աստծո Հին և Նոր Կտակարանները կատարելապես յուրացրած մարդ էր: Նա իմաստասերների հետ Սուրբ Սոֆիայի ատյանում էր նստում և բանավիճում հոռոմ վարդապետների հետ: ... [Այդ ժամանակներում էր և] Ատրնեսեհ հայ իշխանը՝ Բագրևանդ գավառից: Նա ևս քաջագիտակ, շատ տաղանդավոր, իսկական իմաստասեր մարդ էր, ուսանել

---

[66] Տե՛ս ***Դավիթ Անյաղթ,*** Երկասիրությունք փիլիսոփայականք: Համահավաք քննական բնագրերը և առաջաբանը Ս. Ս. Արևշատյանի: Երևան, 1980, էջ 7: Տե՛ս նաև ***Գաբրիելյան Հ.,*** Հայ փիլիսոփայական մտքի պատմություն: Հ. 1, Երևան, 1956, էջ 346; 348:

[67] Տե՛ս ***Մատթեոս Ուռհայեցի,*** Ժամանակագրություն: Երևան, 1991, էջ 175-193:

[68] ***Մատթեոս Ուռհայեցի,*** նշվ. աշխ., էջ 199, տե՛ս նաև էջ 175:

էր մեծ Արգինայում և սովորել աստվածային Կտակարանները: Նա իր կատարյալ գիտելիքներով, հիանալի ճարտասանությամբ կարող էր հանդես գալ հոռոմոց բոլոր իմաստունների դեմ: Նա նման էր Գագիկին և հայոց մյուս իմաստասերներին, որոնց մասին գրեցինք»[69]:

Հիշարժան է Գրիգոր Մագիստրոս Պահլավունու վեճը ոմն մահմեդական Մանուչեի հետ՝ Ղուրանի և Աստվածաշնչի արժանիքների շուրջ: Պահլավունին, ապացուցելով, որ Ղուրանի չափածո լինելը նրա բարձր արժանիքի նշան չէ, խոստանում է կարճ ժամանակամիջոցում Ավետարանը չափածոյի վերածել, և կատարելով իր խոստումը, անջնջելի տպավորություն է թողնում ներկաների և իսլամադավան աշխարհի գիտնականների վրա[70]:

Միջնադարյան հայ իրականությանը բնորոշ էր թեժ պայքարը կրոնական, գաղափարախոսական տարբեր հոսանքների, զանազան քաղաքական շարժումների ու կուսակցությունների միջև: Այդ պայքարն արտահայտվում էր ոչ միայն արյունալի ընդհարումների ու պատերազմների ձևով, այլև՝ գաղափարական բանավեճերի: Հեթանոսության մնացուկների, աղանդավորական ուսմունքների և հատկապես պարսից զավթիչների դեմ ծավալված գաղափարական պայքարի բովում ծնվեցին Մեսրոպ Մաշտոցի, նրա հավատարիմ զինակից Եզնիկ Կողբացու, Եղիշեի գործերը: Հայրաբանության և քրիստոնեական կրոնի ջատագովության այդ կարկառուն ներկայացուցիչների երկերը մեծ դեր խաղացին օտարերկրյա զավթիչների դեմ ծայր առած գաղափարական անհաշտ պայքարում: Առանձնապես ուշագրավ է Եզնիկ Կողբացու (5-րդ դ.) «Եղծ աղանդոց» մեծարժեք ստեղծագործությունը: Այն մի յուրահատուկ բանավեճ է և հերքումը քրիստոնեական գաղափարախոսությանը խորթ ու անհարիր փիլիսոփայական, կրոնաաղանդավորական ուսմունքների, հին փիլիսոփաների վարդապետությունների, հեթանոսական աշխարհայացքի, ինչպես նաև ժամանակին լուրջ վտանգ ներկայացնող զրադաշտական կրոնի հիմնադրույթների: Երկը գրված է փիլիսոփայական պատշաճ ոճով, հագեցած է փաստարկման, ապացուցման ու հերք-

[69] Նույնը, էջ 199:
[70] Տե՛ս ***Գաբրիելյան Հ.,*** նշվ. աշխ., հ. 2, Երևան, 1958, էջ 65:

ման՝ տրամաբանական կառուցվածքի տեսակետից կուռ օրինակներով: Կողբացին հակառակորդի տեսակետը հերքելու համար շեշտը դնում է նրա կշռադատություններում ներքին հակասությունների հայտնաբերման վրա: Կամ էլ, պայմանականորեն ընդունելով հակառակորդի դրույթը, ցույց է տալիս, որ դրա տրամաբանական զարգացումը հանգեցնում է անհեթեթության («...և մեծի ծաղու արժանի է, զի չէրն չէին վասն չէին յաշտ առնէր»)[71]:

Հայ իրականության մեջ քիչ չեն յուրօրինակ բանավեճ հիշեցնող ստեղծագործությունները, որոնք ուշադրություն են գրավում հենց միայն իրենց փաստարկողական կառուցվածքի, վիճաբանության տարբեր եղանակների, սկզբունքների գործածման ու կատարելագործման տեսանկյունից: Հիշատակության է արժանի 5-րդ դարի պատմիչ Ղազար Փարպեցու «Թուղթ առ Վահան Մամիկոնեան: Մեղադրութիւն ստախոս աբեղայից» ամբաստանագիրն՝ ուղղված ժամանակի հետադեմ կղերականության դեմ: Այն Մեսրոպ Մաշտոցի ու Սահակ Պարթևի մահից հետո հայ հոգևորականության հետադիմական ու առաջադիմական միտումներ ունեցող թևերի միջև ծայր առած պայքարի արժեքավոր մի դրվագ է: Հեղինակը դատապարտում է իր հակառակորդ «ծույլ ու անարժան աբեղաներին», հերքում նրանց կողմից իր դեմ ուղղված մեղադրանքներն ու փորձում արդարացնել սեփական գործելակերպը[72]: Ուշագրավ է նաև 13-րդ դարի տաղերգու Ֆրիկի «Գանգատ բանք վիճման ընդ ամենազօրին Աստուծոյ» ստեղծագործությունը, որը մի յուրօրինակ բանավեճ է Աստծո ու ճակատագրի հետ՝ բարոյականության, սոցիալական արդարության, դաժան իրականության շուրջ[73]:

Անգնահատելի է հայ միջնադարյան փիլիսոփայության խոշորագույն ներկայացուցիչ Դավիթ Անհաղթի տեսական ժառանգությունը, որն արմատներով կապված լինելով հին հունական փիլիսո-

---

[71] ***Եզնիկ Կողբացի,*** Եղծ աղանդոց: Գրաբ. բնագիրը Կ. Մ. Մուրադյանի: Աշխարհաբ. թարգմ. Ա. Ա. Աբրահամյանի: Երևան, 1994, էջ 106:

[72] ***Ղազար Փարպեցի,*** Հայոց պատմություն: Թուղթ Վահան Մամիկոնյանին: Քննական բնագիրը՝ Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի: Աշխարհաբար թարգմ. և ծանոթագր.՝ Բ. Ուլուբաբյանի: Երևան, 1982, էջ 444-487:

[73] ***Ֆրիկ,*** Տաղեր: Երևան, 1982, էջ 100-108:

փայական դպրոցների հետ, զգալի չափով նվիրված է իմացաբանական-տրամաբանական հիմնախնդիրների ուսումնասիրությանը և մեծ հետաքրքրություն է ներկայացնում ապացուցման, փաստարկման ու վիճաբանության բազմաթիվ հիմնահարցերի հետազոտության տեսանկյունից: Աշխարհիկ մտածողությամբ աչքի ընկնող նրա ստեղծագործությունները հարուստ են մտքերի փոխանակության, բանավեճ վարելու տարբեր կանոնների, եղանակների ու սկզբունքների ուսումնասիրություններով, փաստարկման ու բանավեճի տրամաբանական, իմացաբանական հիմնահարցերի վերաբերյալ արժեքավոր դիտարկումներով:

Տրամաբանությունը (կամ հին իմաստով՝ դիալեկտիկան) Դավիթը համարում է փիլիսոփայության կարևոր բաղկացուցիչ մասն ու գործիքը[74]: Իսկ դիալեկտիկան, հին հույների օրինակով, նա ըմբռնում է իբրև հարցուպատասխանային երկխոսություն. «Պետք է գիտենալ, որ դիալեկտիկան [տրամաբանությունն] այն է, երբ մեկը հարցնում է, իսկ մյուսը պատասխանում է»[75]: Հայ իմաստասերն առանձնացնում և դիտարկում է դիալեկտիկական երկխոսության, կշռադատության չորս հիմնական մեթոդներ. բաժանում, սահմանում, ապացուցում, վերլուծություն՝ սկզբունքային նշանակություն տալով գործնականում դրանց կիրառման հերթականությանը[76]:

Չշրջանցելով «դիալեկտիկական մեթոդի» մյուս ձևերը, Անհաղթը մեծ կարևորություն է տալիս ապացուցման եղանակի ուսումնասիրությանը: Ըստ նրա՝ ապացուցման խնդիրն է. «ցույց տալ և հավաստիացնել, որ ինչ-որ բան այնպիսին է, ինչպիսին որ է»[77]: Քննարկելով այդ մեթոդի երեք հիմնական տարբերակները՝ հայ մտածողը, հավատարիմ մնալով արիստոտելյան սկզբունքներին, նախապատվությունը տալիս է դեդուկտիվ (արտածման) եղանակին, այն համարելով ճշմարտության հայտնաբերման առավել վստահելի ու հավաստի

---

[74] ***Դավիթ Անհաղթ,*** Երկեր: Աշխարհաբար թարգմ., առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ս. Ս. Արևշատյանի: Երևան, 1980, էջ 265:
[75] Նույնը, էջ 137:
[76] Տե՛ս նույնը, էջ 137-139:
[77] Նույնը, էջ 137:

միջոց: Միաժամանակ ուշադրություն է հրավիրում և կոնկրետ օրինակներով ներկայացնում դրույթների ապացուցման նպատակով կիրառվող մյուս եղանակների՝ ոչ լրիվ ինդուկցիայի (մակածության) և համանմանության (հարացույցի)՝ ճշգրիտ գիտելիքի հայտնաբերման առումով անկատար ու թերի լինելը[78]:

Դավիթն իր նախորդների նման առանձնակի նշանակություն է տալիս նաև կշռադատության ընթացքում գործածվող բազմիմաստ բառերի, հասկացությունների, այս կամ այն դրույթի օգտին առաջադրվող փաստարկների պարզաբանման, ճշգրտման, դրանց էության բացահայտման անհրաժեշտությանը: Այդ մոտեցումը նա համարում է մտքերի արդյունավետ փոխանակության, բանավեճի կարևոր սկզբունք: «Գոյություն ունի վիճարկման այսպիսի կանոն, որի համաձայն համանունները պետք է քննել հետևյալ երեք տեսանկյուններից. նախ՝ քանի՞ նշանակություն ունի համանունը, [երկրորդ]՝ ո՞ր նշանակության մասին է խոսքը, և երրորդ՝ այդ նշանակություններից մեկը, որի՞ մասին է խոսքը, պետք է նկարագրել կամ սահմանել»[79]: Նշված սկզբունքը հետևողականորեն պահպանված է հենց իր՝ Անհաղթի ստեղծագործություններում, ինչը զգալիորեն բարձրացնում է դրանց ճանաչողական արժեքը և հնարավորություն ընձեռում հստակ պատկերացում կազմել հայ մտածողի փիլիսոփայական հայացքների, նրա կողմից տարբեր հիմնահարցերի ընկալման ու մեկնության առանձնահատկությունների վերաբերյալ:

Իր «Փիլիսոփայության սահմանումներում» Դավիթն առանձնացնում է բանավեճ վարելու, հակառակորդի տեսակետը հերքելու երկու տարբերակ. ա) ընդդիմախոսին ուղղակի, անհաշտ հակադրվելու և բ) նրա դրույթներն իրավահավասար քննարկելու սկզբունքները[80]: Առաջին դեպքում հենց սկզբից մերժվում է հակառակորդի դրույթը, դրան հակադրվում է ճշմարիտ միտքը և հետևողականորեն հիմնավորվում ու պաշտպանվում: Երկրորդ դեպքում ենթադրվում է ընդդիմախոսի դրույթի ճշմարիտ լինելը և ցույց տրվում, որ դրանից

[78] Տե՛ս նույնը, էջ 137-138:
[79] Նույնը, էջ 38:
[80] Տե՛ս նույն տեղում:

բխում են սխալ հետևություններ, որոնք էլ գալիս են ապացուցելու ելակետային դրույթի սխալականությունը: Իր ստեղծագործություններում Դավիթը հմտորեն գործածում է երկու եղանակներն էլ, հաճախ էլ դրանք զուգորդում այս կամ այն հիմնախնդրի համակողմանի քննարկումների ընթացքում. «Եվ ահա, հերքելով փիլիսոփայության գոյությունը ժխտողների առաջին փաստարկը, մենք դիմում ենք և՛ ընդդիմայակայության, և՛ հավասար վիճարկելու եղանակներին»[81]:

Հատկանշական է, որ Դավիթ Անհաղթը Սոկրատեսի, Պլատոնի, Արիստոտելի պես հակված է բանավեճի ճանաչողական-իմացաբանական նշանակության գնահատմանն ու գործնականում դրա մեթոդական կիրառմանը: Իր երկերում բարդ հիմնահարցերի վերլուծության ընթացքում (ինչպես, օրինակ, փիլիսոփայության գոյության, փիլիսոփայության և տրամաբանության փոխհարաբերության հարցերի կապակցությամբ)[82] նա հաճախ է դիմում հակադիր տեսակետների ներկայացման, դրանց իրավահավասար քննարկման ու վիճարկման մեթոդին: Գ. Ա. Բրուտյանն իր «Փաստարկման տեսության ակնարկում» Անհաղթի որոշ դրույթների ու դատողությունների վերլուծության հիման վրա նկատում է, որ հայ մտածողը փաստարկողական բանավեճի խնդիրը չի սահմանափակում միայն ճշմարտության հայտնաբերմամբ. դրա վերջնական նպատակը նա տեսնում է գործնականում այդ ճշմարտության կիրառման, իրացման մեջ[83]:

Դավիթ Անհաղթի փիլիսոփայական ժառանգությունը, դարեր շարունակ ունենալով իր բարերար ազդեցությունը հայ, արաբալեզու, ինչպես նաև եվրոպական փիլիսոփայական մտքի զարգացման վրա, մեր ժամանակներում էլ գրավում է փիլիսոփաների, տրամաբանների, փաստարկման տեսաբանների ուշադրությունը՝ դառնալով բազմաթիվ հիմնարար ուսումնասիրությունների առարկա:

Այսպիսով, չնայած միջին դարերում կրոնական գաղափարախոսության մենիշխանությանը, աշխարհիկ մտքի զարգացման ան-

---

[81] Տե՛ս նույն տեղում:
[82] Տե՛ս նույնը, էջ 37-44; 259-265:
[83] ***Брутян Г.А.,*** Очерк теории аргументации. Ереван, 1992, էջ 232:

բարենպաստ պայմաններին, այնուամենայնիվ, վերջինս շարունակում էր գոյատևել՝ որոշակիորեն անդրադառնալով նաև իմացաբանական-տրամաբանական հիմնախնդիրների, փաստարկման ու բանավեճի տեսությանն առնչվող հարցերի ուսումնասիրությանը:

Բացի այդ, ինչպես արդեն նշվեց, և ինչպես ընդգծում է Գ. Ա. Բրուտյանը, միջնադարյան սխոլաստիկան ևս, իր պահպանողականությամբ հանդերձ, ծանրակշիռ ներդրում ունեցավ փաստարկման տեխնիկայի կատարելագործման ու զարգացման բնագավառում[84]: Բնական է՝ եկեղեցու փիլիսոփա սպասավորները նպատակ չունեին կասկածի տակ առնել կամ բովանդակային քննության ենթարկել հավատի դոգմաներն ու հիմնադրույթները: Նրանց գլխավոր խնդիրն էր զբաղվել դրանց ապացուցման ու հիմնավորման կատարելագործմամբ, փաստարկման տեխնիկայի բարելավմամբ: Այդպիսի օրինակներով հարուստ են եկեղեցու հայրերի գործերը: Թերևս, բավական է հիշատակել կաթոլիկ եկեղեցու պաշտոնական գաղափարախոսության հիմնադիր Թոմաս Աքվինացու՝ Աստծու գոյության հինգ ապացույցները կամ աստվածարդարացման գաղափարի թոմիստական հիմնավորումը[85]:

Հարկ է նկատել, որ եթե Հին աշխարհում հետազոտվում և վիճաբանությունների ընթացքում գործնականորեն կիրառվում էր գլխավորապես հարցուպատասխանային մեթոդը, ապա հաջորդ փուլում գերակայող է դառնում այսպես կոչված «փաստարկների» մեթոդը: Այսինքն, հիմնական ուշադրությունը կենտրոնացվում է փաստարկների ճիշտ ընտրության, դրանց միջոցով տեսակետների հիմնավորման, ապացուցման և հերքման եղանակների հետազոտման ու կատարելագործման վրա:

Եթե Հին աշխարհում լայնորեն տարածված էր և ուսումնասիրվում էր առավելապես վեճի բանավոր տարբերակը, ապա միջին դարերում գործ ունենք արդեն հիմնականում վեճի գրավոր ձևի հետ:

---

[84] Տե՛ս նույնը, էջ 232-233: Տե՛ս նաև նույն հեղինակի՝ Аргументация. Ереван, 1984, էջ 15:

[85] Տե՛ս Антология мировой философии. Т. 1, ч. 2, М., 1969, էջ 828-831: Տե՛ս նաև՝ Ժամանակակից բուրժուական փիլիսոփայություն: Երևան, 1983, էջ 477-479; 493-495:

Ի տարբերություն Հին աշխարհի, որտեղ, կապված հարցուպատասխանային մեթոդի հետ, մեծ նշանակություն էր տրվում հակառակորդին իր իսկ կշռադատություններում թույլ տված հակասությունների մեջ մերկացնող համալիր հարցերի ու սկզբունքների մշակմանը, հաջորդ փուլում շեշտը դրվում է տրամաբանորեն կապակցված դատողություններից փաստարկողական այնպիսի կուռ համակարգերի կառուցման վրա, որոնք հնարավորություն էին ընձեռում, հերքելով հակառակորդների տեսակետները, ապացուցել ու հիմնավորել սեփական մոտեցումը:

Անդրադառնալով վեճի վարման՝ փիլիսոփայության պատմության տարբեր ժամանակաշրջաններում առավել գործածական որոշ տարբերակների, ռուս հետազոտող Ա. Ն. Սոկոլովն ուշադրություն է հրավիրում նաև միջնադարյան փիլիսոփա Պ. Աբելյարի (1079-1142 թթ.) մշակած՝ մտքերի փոխանակման մեթոդի վրա, որի էությունը միևնույն հարցի վերաբերյալ եկեղեցու հայրերի հակասական տեսակետների զուգադրումն է: Այդ մեթոդի արժեքը Սոկոլովը տեսնում է դոգմաներին հիմնախնդիրների կարգավիճակ տալու և դրանից հետո թեր ու դեմ փաստարկների վերլուծության մեջ[86]: Սկզբունք, որը փոքր-ինչ այլ տարբերակով դեռևս մ.թ. 2-րդ դարում առաջարկել և գործածում էր հնդիկ փիլիսոփա Նագարջունան, և որը մեր ժամանակներում էլ լայնորեն կիրառվում է ոչ միայն գիտական գիտելիքի բնագավառում՝ կապված հետազոտությունների, հայտնագործությունների համակողմանի քննարկման հետ, այլև երաշխավորելի ու խրախուսելի է կածրատիպերի, հավակնոտ տեսակետների, հայացքների, ամենատարբեր նորամուծությունների վերլուծության ու քննարկման դեպքերում:

---

[86] ***Соколов А. Н.,*** Проблемы научной дискуссии. Логико-гносеологический анализ. Ленинград, 1980, էջ 46:

1.3. Բնավեճի տեսության հարցերը նոր և նորագույն շրջանում

Գիտությունը՝ որպես մտավոր գործունեության բնագավառ և որպես հասարակական գիտակցության առանձնահատուկ ձև, ունի զարգացման իր օրինաչափությունները: Այն անխուսափելիորեն ձգտում է կոնկրետ, առանձին երևույթների ճանաչողությունից դեպի ավելի լայն ընդգրկում ունեցող և ավելի ընդհանուր բնույթի գործընթացների իմացությունը, ինչն էլ իր հերթին հանգեցնում է քննարկվող մասնավոր կամ եզակի երևույթների ու առարկաների ճանաչողության խորացմանը, դրանց էության բացահայտմանը: Գիտությանը բնորոշ է նաև զարգացման պարուրաձև ընթացքը՝ նոր, առավել բարձր մակարդակներում վերադարձը նախկինում ուսումնասիրված երևույթներին ու հարցերին, դրանց ավելի հանգամանալից ու բազմակողմանի ուսումնասիրությանը՝ այդ ընթացքում ձեռք բերված հարուստ փորձի ու իմացության հենքի վրա:

Մասամբ Վերածննդի և դրանից հետո ընկած ժամանակաշրջանը քննարկվող հիմնախնդիրների առումով կարելի է բնութագրել որպես ընդհանուր տրամաբանական հարցերի մշակման ու հետազոտման փուլ: Այդ ժամանակահատվածի մտածողների մոտ հայտնի չէ անմիջականորեն բանավեճի տեսության հարցերին նվիրված որևէ հետազոտություն: Դրա փոխարեն գիտական գիտելիքի զարգացման այդ շրջանը հարուստ է տրամաբանական բնույթի հիմնարար ուսումնասիրություններով: Սկսած Ֆր. Բեկոնից ու Ռ. Դեկարտից՝ հետազոտողներին ավելի շատ հետաքրքրում էին մտածողության տրամաբանական կողմի, դրա ընդհանուր օրենքների, կառուցվածքի ու բաղադրատարրերի հետ կապված հարցերը: Ընթանում էր մարդկային մտածողության տրամաբանական խնդիրների ուսումնասիրության բուռն գործընթաց, որից շատ բանով կախված էր հետագայում բանավեճի՝ որպես տրամաբանական մտածողության դրսևորման եղանակներից մեկի, հետազոտման գործը:

Ֆր. Բեկոնը, Թ. Հոբսը, Ռ. Դեկարտը, Պ. Գասենդին, Թ. Յունգը, Բ. Պասկալը, Գ. Լեյբնիցը, ապա նաև՝ Ջ. Հերշելը, Ջ. Ս. Միլը, Օ. դը Մորգանը, Ջ. Բուլը, Գ. Ֆրեգեն և էլի ուրիշներ, մշակելով մտածողու-

թյան տրամաբանական կողմին վերաբերող հարցերն ու հիմնախնդիրները, զարգացնելով տրամաբանական գիտությունը՝ անուղղակիորեն իրենց լուման ունեցան նաև բանավեճի ուսումնասիրման գործում և հող նախապատրաստեցին դեպի բանավեճի հիմնահարցերը հետազոտողների նոր շրջադարձի համար:

Այդ շրջադարձի առաջին ազդարարը եղավ Ա. Շոպենհաուերը՝ իր «Էրիստիկական դիալեկտիկայով»: Արդեն 20-րդ դարի սկզբին լույս տեսավ ռուս տրամաբան Ս. Ի. Պովարնինի «Վեճ: Վեճի տեսության և պրակտիկայի մասին» աշխատությունը: Այդ երկու մտածողները վեճի տեսության բնագավառում դեռևս Հին աշխարհից եկող, սկզբունքորեն հակադիր երկու հոսանքների ներկայացուցիչներ են և մեր օրերում էլ ունեն իրենց հետևորդները: Շոպենհաուերը վիճաբանության գլխավոր նպատակը համարում է ոչ թե ճշմարտության հայտնաբերումն ու նորի իմացությունը, այլ վեճից ճիշտ դուրս գալը, հաղթելը՝ անկախ այն բանից՝ մեր դատողությունները համապատասխանում են օբյեկտիվ իրականությանը, թե՝ ոչ:

«Էրիստիկական[87] դիալեկտիկան վիճելու արվեստ է, ընդ որում այնպես վիճելու, որ մնաս ճիշտ...»[88]: Այդպիսի դիրքորոշումը գերմանացի մտածողը պատճառաբանում է նրանով, որ «մարդկային ցեղը բնականից փչացած է»: Մարդը, լինելով սնափառ և անազնիվ, չի ուզում համակերպվել այն մտքի հետ, որ հակառակորդի դատողությունները ճիշտ են, իսկ իրենը՝ ոչ[89]: Նա իր «էրիստիկան» կառուցում է դիմացինի անարդար էության և հռչակված բարոյական սկզբունքներին անհավատարիմ լինելու կանխավարկածի վրա: Ըստ նրա, եթե մենք վեճի ընթացքում առաջնորդվենք ազնիվ մղումներով ու հետամուտ լինենք ամեն գնով ճշմարտության հայտնաբերմանը, ոչ մի երաշխիք չենք կարող ունենալ, որ հակառակորդը այլ կերպ չի վարվի[90]: Այնպես որ, ամեն դեպքում նախընտրելի է գործադրել բոլոր

---

[87] Այսինքն՝ կրքոտ, թեժ – Հ. Հ.:

[88] ***Schopenhauer A.,*** Handschriftlicher Nachlass. Hrsg.v. Ed. Grisebach. Bd. 2. Leipzig [s.a.], էջ 73:

[89] Տե՛ս նույնը, էջ 74:

[90] Նույնը, էջ 75:

հնարավոր միջոցները և վեճից հաղթող դուրս գալ: Իսկ թե ինչպիսին կլինեն հաղթանակի դափնիները, ինչպես Ս. Պովարնինն է արտահայտվում՝ «էժանագին, խոհանոցային»,[91] թե այլ որակի, այնքան էլ կարևոր չէ: Ա.Շոպենհաուերն իր «Էրիստիկական դիալեկտիկայում» ներկայացնում և վեր է լուծում երեք տասնյակից ավելի սոփեստական հնարքներ և առաջարկում դրանցից պաշտպանվելու, դրանց հակադրվելու որոշ եղանակներ:

Ս. Ի. Պովարնինի «Վեճ: Վեճի տեսության և պրակտիկայի մասին» աշխատությունն ունի հակաէրիստիկական ուղղվածություն: Այդ իմաստով Պովարնինը հանդես է գալիս որպես արիստոտելյան դիալեկտիկայի ավանդույթների շարունակող: Նա խնդիր է դնում իր հետազոտության միջոցով որոշ չափով լրացնել վեճի տեսության մեջ մինչ այդ գոյություն ունեցող բացը[92]: Ռուս հեղինակը դիտարկում է բանավեճի տրամաբանական, հոգեբանական ու բարոյագիտական կողմերն արտացոլող բազմաթիվ հարցեր: Նրա գիրքը վեճի տեսության բնագավառում ցայսօր գոյություն ունեցող շատ թե քիչ հիմնարար բացառիկ աշխատություններից է: Այն բաղկացած է երկու մեծ բաժինից: Առաջին բաժնում («Ընդհանուր տեղեկություններ վեճի մասին») խոսվում է ապացուցման՝ որպես վեճի կարևոր բաղադրատարրերից մեկի, բանավեճի տարբեր ձևերի ու տեսակների մասին, ցույց է տրվում հակադիր կողմերի փաստարկների տեղն ու դերը բանվեճի գործընթացում, ընդգծվում է վեճն արդյունավետ, ճանաչողական հունով տանելու համար տրամաբանական տակտի, վիճաբանելու ոճի, կողմերի վարքագծի և դիմացինի տեսակետը հարգել կարողանալու կարևորությունը: Երկրորդ բաժնում, որը վերնագրված է «Հնարքները վեճի մեջ», քննարկվում են թույլատրելի ու անթույլատրելի մի շարք հնարքներ, վերլուծվում են տարբեր (տրամաբանական, հոգեբանական և այլ) սոփեստական բնույթի հնարքներ, դիտարկվում են դրանք հայտնաբերելու և չեզոքացնելու կարևոր սկզբունքներ: Ս.Պովարնինի ստեղծագործությունը, բացի կոնկրետ

---

[91] ***Поварнин С.И.,*** Спор. О теории и практике спора. “Вопросы философии”. 1990, № 3, էջ 74:
[92] Տես նույնը, էջ 60:

գիտականը, ունի նաև այլ արժանիքներ: Այն գրված է հանրամատչելի ոճով, հարուստ է կյանքից վերցրած օրինակներով և ունի գործնական ուղղվածություն: Սակայն Պովարնինն ինքն էլ նշում է, որ իր ժամանակի գիտության կողմից չհետազոտված ու չուսումնասիրված վեճի տեսության մշակման առաջին փորձերը չեն կարող հավակնել որևէ լիակատարության[93]:

Չնայած ռուս տրամաբանի աշխատության անվիճելի արժանիքներին, բանավեճի տեսության մեջ բացերը մինչ օրս էլ շատ են: Ժամանակակից տեսաբաններն իրենք էլ խոստանում են, որ այսօրվա դրությամբ դեռևս այդ երևույթը ուսումնասիրված չէ այն խորությամբ ու ընդգրկումով, որ պահանջվում է[94]: Դժվար է հիշատակել ընդհանրացնող որևէ աշխատություն, որտեղ համակարգված ձևով դիտարկվեն բանավեճի իմացաբանական, մեթոդաբանական, տրամաբանական, հոգեբանական, բարոյագիտական, գեղագիտական և մյուս կողմերը: Այդ փաստը մասնագետները բացատրում են առաջին հերթին վեճի երևույթի բարդությամբ ու բազմազանությամբ[95]:

Հիրավի, վեճն արտասովոր բազմակողմ ու բազմադեմ մի համակարգ է: Այն, որպես սոցիալ-հոգեբանական երևույթ, ունի մարդկային մտածողության ու փոխհարաբերության ողջ բարդությունն ու հակասականությունը: Դրա հետազոտության համար պահանջվում են տարբեր մասնագիտությունների տեր գիտնականների ջանքեր: Բանավեճը, որտեղ փոխկապակցված հանդես են գալիս իմացաբանական, սոցիալ-հոգեբանական, ձևական-տրամաբանական, բարոյագիտական, տեղեկատվական և ուրիշ տարրեր, կարող է և պետք է ուսումնասիրվի հոգեբանների, սոցիոլոգների, տրամաբանների ու փիլիսոփա-մեթոդաբանների կողմից: Եվ միայն այդ բոլոր տվյալների վերլուծական համադրումն ու փիլիսոփայական ընդհանրացումը կտա բազմակողմանի ու համակարգված գիտելիք բանավեճի մասին:

---

[93] Նույն տեղում:
[94] Տե՛ս ***Соколов А.Н.,*** Проблемы научной дискуссии, էջ 5:
[95] Տե՛ս նույնը, էջ 7:

Սակայն պետք է նշել, որ բանավեճի տեսության՝ ներկայումս լիակատար ու ավարտուն ձևով մշակված չլինելու փաստը դեռևս չի նշանակում, թե այդ ուղղությամբ քայլեր չեն արված: Հասարակական կյանքում վիճելի հարցերի շուրջ մտքերի փոխանակության երևույթի դերի ու նշանակության, տեսակարար կշռի ավելացմանը զուգահեռ ավելի ու ավելի է մեծանում բանավեճի նկատմամբ հետաքրքրությունների ալիքը: Ասպերազում կան մի շարք աշխատություններ, հետազոտություններ, հոդվածներ, որոնք մեկնաբանում են բանավեճի երևույթն այս կամ այն կոնկրետ տեսանկյունից՝ ուսումնասիրության առարկա դարձնելով այդ գործընթացի տարբեր բաղադրատարրեր:

Նշված խնդիրների վերաբերյալ բավականին արժեքավոր հետազոտություններ և հրապարակումներ են արվել 20-րդ դարի 2-րդ կեսից ի վեր: Լ. Պ. Գոկիելին, Վ. Ս. Բիբլերը, Մ. Ս. Գլազմանն իրենց հետազոտություններում առաջին պլան են մղում բանավեճի իմացաբանական-մեթոդաբանական հարցերը՝ ուշադրության կենտրոնում ունենալով հիմնականում գիտական բանավեճը[96]: Վ.Ն.Սագատովսկին, ընդգծելով վեճի սոցիալական բնույթն ու ճանաչողական նշանակությունը, քննարկում է արդյունավետ բանավիճելու այնպիսի ընդհանուր կանոններ, ինչպիսիք են՝ նպատակի պարզեցումը, թեզիսի ճշգրիտ ձևակերպումը, հասկացությունների ճշգրտումը և այլն[97]: Վ. Շտելցները «Բանավեճի տրամաբանական հիմնախնդիրները» հոդվածում հետազոտում է վիճաբանության կառուցվածքը՝ օգտագործելով մաթեմատիկական տրամաբանության մեթոդներ[98]: Վեճի ճանաչողական նշանակությունը, գիտական իմացության բնագավառում դրա կարևոր դերն է ընդգծված ու հիմնավորված Ս. Ռ. Միկուլինսկու, Ա. Դ. Ուրսուլի, Մ. Գ. Յարոշևսկու հետազոտություններ-

---

[96] Տե՛ս ***Гокиели Л.П.,*** Логика, т. 1. Тбилиси, 1965, էջ 190-201; ***Библер В.С.,*** Творческое мышление как предмет логики; ***Глазман М.С.,*** Творчество как диалог. В кн: Научное творчество. Под ред. С.Р. Микулинского, М.Г. Ярошевского. М., 1969 էջ 167-232:

[97] ***Сагатовский В.Н.,*** Вселенная философа. М., 1972, էջ 138-147:

[98] Տե՛ս ***Штельцнер В.,*** Логические проблемы дискуссии. “Вопросы философии”. 1972, № 6:

ռում[99]: Բնագիտության զարգացման, նոր գաղափարների ձևավորման, մշակման ու տարածման գործում վիճաբանության տեղի ու դերի, գիտական հետազոտությունների արդյունավետության բարձրացման և այդ տեսանկյունից վիճաբանության հնարավորությունների հարցերն են քննարկված «Բանավեճերի դերը բնագիտության զարգացման մեջ» ժողովածուում[100]: Վիճաբանության հոգեբանական որոշ խնդիրներ են շոշափվում 1985 թ. Մոսկվայում հրատարակված «Հաղորդակցման հոգեբանական հետազոտություններ» գրքում, որտեղ տեղ են գտել ռուս և արևմտյան գիտնականների մի շարք ուսումնասիրություններ[101]:

Արժեքավոր է Ա. Ն. Սոկոլովի «Գիտական բանավեճի հիմնախնդիրները: Տրամաբանական-իմացաբանական վերլուծություն» աշխատությունը: Դրա առաջին մասը նվիրված է վեճի ուսումնասիրման պատմական և սոցիալական նախադրյալների վերլուծությանը, վիճելի հարցերի շուրջ մտքերի փոխանակման գործընթացն արտացոլող հասկացությունների տարբերակման փորձի քննական վերլուծությանը: Երկրորդ մասը նվիրված է գիտության ասպարեզում վիճաբանության իմացաբանական նշանակությանը, այն տեղին, որ գիտական հետազոտության մեջ հատկացվում է վիճաբանությանը և գիտության զարգացման գործընթացում դրա ունեցած դերի պարզաբանմանը[102]:

Ընթերցողների լայն շրջանին է հասցեագրված Մ. Ա .Սլեմնյովի և Վ. Ն. Վասիլկովի «Վեճի դիալեկտիկան» գիրքը: Նրանք ընդգծում են վեճի խթանիչ դերը մտածողության համար՝ ուսումնասիրության առարկա դարձնելով դրա իմացաբանական նշանակությունը, վեճի գործընթացը կարգավորելու և նպատակաուղղված դարձնելու առու-

---

[99] Տե՛ս ***Микулинский С.Р.,*** Научная дискуссия и развитие науки; ***Ярошевский М.Г.***, Дискуссия как форма научного общения; ***Урсул А.Д.***, Гносеологические особенности научной дискуссии. “Вопросы философии”. 1978, № 3, էջ 91-93; 94-103; 104-109:

[100] Տե՛ս Роль дискуссий в развитии естествознания. Отв. ред. М.Г. Ярошевский. М., 1986.

[101] Տե՛ս Психологические исследования общения. Отв. ред. Б.Ф. Ломов и др. М., 1985.

[102] ***Соколов А.Н.,*** Проблемы научной дискуссии. Логико-гносеологический анализ. Ленинград, 1980.

մով տրամաբանական ու բարոյագիտական բնույթի կանոնների կարևորության հարցերը: Այդ լույսի տակ գրքում քննարկվում են ուշագրավ հիմնահարցերի, անսովոր ու հետաքրքրաշարժ երևույթների շուրջ մամուլի էջերում ծայր առած մի շարք վիճաբանություններ[103]:

Բանավեճի տեսության և գործնականում դրա մեթոդական կիրառմանն առնչվող բազմաթիվ հարցեր են քննարկվում Ա. Վ. Ստեշովի «Ինչպես հաղթել վեճում: Բանավեճի կուլտուրայի մասին» աշխատության մեջ: Առաջարկվում են հոգեբանական, բարոյագիտական, հռետորական բնույթի մի շարք երաշխավորություններ ու արժեքավոր խորհուրդներ, դիտարկվում են վեճերի ժամանակ առավել գործածական որոշ հնարքներ ու հակահնարքներ[104]:

Ռուս հետազոտող Ա.Պ.Ալեքսեևն իր «Փաստարկում: Ճանաչողություն: Հաղորդակցում» աշխատության մեջ, մշակելով փաստարկման տեսության բազմաբանակ հարցերի մի ամբողջ համակարգ, անդրադառնում է նաև վիճաբանությանը՝ այն դիտելով որպես փաստարկողական գործունեության կազմակերպման լավագույն ձև: Ա. Ալեքսեևը վերլուծում է իդեալական բանավեճի տրամաբանական կառուցվածքը, առանձնացնում «իդեալական դիալեկտիկան» բնութագրող մի շարք գծեր[105]:

Ընդհանրապես, ըստ արժանվույն պետք է գնահատել վիճելի հարցերի շուրջ մտքերի փոխանակության, մտավոր հաղորդակցման գործընթացների հետազոտման բնագավառում հատկապես 20-րդ դարի երկրորդ կեսից ի վեր **փաստարկման տեսաբանների** ունեցած ծանրակշիռ ավանդը: Ժամանակի թելադրանքով, կապված հասարակական կյանքում հաղորդակցման երևույթների տեսակարար կշռի ավելացման, դրանց նշանակության աճի, բարդ խնդիրների համակողմանի քննարկման, որոշումների համատեղ ընդունման, կոնֆլիկտային հարցերը բանակցությունների ճանապարհով լուծելու սկզբունքների դերի ընդլայնման ու արմատավորման հետ, հետազո-

---

[103] ***Слемнёв М.А.,*** Васильков В.Н. Диалектика спора. Минск, 1990.
[104] ***Стешов А.В.,*** Как победить в споре. О культуре полемики. Ленинград, 1991.
[105] ***Алексеев А.П.,*** Аргументация. Познание. Общение. М., 1991.

տողների շրջանում նկատելիորեն աճեց հետաքրքրությունը փաստարկման երևույթի, դրա առանձնահատկությունների, գործնականում փաստարկողական առավել արդյունավետ համակարգերի ու եղանակների կիրառման հնարավորությունների նկատմամբ: 1960-ական թվականներից սկսած՝ փաստարկման խնդիրները դարձան բազմաթիվ գիտնականների և հետազոտական կենտրոնների հետևողական ուսումնասիրությունների առարկա: Այդ ժամանակներից ի վեր լույս են տեսել ստվարաքանակ հոդվածներ ու ժողովածուներ, առանձին աշխատություններ, մենագրություններ, որոնք մեծապես արժեքավոր են վիճաբանության գործընթացի տարբեր կողմերն արտացոլող հիմնահարցերի ուսումնասիրման տեսանկյունից: Գ. Ա. Բրուտյանի, Ռ. Գրուտենդորստի, Ֆ. վան Էեմերենի, Յա. Հինտիկայի, Ս. Հ. Հովհաննիսյանի, Է. Բ. Մարգարյանի, Վ.Ա. Միխայլովի, Հ.Գ. Շաքարյանի, Ի.Ս. Նարսկու, Խ. Պերելմանի, Ռ. Զ. Ջիջյանի, Վ. Բ. Ռոդոսի, Լ. Օլբրեխտ-Տիտեկայի և այլոց՝ փաստարկման տրամաբանական, հոգեբանական, հռետորական, տեղեկատվական, իմացաբանական-մեթոդաբանական, ստեղծագործական կողմերի ու խնդիրների ուսումնասիրությանը նվիրված արժեքավոր հետազոտություններն ու ստեղծագործություններն անմիջականորեն առնչվում են տարակարծություններ առաջ բերող հարցերի շուրջ մտքերի փոխանակության երևույթի, բանավեճի տարբեր կողմերի ու առանձնահատկությունների ուսումնասիրությանը և մեծապես կարևոր են դրանց իմաստավորման, առավել խոր ըմբռնման ու մեկնության տեսանկյունից[106]:

---

[106] Տե՛ս ***Брутян Г.А.,*** Аргументация. Ереван, 1984; նույն հեղ.՝ Очерк теории аргументации. Ереван, 1992; Философские проблемы аргументации. Под ред. Г.А.Брутяна, И.С.Нарского и др. Ереван, 1986; “Вопросы философии”, вып. 4, Аргументация. Ереван, 1984; նույնը՝ вып. 6-7, разд.: Теория аргументации. Ереван, 1988; ***Eemeren van F. H. and Grootendorst R. A.,*** Speech Acts in Argumentative Discussions. A Theoretical Model for Analysis of Discussions Directed Towards Solving Conflicts of Opinion. Foris Publication, 1984; ***Eemeren van F. H., Grootendorst R., Kruiger T.***, Handbook of Argumentation Theory. Foris Publication, 1987; ***Hintikka J.,*** A Spectrum of Logics of Questioning. In: «Philosophica», Gent, 1985, vol. 35, № 1; նույն հեղինակի՝ The Role of Logic in Argumentation. In: «The Monist», January, 1989, vol. 72, № 1; ***Perelman Ch.***, The New Rhetoric and the Humanities. Dordrecht, 1979; ***Perelman Ch.,***

Փաստարկման ու ճարտասանության տրամաբանական և արտատրամաբանական (արարողակարգային, պերճախոսական, էթիկական, լեզվախոսքային) գործոնները, բանավեճի ընթացքում կիրառվող մի շարք հնարներ են վերլուծվում սույն մենագրության հեղինակի՝ բուհական և հետբուհական կրթական հաստատությունների համար նախատեսված «Փաստարկում և հռետորություն» ուսումնական ձեռնարկում[107]:

Հայ փիլիսոփայական մտքի պատմության ընթացքում փաստարկման հիմնահարցերի հետազոտման ասպարեզում ձևավորված տեսական ժառանգության և փաստարկման երևանյան դպրոցի շրջանակներում իրականացված հետազոտությունների վերլուծությունն է բովանդակում Հասմիկ Հովհաննիսյանի «Փաստարկման հարցերը հայ փիլիսոփայական մտքի պատմության համատեքստում» աշխատությունը[108]:

Քաղաքական երկխոսության և բանակցությունների տեսական և գործնական հիմնահարցերի վերլուծությանն է նվիրված Խ. Ս. Գալստյանի «Քաղաքական բանակցություններ. տեսություն և պրակտիկա» աշխատությունը[109]:

Քաղաքական փաստարկման առանձնահատկությունների, դրա արդյունավետությանը նպաստող և խոչընդոտող գործոնների ուսումնասիրությունն է նվիրված Արա և Գեորգ Բրուտյանների «Քաղաքական փաստարկման 101 կանոն» աշխատությունը[110]:

Գործարար հաղորդակցման և բանակցությունների արարողակարգային, վերբալ և ոչ վերվբալ, հոգեբանական և այլ տեսանկյուն-

---

Olbrechts-Tyteca L., The New Rhetoric. A Treatise on Argumentation. Notre-Dame-London, 1969:

[107] Տե՛ս ***Հովհաննիսյան Հ. Օ.,*** Փաստարկում և հռետորություն: Դասընթաց իրավագիտության մագիստրանտների և իրավական ոլորտի աշխատողների համար: Եր., 2015:

[108] Տե՛ս ***Հովհաննիսյան Հ. Հ.,*** Փաստարկման հարցերը հայ փիլիսոփայական մտքի պատմության համատեքստում: Գիրք 1; 2, Եր., 2005; 2009:

[109] Տե՛ս ***Գալստյան Խ. Ս.,*** «Քաղաքական բանակցություններ. տեսություն և պրակտիկա»: Եր., 2007:

[110] Տե՛ս ***Բրուտյան Ա., Բրուտյան Գ.,*** Քաղաքական փաստարկման 101 կանոն: Եր., 2003:

ների վերլուծությանն են նվիրված Ա.Պետրոսյանի, Ս.Վարդումյանի ձեռնարկները[111]:

Ճարտասանության հիմնահարցերի և միջոցների վերլուծությանն են նվիրված Վ. Ա. Միրզոյանի «Ճարտասանություն» և Ա. Ս. Վարդումյանի «Հռետորիկա շատերի և բոլորի համար» ձեռնարկները[112]:

Ներկայումս հրապարակում կան նաև բանավեճի գործնական խնդիրներին, կյանքի ու հասարակական գործունեության ամենատարբեր ոլորտներում բանակցությունների արդյունավետ վարման հարցերին նվիրված՝ կոնկրետ հանձնարարականներ ու երաշխավորություններ պարունակող բազմաթիվ ուղեցույցներ և ձեռնարկներ, որոնք ուղղված են ծառայողների, գործարար մարդկանց ու մտավորականների շրջանում արդյունավետ հաղորդակցման մեթոդների, հմտությունների մշակմանն ու զարգացմանը: Դրանց մեջ քիչ չեն գիտական տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող, հիմնարար հետազոտությունների ու հարուստ փորձի ընդհանրացման վրա հիմնված ուսումնասիրությունները: Այդ առումով կարելի է առանձնացնել նաև Պրեդրագ Միցիչի, Օտտո Էռնստի, Ռոլանդ Դուլեկի, Ջոն Ֆիլդենի հետազոտությունները, հետաքրքրական ու բավականին արժեքավոր է Հարվարդի համալսարանի մասնագետների կողմից մշակվող գործնական բանակցությունների, բանավեճի վարման հարուստ ու բովանդակալից ծրագիրը և այլն[113]:

---

[111] Տե՛ս ***Պետրոսյան Ա.,*** Գործարար հաղորդակցություն: Եր., 2003: ***Վարդումյան Ս.,*** Կառավարչական հմտությունների զարգացում: Եր., 2014, էջ 101-128:

[112] Տե՛ս ***Միրզոյան Վ. Ա.,*** Ճարտասանություն: Եր., 2010: ***Վարդումյան Ա. Ս.,*** Հռետորիկա շատերի և բոլորի համար: Եր., 2019:

[113] Տե՛ս ***Мицич П.,*** Как проводить деловую беседу. М., 1987; ***Эрнст Отто,*** Слово предоставлено вам. (Практические рекомендации по ведению деловых бесед и переговоров). М., 1988; ***Dulek R. E., Filden J.S .,*** Principles of Business Communication. New York: Macmillan, 1990; ***Dulek R. E., Filden J. S. and Hill J. S.***, International Communication: A Executive Primer. New York: Macmillan, 1990; ***Fisher R., Uri W.,*** Getting to Yes: Negotiating Agreement without Giving in. New York, 1991:

ԳԼՈՒԽ 2
ՎԵՃ / ԲԱՆԱՎԵՃԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Ի՞նչ է վեճը: Դրա սահմանումները

Մասնագիտական գրականության մեջ դժվար է գտնել վեճի (բանավեճի, վիճաբանության) ամբողջական, ամփոփ մի սահմանում, որն այդ երևույթն ընդգրկեր համակողմանիորեն, տար դրա սպառիչ ու լիակատար բնութագիրը: Ավելին, այդպիսի սահմանման հնարավորության հարցը ոմանց կարծիքով ինքնին վիճարկելի է: Դա բացատրվում է վեճի երևույթի բարդությամբ ու բազմազանությամբ: Որպես սոցիալ-հոգեբանական բաղադրյալ երևույթ՝ վեճն ունի բազմաթիվ հատկանիշներ, զանազան բնութագծեր: Այն կարելի է ուսումնասիրել ու քննարկել (և ըստ այդմ էլ՝ սահմանել) տարբեր տեսանկյուններից:

Վեճը (բանավեճը) կարելի է դիտարկել որպես **հաղորդակցման երևույթ**: Այդ դեպքում առաջին պլան են գալիս մասնակից կողմերի մտադրությունները, նրանց նպատակադրվածությունը, միմյանց հասկանալու հնարավորությունները, վիճաբանության յուրահատուկ մարդկային ու հասարակական բովանդակությունը:

Վիճաբանության երևույթը կարելի է հետազոտել **ձևական-տրամաբանական կառուցվածքի տեսանկյունից**՝ մի կողմ թողնելով մասնակից կողմերի վարքին ու նպատակադրվածությանն առնչվող խնդիրները և կենտրոնանալով թեզիս-հակաթեզիս, փաստարկներ-հակափաստարկներ, մտահանգում, կշռադատություն, ապացուցումհերքում բաղադրատարրերի վերլուծության վրա:

Այն կարելի է ուսումնասիրել որպես մարդկային կեցության և գործունեության յուրահատուկ, տարբերակիչ բնութագիծ, որպես **մարդկային գործունեության մի առանձին բնագավառ** (ուսումնա-

սիրման այդ տեսանկյունն Ա. Պ. Ալեքսեևն անվանում է գործունեական)[1]:

Վեճի ուսումնասիրման հարցում կարելի է ցուցաբերել նաև **հոգեբանական մոտեցում**: Այդպիսի մոտեցումը ենթադրում է մասնակիցների հոգեկան վիճակի, վարքի և վիճաբանության արդյունքների, ընթացքի, գործածվող միջոցների ու եղանակների ընտրության վրա դրանց ազդեցության ուսումնասիրություն՝ լարանի տրամադրվածության և հուզական մթնոլորտի հաշվառմամբ:

Վեճը կարելի է ուսումնասիրել **իմացաբանական տեսանկյունից**, վերհանելով դրա դերն ու նշանակությունը մարդկային ճանաչողության, գիտելիքի զարգացման գործընթացում: **Մեթոդաբանական առումով** վեճի դիտարկումը ենթադրում է դրա, որպես արդյունավետ հաղորդակցման, ստեղծագործական աշխատանքի կազմակերպման, նոր գիտելիքի ստացման և գիտական հետազոտության կառուցման ձև կամ եղանակ գործածելու հնարավորությունների ուսումնասիրություն:

Վեճերը կարելի է ուսումնասիրել նաև **տեղեկատվական, բարոյագիտական, վարքի կանոնների, արարողակարգի ու ընթացակարգի սկզբունքների և այլ տեսանկյուններից**:

Վեճի բարդ ու բաղադրյալ բնույթը, բազմաթիվ տարրերի փոխմիահյուսվածությունն է պատճառը, թերևս, որ, ինչպես նկատում է Ա. Ն. Սոկոլովը 1980 թ. հրատարապված իր աշխատության մեջ. «Գրականության մեջ չկա մեր տեսակետից գոհացուցիչ սահմանում, թե ինչ է վեճը: Առաջարկվում են ամենատարբեր սահմանումներ, որոնք ընդգծում են տվյալ գործընթացի այս կամ այն առանձին կողմերը»[2]:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի համապատասխան բաժնում կարդում ենք. «***Վեճ*** - կարծիքների տար-

---

[1] Տե՛ս ***Алексеев А.П.,*** Аргументация. Познание. Общение, էջ 18: Տե՛ս նաև ***Налчаджян А.А.,*** Конфликт, аргументация и адаптация. В кн.: Философские проблемы аргументации, էջ 414:

[2] ***Соколов А.Н.,*** Проблемы научной дискуссии. Логико-гносеологический анализ, էջ 51: Այդ փաստի վրա ուշադրություն է հրավիրում նաև Լ. Գ. Պավլովան. տե՛ս ***Павлова Л.Г.,*** Спор, дискуссия, полемика. М., 1991, էջ 5-6:

բերությունից ծագած վիճաբանություն՝ հակառակություն, բանակռիվ խոսքով կամ գրչով, երբ յուրաքանչյուրն աշխատում է պաշտպանել իր կարծիքը և հերքել հակառակորդինը»: Ն. Ի. Կոնդակովն իր «Տրամաբանական տեղեկատու բառարանում» առաջարկում է հետևյալ սահմանումը. «Վեճը ինչ-որ բանի ապացուցումն է, որի ընթացքում կողմերից ամեն մեկը պաշտպանում է քննարկվող հարցի իր ըմբռնումը և հերքում հակառակորդի կարծիքը»[3]: Սակայն պետք է նկատել, որ ինչ-որ բանի ճշմարտության կամ սխալականության ապացուցումը չի կարող սպառել վեճ-երևույթի բովանդակությունը, դա վեճը բնութագրող կողմերից, առանձնահատկություններից միայն մեկն է:

Մեկ ուրիշ կողմի վրա է ուշադրություն հրավիրում լեհ հետազոտող Յու. Պետերը, որը գրում է, թե վեճը պայքար է խոսքի միջոցով՝ տարակարծությունների կամ հայացքների հակասության ֆոնի վրա:[4]

Մասնագիտական գրականության մեջ հանդիպող՝ վեճ/բանավեճի սահմանումներն ունեն մի շարք ընդհանուր գծեր: Հեղինակների մեծամասնությունը, որպես կանոն, իրենց սահմանումներում արձանագրում է բանավեճի գործընթացին բնորոշ այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են քննարկվող հարցի շուրջ տարակարծությունների գոյության փաստը, տարբեր տեսակետների բախման ճանապարհով այս կամ այն դրույթի ճշմարտացիության ապացուցումն ու դրան հակասող դրույթների հերքումը, հաճախ էլ ուղղակի ընդգծվում է բանավեճ/վեճի արդյունքում ճշմարտության հայտնաբերման մասին դրույթը (որն, ինչ խոսք, միշտ չէ, որ արդարացված է. ոչ բոլոր վեճերն են հանգեցնում կամ նպաստում ճշմարտության հայտնաբերմանը և ոչ բոլորն են իրենց առջև այդպիսի նպատակ դնում):

Ռուս գիտնական Ա. Վ. Ստեշովը, վեճի մասին ընթերցողի մոտ ավելի ամբողջական և լիակատար պատկերացում ձևավորելու համար, դիմում է սխեմաների մեթոդին՝ առաջարկելով վեճի, բանավեճի, վիճաբանության (спор, дискуссия, полемика) համար ընդհանուր

---

[3] ***Кондаков Н.И.,*** Логический словарь-справочник. М., 1976, էջ 565:
[4] Ըստ՝ ***Соколов А.Н.,*** Проблемы научной дискуссии, էջ 51:

գծագրային մոդելը, որի հիմքում, ըստ նրա, ընկած է Ս. Բ. Ծերեթելու (1907-1966) առաջարկած մտածողության քսան օրենքների փոխադարձ կապը:[5] Հենվելով այդ մոդելի վրա՝ Ստեշովն առաջարկում է հետևյալ սահմանումը. «Բանավեճը (дискуссия) հիմնախնդրի համատեղ հետազոտումն է, որտեղ կողմերից յուրաքանչյուրը, վիճարկելով (հերքելով) զրուցակցի (հակառակորդի) միտքը, փաստարկում է (պաշտպանում է) սեփական տեսակետը (ըմբռնումը) և հավակնում է հասնել նպատակին (ճշմարտությանը)»[6]:

Ըստ Լ. Գ. Պավլովայի՝ վեճի տակ հասկացվում է «կարծիքների ցանկացած բախում, տարակարծություն տեսակետներում՝ որևէ հարցի, առարկայի կապակցությամբ, պայքար, որի ընթացքում կողմերից ամեն մեկը պաշտպանում է իր ճիշտ լինելը»[7]:

Ա. Ն. Սոկոլովն էլ, քննադատական մոտեցում ցուցաբերելով գրականության մեջ հանդիպող տարբեր սահմանումների նկատմամբ, առաջարկում է իր իսկ խոսքերով՝ շատ թե քիչ գոհացուցիչ, սակայն դեռևս ոչ լրիվ հետևյալ տարբերակը. «Վեճը միմյանց հակասող կարծիքների պայքար է՝ դրանցից մեկի սխալականության (կամ անհամոզիչ լինելու) և մյուսի ճշմարտացիության (կամ համոզիչ լինելու) ապացուցման նպատակով, որը տեղի է ունենում հարաբերականորեն լայն տարածական և ժամանակային սահմաններում»[8]:

Նշված սահմանումից բացի՝ Սոկոլովի մոտ առկա է վեճի երևույթի ըմբռնման մի ինքնատիպ մոտեցում ևս, որը, սակայն, արտացոլված չէ նրա՝ վերը ներկայացված սահմանման մեջ և այդ առումով չի ստացել իր հետագա զարգացումն ու արդյունավետ տրամաբանական հանգուցալուծումը: Դրա էությունը հետևյալն է: Գոյություն ունի **վիճելի հարցերի շուրջ մտքերի փոխանակում**՝ որպես մտքերի փոխանակման ու հաղորդակցման առավել լայն ըմբռնման մի առանձին եղանակ, ձև կամ բնագավառ: Իսկ վեճ (спор), բանավեճ (дискуссия) և վիճաբանություն (полемика) հասկացությունները,

---

[5] Տե՛ս ***Стешов А.В.,*** Как победить в споре. О культуре полемики, էջ 8-12:
[6] Նույնը, էջ 11:
[7] ***Павлова Л.Г.,*** Спор, дискуссия, полемика, էջ 6:
[8] ***Соколов А.Н.,*** Проблемы научной дискуссии, էջ 60:

որոնք մասնագիտական գրականության մեջ հաճախ նույնացվում են, ռուս հետազոտողի մոտ հանդես են գալիս իբրև վիճելի հարցի շուրջ մտքերի փոխանակման սկզբունքորեն տարբեր եղանակներ:[9] Ընդ որում, նրա կարծիքով, վեճը մտքերի փոխանակման ավելի ցածր ու անընդունելի ձև է, քան բանավեճն ու վիճաբանությունը: Այդպիսի տարբերակման առանձնահատկությունների, ինչպես նաև վիճելի հարցի շուրջ մտքերի փոխանակության տարբեր ձևերին յուրահատուկ տարածաժամանակային սահմանների վերաբերյալ սոկոլովյան տեսակետի մասին առավել մանրամասն կխոսվի այս գլխի երրորդ բաժնում:

Այստեղ հարկ է նշել միայն, որ սոկոլովյան հայեցակետի ամենաարժեքավոր կողմն, ըստ էության, այն է որ, **մտավոր պայքարը (բանավեճը) դիտարկվում է իբրև մտքերի փոխանակության երևույթի ավելի լայն ըմբռնման՝ հաղորդակցման առանձին եղանակ և մասնավոր դեպք**:

Արթուր Շոպենհաուերը վեճի երևույթի մեկնաբանման հարցում ցուցաբերում է ծագումնաբանական յուրօրինակ մոտեցում: Նա վեճը դիտարկում է իբրև «երկու բանական էակների հաղորդակցման, նրանց միասին, համատեղ մտածելու» ընթացքում առաջացած «մտքերի պայքար», որը ծագում է «մաքուր մտածողությունից» անհատական տարբերությունների պատճառով կատարվող շեղումների հետևանքով[10]: Ըստ Շոպենհաուերի՝ վեճին մասնակցող երկու անհատները, «որպես մաքուր բանականություն, պետք է որ միմյանց հետ համաձայն լինեն»[11]: Սակայն, նրանցից ամեն մեկն ունի միայն իրեն բնորոշ առանձնահատկություններ, որոնցով էլ նա տարբերվում է ուրիշներից: Հենց այդ առանձնահատկություններն ու տարբերություններն էլ էմպիրիկ մակարդակում «համատեղ մտածող մարդկանց» միջև առաջ են բերում տարաձայնություններ կամ, որ նույնն է՝ շեղումներ «մաքուր մտածողությունից»: Եվ նրանցից «ամեն մեկը ձգտում է իր անհատական մտածողությանը տալ մաքուրի և օբյեկ-

[9] Տես նույնը, էջ 59-84:
[10] ***Schopenhauer A.,*** Handschriftlicher Nachlass. Hrsg. v. Grisebach Ed. Bd. 2, էջ 72:
[11] Նույն տեղում:

տիվի նշանակություն», ներկայացնել այն որպես այդպիսին: Քանզի «մարդն իր բնույթով վիճող է», բնությունից օժտված է վիճելու յուրահատուկ կրքով[12]:

Իհարկե, մարդիկ չեն կարող անգամ նույն իրավիճակում բացարձակապես միանման մտածել: Առավել ևս, որ արտաքին աշխարհն ինքնին բարդ է, հակասական ու տարբեր մեկնությունների տեղիք է տալիս: Ամեն մեկն ունի կյանքի իր փորձը, կրթվածության մակարդակը, մտածելակերպն ու հոգեկան կերտվածքը, իրականության իմաստավորման իր առանձնահատկությունները: Այստեղից՝ պատմական իրադարձությունների և հասարակական երևույթների գնահատականների բազմազանությունը, ընդունելիք որոշումների և կատարելիք գործողությունների մասին դատողությունների լայն սպեկտրն ու տեսականին: Եվ որպես դրա հետևանք կամ տրամաբանական շարունակություն՝ կարծիքների բախումն ու վեճերի առաջացումը:

Խոսելով իմացության գործընթացում տարակարծությունների, հակասությունների առաջացման և դրանց լուծման ու հարթեցման մասին՝ Ա. Ն. Սոկոլովը գրում է. «...ճանաչողության արդյունքների պահանջվող, ցանկալի միանշանակությունն ու ճշմարտացիությունը երբեք միանգամից ձեռք չի բերվում արտաքին աշխարհի որակական բազմազանության, իմացության բարդության ու հակասականության, ճանաչողության սուբյեկտ հանդիսացող մարդկանց անհատական տարբերությունների պատճառով, պատմականորեն կուտակված հանրագումարների հետ ճանաչողության արդյունքների առդրման ու համեմատման անհրաժեշտության հետևանքով: Մարդկանց հոգևոր գործունեության արդյունքների անհրաժեշտ նույնականությունն ու ճշմարտացիությունը միշտ էլ կլինի դրանք միմյանց և հետազոտվող իրականության հետ առդրման արդյունք...»[13]:

Ինչպես իրավացիորեն նկատում են «Վեճի դիալեկտիկան» գրքի հեղինակներ Վ. Վասիլկովն ու Մ. Սլեմյովը, ամեն մի վիճաբանության հիմքը կազմում է զրույցը, երկխոսությունը կամ փոխադարձ

---

[12] Տե՛ս նույնը, էջ 72-73:
[13] ***Соколов А.Н.,*** Проблемы научной дискуссии, էջ 4:

խոսակցությունը: Զրույցը բանավեճի կրտսեր քույրն է, նրա յուրահատուկ սաղմը, գենետիկ սկիզբն ու նախապատրաստական էտապը[14]: Ակնհայտ է մտավոր հաղորդակցման այդ ձևերի «ազգակցական» սերտ կապը, դրանց միջև չկան անանցանելի անջրպետներ և գործնականում հաճախակի են անցումները մեկից մյուսին:

Բանավեճի երևույթը բնորոշելու առումով, անշուշտ, առավել ճիշտ և արդյունավետ կարող է լինել **դրա դիտարկումը մարդկային-մտավոր հաղորդակցման ընդհանուր ֆոնի վրա և այդ հաղորդակցման տարբեր ձևերի հետ հարաբերակցության համատեքստում:**

Ինչպես հետո կտեսնենք, վեճերը տարբեր են լինում ըստ իրենց առարկայի, կազմակերպման ձևերի, տարածայնությունների հաղթահարման եղանակների և այլն: Սակայն դրանք բոլորն էլ ունեն զարգացման ընդհանուր սկզբունքներ, համանման տրամաբանական կառուցվածք: «Վեճի դիալեկտիկան» աշխատության հեղինակները վեճի մեջ առանձնացնում են երեք գլխավոր օղակներ, «նյարդային գլխավոր հանգույցներ»՝ թեզիս, փաստարկներ և ապացուցում[15]: Թեզիսն այն արտահայտությունն է, որ դրվում է քննարկման և որն իր ճշմարտության հիմնավորման կարիքն ունի: Այն դրույթները, որոնք օգտագործվում են այդ նպատակով, կոչվում են փաստարկներ: Թեզիսի և փաստարկների միացումը ապացուցումն է: Վերջինս «այնպիսի կշռադատություն է, որի ժամանակ փաստարկներից բխեցվում է թեզիսի ճշմարտացիությունը կամ կեղծ լինելը»[16]: Սակայն վեճի ընթացքում ոչ միայն ապացուցում ու հերքում են, այլև համոզում, հիմնավորում, փաստարկում՝ դիմելով պերճախոսության հնարքներին: Բացի տրամաբանական տեսանկյունները, բանավեճն ունի նաև հռետորական, հոգեբանական, բարոյագիտական և գեղագիտական կողմեր, որոնց ճանաչումն ու մտավոր մրցակցության ընթացքում նկատի առնելը պայմանավորում է այդ գործընթացի կառուցողական բնույթն ու արդյունավետ ելքը: Այնպես որ, ճիշտ ու արդ-

---

[14] ***Слемнёв М.А., Васильков В.Н.,*** Диалектика спора. Минск, 1990, էջ 17:
[15] Տես նույնը, էջ 98:
[16] Նույն տեղում:

յունավետ բանավիճել կարողանալն էլ մի յուրահատուկ և նուրբ արվեստ է:

Ի մի բերելով վերը քննարկված նյութը՝ կարելի է տալ բանավեճի (վեճի, վիճաբանության) գործընթացի նկարագրությունն ընդհանուր գծերով: Ակնհայտ է, որ բանավեճի ժամանակ գործ ունենք երկու (կամ ավելի) հակադիր կողմերի հետ: Պարզ է նաև, որ դրանց հակադրությունն առաջանում է որոշակի մտքի, գաղափարի, հիմնախնդրի շուրջ, որն էլ կազմում է վեճի նյութը կամ առարկան և որոշում դրա բովանդակությունը: Այսինքն, բանավեճի ժամանակ առկա է որոշակի գաղափար, Ս. Պովարնինի տերմինաբանությամբ՝ «վիճելի միտք»[17] կամ, ինչպես Ա. Սոկոլովն է ասում՝ «վիճելի հարց»[18], որի շուրջն էլ առաջանում են տարակարծություններ: Այնուհետև կողմերից մեկն առաջարկում ու ներկայացնում է իր տեսակետը, ձևակերպելով այն որոշակի դատողությունների կամ դրույթի ձևով, որը կոչվում է **թեզիս** (դրույթ): Երկրորդ կողմը, համաձայն չլինելով ներկայացված դրույթի հետ, դրան հակադրում է իր թեզիսը կամ, որ ավելի ճիշտ է՝ **հակաթեզիսը** (հակադրույթ), արտահայտելով անհամաձայնության հիմնական կետերը: Այսպիսով, ստացվում են երկու հակամարտ ու անհամատեղելի դրույթ (թեզիս և հակաթեզիս): Դրանց միջև հետագա պայքարն էլ կազմում է բանավեճի բովանդակությունը: Եթե բանավեճը նույնացնենք շախմատային պայքարի հետ, ապա թեզիսին ու հակաթեզիսին կհամապատասխանեն սև և սպիտակ արքաները, փաստարկներին ու հակափաստարկներին՝ մնացած բոլոր ֆիգուրները, իսկ ապացուցմանը, հերքմանը, հիմնավորմանը, պերճախոսությանը՝ ֆիգուրների միջոցով իրականացվող քայլերն ու դրանց բարդ զուգակցությունները:

Մասնագիտական գրականության մեջ առավել հաճախ են հանդիպում վեճի (բանավեճի) այսպիսի նկարագրական, ոչ բացահայտ, համատեքստային, ինչպես նաև վերը դիտարկված գենետիկական և օպերացիոնալ բնույթի սահմանումներ: Առանձին դեպքերում, իհար-

---

[17] ***Поварнин С.И.,*** Спор., О теории и практике спора. “Вопросы философии”. 1990, № 3, էջ 61:

[18] ***Соколов А.Н.,*** Проблемы научной дискуссии, էջ 92:

կե, դրանք բավարարում են կոնկրետ հետազոտության առջև դրված որոշակի պահանջները և կարող են գոհացուցիչ լինել այդ շրջանակներում: Սակայն տվյալ համատեքստից դուրս դրանք սովորաբար լինում են կամ միակողմանի ու դժվարըմբռնելի, կամ էլ ճանձրալի ու ծավալուն՝ կորցնելով գործնական արժեքն ու նշանակությունը:

Ելնելով վերը նշված այն մտքից, որ բնական և առավել նպատակահարմար է բանավեճը (վեճը, վիճաբանությունը) դիտարկել մտավոր հաղորդակցման տիրույթում, դրա տարբեր ձևերի ու եղանակների հետ հարաբերակցության համատեքստում՝ հետագա շրջանառության և գործածության համար կարելի է առաջարկել բանավեճի բոլոր ձևերի համար ընդհանուր և, ըստ էության, դրա առավել էական հատկանիշները բովանդակող հետևյալ սահմանումը. ***«Բանավեճը (վեճը) մտավոր հաղորդակցման այնպիսի եղանակ է, որին բնորոշ է քննարկվող հարցի (հիմնախնդրի, թեմայի) շուրջ մասնակից կողմերի բացահայտ հակադրվածությունն ու պայքարը»:***

Մերձավոր սեռի և տեսակային տարբերության սկզբունքով կառուցված այս սահմանումը, սեղմ ու հակիրճ լինելով հանդերձ, արտացոլում է բանավեճի ամենաընդհանուր և ամենաէական բնութագիրը՝ դասելով այն մտավոր հաղորդակցման եղանակների շարքը: Բնավեճն այլ բան չէ, քան մտքերի, տեղեկույթի փոխանակում, հաղորդակցման մի առանձին ձև, տարբերակ: Այդ շրջանակներից դուրս դրա մասին խոսելն անիմաստ է: Բանավեճի ժամանակ տեղի է ունենում մտքերի աշխույժ փոխանակություն, առկա է հակասական տեղեկատվության առնվազն երկկողմանի փոխադարձ հոսք: Այն մտավոր հաղորդակցման, թերևս, ամենաակտիվ ոլորտն է, դրա անկապտելի ձևերից ու եղանակներից մեկը:

Սահմանման մեջ բովանդակված է նաև բանավեճի տարբերակիչ ամենագլխավոր առանձնահատկությունը՝ մասնակից կողմերի բացահայտ հակադրվածությունն ու մրցակցությունը քննարկվող հարցի կապակցությամբ, որով այն տարբերվում է հաղորդակցման մյուս ձևերից: Բանավեճին բնորոշ բացահայտ հակադրվածության մթնոլորտը պետք է տարբերել ոչ բացահայտ, զուտ հոգեբանական և արտաքուստ թաքնված հակադրությունից, ինչպիսին կարող է լինել,

օրինակ, հակակրանքը միմյանց նկատմամբ, որը, սակայն, որոշ դեպքերում չի խանգարում կողմերին առերես ջերմ ու բարեկամական զրույց վարել և, անգամ, համաձայնության գալ քննարկվող հարցի շուրջ: Նման «դիվանագիտական» երկխոսությունն, իհարկե, չի կարելի վիճաբանությունների շարքը դասել:

Բանավեճի ընթացքում կողմերի պայքարն ունի բացահայտ բնույթ, նրանցից յուրաքանչյուրը, անհամաձայնություն հայտնելով և առարկելով հակառակորդի դրույթներն ու գաղափարները, փոխարենն առաջարկում և դրանց հակադրում է սեփական փաստարկներն ու տրամաբանական կառույցները, ձգտում բացահայտել հակառակորդի տեսակետի թույլ ու սխալ կողմերը, ապացուցել սեփական հայեցակետի ճշմարտացիությունն ու հիմնավորել դրա առավելությունները: Հակամետ գաղափարների, տեսակետների այդպիսի բացահայտ պայքարի, հակադրության, համադրության ու համեմատական վերլուծության, իրավահավասար քննարկման եղանակով են բացահայտվում և իմացության գործընթացից դուրս մղվում թյուր տեսակետներն ու սին գաղափարները: Այդ ճանապարհով է հայտնաբերվում ճշմարտությունը, ձեռք բերվում նոր գաղափարների ու մտքերի իմացություն, ինչն առավել բնորոշ է ճանաչողական կողմնորոշում ու կառուցողական բնույթ ունեցող բանավեճերին և երբեմն իր արտահայտությունն է գտնում տեսաբանների կողմից վեճի երևույթի սահմանման համար առաջարկվող ձևակերպումներում:

Նշվեց, որ բանավեճի երևույթը կարելի է դիտարկել և բնութագրել տարբեր տեսանկյուններից: Նախորդիվ առաջարկված սահմանումն էլ կարելի է ընդլայնել, դրա երկրորդ մասում նշելով ոչ միայն վեճի ամենահիմնական տարբերակիչ բնութագիծը, այլև դրանից բխող մյուս շատ թե քիչ կարևոր առանձնահատկությունները՝ վերը քննարկված տարբեր հայեցակետերի ու սահմանումների ոգով տալով այդ երեույթի կամ գործընթացի կառուցվածքային, գործունեական, ծագումնաբանական նկարագիրը և այլն: Սակայն դա ավելի շուտ տարբեր տեսանկյուններով կմեկնաբանի ու կհարստացնի

սահմանման առանցքային գաղափարը և դրանից չի փոխվի հիմնական բովանդակությունն ու էությունը[19]:

2.2. Բանավեճ և փաստարկում

Բանավեճի ժամանակ հակադիր կողմերից ամեն մեկը ձգտում է փաստարկներ բերել հօգուտ իր թեզիսի ճշմարտության, ապացուցել ու հիմնավորել այն, հերքել մյուս կողմի պաշտպանած հակաթեզիսը, համոզել նրան իր թեզիսի ճշմարտացիության և դրա ընդունման նպատակահարմարության մեջ: Այլ կերպ ասած՝ փաստարկել:

Փաստարկման հարցերին նվիրված ուսումնասիրությունները, հոդվածներն ու մենագրությունները զգալիորեն հեշտացնում են բանավեճն ուսումնասիրող տեսաբանների գործը: Քանզի փաստարկումը, որպես տարակարծություններ առաջ բերող հարցերի շուրջ մտավոր հաղորդակցման կազմակերպման նախընտրելի ձև, հարկ է դիտարկել իբրև վիճաբանության կարևոր բաղադրատարր:

Բանավեճի մեջ փաստարկման տեղի ու դերի, դրանց համեմատական բնութագրերի և փոխհարաբերության առանձնահատկությունների քննարկումը հնարավորություն է տալիս ընդլայնել, խորացնել պատկերացումներն ու գիտելիքներն ինչպես փաստարկման, այնպես էլ բանավեճի տեսական և գործնական հարցերի վերաբերյալ՝ ավելի ամբողջական ու լիակատար դարձնելով այդ երևույթների իմացությունը:

Հաղորդակցման, երկխոսության և հատկապես բանավեճի հիմնահարցերի ուսումնասիրությունը մասնագիտական գրականության մեջ, սովորաբար, այս կամ այն կերպ առնչվում է փաստարկման

---

[19] Նկատի ունենալով բանավեճի ճանաչողական-ծագումնաբանական հիմքերը՝ կարելի է առաջարկել նաև հետևյալ սահմանումը. ***բանավեճը շրջապատող իրականության ճանաչողության և մարդկային մտածողության հակասականության յուրօրինակ դրսորումն է մտավոր հաղորդակցման շրջանակներում:*** Միաժամանակ պետք է նկատել, որ, չնայած իր որոշակի արժանիքներին՝ հակիրճությանը, հարուստ բովանդակությանն ու ընդհանրությանը, սահմանման այս տարբերակն էլ, այնուամենայնիվ, բանավեճը ներկայացնում է որոշակի, առանձին վերցրած տեսանկյունից միայն:

խնդիրների ուսումնասիրման հետ և, ընդհակառակը, փաստարկման երևույթի ուսումնասիրությունը, տրամաբանորեն զարգանալով, հանգեցնում է երկխոսության, բանավեճի հիմնահարցերի հետազոտությանը: Երբեմն էլ կարելի է հանդիպել միևնույն հետազոտության շրջանակներում այդ երկու խնդիրների միավորման հետ: Դա պայմանավորված է բանավեճի և փաստարկման, որպես մտավոր հաղորդակցման ոլորտին յուրահատուկ և այն զգալիորեն բնութագրող երևույթների փոխադարձ կապով ու միահյուսվածությամբ:

Գոյաբանական այդ կապն ու միասնությունը վեր է ածվում իմացաբանականի, երբ արտացոլվում է ճանաչողության մեջ, գիտական գիտելիքի բնագավառում: Ակնհայտ է սերտ կապը ապացուցման, փաստարկման և բանավեճի տեսությունների միջև: Դրանք փոխադարձաբար լրացնում ու հարստացնում են միմյանց:

Ապացուցման և հերքման տրամաբանական ուսմունքը կազմում է փաստարկման տեսության միջուկը, դրա առանցքային օղակը: Փաստարկման մասին ուսմունքն էլ իր հերթին բանավեճի տեսության միջուկն է, հիմնական բաղադրատարրը: Գոյություն ունի նաև այն տեսակետը, որ բանվեճի և փաստարկման տեսություններն ապացուցման տրամաբանական ուսմունքի յուրատեսակ ընդլայնումներն են, առաջ են գալիս դրա ընդարձակման արդյունքում[20]:

Ընդունված հայեցակետի համաձայն՝ փաստարկումը «կշռադատության այնպիսի եղանակ է, որի ընթացքում առաջադրվում է որևիցե դրույթ՝ որպես ապացուցման թեզիս, քննարկվում են դրա ճշմարտության օգտին բերված փաստարկներն ու հնարավոր հակափաստարկները, արժեքավորվում են ինչպես ապացուցման, այնպես էլ հերքման թեզիսն ու հիմքերը: Հերքվում է հակաթեզիսը, այսինքն՝ ընդդիմախոսի թեզիսը, ապացուցվում է թեզիսը: Ինչպես ապացուցողի, այնպես էլ ընդդիմախոսների *[և լսարանի-Հ. Հ.]* մոտ համոզմունք է ստեղծվում թեզիսի ճշմարիտ և հակաթեզիսի սխալ լինելու վերաբերյալ, հիմնավորվում է թեզիսի ընդունման նպատակահարմարու-

[20] Տե՛ս ***Родос В.Б.,*** О правилах доказательства, аргументации и полемики. В кн.: Философские проблемы аргументации. Под ред. Г.А. Брутяна, И.С. Нарского и др. Ереван, 1986, էջ 304:

թյունը՝ ակտիվ կենսաղիրքորոշման մշակման և ապացուցվող դրույթից բխող համապատասխան ծրագրերի, գործողությունների իրագործման նպատակով»[21]:

Նման ձևակերպումն արդեն որոշակիորեն հուշում է փաստարկման և բանավեճի ընդհանրությունները, սերտ միասնությունն ու փոխներթափանցվածությունը: Դրանք գոյություն ունեն մեկը մյուսի մեջ, ենթադրում են միմյանց: Մի կողմից բանավեճը բաղկացած է փաստարկողական և այդ փաստարկումն արժեքավորող կամ գնահատող մենախոսություններից: Մյուս կողմից՝ փաստարկման անգամ պարզագույն գործողությունն իր գնահատման արտահայտության հետ կարող է դիտարկվել որպես «մինի երկխոսություն» կամ «մինի վիճաբանություն»[22]:

Փաստարկման ականավոր տեսաբաններից մեկը՝ Խ. Պերելմանը, անդրադառնալով փաստարկման և ավանդական տրամաբանության փոխհարաբերության հարցերին, նշում է, որ փաստարկումը, ի տարբերություն ապացուցման, ենթադրում է մտքերի պայքար[23]: Իհարկե, այլ հարց է ապացուցման և փաստարկման պերելմանական տարբերակումն ու դրանց հակադրությունը, սակայն ճշմարիտն այն է, որ փաստարկումն արդեն ինքնին ենթադրում է մտքերի փոխանակություն, երկխոսություն: Փաստարկման գործընթացն, ըստ էության, երկխոսություն է, զրույց, բանավեճ՝ բացահայտ (երբ ընդդիմախոսն իրականում առկա է) կամ ոչ բացահայտ ձևով (երբ ընդդիմախոսը միայն ենթադրվում է)[24]:

Տեղին է նկատել նաև, որ մարդկային բանականության յուրաքանչյուր ակտ, լինի դա ապացուցում, փաստարկում, թե կշռադատության մեկ այլ ձև, չի կարող պարփակված լինել միայն սեփական շրջանակներում, լինել ինքնանպատակ: Մարդկային մտածողությանն ի սկզբանե բնորոշ է երկխոսության ձևը: Այն հասարակական

---

[21] ***Брутян Г.А.,*** Аргументация. Ереван, 1984, էջ 7: Տե՛ս նաև նույն հեղինակի Очерк теории аргументации. Ереван, 1992, էջ 15:
[22] Տե՛ս ***Алексеев А.П.,*** Аргументация. Познание. Общение, էջ 132:
[23] Տե՛ս ***Perelman Ch.,*** The New Rhetoric and the Humanities. Dordrecht, 1979, էջ 11:
[24] Տե՛ս ***Брутян Г.А.,*** Аргументация, էջ 25:

միջավայրի և հասարակական հարաբերությունների արդյունք է, և, ինչպես ցույց է տալիս փորձը, դրանցից դուրս մարդկային լեզվամտածողությունն անհնար է: Այս առումով մարդկային մտածողության յուրաքանչյուր դրսևորում, գենետիկորեն ենթադրելով մարդկային հանրության առկայություն, ունենալով իր սուբյեկտն ու առարկան, անմիջականորեն կամ ենթագիտակցաբար ենթադրում է նաև որոշակի հասցեատեր: Անգամ, երբ մարդը խորհում-մտածում է իր համար, այս դեպքում էլ «ես»-ը կարծես երկփեղկվում է «ես»-ի և «ոչ ես»-ի, «ազգային» և «համամարդկային ես»-ի, «կենսաբանական» և «սոցիալական», «բարոյական» և «իրավական ես»-ի:

Ակադեմիկոս Բրուտյանն իր «Փաստարկման տեսության ակնարկում» ընդգծում է, որ փաստարկումը երկկողմանի գործընթաց է, և այդ երկկողմանիությունն ի հայտ է գալիս այն բանում, որ յուրաքանչյուր փաստարկող ունի իր հասցեատերը[25]: Վերջինս կարող է և ֆիզիկապես ներկա չլինել, ինչը, սակայն, չի նշանակում առհասարակ նրա բացակայություն: Մարդը կարող է փաստարկել նաև առանց հասցեատիրոջ անմիջական ներկայության: Դա ավելի ակնառու է փաստարկման գրավոր շարադրման ժամանակ[26]: Հասցեատերը՝ լինի նա իրականում գոյություն ունեցող անձնավորություն, երևակայական հակառակորդ, թե մի երկրորդ «ես», ենթադրվում է բոլոր դեպքերում:

Սակայն, պետք է նկատել, որ հակառակորդի (կամ հասցեատիրոջ) փաստացի առկայության դեպքում փաստարկողի «գործը հեշտանում է», մեծանում է նաև փաստարկման գործընթացի արդյունավետությունը: Զուր չէ, որ բանավեճը համարվում է փաստարկողական գործունեության կազմակերպման խրախուսելի ձև[27]: Բանավեճի ժամանակ տեղի է ունենում, այսպես ասած, աշխատանքի բաժանում: Ինչպես գրում է լեհ տրամաբան Տադեուշ Կոտարբինսկին, «Դու կփորձես պաշտպանել քո վարկածը, ես՝ իմը, և կտեսնենք, թե դրանից ինչ դուրս կգա: Ես կփորձեմ հերքել քո դրույթները, իսկ դու՝

---

[25] ***Брутян Г.А.,*** Очерк теории аргументации, էջ 16:
[26] Տե՛ս նույն տեղում:
[27] Տե՛ս ***Алексеев А.П.,*** Аргументация. Познание. Общение, էջ 3; 132:

իմ: Եկ մեր հետազոտության մեջ հերքենք ամեն ինչ, քանզի միայն այդ ձևով է հնարավոր հայտնաբերել այն, ինչը հերքման ենթակա չէ: Այն, ինչը կդիմանա փորձությանը, կլինի համատեղ գտած ճշմարտությունը: Թող նա էլ լինի այդ վեճի միակ հաղթողը»[28]:

Փաստարկման և բանավեճի սերտ կապն ու միասնությունը, իհարկե, չի նշանակում դրանց նույնություն: Ավելին, իրականության մեջ միշտ չէ, որ այդ կապը գոյություն ունի: Փաստարկումը, ինչ խոսք, անհրաժեշտաբար ենթադրում է տարակարծություն, մտածողության այլընտրանք, ներունակ կամ բացահայտ բանավեճ: Սակայն ոչ բոլոր վիճաբանություններն են կրում փաստարկողական բնույթ: Փաստարկումը՝ որպես կշռադատության եղանակ և մտքերի փոխանակության կազմակերպման արդյունավետ ձև, կարող է բնորոշ լինել կամ չլինել մտավոր հաղորդակցման գործընթացին: Ըստ այդմ էլ, մտավոր հաղորդակցումը կարող է կրել փաստարկողական կամ ոչ փաստարկողական բնույթ:

Մտավոր պայքարի երևույթը՝ որպես մի ամբողջական համակարգ դիտարկելիս փաստարկողական բնույթ ունեցող բանավեճի շրջանակներում փաստարկումը հանդես կգա իբրև այդ ընդհանուր համակարգը մեծապես բնութագրող կարևոր կառուցվածքային օղակ, դրա կառուցման հիմնական սկզբունք: Բանավեճի հասկացությունն ավելի լայն է ու ընդգրկուն, քան փաստարկման հասկացությունը: Փաստարկումը, լինելով վեճի/բանավեճի (կամ մտավոր հաղորդակցման մեկ այլ ձևի), որպես ամբողջական համակարգի մի մասնիկը, հատվածը, իր վրա կրում է այդ համակարգի կնիքն ու բնորոշ առանձնահատկությունների դրոշմը: Վեճին մասնակցող կողմերից մեկի փաստարկողական համակարգի ուսումնասիրությունը հաճախ հնարավորություն է տալիս պատկերացում կազմել ամբողջ վեճի վերաբերյալ, վերականգնել առանձին դրվագներ: Այլ կերպ ասած, փաստարկումը յուրովի ներկայացնում, արտացոլում, հուշում է մտավոր հաղորդակցման այն ձևը (նաև բովանդակությունը), որի շրջանակներում կիրառվում է:

---

[28] ***Котарбиньский Т.,*** Избранные произведения. М., 1963, էջ 760:

Փաստարկման և բանավեճի ընդհանուր գծերի ու տարբերությունների վերաբերյալ համակողմանի պատկերացում կազմելու համար հարկ է անդրադառնալ դրանց որոշ առանձնահատկությունների ևս: Տեսական վերլուծությունների ընթացքում փաստարկումը, սովորաբար, դիտարկվում է «դոնոր-ռեցիպիենտային» մոդելի համանմանությամբ, որտեղ փաստարկողը հանդես է գալիս իբրև նախաձեռնող կողմ, նա ակտիվ է, իր գործողություններով ձգտում է «մշակել» լսարանը կամ կոնկրետ ռեցիպիենտին: Իսկ վերջինս հարաբերականորեն ավելի պասսիվ է, նրա մասնակցությունը, ֆունկցիոնալ նշանակությունը փաստարկողական գործընթացում ունի որոշ իմաստով կրավորական բնույթ[29]: Մասնակից կողմերի միջև դերային այդպիսի բաժանումը, իհարկե, ունի առավելապես ճանաչողական նշանակություն և կրում է պայմանական բնույթ: Իրականում ամեն ինչ ավելի բարդ է ու բազմակողմ: Չկան «մաքուր» փաստարկողներ ու «մաքուր» ռեցիպիենտներ:

Կենդանի զրույցի, երկխոսության և, մասնավորապես, բանավեճի պարագայում փաստարկողի ու ռեցիպիենտի դերերն ամրագրված չեն և արագորեն փոխվում են՝ հերթագայելով միմյանց: Կողմերից յուրաքանչյուրը միևնույն գործընթացի շրջանակներում կարող է հանդես գալ մեկ որպես փաստարկող, մեկ որպես ռեցիպիենտ: Վիճաբանության մասնակիցներն ունեն հավասար իրավունքներ ու հնարավորություններ, իսկ նրանց ներկայացրած փաստարկողական և հակափաստարկողական համակարգերը դիտարկվում են իբրև իրավահավասար կառույցներ:

Մասնագիտական գրականության մեջ փաստարկումը, որպես կանոն, ներկայացվում է թեզիսի ապացուցմանը կամ հակաթեզիսի

---

[29] Նման մոտեցումը, անշուշտ, պայմանական է, ունի զուտ հարաբերական բնույթ և չպետք է հիմքեր տա թերագնահատելու ռեցիպիենտի դերը: Վերջինս փաստարկման գործընթացում նույնքան կարևոր է, որքան փաստարկողի դերը: Առանց հասցեատիրոջ, փաստարկումն իքնին անիմաստ է: Նկատի ունենալով ռեցիպիենտի դերի կարևորությունը՝ Վ. Բրոկրիդին իրավացիորեն փաստարկումը դիտարկում է որպես փաստարկողի և ռեցիպիենտի համատեղ գործունեություն, իսկ նրանց համարում «համափաստարկողներ» (ըստ ***Алексеев А.П.***, Аргументация. Познание. Общение, էջ 69; 110):

հերքմանն ուղղված հետևողական կշռադատությունների շղթայի կամ մենախոսությունների հաջորդականության տեսքով: Բանավեճը, սակայն, դժվար է հանգեցնել սոսկ հետևողականորեն իրարից բխող դատողությունների հաջորդականությանը: Թե՛ տրամաբանական կառուցվածքի, թե՛ ընթացակարգի տեսանկյունից այն ավելի բարդ, արտահայտչամիջոցների ու եղանակների տեսակետից ավելի ազատ գործընթաց է:

Բաղկացած լինելով մի շարք փաստարկողական համակարգերից՝ շատ դեպքերում բանավեճն իր մեջ ընդգրկում է այնպիսի կառույցներ, որոնց թեզիսները զգալիորեն տարբերվում են ընդհանուր կամ «մեծ» թեզիսից: Դա բացատրվում է նրանով, որ «մեծ» թեզիսի ճշմարտության ապացուցումն ու հիմնավորումը հաճախ հարկ է լինում կառուցել, այսպես կոչված, օժանդակ (որպես նախադրյալներ հանդես եկող) դրույթների ապացուցման և հիմնավորման ճանապարհով:

Ի տարբերություն փաստարկման, որի առանցքը միշտ թեզիսն է, բանավեճի առանցքը կամ կապող օղակը կարող է լինել նաև թեման: Որպես այդպիսի բանավեճի օրինակ «Փաստարկում: Ճանաչողություն: Հաղորդակցում» գրքի հեղինակ Ա.Պ.Ալեքսեևը բերում է Պլատոնի «Խնջույքը»[30]: Այնտեղ փաստորեն բացակայում է միասնական թեզիսը, որի նկատմամբ մասնակիցները բաժանվեին հակադիր բանակների: Այդ բանավեճը միևնույն թեմային նվիրված մենախոսությունների ամբողջություն է: Մենախոսություններն ունեն փաստարկողական բնույթ, ընդգրկում են մյուս մասնակիցների դրույթների ու փաստարկների գնահատականներ՝ չնայած դրանք շատ տեղ չեն զբաղեցնում[31]: Այս կամ այն թեմայի շուրջ մտքերի փոխանակության նպատակով հրավիրված գիտաժողովների ժամանակ կազմակերպվող բանավեճերը, ընդարձակ քննարկումներն իրենց տրամաբանական կառուցվածքով ավելի շատ նման են պլատոնյան «Խնջույքին», քան արիստոտելյան դիալեկտիկական զրույցին[32]:

---

[30] ***Алексеев А.П.,*** նշվ. աշխ., էջ 135:
[31] Տե՛ս ***Платон,*** Сочинения в 4-х томах, т. 2, М., 1993, էջ 81-134:
[32] Տե՛ս ***Алексеев А.П.,*** նույն տեղում:

Վերջին տիպի վիճաբանություններն ավելի բնորոշ են և հաճախակի են կազմակերպվում գիտական նեղ շրջանակներում, համեմատաբար քիչ մասնակիցներով քննարկումների ժամանակ՝ լաբորատորիայի պատերի ներսում, սեմինար պարապմունքների ընթացքում և այլն:

Բանավեճերի նկատմամբ, որոնց կազմակերպող սկիզբը թեման է, չի կարելի տրամաբանական կառուցվածքին վերաբերող նույն պահանջները ներկայացնել, ինչ փաստարկողական համակարգերին և այն բանավեճերին, որոնց համար կազմակերպող սկիզբ է հանդիսանում թեզիսը: Միաժամանակ, ինչպես նշում է Ա. Ալեքսեևը, չի կարելի չնկատել, որ բանավեճերի վերջին տիպն ավելի հաճախ է խորհրդածությունների օբյեկտ դառնում, քան առաջինը[33]:

Նշվեց, որ փաստարկողական համակարգն իր վրա անխուսափելիորեն կրում է մտավոր հաղորդակցման այն ձևի կնիքը, որի շրջանակներում կիրառվում է: Որո՞նք են փաստարկման առանձնահատկությունները բանավեճի ընթացքում: Վիճաբանության երևույթի ինչպիսի՞ գծեր են առավելապես պայմանավորում փաստարկողական համակարգի բնույթը: Վերջապես, ինչպիսի՞ն է բանավեճի և փաստարկման փոխհարաբերության դիալեկտիկան:

Նախ և առաջ պետք է նկատել, որ բանավեճի ընթացքում սովորաբար ուժեղանում և վառ արտահայտվում է փաստարկման հռետորական կողմը, շեշտը դրվում է պերճախոսության, խոսքի համոզչականության ու զանազան հնարքների վրա: Այստեղ փաստարկման ընթացքը մեծապես և անմիջականորեն կախված է հակառակորդի կամ ընդդիմախոսի պահվածքից, այն բանից, թե նա ինչպես կձևակերպի իր թեզիսը, ինչպիսի փաստարկներ ու հակափաստարկներ առաջ կքաշի: Փաստարկողական համակարգը նման դեպքերում դառնում է ավելի կոնկրետ, ավելի նպատակային ու առարկայական: Փաստարկողի խնդիրն է հերքել հակառակորդի կողմից առաջադրված կոնկրետ թեզիսն ու հակափաստարկները, այլ ոչ թե առավել

[33] Նույն տեղում:

հնարավոր հակաթեզիսների ու հակափաստարկների ամբողջ համակարգեր, ինչպես մի դերասանի թատրոնում:

Բանավեճի ընթացքում կարող են կարևոր նշանակություն ստանալ նաև կողմերի տրամադրությունը, հոգեվիճակը, նախասիրություններն ու մտածելակերպի առանձնահատկությունները, անգամ՝ դեմքի միմիկան, ռեպլիկների ձևով արվող արտահայտությունները, լսարանի վարքագիծը, շահերը և այլն: Դա, անշուշտ, յուրովի է անդրադառնում այդ գործընթացի շրջանակներում կիրառվող փաստարկողական համակարգերի բնութագրերի վրա: Խ. Պերելմանն ու Լ. Օլբրեխտ-Տիտեկան նշում են, որ երբ «առաջ է գալիս վեճի, լսարանի վրա ներգործելու նպատակով դիսկուրսի օգտագործման հարցը, ապա անհնարին է հաշվի չառնել այն հոգեբանական և սոցիալական պայմանները, որոնց բացակայության դեպքում փաստարկումը կլիներ անբովանդակալից և անարդյունք»[34]:

Բանավեճի կարևոր առանձնահատուկություններից մեկն էլ կապված է մասնակիցների կազմի հետ, ինչը ևս անխուսափելիորեն իր կնիքն է դնում գործածվող փաստարկողական համակարգերի վրա: Հայտնի է, որ վեճը կարող է ունենալ ինչպես երկու, այնպես էլ երկուսից ավելի մասնակիցներ, որոնցից յուրաքանչյուրը կարող է առաջ քաշել քննարկվող հարցի վերաբերյալ իր կարծիքը, իր տեսակետը, սեփական թեզիսի ապացուցումն ու հիմնավորումը և մյուսների հերքումը պարունակող փաստարկողական իր համակարգը: Այդպիսի դեպքերում խաչվում, զուգորդվում, մրցակցության մեջ են դրվում երկուսից ավելի փաստարկողական կառույցներ: Դա, բնականաբար, հանգեցնում է բանավեճի ժամանակ կիրառվող առանձին փաստարկողական համակարգերի բարդացմանը, դրանց ընդլայնմանն ու հարստացմանը: Չէ՞ որ, ի տարբերություն վեճ-երկխոսության, բազմակողմ վեճի ժամանակ յուրաքանչյուր մասնակից պետք է հերքի արդեն ոչ թե մեկ, այլ մի քանի հակաթեզիսներ և ընդդիմախոսների կողմից առաջադրված հակափաստարկների մեկից ավելի համակարգեր:

---

[34] ***Perelman Ch., Olbrechts-Tyteca L.,*** The New Rhetoric. A Treatise on Argumentation. Notre-Dame-London, 1969, էջ 14:

Վ. Ա .Միխայլովը փաստարկման առանձնահատկությունները պայմանավորող գործոնների շարքում առանձնացնում է բանավեճի կենտրոնական հարցի բնույթը, այն բնագավառը, որտեղ տեղի է ունենում վեճը (փիլիսոփայություն, իրավունք, քաղաքականություն, բնագիտություն), տրամադրության տակ եղած ինֆորմացիայի բնույթը, մասնակիցների անհատական առանձնահատկությունները, նրանց թիվն ու սուբյեկտիվ հնարավորությունները, ազդեցության գերակշռող ձևերը, նպատակին հասնելու համար գործադրվող միջոցների և բանավեճի գործընթացը կարգավորող հոգեբանական ու սոցիալական մեխանիզմների բնույթը և այլն՝ թվով տասնմեկ գործոններ[35]: Փաստարկման բնույթն անմիջականորեն կախված է նաև բանավեճի նպատակից, որին հետամուտ են վիճող կողմերը[36]:

Իդեալական, կառուցողական բնույթի բանավեճը, որն արիստոտելյան տերմինաբանությամբ ունի զուտ դիալեկտիկական ուղղվածություն և զուրկ է սոփեստական, էրիստիկական տարրերից, ենթադրում է փաստարկողական օրինակելի համակարգեր, որոնք կառուցվում են իմացաբանական, տրամաբանական, հոգեբանական ու բարոյական կանոնների համաձայն, փոխադարձ հարգանքի, կողմերի աշխարհայացքային, բարոյական ու իրավական հավասարության սկզբունքների հիման վրա: Ճանաչողական կողմնորոշում ունեցող բանավեճի շրջանակներում փաստարկողական համակարգերը ոչ այնքան հակադրվում, որքան լրացնում են միմյանց:

Իր հերթին սոփեստական կամ էրիստիկական բնույթ ունեցող վիճաբանությունը ենթադրում է փաստարկողական արատավոր կառուցվածքներ, որտեղ ակամա կամ միտումնավոր կերպով խախտվում են վեճի իմացաբանական, տրամաբանական, բարոյա-հոգեբանական կանոնները, գործի են դրվում զանազան իմաստակություններ ու անթույլատրելի հնարքներ՝ թեզիսի նենգափոխում, փաստերի աղավաղում, հակառակորդին հոգեկան հավասարակշռությունից

---

[35] Տե՛ս ***Михайлов В. А.,*** О специфике аргументации в процессе научной дискуссии. В кн.: Философские проблемы аргументации, էջ 75-76:

[36] Տե՛ս ***Հովհաննիսյան Հ. Օ.,*** Փաստարկման և վիճաբանության փոխհարաբերության հարցի շուրջ: «Բանբեր Երևանի համալսարանի», 1994, № 3, էջ 9-11:

հանելուն ուղղված գործողություններ, ծաղր, ներշնչանք, սուտ և այլն: Իսկ երբեմն էլ, երբ վեճն անցնում է նաև էրիստիկականի ու սոփեստականի սահմանը, ի չիք են դառնում փաստարկման անգամ արատավոր ձևերը, գործի են դրվում ազդեցության ոչ փաստարկողական եղանակներ՝ սպառնալիքներ, հայհոյանք, հրաման, հարկադրանքի ու ֆիզիկական ազդեցության զանազան ձևեր:

Միշտ չէ, սակայն, և ամեն մի անարդյունավետ վիճաբանություն չէ, որ կազմված է լինում փաստարկման արատավոր համակարգերից: Տրամաբանական տեսակետից անթերի, իդեալական փաստարկողական համակարգերի անհամապատասխան, ոչ ճիշտ համակցումը ևս կարող է հանգեցնել արատավոր վիճաբանության: Դա խոսում է տվյալ գործընթացի կազմակերպման ցածր մակարդակի մասին: Այդպիսին է, օրինակ, Ս. Պովարնինի «ցրված» կամ «անձև» վիճաբանությունը, որին նա հակադրում է վեճի «կենտրոնացված» ձևը[37]: Անձև վիճաբանությունն աչքի է ընկնում անհետևողականությամբ: Սկսվելով որևիցե մի դրույթի քննարկումով, այն վեր է ածվում որևէ առանձին փաստարկի կամ ինչ-որ մասնավոր մտքի համար մղվող վեճի: Հետո կողմերը սկսում են վիճել մի երրորդ մտքի շուրջ ... և այդպես շարունակ: Հաճախ էլ պատահում է այնպես, որ վիճողները որոշ ժամանակ անց չեն կարողանում հիշել, թե ինչից սկսվեց վեճը: Եվ չնայած, որ նման վիճաբանության որոշ դրվագներ առանձին-առանձին կարող են տրամաբանական տեսակետից թվալ անթերի, դրանց ոչ ճիշտ համակցումն ու համադրումն ամենևին էլ չի կարող ունենալ կառուցողական և ճանաչողական բնույթ:

Այս գլխի հաջորդ բաժինը նվիրված է վեճ-բանավեճի բազմաթիվ ձևերին ու տեսակներին, դրանց դասակարգման տարբեր եղանակներին ու սկզբունքներին: Այստեղ, սակայն, առիթն օգտագործելով և փոքր-ինչ առաջ անցնելով, կարելի է առաջարկել դասակարգման մի սկզբունք ևս: Վեճերը կարելի է բաժանել **փաստարկողական և ոչ փաստարկողական** ձևերի: (Ըստ երևույթին, նման մոտեցումը որոշ վերապահումներով կիրառելի է նաև մտավոր հաղորդակցման և

[37] Տե՛ս ***Поварнин С.И.,*** Спор. О теории и практике спора, էջ 73:

դրա մյուս ձևերի նկատմամբ): Իհարկե, ճանաչողական, բարոյական և մարդասիրական նկատառումներով նախընտրելի են վեճի փաստարկողական ձևերը, քան անհիմն, ոչ փաստարկողական, փոխադարձ վիրավորանքների ու տուրուդմփոցի հասնող լեզվակռիվները: Փաստարկողական բանավեճը ոչ միայն հաղորդակցման ակտ, այլև ճանաչողական գործընթաց է[38]: Այդպիսի բանավեճի ընթացքում ոչ միայն հայտնաբերվում, հիմնավորվում և հրապարակվում է ճշմարիտ դրույթը, այլև քննադատաբար հերքվում և մերժվում են մասնակիցների փաստարկողական համակարգերում եղած թերություններն ու սխալները:

Ինչպես որ բանավեճն իր այս կամ այն առանձնահատկություններով կանխորոշում է փաստարկման ձևերն ու եղանակները, բովանդակությունը, փաստարկների համակարգը, այնպես էլ փաստարկումը մեծապես պայմանավորում է վեճի էությունը՝ հաղորդելով դրան ճանաչողական, բարոյական ու գեղագիտական որոշակի որակներ: Այդպիսին է փաստարկման և բանավեճի դիալեկտիկան:

2.3. Վեճի տեսակները և դրանց դասակարգումը

Ինչպես արդեն նշվել է, վեճերը միմյանցից տարբերվում են իրենց առարկայով, նպատակներով ու խնդիրներով, բարոյական, գեղագիտական երանգավորմամբ, կազմակերպման ձևերով, մասնակիցների կազմով և այլն: Տարբեր հեղինակներ վեճի տեսակների ու ձևերի դասակարգման հիմք են ընդունում դրա ամենատարբեր բնութագրիչներ:

Դեռևս վաղ շրջանի փիլիսոփաները, խորհրդածելով բանավեճի շուրջ, նկատել են այդ տարբերությունները: Հին աշխարհում բանավեճի տեսության հարցերի արծարծմանը նվիրված բաժնում նշվեց, որ այդ բնագավառում հին հույների կարևոր ներդրումներից մեկն այն էր, որ նրանք վեճերի հսկայական ու տարատեսակ բազմությունը սկզբունքորեն բաժանեցին երկու հիմնական մասի: Սահման անց-

[38] Տե՛ս ***Брутян Г.А.,*** Очерк теории аргументации, էջ 18:

կացվեց մի կողմից դիալեկտիկական, մյուս կողմից՝ էրիստիկական ու սոփեստական վեճերի միջև: Հետևելով Սոկրատեսին ու Պլատոնին՝ Արիստոտելը դիալեկտիկական զրույցը հակադրեց էրիստիկական ու սոփեստական վեճերին: Եթե առաջինի համար բնորոշը ճշմարտության հայտնաբերման ձգտումն է, ապա էրիստիկական վեճի շրջանակներում գլխավորը հաղթանակն է ամեն գնով, իսկ սոփեստական վեճի նպատակը դիմացինի և շրջապատի վրա իմաստունի տպավորություն թողնելն է: Արիստոտելի «Սոփեստական հերքումների մասին» աշխատության մեջ կարդում ենք. «... ինչպես ըմբիշների մրցության ժամանակ անազնվությունն ընդունում է որոշակի ձև, և գոյություն ունի պայքար անազնիվ միջոցներով, այնպես էլ էրիստիկան վեճի մեջ պայքար է անազնիվ միջոցներով: Քանզի ինչպես այնտեղ, մտադրվելով հաղթել ինչ գնով էլ լինի, դիմում են ցանկացած միջոցների, այստեղ էլ այդպես են վարվում նրանք, ովքեր հակված են հակաճառության: ... Իսկ նրանք, ովքեր այդպես են վարվում հանուն փառքի, շահի ետևից ընկած՝ սոփեստներ են: Քանզի սոփեստությունը, ինչպես մենք արդեն ասացինք, կեղծ իմաստության միջոցով շահի հասնելու արվեստ է, դրա համար էլ սոփեստները ձգտում են կեղծ ապացույցների»[39]: Եվ՛ էրիստիկայի վարպետները, և՛ սոփեստներն գործածում են միևնույն միջոցներն ու փաստարկները, սակայն տարբեր նպատակներով: Առաջիններն այդ անում են թվացյալ, երևակայական հաղթանակի հասնելու, իսկ սոփեստները՝ փառքի ու իմաստունի (թեկուզև՝ փուչ) համբավ ձեռք բերելու և շահի համար[40]:

Մեկ ուրիշ՝ «Տոպիկա» աշխատության մեջ Արիստոտելն ուշադրություն է հրավիրում վեճի հետևյալ տեսակների վրա. վիճաբանության ձևով կազմակերպված համատեղ հետազոտություն, ուսուցչի և աշակերտի զրույց, ուսումնական վեճ (վարժվելու և հմտություններ ձեռք բերելու նպատակով), վեճ՝ հանուն վեճի [41]:

---

[39] ***Аристотель.,*** Соч., т. 2, էջ 555:
[40] Տե՛ս նույն տեղում:
[41] Տե՛ս նունը, էջ 516:

Հին հնդկական նյայա փիլիսափայական դպրոցի ներկայացուցիչները նույնպես տարբերում էին ճանաչողական կողմնորոշում ունեցող վիճաբանությունը (վադա) վեճի արատավոր ձևերից (ջալապա, վիտանդա): Վադան վիճաբանելու բարձրագույն ձևն է, այն ընթանում է տրամաբանության բոլոր օրենքներին ու կանոններին համապատասխան և ունի ճանաչողական բնույթ: Նրան բնորոշ է փոխադարձ բարյացակամության մթնոլորտն ու ճշմարտության հայտնաբերման ձգտումը: Այդպիսին է, օրինակ, ուսուցչի և աշակերտի վեճը: Վիտանդան վեճի ավելի ցածր ձև է. կողմերից մեկը, հերքելով դիմացինի տեսակետը, չի առաջադրում իրենը: Այստեղ գերակայող է ավելի շուտ ապակառուցողական, քան կառուցողական տարրը: Ջալապան վեճի ավելի արատավոր ձև է, տիպիկ սոփեստական վիճաբանություն, որի հիմնական նպատակը հաղթանակի հասնելն է[42]:

Իսկ ինչպիսի՞ մոտեցումներ կան վեճի տարբեր ձևերի դասակարգման հարցում ժամանակակից հետազոտողների մոտ: Ա. Ն. Սոկովոլն իր «Գիտական բանավեճի հիմնախնդիրները: Տրամաբանական-իմացաբանական վերլուծություն» աշխատության մեջ այն տեսակետն է զարգացնում, որ մասնագիտական և ոչ մասնագիտական գրականության մեջ նույնացվող վեճ (спор), բանավեճ (дискуссия) և վիճաբանություն (полемика-կարելի է նաև՝ բանակռիվ) հասկացություններն անհրաժեշտ է սկզբունքորեն տարբերել իրարից և դիտել իբրև վիճելի հարցի շուրջ մտքերի փոխանակման առանձնահատուկ ձևեր[43]: Նրա կարծիքով վեճը մտքերի փոխանակման ավելի ցածր և անարդյունավետ ձև է, քան բանավեճն ու վիճաբանությունը: Վեճն իրար հակասող տեսակետների բախում է, որի ժամանակ կողմերից յուրաքանչյուրը ձգտում է հաստատել իր կարծիքը և հերքել հակառակորդինը՝ այս կամ այն սուբյեկտիվ պատճառներով չփորձելով հասկանալ, ըմբռնել վերջինիս տեսակետը, այն համարելով սխալ և հավակնելով իր դրույթների բացարձակ ճշմարտությանը[44]: Դա է

---

[42] Տե՛ս Антология мировой философии, т. 1, ч. 1, էջ 144-145: Տե՛ս նաև ***Чаттерджи С., Датта Д.,*** Введение в индийскую философию, էջ 149-150:

[43] Տե՛ս ***Соколов А.Н.,*** Проблемы научной дискусси, էջ 50-59:

[44] Նույնը, էջ 84:

պատճառը, որ ըստ Սոկոլովի, վեճերը չի կարելի բարդ հիմնահարցերի շուրջ մտքերի փոխանակման գիտական ձև համարել[45]: Մի շարք ընդհանրություններով հանդերձ, վիճաբանությունը (полемика), ի տարբերություն վեճի (спор), մտքերի փոխանակման ավելի բարձր, ավելի զարգացած ու հետևողական ձև է: Դրան ևս բնորոշ է հակառակորդ կողմերի պայքարը, որոնք սկզբունքորեն տարբեր դիրքեր են գրավում տվյալ հարցի նկատմամբ, և ամեն մեկը համոզված է իր տեսակետի գիտականության ու ճշմարտացիության և հակառակորդի սխալականության մեջ[46]: Չնայած այս դեպքում էլ մտքերի փոխանակումը չի կարող ավարտվել վիճելի հարցի լուծման երկուստեք ընդունելի տարբերակի մշակումով, բայց և այնպես, կողմերից ամեն մեկը, զարգացնելով ու հիմնավորելով իր հայացքները, օբյեկտիվորեն նպաստում է տվյալ հարցի վերաբերյալ պատկերացումների ընդլայնմանն ու խորացմանը, իսկ վիճաբանության ձևով կազմակերպված մտքերի տվյալ փոխանակումն ամբողջությամբ վերցրած՝ իմացության զարգացմանը[47]: Վիճելի հարցերի շուրջ մտքերի փոխանակության նախընտրելի և արդյունավետ ձևը բանավեճն է (дискуссия), որի մասնակիցները ձգտում են համատեղ ջանքերով հասնել ճշմարտության հայտնաբերմանը՝ նախապես գոյություն ունեցող դրույթներից ոչ մեկին ապրիորի ձևով չվերագրելով ճշմարտության արժեքներ: Սոկոլովը գրում է. «Բանավեճը ***հակադիմ*** կարծիքների (противоположных мнений) պայքար է *(ի տարբերություն վեճի ու վիճաբանության, որոնց, ըստ Սոկոլովի, բնորոշ է* ***հակասող*** (противоречивых) *տեսակետների բախումը - Հ. Հ.)*[48], դրանցից ամեն մեկի ճշմարտության աստիճանը որոշելու նպատակով գիտական կոլեկտիվ համագործակցության[49] եղանակ՝ տեղության ժամանակային և տարածական ձևերի սահմանափակության պայմաններով»[50]: Ի տարբե-

---

[45] Տե՛ս նույն տեղում:
[46] Նույնը, էջ 70:
[47] Տե՛ս նույնը, էջ 84:
[48] Նույնը, էջ 63: Տե՛ս նաև էջ 61-62; 66-67:
[49] Համագործակցության եղանակ, և ոչ թե կոնֆլիկտ, ինչպես նկատում է Ա.Սոկոլովը: Տե՛ս նույնը, էջ 62:
[50] Նույնը, էջ 63:

թություն նախորդ երկու ձևերի, այն հանգեցնում է վիճելի հարցի վերաբերյալ միասնական տեսակետի մշակմանը[51]:

Վիճելի հարցի շուրջ մտքերի փոխանակման նշված ձևերի դասակարգման և տարբերակման հիմքում Սոկոլովը դնում է մեկ այլ բնութագիծ ևս: Դա տարածաժամանակային սահմանների հարցն է: Վեճի (նաև վիճաբանության) մեջ կարող են ներգրավվել տարբեր երկրների ու տարբեր ժամանակների գիտնականներ, որոնք հաճախ իրար անձնապես չեն էլ ճանաչում: Այդպիսի վեճը կարող է տևել տասնյակ տարիներ: Իսկ բանավեճի սահմաններն այդ առումով անհամեմատ ավելի նեղ են և որոշակի[52]:

Ա. Պ. Ալեքսեևը «Փաստարկում: Ճանաչողություն: Հաղորդակցում» աշխատության մեջ իր անհամաձայնությունն է արտահայտում սոկոլովյան հայեցակետի վերաբերյալ, վիճարկելով դասակարգման նրա հիմքերը: Նա մասնավորապես նշում է, որ ինչպես վեճի (спор), այնպես էլ բանավեճի (дискуссия) դեպքում կարող են պայքարի մեջ մտնել թե՛ տրամաբանական հակասության, թե՛ տրամաբանական հակադիմության հարաբերությունների մեջ գտնվող մտքեր: Այնպիսի նպատակ, ինչպիսին հաղթել է, կամ առարկայի ըմբռնման խորացման միջոցով ճշմարտությանը մոտենալը, կարող է դրվել մտքերի փոխանակության մասնակցի կողմից՝ անկախ այն բանից՝ փոխանակման այդ ձևը վեճ է կոչվում, թե բանավեճ[53]: Ալեքսեևը գտնում է, որ եթե անգամ համաձայնենք վիճելի հարցի շուրջ մտքերի փոխանակման ձևերի տարբերակման տարածաժամանակային սահմանների մասին սոկոլովյան տեսակետին գիտության բնագավառում, միևնույն է դա չի կարող հիմք լինել մյուս՝ քաղաքական, իրավական, առօրյա կյանքի բնագավառներում վեճերի ու բանավեճերի տարբերակման համար: Ի վերջո, ռուս գիտնականն այն կարծիքն է հայտնում, որ սոկոլովյան դասակարգման սկզբունքներն, ընդհանուր առմամբ, չեն կարող հեռանկարային և հուսադրող լինել. «Կարելի է, իհարկե, փորձել այդ ճանապարհին որոշակի կոնվեն-

[51] Նույնը, էջ, 84:
[52] Տե՛ս նույնը, էջ 60; 62; 69:
[53] Տե՛ս ***Алексеев А.П.,*** Аргументация. Познание. Общение, էջ 132-133:

ցիաներ մշակել, սակայն հազիվ թե դրանք համընդհանուր ճանաչում գտնեն»[54]:

Ըստ էության, Ա. Ալեքսեևը միանգամայն ճիշտ է: Փորձը ցույց է տալիս, որ վիճելի հարցի շուրջ մտքերի փոխանակման երևույթն արտահայտող միևնույն բառային միավորին (տերմինին) տարբեր հեղինակներ տալիս են տարբեր մեկնաբանություններ, դրան վերագրում են մասամբ կամ սկզբունքորեն տարբեր բովանդակություններ: Օրինակ, «Վեճի դիալեկտիկայի» (որն, ի դեպ, ավելի ուշ է գրվել, քան Ա. Սոկոլովի «Գիտական վիճաբանության հիմնախնդիրները» աշխատությունը) հեղինակները, ի տարբերություն Ա. Սոկոլովի, վեճը (спор) դիտարկում են իբրև սեռային հասկացություն, իսկ որպես դրա առանձին ձևեր ներկայացնում են дискуссия-ն, полемикан-ն և диспут-ը[55]: (Վերջինս, ինչպես քիչ հետո կտեսնենք, Սոկոլովը դիտարկում է իբրև վեճի, բանավեճի, վիճաբանության արտահայտման մասնավոր դեպք միայն, արտաքին ձև): Նման օրինակները եզակի չեն: Դրանք կարելի է շարունակել, սակայն այստեղ ծառանում են լեզվաբանական բնույթի դժվարություններ: Բանն այն է, որ ռուսերենում գործածական և մասնագիտական գրականության մեջ առավել հաճախ հանդիպող спор, дискуссия, полемика, диспут, прения, дебаты[56] տերմիններից ոչ բոլորն ունեն իրենց հայերեն (ինչպես նաև՝ անգլերեն, գերմաներեն կամ ֆրանսերեն) համարժեքները: Թերևս, այս փաստն էլ է խոսում այն մասին, որ **այդ հասկացություններն արտացոլում են ոչ թե տվյալ երևույթի էականորեն տարբեր տեսակներն ու ձևերը, այլ օգնում են միայն որոշ դեպքերում զանազանել միևնույն երևույթի տարբեր նրբերանգները:** Այլապես, լեզուն (հատկապես այնպիսի մի ճկուն, հարուստ ու դյուրազգաց լեզու, ինչպիսին հայերենն է)՝ որպես իրականության արտացոլման միջոց, հազիվ թե

---

[54] Նույնը, էջ 133:

[55] Տե՛ս ***Слемнёв М.А., Васильков В.Н.,*** Диалектика спора, էջ 17:

[56] Հանդիպում են նաև ссора, словопрение, препирательство, словесная перепалка ձևերը, որոնք ավելի ու ավելի են հեռանում և կիառելի չեն հաղորդակցման ակադեմիական տիրույթի համատեքստում:

չարձագանքեր այդ փաստին և իր հարուստ զինանոցում համապատասխան միջոցներ չգտներ կամ նորերը չստեղծեր:

Կարևոր է նկատել նաև, որ ռուսերենում գործածական վերոհիշյալ տերմիններից միայն երկուսը՝ спор և прения բառաձևերն ունեն ռուսական ծագում, իսկ մյուսները տարբեր ժամանակներում կատարված փոխառություններ են՝ дискуссия-ն և диспут-ը ունեն լատինական ծագում (discussio – հետազոտում, ուսումնասիրում և disputatio – կշռադատել, քննարկել), полемика-ն՝ հունական (polemikos – մարտական, թշնամական բառից), дебаты ձևը՝ ֆրանսիական (debat-վեճ, քննարկում բառից):

Նշված տերմինների կապակցությամբ բառարանագիտական ուսումնասիրությունները ռուս-հայերեն, ռուս-գերմաներեն, ռուս-ֆրանսերեն, ռուս-անգլերեն տարբեր բառարաններում ցույց են տալիս, որ դրանց միջև չկան կանոնակարգված ու հստակ սահմաններ: Տարբեր տերմինների համար առաջարկվում են հայերենում, գերմաներենում, ֆրանսերենում և անգլերենում գործածական միևնույն տարբերակներն ու բառաձևերը, և ընդհակառակը (տե՛ս հետազոտությանը կից *հավելվածը*): Այսինքն, քննարկվող տերմինների հայերեն, ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն և անգլերեն տարբերակների միջև, գոյություն ունի, այսպես կոչված, ոչ իզոմորֆային (ոչ փոխմիարժեք) հարաբերություն: Սա ևս խոսում է այն տեսակետի օգտին, որ **դրանք ավելի շուտ հանդես են գալիս իբրև հոմանիշներ, քան վիճելի հարցերի շուրջ մտքերի փոխանակության սկզբունքորեն տարբեր ձևերն ամրագրող հասկացություններ:** Դրանցից ամեն մեկն առանձին վերցրած կարելի է տեղադրել այս գլխի առաջին մասում բանավեճի համար առաջարկված սահմանման մեջ՝ իբրև սահմանվող հասկացություն, և դրանից չի փոխվի սահմանման էությունը: Ժամանակակից բացատրական և հոմանիշների բառարաններում էլ այդ տերմիններն ուղղակի գործածվում են որպես հոմանիշներ և առաջարկվում միմյանց իմաստաբանական մեկնության ու բացատրության համար:

Այնպես որ, ավելի ճիշտ է հայերենում հանդիպող *վեճ, վիճաբանություն, բանավեճ, բանակռիվ* բառերը (ինչպես նաև ռուսերեն,

անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն դրանց համարժեքները) տեսական-փիլիսոփայական վերլուծությունների ընթացքում ևս դիտել իբրև հոմանիշներ, որոնք տարբեր համատեքստերում արտացոլում են միևնույն երևույթի տարբեր նրբերանգները միայն՝ դրսևորելով լեզվի արտահայտչամիջոցների հարստությունը:

Հատկանշական է նաև այն, որ վերոհիշյալ «Վեճի դիալեկտիկան» գրքի հեղինակները, վեճի (спор) տարբեր ձևերի (дискуссия, полемика, диспут) առանձնացումից ու սահմանումից անմիջապես հետո նշում են, որ իրենց աշխատության մեջ այսուհետ այդ տերմինները կօգտագործվեն որպես հոմանիշներ: «Վերջին հաշվով կարևոր է ոչ այն, թե ինչով են տարբերվում մարդկային հաղորդակցման այդ եղանակները, այլ այն, թե ինչ ընդհանուր բան ունեն»,– պարզաբանում են նրանք[57]:

Նմանատիպ անհետևողականություն կա նաև «Ինչպես հաղթել վեճում: Վիճաբանության կուլտուրայի մասին» գրքի հեղինակ Ա. Վ. Ստեշովի մոտ: Նա, հարելով Ա. Սոկոլովի «ըստ տերմինների» դասակարգման եղանակին, վեճը (спор) սկզբունքորեն առանձնացնում է բանավեճից (дискуссия), դիալեկտիկական զրույցից, երկխոսությունից՝ այն համարելով հաղորդակցման ոչ հարմար ու անարդյունավետ ձև: «Ստացվում է, բանվեճը, երկխոսությունը, դիալեկտիկական զրույցը ավելի շուտ կբերեն ճշմարտությանը (կամ միասնական նպատակին), քան վեճը, որը հագեցած է հուզական խոչընդոտներով, կրքոտ հարձակումներով, հակառակորդին խոցելու, նրան ավելի ցավոտ հարված հասցնելու և ցանկացած ճանապարհով սեփական կարծիքը պաշտպանելու ցանկությամբ: Եվ ինչքան կատաղի է կրքերի շիկացումը, որքան համառորեն են հակառակորդները պարտադրում իրենց տեսակետները, ժխտում մյուսը, այնքան նրանք ավելի են հեռանում ճշմարտությունից»[58]: Քիչ հետո, սակայն, այս տողերի հեղինակը, տալով բանավեճի (дискуссия) սահմանումը, շտապում է ավելացնել, որ այն համապատասխանում է նաև զրույց, երկխոսություն, վեճ (спор), վիճաբանություն (полемика), բանվեճ-քննարկում-

---

[57] ***Слемнёв М.А., Василльков В.Н.,*** Диалектика спора, էջ 17:

[58] ***Стешов А.В.,*** Как победить в споре. О культуре полемики, էջ 4:

ներ (прения) հասկացությունների շարքին[59]: Իր աշխատության հետագա գրեթե ամբողջ շարադրանքում նա վեճ (спор) հասկացությունն գործածում է ամենաընդհանուր իմաստով՝ դրա տակ հասկանալով կարծիքների ու գաղափարների ցանկացած պայքար: Եվ այդ ընթացքում միայն մեկ անգամ նա նորից դեկլարատիվ կերպով հիշեցնում է վեճի՝ հաղորդակցման համար անընդունելի ու աննպատակահարմար լինելու փաստը[60]: Սակայն այդ դրույթը Ա. Ստեշովի աշխատության մեջ չի ստանում իր տրամաբանական, հետևողական զարգացումը: Ավելին, այն թյուրիմացությունների ու հակասությունների տեղիք է տալիս: Այդ առումով աչքի է զարնում, թեկուզև, հենց նրա աշխատության վերնագիրը՝ «Ինչպես հաղթել վեճում: Վիճաբանության կուլտուրայի մասին»: Իհարկե, Ստեշովն իր առջև նպատակ չի դնում ուսումնասիրել հուզական խոչընդոտներով, փոխադարձ վիրավորանքներով ուղեկցվող վեճ-լեզվակռվում հաղթելու «արվեստը» և ոչ էլ կենտրոնանում ու սահմանափակվում է հենց միայն վիճաբանության կանոնների, վարման սկզբունքների ու եղանակների հետազոտությամբ: Նա ուսումնասիրում է վեճի երևույթն ընդհանրապես, իր բազմաձևության ու բազմազանության մեջ, ձգտելով միաժամանակ հավատարիմ մնալ մտավոր աշխարհում ընդունված՝ վեճի բարոյահոգեբանական ու իմացաբանական սկզբունքներին, որպես ուսումնասիրության հիմնական, առանցքային նյութ ունենալով ճանաչողական ուղղվածություն և կառուցողական բնույթ ունեցող բանավեճի խնդիրները:

Իր աշխատության «Վեճի ձևերը» բաժնում Ա. Ստեշովը նշում է նաև, որ վեճերը (споры) կարող են լինել ապոդիկտիկական[61], էրիստիկական և սոփեստական[62]: Այստեղ ևս ակնհայտ է հակասությունն ու անհետևողականությունը: «Հուզական խոչընդոտներով, կրքոտ հարձակումներով» ու եսապաշտական մղումներով հագեցած մտավոր հաղորդակցումը չի կարող ունենալ ապոդիկտիկական բնույթ: Իսկ եթե ընդունենք, որ վեճերն իրոք լինում են նաև ապոդիկտիկա-

[59] Նույնը, էջ 11:
[60] Տե՛ս նույնը, էջ138-139:
[61] Տրամաբանական կանոնների վրա հիմնված, հավաստի:
[62] Նույնը, էջ 159:

կան, ապա դուրս է գալիս, որ սխալ են Ա.Ստեշովի աշխատության մեջ վեճի մասին շարադրված նախորդ պատկերացումները: Նման հակասությունները մտքերի պայքարն արտացոլող հասկացությունների ոչ ճիշտ սահմանման, սխալ գործածման ու դրանց էպիստեմոլոգիական[63] որոշակիացման հարցում տեղ գտած ոչ սկզբունքայնության ու անհետևողականության արդյունք են:

Տերմինաբանական անհետևողականության դրսևորումների հետամուտ կարելի է լինել Ա. Ն. Սոկոլովի՝ վերը քննարկված աշխատության շարադրանքի տարբեր հատվածներում:

Թեև նա բանավեճը (дискуссия) բնութագրում է որպես տարակարծություն առաջ բերող հարցերի շուրջ մտավոր պայքարի՝ գիտնականների համատեղ գործունեության կազմակերպման նախընտրելի տարբերակ[64], և հենց այդ տերմինն է տեղ գտել նրա աշխատության վերնագրում («Проблемы научной дискуссии. Логико-гносеологический анализ»), այդուհանդերձ առանձին դեպքերում վիճաբանությունը (полемика) համարում է «վիճելի հարցի շուրջ մտքերի փոխանակման բարձրագույն»[65], «առավել զարգացած»[66], «մտքերի փոխանակման առավել նշանակալից, իրապես գիտական ձև»[67]:

Սոկոլովը նաև բազմիցս նկատում է, որ թե՛ վեճը, թե՛ վիճաբանությունը, թե՛ բանավեճը և թե՛ դրանց դրսևորման մյուս ձևերը, ինպես, օրինակ՝ դիսպուտը կազմակերպվում, տեղի են ունենում ***վիճելի հարցերի շուրջ՝ «по спорным вопросам»***[68]: Մինչդեռ վերը նշված հասկացությունների հստակ սահմանազատման պարագայում և հետևողական լինելու դեպքում թերևս պետք էր ընդունել ու արձանագրել, որ **վեճը (спор)** առաջանում է ***վիճելի (спорный)***, **վիճաբանությունը (полемика)** առաջանում է ***վիճաբանելի (полемизируемый)***, **բանա-**

---

[63] Գիտաբանական-իմացաբանական:
[64] Соколов А. Н., նշվ. աշխ., էջ 61-62; 63:
[65] Նույնը, էջ 70:
[66] Նույնը, էջ 71; 75:
[67] Նույնը, էջ 72:
[68] Տե՛ս նույնը, էջ 71; 73; 75; 76; 82; 83; 108; 111; 112; 127 և այլն:

վեճն (дискуссия) առաջանում է ***բանավիճելի (дискутируемый)***, իսկ **դիսպուտը-ը** `***дипутируемый*** հարցի (հարցերի) շուրջ...

Այս ամենը մեկ անգամ ևս ապացուցում է վիճելի հարցի շուրջ մտքերի փոխանակության ձևերի սոկոլովյան՝ ըստ գորածվող բառերի սահմանազատման արհեստական բնույթը:

Մտավոր պայքարի բնագավառն արտացոլող և մասնագիտական գրականության մեջ առավել շրջանառու տերմինների առանձնացման, ստուգաբանության, դրանց ծագումնաբանական որոշ յուրահատկությունների հիման վրա այդ հասկացությունների սահմանազատման փորձ կա նաև Լ. Գ. Պավլովայի մոտ: Իսպառ չմերժելով այդպիսի տարբերակման ճանաչողական նշանակությունը, այնուամենայնիվ հարկ է նկատել, որ այն զգալիորեն հիմնված լինելով որոշակի կոնվենցիոնալ մոտեցման վրա, հայտնի պատճառներով նույնպես զերծ չէ վերը դիտարկված բնույթի հակասություններից[69]:

Վերադառնալով Ա. Ն. Սոկոլովի «Գիտական բանավեճի հիմնախնդիրները» աշխատությանը՝ պետք է նշել, որ նա առանձնացնում է նաև վեճերի, բանավեճերի ու վիճաբանությունների դրսևորման մի շարք կոնկրետ ձևեր՝ առաջարկելով հետևյալ սխեման[70].



[69] Տե՛ս ***Павлова Л.Г.,*** Спор, дискуссия, полемика, էջ 6-7:
[70] ***Соколов А.Н.,*** Проблемы научной дискуссии, էջ 81:

Ռուս հետազոտողը նկատում է, որ ներկայացված ձևերի միջև անանցանելի սահմաններ չկան: Բանավեճը, վիճաբանությունը, վեճը, սկզբում ունենալով նշված կոնկրետ ձևերից որևէ մեկը, կարող են հետագայում ընդունել մեկ այլ ձև, հետո՝ մեկ ուրիշը և այլն: Դա խոսում է այն մասին, որ, ինչպես նկատում է նաև Ա. Ն. Սոկոլովը, այդ ձևերն ունեն առավելապես արտաքին և ոչ բովանդակային տարբերություններ[71]: Վեճի, բանավեճի, վիճաբանության արտահայտման արտաքին ձևերի մեջ Սոկոլովն առանձնացնում է диспут-ը և прения-ն: Диспут-ն, ըստ նրա, վիճելի հարցի հրապարակային քննարկումն է բանավոր, հազվադեպ՝ գրավոր ձևով: Այն երկխոսություն է, հարցի երկողմանի քննարկում՝ լսարանի ներկայությամբ: Прения-ն լսարանի ներկայությամբ մտքերի այնպիսի փոխանակություն է, որտեղ մասնակիցներից ամեն մեկը կարող է ելույթ ունենալ միայն մեկ անգամ[72]:

Սոկոլովը, դասակարգման հիմք ընդունելով տարաձայնության առարկան կամ վիճելի հարցի բնույթը, գիտության մեջ հանդիպող բանավեճերը բաժանում է երեք խմբի. բանավեճեր հիմնահարցի ձևակերպման շուրջ, հիմնահարցի հնարավոր լուծումների շուրջ և դրա լուծման հիմնավորման շուրջ: Այդ մոտեցումը նա կիրառելի է համարում նաև գիտական վիճաբանությունների և վեճերի նկատմամբ[73]:

Նշվեց, որ Ա. Վ. Ստեշովը «Ինչպես հաղթել վեճում» աշխատության մեջ, հետևելով հին հույների օրինակին, վեճերը բաժանում է նաև երեք մեծ խմբի: Ըստ նպատակի (որն, ի դեպ, մեծապես թելադրում է դրան հասնելու միջոցներն ու ձևերը)՝ նա առանձնացնում է ապոդիկտիկական, էրիստիկական և սոփեստական վեճերը: Եթե զրուցակցի նպատակը ճշմարտության հայտնաբերումն է, ապա նա վարում է ապոդիկտիկական վեճ, որը հիմնված է մտածողության ձևական օրենքների և բխեցման կանոնների վրա: Եթե ընդդիմախոսի նպատակը զրուցակցին համոզելը, իր համախոհը դարձնելն է, ապա

[71] Տե՛ս նույն տեղում:
[72] Տե՛ս նույնը, էջ 82:
[73] Տե՛ս նույնը, էջ 107-108:

նա վարում է էրիստիկական վեճ (կամ, ինչպես այլ կերպ անվանում են՝ դիալեկտիկական, որը հիմնված է դիալեկտիկայի բոլոր օրենքների վրա): Իսկ երբ մրցակցի նպատակն ամեն գնով հաղթելն է, այդպիսի վեճն անվանում են սոփեստական: Վերջինս հիմնված է մոլորությունների մեջ գցող բառային խորամանկությունների վրա[74]: Չնայած էրիստիկականի ու սոփեստականի ստեշովյան մեկնությունը որոշ չափով տարբերվում է ավանդական-արիստոտելյան ըմբռնումից, այնուամենայնիվ, պետք է ընդգծել, որ դասակարգման այս սկզբունքի հիմքում, ի տարբերություն սոկոլովյան «ըստ գործածվող բառերի» դասակարգման, ընկած է վեճի ամենաէական բնութագծերից մեկը՝ նպատակի բնույթը: Դասակարգման հարցում այդպիսի մոտեցումն, իհարկե, առավել բնական է ու ավելի առարկայական:

Իր «Վեճ: Վեճի տեսության և պրակտիկայի մասին» աշխատության մեջ Ս.Ի.Պովարնինը վեճերի դասակարգման հարցին մոտենում է ամենատարբեր տեսանկյուններից: Նա վեճի տեսակներն առանձնացնում է ըստ վիճելի մտքի, բովանդակության, կազմակերպման ձևի, մասնակիցների թվի, շարժառիթների և այլն:

Ըստ վիճելի հարցի բնույթի՝ Ս. Պովարնինը սկզբունքորեն տարբերում է մտքի ճշմարտության համար վեճը ապացուցման համար վեճից: Առաջին դեպքում վեճի խնդիրն է հերքել կամ հաստատել այս կամ այն միտքը: Երկրորդ դեպքում՝ ցույց տալ, որ տվյալ միտքն ապացուցված չէ կամ հերքված չէ հակառակորդի կողմից[75]:

Վեճերն, ըստ Պովարնինի, լինում են նաև կենտրոնացված և անձև (ցրված): Կենտրոնացված է այն վեճը, որի ամբողջ ընթացքում վիճողներն անընդհատ աչքի առաջ ունեն վիճարկվող թեզիսը, և այն ամենը, ինչ որ նրանք ասում, ապացուցում են, ծառայում է թեզիսի հիմնավորմանը կամ հերքմանը: Մի խոսքով, վեճն ուղղված է մի կետի և ծավալվում է դրա շուրջը: Անձև վեճը, որի մասին արդեն խոսվեց փաստարկման և բանավեճի առնչություններին նվիրված բաժնում,

---

[74] Տե՛ս ***Стешов А.В.,*** Как победить в споре, էջ 11; 159:
[75] Տե՛ս ***Поварнин С.И.,*** Спор. О теории и практике спора, էջ 65-68:

չունի այդպիսի ուղղորդված բնույթ և աչքի է ընկնում իր անհետևողականությամբ[76]:

Ռուս տրամաբանն առանձնացնում է նաև վեճի այնպիսի ձևեր, ինչպիսիք են պարզ և բարդ վեճերը, վեճն ունկնդիրների առկայությամբ և առանց նրանց, վեճն ունկնդիրների համար, գրավոր և բանավոր վեճերը:

Կախված մասնակիցների թվից՝ վեճը (բանավեճը) կարող է լինել պարզ կամ բարդ: Պարզը տեղի է ունենում երկուսի միջև: Սակայն հաճախ վեճը կարող է ունենալ նաև երկուսից ավելի մասնակիցներ: Այդ դեպքում գործ ունենք դրա բարդ ձևի հետ: Շատ դժվար է այդպիսի վեճերը որոշակի հունի մեջ պահելը: Սովորաբար, դրանք ունենում են իրենց վարողը (օր.՝ ժողովի նախագահ, նիստի նախագահող և այլն): Միաժամանակ պետք է նկատել, որ բարդ վեճերն ունեն նաև կարևոր առավելություն պարզ վեճի նկատմամբ: Դրանք հնարավորություն են տալիս ավելի շատ կարծիքների ու տեսակետների արտահայտման և դրանց համեմատական վերլուծության: Ինֆորմացիան այս դեպքում ավելի շատ է, հարուստ ու բազմազան, հետևաբար մեծ է նաև ընտրության հնարավորությունը[77]:

Թե՛ պարզ, թե՛ բարդ վեճերը կարող են տեղի ունենալ ինչպես ունկնդիրների ներկայությամբ, այնպես էլ առանց նրանց: Այս տարբերությունը երբեմն մեծ ազդեցություն է ունենում ոչ միայն վեճի բնույթի, այլև դրա արդյունքների վրա: Ունկնդիրների ներկայությունը, անգամ եթե նրանք լռում են և ոչ մի կերպ չեն արտահայտում իրենց վերաբերմունքը կողմերի և բանավեճի ընթացքի նկատմամբ, ազդում է վիճողների (հատկապես տպավորվող, զգայուն, անհավասարակշռված մարդկանց) վրա: Պարտությունը նման դեպքերում դառնում է տհաճ ու ամոթալի, իսկ հաղթանակը՝ առավել ցանկալի: Վիճողների մոտ ի հայտ է գալիս ավելորդ համառություն, լարվում է մթնոլորտը, գործի են դրվում սոփեստական հնարքներ: Ավելի վատ է, երբ ունկնդիրն ակտիվ է լինում, այս կամ այն ձևով արտահայտում է իր համակրանքն ու հակակրանքը, համաձայնությունն ու անհա-

[76] Նույնը, էջ 69:
[77] Տե՛ս նույնը էջ 69-70:

մաձայնությունը, բազմանշանակ ժպտում է, ծիծաղում կամ էլ՝ սուլում ու դոփում գետինը[78]:

Սակայն, միշտ չէ, որ ունկնդիրների ներկայությունը և վիճաբանության գործընթացի վրա նրանց ունեցած ուղղակի կամ անուղղակի ազդեցությունն անցանկալի է, հղի բացասական հետևանքներով: Որոշ դեպքերում ունկնդիրների ներկայությունը կարող է անազնիվ վիճողներին զսպող, զգաստացնող գործոնի դեր խաղալ, իսկ երբեմն էլ՝ լրացուցիչ խթան հանդիսանալ մտածողության ակտիվացման ու հետաքրքիր վիճաբանության համար: Ուսումնական բանավեճի, պառլամենտական վիճաբանությունների, տարբեր հարցերի հրապարակային քննարկումների ժամանակ ունկնդիրների առկայությունն ու նրանց մասնակցությունը, մտքերի փոխանակության տվյալ գործընթացում ներգրավվելն հաճախ ուղղակի անհրաժեշտ է, նպատակահարմար ու ցանկալի և սովորաբար ունենում է դրական նշանակություն:

Ս. Պովարնինն ունկնդիրների առկայությամբ վեճից տարբերում է վեճն ունկնդիրների համար[79]: Կողմերն այստեղ վիճում են ոչ թե միմյանց, այլ բացառապես ունկնդիրներին համոզելու, նրանց վրա որոշակի տպավորություն թողնելու և իրենց կողմը գրավելու համար: Նրանք ձգտում են առավելագույնս հաշվի առնել ունկնդիրների մտավոր զարգացածության մակարդակը, աշխարհայացքային առանձնահատկությունները, նախասիրությունները, ճաշակը, շոշափել նրանց շահերն ու վստահություն ներշնչել: Աշխատում են ընտրել ներկաներին հոգեհարազատ և հասկանալի փաստարկներ, որոնց գործածումը մեկ այլ պարագայում գուցե և այնքան էլ արդարացված չէր լինի: Շեշտը դրվում է հոգեբանական հնարքների ու պերճախոսության վրա:

Այդպիսի վեճերի տիպիկ օրինակներ են քաղաքական կուսակցությունների ու խմբերի միջև տեղի ունեցող հրապարակային բանավեճերի մեծ մասը, տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների էջերը ողողող փոխադարձ մեղադրանքները: Այստեղ գլխավոր նպատա-

---

[78] Տե՛ս ***Поварнин С.И.,*** նշվ. աշխ., էջ 70:
[79] Նույնը, էջ 71:

կը, որպես կանոն, ոչ թե հակառակորդ կողմին վերահամոզելն է, ոչ թե ճշմարտության փնտրտուքը, այլ զանգվածների աչքում հակառակորդին հեղինակազրկելը, և, ընդհակառակը, սեփական նորանոր կողմնակիցներ հայթայթելն ու քաղաքական միավորներ կորզելը:

Հետազոտողներից շատերն ուշադրություն են հրավիրում վեճ/բանավեճի գրավոր (տպագիր) և բանավոր ձևերի ու դրանց առանձնահատկությունների վրա[80]: Այդ ձևերից ամեն մեկն ունի իր առավելություններն ու թերությունները: Բանավոր վեճի ժամանակ մեծ նշանակություն են ստանում ներշնչումը, սրամիտ և դիպուկ խոսելու կարողությունը, ինքնավստահ տոնը, արագ մտածելու կարողությունը, որոնք էլ զգալի չափով որոշում են վեճի ելքը: Գրավոր վեճի դեպքում ստեղծվում են համեմատաբար ավելի հավասար պայմաններ, այստեղ չկա նախորդի լարվածությունը, ժամանակի սղությունը, մի կողմ են դրվում վերոհիշյալ առանձնահատկությունները, առաջին պլան է մղվում հիմնականում վեճի բովանդակային-տրամաբանական կողմը: Այս առումով, ճշմարտության բացահայտման տեսանկյունից, կարծես թե, առավել նախընտրելի է վեճի գրավոր ձևը: Սակայն այդ ձևն էլ իր թերի կողմերն ունի: Այն ժամանակի առումով երբեմն շատ երկար է ձգվում, նույնիսկ՝ տարիներ: Ընթերցողները (որոնք այստեղ ունկնդիրների դերն են կատարում) հասցնում են մոռանալ դրա առանձին դրվագներ: Այդ հանգամանքից հաճախ օգտվում են անազնիվ վիճողները՝ հակառակորդի մտքերն անպատիժ աղավաղելով: Առավել վատ է, երբ վեճը տպագրվում է երկու տարբեր թերթերի էջերում: Այդ դեպքում ընթերցողը վեճի մասին պատկերացում է կազմում հաճախ միայն մի կողմի ելույթներով:

Վեճի տեսակները կարելի է դասակարգել նաև ըստ դրանց շարժառիթների, ըստ այն նպատակների, որ վիճողները դնում են իրենց առաջ: Այդ առումով Ս.Պովարնինն առանձնացնում է վեճի հինգ տիպեր.

1. Վեճեր, որոնց **նպատակը ճշմարտության հայտնաբերումն է կամ որևէ մտքի ու դրա հիմնավորվածության ստուգումը**: Պովարնի-

---

[80] Տե՛ս ***Поварнин С.И.,***, էջ 71-72: Տե՛ս նաև ***Соколов А.Н.,*** Проблемы научной дискуссии, էջ 81; ***Павлова Л.Г.***, Спор, дискуссия, полемика, էջ 9-10:

նի խոսքերով՝ «ամենաբարձրը, ամենավեհն ու ամենագեղեցիկը» բոլոր ձևերի մեջ, որը կոնկրետ օգուտից բացի, նաև գեղագիտական, մտավոր բավականություն է պատճառում մասնակիցներին ու ունկնդիրներին:

2. Վեճեր, որոնց **նպատակը հակառակորդին համոզելն է**:

3. Երբեմն էլ վեճի նպատակը ոչ թե հետազոտությունն է, ոչ թե համոզելը, այլ **ուղղակի հաղթելը**: Թե ինչպիսին կլինեն հաղթանակի դափնիները՝ էժանագին, խոհանոցային կամ այլ որակի, այնքան էլ կարևոր չէ: Վիճողներն առաջնորդվում են «հաղթողներին չեն դատում» սկզբունքով, գործի դնելով ամեն տեսակի իմաստակություններ ու անթույլատրելի հնարքներ:

4. Վեճի մյուս տարատեսակը ոչ այնքան խրախուսելի, բայց հաճախ հանդիպող **վեճն է հանուն վեճի**: Յուրատեսակ արվեստ արվեստի համար: Սպորտ: Ինչպես որ կան թղթախաղի, սպորտի սիրահարներ, այնպես էլ կան վեճի սիրահարներ...

5. Վեճի վերջին տեսակը **վեճ-խաղն** է կամ **վեճ-վարժությունը**, որը կոչված է մարզելու միտքը[81]:

Պովարնինը նշում է, որ վիճաբանելու եղանակի (մաներայի) տեսանկյունից վեճերը կարող են լինել ջենտլմենավարի (ասպետավարի), մարտական կամ էլ՝ բռի ու անկիրթ[82]:

Ամերիկացի հետազոտողներ Ռոջեր Ֆիշերն ու Ուիլյամ Ուրին առանձնացնում են մի կողմից կոշտ ու անզիջում, մյուս կողմից՝ չափազանց մեղմ ու հաշտվողական, ինչպես նաև այդ երկուսի նկատմամբ միջանկյալ դիրք գրավող և դրանցից շահեկանորեն տարբերվող սկզբունքային վեճերն ու բանակցությունները[83]:

Այսքանով հանդերձ, անգամ, չի կարելի ավարտված համարել վեճերի դասակարգման բոլոր հնարավոր եղանակների ու ձևերի շարադրանքը: Բացի վերոհիշյալից՝ կան նաև վեճի ուրիշ ձևեր ու դասակարգման այլ եղանակներ: Լ. Գ. Պավլովան, օրինակ, ըստ մասնա-

---

[81] Տե՛ս ***Поварнин С.И.,*** նշվ. աշխ., էջ 72-76:
[82] Տե՛ս նույնը, էջ 85-87:
[83] ***Fisher R., Uri W.,*** Getting to Yes: Negotiating Agreement without Giving in. N.Y.,1991, էջ XVIII:

կիցների կազմի, վեճ-երկխոսության (պարզ) ու բազմակողմ (բարդ) վեճերի կողքին առանձնացնում է նաև վեճ-մենախոսությունը՝ այսպես կոչված՝ ներքին վեճը, երբ մարդը վիճում է ինքն իր հետ[84]: Նա, վեճի բնույթը պայմանավորող գործոնների շարքում դիտարկելով քննարկվող հարցի հասարակական կարևորությունն ու նշանակությունը (համամարդկային, ազգային, դասակարգային, խմբակային, անհատական), նկատում է, որ վեճերը կարելի է միմյանցից տարբերել ու դասակարգել նաև ըստ իրենց հասարակական հնչեղության[85]: Գ. Վ. Բիկովն առաջարկում է գիտական բանավեճերը դասակարգել ըստ քննարկվող առարկայի նշանակալիության ու կարևորության, ըստ փաստարկների բնույթի, ըստ նպատակների, իրականացման ձևի (առկա՝ դեմ առ դեմ, հեռակա), ըստ արդյունավետության[86]:

Փաստարկման և բանավեճի առնչությունների ուսումնասիրման կապակցությամբ նախորդ բաժնում նշվեց, որ կարելի է տարբերել **փաստարկողական** և **ոչ փաստարկողական** վեճերը:

Ըստ իրենց նյութի բովանդակության՝ կարելի է առանձնացնել նաև վեճերի առօրյա, կենցաղային, գիտական, քաղաքական, գաղափարախոսական ձևերը և այլն:

Հիրավի, բազմաթիվ են վեճի ձևերն ու տեսակները, հնարավոր են դրանց դասակարգման ամենատարբեր եղանակներ ու մոտեցումներ: Սակայն, պետք է ընդգծել, որ իմացաբանական-մեթոդաբանական նկատառումներով ավելի արժեքավոր, նպատակահարմար ու նախընտրելի են դասակարգման, այսպես կոչված, բնական եղանակները, որոնց հիմքում ընկած են վեճի առավել կարևոր, էական, համակարգաստեղծ հատկություններն ու բնութագրերը:

---

[84] ***Павлова Л.Г.,*** Спор, дискуссия, полемика, էջ 9:
[85] Նույնը, էջ 8:
[86] Տե՛ս ***Быков Г.В.,*** Типология научных дискуссий. “Вопросы фиософии”. 1978, № 3, էջ 110-113:

ԳԼՈՒԽ 3
ԲԱՆԱՎԵՃԻ ԻՄԱՑԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Մտավոր պայքարը որպես իմացության անհրաժեշտ պայման և օրինաչափություն

Հնարավո՞ր են արդյոք իրականության իմացության ու մարդկային հաղորդակցման և գործընթացներն առանց տարաձայնությունների, մտավոր պայքարի ու բանավեճերի: Վստահաբար՝ ոչ:

Ավստրիացի տրամաբան Կ. Գյոդելի հանրահայտ թեորեմների ոճով և համանմանությամբ կարելի է ասել, որ նախ՝ գիտակցության կողմից կեցության, իրականության արտացոլումը միշտ էլ ոչ լրիվ է (հասարակական գիտակցությունը երբեք ամբողջովին չի ընդգրկում հասարակական կեցությունը), և ապա՝ գիտակցության զարգացման ամեն մի փուլում էլ հանդիպում են հակադիր տեսակետներ ու հակասական գաղափարներ: Իմացության գործընթացն իր մեջ ներառում է ինչպես հավաստի, ճշմարիտ դրույթներ ու տեսություններ, այնպես էլ թյուր և սխալ պատկերացումներ:

Օբյեկտիվ իրականության արտացոլման և դեպի ճշմարտություն տանող ճանապարհի բարդությունն ու հակասականությունը պայմանավորում են մարդկանց մտավոր հաղորդակցման բարդությունն ու հակասականությունը, առաջ բերում տեսակետների, կարծիքների հակամարտություն ու պայքար: Ճանաչողության արդյունքների ճշմարտացիությունն ու միանշանակությունը ձեռք է բերվում դրանք հետազոտվող իրականության, միմյանց, հասարակական փորձի ու հոգևոր գործունեության հանրագումարների հետ համադրման, ասել է թե՝ մտավոր հաղորդակցման, մտքերի փոխանակության, նաև պայքարի ու մրցակցության ճանապարհով:

Ինչպես արդեն նշվել է՝ մարդ-անհատի գիտակցությունն ու լեզվամտածությունը հասարակական համակեցության, իր նմանների հետ շփման ու հաղորդակցման արդյունք է: Մարդկային մտածողու-

թյանն ի սկզբանե բնորոշ է երկխոսության ձևը: Դրա արդյունավետ զարգացման համար անհրաժեշտ է ամենաքիչը երկու հոգի, հարկավոր է տարբեր կարծիքների լայն սպեկտր: Ասվածը վերաբերում է գիտության ինչպես հումանիտար և հասարակագիտական, այնպես էլ բնագիտական և ճշգրիտ ոլորտներին: «Գիտությամբ արդյունավետ կերպով զբաղվելու համար ես նախ և առաջ պետք է ուրիշ գիտնականների հետ մտքերի փոխանակություն կատարելու հնարավորություն ունենամ»,– գրում է ամերիկացի մաթեմատիկոս Ն. Վիները[1]: Շփումը, մտավոր հաղորդակցումը, կարծիքների փոխանակումը իմացության գործընթացի անհրաժեշտ տարրերն են: «Մեր մտքի ամենաբեղմնավոր ու բնական վարժանքը, ըստ իս, զրույցն է,– նշում է 16-րդ դարի ֆրանսիացի փիլիսոփա և լուսավորիչ Միշել Մոնտենը:– Գործունեության բոլոր ձևերից այն ինձ համար ամենահաճելին է: Ահա թե ինչու, եթե ինձ պարտադրեին անհապաղ ընտրություն կատարել, ես, հավանաբար, կնախընտրեի ավելի շուտ տեսողությունս կորցնել, քան լսողությունս կամ խոսելու ունակությունս»[2]:

Առողջ զրույցն ու բանավեճը դրական ազդեցություն են ունենում մարդկային մտքի վրա, այն ազատում սխալներից, անճշտություններից ու վնասակար մոլորություններից: Նման դեպքերում երկրորդական նշանակություն է ստանում վեճի արդյունքում հաղթելու կամ պարտվելու խնդիրը: Ի. Ս. Տուրգենևն արձակ բանաստեղծություններից մեկում գրում է. «Վիճիր քեզանից խելոք մարդու հետ, նա կհաղթի... Բայց հենց քո պարտությունից դու կարող ես օգուտ քաղել քեզ համար» («Ո՞ւմ հետ վիճել»):

Հաղթանակը, ինչ խոսք, հաճելի է, բերում է բարոյական ու հոգևոր բավարարվածություն: Բայց պարտությունն էլ կարող է օգտակար լինել, եթե պարտվողն անհրաժեշտ դասեր առնի, հրաժարվի մոլորություններից, շտկի իր սխալները, ճանաչի ու յուրացնի նոր ճշմարտություններ: Ինչպես ասում են՝ չկա չարիք, առանց բարիք: Իսկ մ.թ.ա. 4-3-րդ դդ. հույն իմաստասեր Էպիկուրն այն կարծիքն է հայտնում, թե «փիլիսոփայական վիճաբանության դեպքում ավելի

[1] ***Վիներ Ն.,*** Ես մաթեմատիկոս եմ: Երևան, 1969, էջ 154:
[2] ***Монтень М.,*** Опыты. Избранные главы. М., 1991, էջ 445:

շատ շահում է պարտվողը՝ այն առումով, որ բազմապատկում է իր գիտելիքները»[3]:

Իրոք որ հետաքրքիր և ուշագրավ հարց է, թե նման պարագայում ով է ավելի շատ շահում, հաղթո՞ղը, թե՞ պարտվողը: Սակայն մի բան պարզ է և ակնառու. ամեն դեպքում էլ շահում է մարդկային իմացությունը: Կարծիքների բախումը թույլ է տալիս բացասման բացասումի ճանապարհով հայտնաբերել նորը, համեմատել այն հնի հետ, ելք գտնել դժվարին իրավիճակից, խորտակել քարացած պատկերացումներն ու դոգմաները և ճանապարհ բացել մտքի հետագա զարգացման ու առաջընթացի համար:

Անգամ Ա. Շոպենհաուերը՝ էրիստիկական վիճաբանության այդ ջատագովն ու պաշտպանը, խոստովանում է, որ վեճը «հաճախ օգտակար է լինում երկու կողմերի համար էլ՝ հանգեցնելով սեփական մտքերի շտկմանը և ծնելով նոր տեսակետներ»[4]:

Վիճաբանությունների ժամանակ առաջ են քաշվում ու մշակվում բարդ խնդիրների լուծման ոչ ավանդական մոտեցումներ, արվում են կոնկրետ, գործնական առաջարկություններ, կատարվում ընդհանրացումներ, արժեքավորվում են հակադիր տեսակետները և այլն: Բանավեճերի մեջ մշակվում ու զարգանում է նաև մարդկանց դիալեկտիկական մտածելակերպը, որը կարևոր գործոն է շրջապատող իրականության իմացության և ճշմարտության հայտնաբերման գործընթացում: Օբյեկտիվ իրականության իմացությունը հասարակական երևույթ է: Այն անհնար է առանց մարդկանց փոխադարձ շփման ու հաղորդակցման: Որտեղ կա օբյեկտիվ կամ սուբյեկտիվ երևույթների իմացություն, այնտեղ անխուսափելիորեն առկա է նաև մտքերի փոխանակություն, կարծիքների ու տեսակետների պայքար:

«**Օրինաչափություն**» փիլիսոփայական կատեգորիան բովանդակում է իրականության երևույթների միջև եղած **անհրաժեշտ, էա-**

---

[3] Материалисты древней Греции. Собрание текстов Гераклита, Демокрита и Эпикура. М., 1955, էջ 224:

[4] ***Schopenhauer A.,*** Handschriftlicher Nachlass, Bd. 2, էջ 106: Տե՛ս նաև նույն հեղինակի՝ Sämmtliche Werke in zwolf Bänden. Mit Einleitung von R. Steiner. Bd. 10, Stuttgard: Gotta [s.a.], էջ 28:

կան, կայուն և կրկնվող կապերն ու հարաբերությունները[5]: Այդ բնութագրիչները միանգամայն կիրառելի են նաև իրականության իմացության և մտավոր պայքարի միջև կապը վերլուծելիս: Բանավեճերն անհրաժեշտ-անխուսափելի և էական պայման են ճանաչողության զարգացման համար: Դրանք դրսևորվում են իմացության տարբեր փուլերում, որտեղ կան տարակարծություններ և ճշմարտության կամ միասնական տեսակետի որոնում: Այլ կերպ ասած՝ դրանք հանդես են գալիս որպես **մարդկային իմացության կարևոր օրինաչափություն:**

Ճանաչողության ընթացքում, հատկապես հարցի կամ հիմնախնդրի քննարկման սկզբնական փուլում, առաջ են գալիս բազմաթիվ կարծիքներ, հաճախ էլ՝ տրամագծորեն հակադիր մոտեցումներ, որևէ կոնկրետ երևույթի մեկնաբանության համար առաջարկվում են ամենատարբեր վարկածներ: Հարց է առաջանում. գոյություն ունեցող զանազան կարծիքներից ինչպե՞ս առանձնացնել ճշմարիտ տեսակետը: «Վեճի դիալեկտիկայի» հեղինակները գտնում են, որ դրա համար հարկավոր է մտքերի ազատ փոխանակություն, կարծիքների մրցակցություն[6]: Նման պարագաներում բանավեճը հանդես է գալիս իբրև այդ մրցակցության արտահայտություն, ձև կամ եղանակ, որի ժամանակ տեղի է ունենում նոր պատկերացումների ձևավորում կամ գոյություն ունեցող բոլոր տեսակետների միջից առավել ճշմարտացի տարբերակի առանձնացում, դրա հիմնավորում ու հաստատում, մյուսների հերքում ու քննադատություն: Վիճելի հարցի համատեղ քննարկումները, այդ կապակցությամբ կազմակերպված բանավեճերն ու խորհրդակցությունները հնարավորություն են ընձեռում ստանալ նոր ինֆորմացիա, ապահովել գիտելիքների աճն ու զարգացումը, հասնել փոխըմբռնման:

Մեծ է բանավեճի դերն ինչպես նոր գաղափարների առաջադրման, այնպես էլ դրանց միջից արդյունավետ տարբերակի ընտրության և այդ ընտրանքի հիմնավորման գործընթացում: Հրապարակային քննարկումների և բանավեճերի ժամանակ իմացության գործ-

---

[5] Տե՛ս Философский энциклопедический словарь. М., 1983, էջ 188:
[6] Տե՛ս ***Слемнёв М.А., Васильков В.Н.,*** Диалектика спора, էջ 10:

ընթացից դուրս են մղվում սխալ տեսակետներն ու թյուր պատկերացումները, ամրագրվում, լրամշակվում են խելացի մոտեցումներն ու գաղափարները: Հակամետ և տարամետ կարծիքների ու գաղափարների հակադրության, համադրության, համեմատական վերլուծության ճանապարհով ձեռք է բերվում նոր գաղափարների ու մտքերի իմացություն:

Ամեն մի շարժման հիմքում ընկած է հակադրությունների պայքարն ու միասնությունը: Այս դրույթը վերաբերում է նաև մտածողության ու իմացությանը: Բանավեճն ինքնին հակադրությունների պայքար է և միասնություն: Այն մտածողության հզոր խթան է, դրա առաջմղիչ կարևոր գործոններից մեկը: Թե ինչպիսի ձեռքբերումների է հասել մարդկային միտքը, ամենաթեժ վիճաբանությունների մեջ մշակելով ու լուծելով իր ճանապարհին կանգնած բարդ հիմնախնդիրները, կարող է վկայել գիտության պատմությունը: Բավական է հիշել, օրինակ, Ի. Նյուտոնի և Ք. Հյուգենսի, ապա նաև նրանց հաջորդների վեճը լույսի երևույթի բացատրման շուրջ, որի արդյունքում լույսի ալիքային և մասնիկային ոչ կատարյալ տեսություններն իրենց տեղը զիջեցին մասնիկաալիքային դուալիզմի առավել լրիվ ու կատարյալ ժամանակակից տեսությանը:

Չափազանց հետաքրքիր ու ուսանելի են նաև Նիլս Բորի և Ալբերտ Էյնշտեյնի երկարատև վիճաբանությունները բոր-հայզենբերգյան անորոշության սկզբունքի շուրջ, որոնց ժամանակ վերջինս անընդհատ լրացվում ու ճշգրտվում էր՝ ձեռք բերելով ավելի կուռ կառուցվածք: Այդ սկզբունքի համաձայն՝ անհնար է միաժամանակ ճշգրիտ կերպով որոշել տարրական մասնիկի կոորդինատն ու իմպուլսը: 20-րդ դարի շատ ֆիզիկոսներ հանդես եկան այդպիսի խիզախ և անսովոր տեսակետի դեմ: Նրանց մեջ առանձնանում էր հարաբերականության տեսության հիմնադիր Ալբերտ Էյնշտեյնը: Իր ամենաազդեցիկ, ամենահեղինակավոր և ամենաուժեղ հակառակորդին էլ հենց Բորն ընտրեց իբրև սպառինգ-ընդդիմախոս: Ահա թե ինչպես է նկարագրում Վերներ Հայզենբերգը այդ խոշորագույն ֆիզիկոսների պայքարը. «Բանավեճերը սովորաբար սկսվում էին վաղ առավոտյան՝ նրանից, որ Էյնշտեյնը նախաճաշի ժամանակ առաջար-

կում էր մտավոր մի նոր գիտափորձ... Բնականաբար, մենք իսկույն ձեռնամուխ էինք լինում վերլուծության... Եվ, որպես կանոն, երեկոյան համատեղ ընթրիքի ժամանակ Նիլս Բորն հաջողությամբ ապացուցում էր Էյնշտեյնին, որ անգամ նրա այդ նոր հղացումը չի կարող սասանել անորոշության վիճակը: Էյնշտեյնին համակրում էր անհանգստության զգացումը, բայց հաջորդ առավոտյան, նախաճաշին, արդեն պատրաստ էր լինում, այս անգամ արդեն, ինչպես նա կարծում էր, անորոշության սկզբունքի սնանկությունն անհերքելիորեն բացահայտող մեկ ուրիշ մտավոր գիտափորձ: Սակայն երեկոյան պարզվում էր, որ այս փորձը նախորդից այնքան էլ հաջող չէր: Այդպես ճոճվում էին նրանք կշեռքի նժարների վրա: Առավոտը բարձրացնում էր մեկին, իսկ երեկոն՝ մյուսին: Ծրջապատողները հետևում էին այդ կշեռք-ճոճանակին՝ հասկանալով, որ այն հավասարակշռվել չի կարող. այն դեպքը չէր, որտեղ որոշեր փոխադարձ զիջողականությունը»[7]: Մինչև կյանքի վերջ Էյնշտեյնը մնաց դանիացի ֆիզիկոսի տեսության հակառակորդ: Իսկ Բորը համառորեն շարունակում էր ճշգրտել ու լրացնել քվանտային տեսության իր գաղափարները, և վերջին հաշվով հաղթեց նրա տեսակետը: Սակայն հարկ է մեկ անգամ ևս ընդգծել, որ այդ գործընթացում մեծ դեր խաղաց նաև Էյնշտեյնի անհաշտ դիրքը: Նրա նուրբ դիտողություններն ու խորիմաստ քննադատությունն օգնեցին անորոշության սկզբունքին տալ տրամաբանորեն ամբողջական ու կատարյալ ձև:

Իմացության զարգացման բնագավառում վիճաբանությունների դրական, կառուցողական դերի ու նշանակության մասին վկայող օրինակներ շատ կարելի է բերել: Իսկ թե ինչ կործանարար հետևանքներ կարող է ունենալ բանավեճերի, գործնական քննարկումների արհամարհումն ու բացառումը, կարելի է պատկերացնել Չեռնոբիլի ատոմակայանի, Արալի, Սևանի օրինակներով: 1986 թ. չեռնոբիլյան աղետի պատճառների մասին շատ է խոսվել: Դրանց թվին են դասվում էլեկտրակայանի կառուցման հարցում ցուցաբերած շտապողականությունը, վթարային համակարգի զանցառումը, օպերա-

[7] Ըստ նույնի, էջ 130-131:

տորների տեխնիկական անվտանգությունը, ղեկավարության հանցագործ անտարբերությունը: Իսկ Մ. Սլեմնյովն ու Վ. Վասիլկովը գտնում են, որ աղետի պատճառներն ավելի հեռու են տանում[8]: Ատոմային էլեկտրակայանի «սրտի» կառուցվածքի ու գործունեության սկզբունքները մշակվել էին ակադեմիկոս Ա.Պ.Ալեքսանդրովի գլխավորած գիտական դպրոցի ֆիզիկոսների կողմից: Նրանց առաջարկած РБМК (реактор большой мощности, кипящий, капельный) տիպի ռեակտորը համարվում էր գիտական մտքի գագաթնակետը և գովազդվում ամբողջ երկրով մեկ: Դրա անվտանգությունն այնքան հուսալի էր համարվում, որ, ինչպես այն ժամանակ էին ասում, կարելի էր տեղադրել անգամ Կարմիր հրապարակում: Սակայն գոյություն ուներ նաև այլ կարծիք: Որոշ մասնագետներ մատնացույց էին անում այդ տիպի ռեակտորների կառուցվածքում տեղ գտած թերությունները, փաստարկում և հիմնավորում դրանց աշխատանքի ընթացքում շեղումների հնարավորությունը: Բայց իրավասու մարմինները նրանց լսել չէին ուզում: Այդօրինակ նախազգուշացումները որակվում էին իբրև «արևմուտքի ազդեցություն»: Այսպիսով, գիտական դպրոցներից մեկի գաղափարների քաղաքական մենիշխանությունը, գործնական բանավեճերի մերժումը, այլընտրանքային պատկերացումների արհամարհումը ճակատագրական նշանակություն ունեցան: Տեղին ու արդարացի է հնչում բելոռուս գրող-հրապարակախոս Ալես Ադամովիչի հարցադրումը. «Արդյո՞ք հնարավոր էր Չեռնոբիլը..., եթե գիտական ընդդիմությունը քննադատելու իրավունք ունենար... ինչ-որ ժամանակ ատոմային էներգետիկայի բնագավառում հաղթանակած ալեքսանդրովյան ուղղությանը»[9]: Ամենայն հավանականությամբ, գուցեև հնարավոր լիներ խուսափել այդ չարաբաստիկ աղետից: Ինչպես և իր ժամանակին, կարծիքների հավասար քննարկման, մտքերի ազատ փոխանակության և քննադատական մթնոլորտի ընդունելիության պայմանների դեպքում թերևս հնարավոր լիներ խուսափել Սևանա լճի ճգնաժամային վիճակից:

---

[8] Տե՛ս ***Слемнёв М.А., Васильков В.Н.,*** նշվ.աշխ., էջ 133-134:
[9] Նույնը, էջ 134:

9-10-րդ դարերի նշանավոր փիլիսոփա ալ-Ֆարաբին նշում է, թե միևնույն կարծիքին հետևող և նույն հեղինակությունը վկայակոչող մարդկանց խումբը նման է մեկ խելքի, իսկ մեկ խելքը կարող է և մոլորվել: «Բայց, երբ տարբեր խելքերը համընկնեն կշռադատությունից, ինքնաստուգումից, վեճերից ու քննարկումներից, հարցը հակադիր կողմերից դիտարկելուց հետո, ապա ոչինչ չի կարող լինել ավելի ճիշտ այն համոզմունքից, որին նրանք կհանգեն»[10]:

Վիճաբանություններն ու քննարկումները նպաստում են ինչպես հիմնահարցի հայտնաբերմանը, հասկացութային համակարգի միջոցներով դրա սահմանմանն ու ամրագրմանը, այնպես էլ տվյալ խնդրի համակողմանի ուսումնասիրմանը, դրա հետազոտվածության թերի կողմերի բացահայտմանը, հնարավորություն են ընձեռում հիմնահարցի նկատմամբ տարբեր մոտեցումների զարգացման և լուծման այլընտրանքային ուղիների մշակման համար, օգնում հաղթահարել մտածողության միակողմանիությունն ու պատկերացումների քարացածությունը:

3.2. Բանավեճը գիտական գիտելիքի բնագավառում

Թվում է, թե անհնար է թերագնահատել, առավել ևս՝ ժխտել վիճելի հարցերի շուրջ մտքերի փոխանակման նշանակությունը գիտական հետազոտությունների ոլորտում և այն կարևոր դերը, որ դրանք խաղում են գիտական իմացության զարգացման մեջ:

Այդուհանդերձ, համաշխարհային մտքի պատմության որոշ փուլերում տարբեր հիմնավորումներով առաջադրվել են վարկածներ, ըստ որոնց, հասարակական հաղորդակցման գործընթացներից և մասնավորապես՝ գիտական գործունեության ասպարեզից ժամանակի ընթացքում կվերանան տարաձայնություններն ու բանավեճերը:

Փորձարարական հետազոտությունների ասպարեզում ձեռք բերված նշանակալից հաջողությունների ազդեցությամբ, օրինակ, ժամանակին ձևավորվել է բացասական վերաբերմունք գիտական

[10] ***Аль-Фараби,*** Философские трактаты. Алма-Ата, 1970, էջ 145:

բանավեճերի նկատմամբ, թերագնահատվել է դրանց իմացաբանական ու մեթոդաբանական նշանակությունը: Այդպիսի մտածելակերպն առավել բնորոշ էր փորձարարական գիտությունների ձևավորման սկզբնական փուլին, երբ անմիջական փորձն ու գիտափորձը դիտարկվում էին իբրև այն միակ ճշգրիտ մեթոդը, որի միջոցով կարելի էր հարթել բոլոր տարակարծությունները և մեկընդմիշտ լուծել վիճելի հարցերը: «Լեոնարդո դա Վինչին,– նշում է ռուս գիտաբան Ն. Ի. Ռոդնին,– գտնում էր, որ փորձը հայտնաբերում և հավաստում է ճշմարտությունը, որը դրանից հետո դառնում է անկասկածելի, այնպես որ չկա դրա «վերբալ» քննարկման անհրաժեշտություն»[11]:

Փորձարարական գիտությունների և գիտական ինդուկտիվիզմի բուռն զարգացումը, միևնույն է, չվերացրեց տեսական քննարկումների ու բանավեճերի տիրույթը, չսպառեց այն հարցերի շրջանակը, որոնց լուծումն անհար է պատկերացնել առարկայական գիտափորձի եղանակով: Օրինակ՝ տեսական քննարկումներից, բանավեճ-փաստարկումներից զատ, շատ թե քիչ ողջամիտ ի՞նչ լուծում կարելի է առաջարկել երկու ֆիզիկոսների երևակայական վեճին, թե ինչ տեղի կունենա Երկիր մոլորակի հետ՝ կուտակված միջուկային զենքի ողջ պաշարը միաժամանակ գործի դնելու պարագայում...

17-րդ դարում Գ.Լեյբնիցը՝ ոգևորված տրամաբանական գիտելիքի նկատմամբ մաթեմատիկական սկզբունքների կիրառման հաջողություններով ու հեռանկարով, գտնում էր, որ ապագայում գիտնականները կարող են խուսափել անպտուղ վեճերից՝ թուղթ ու գրիչ վերցնելով և հաշվարկելով, թե իրենց ով է ճիշտ և ով՝ սխալ[12]:

Իհարկե, մաթեմատիկական տրամաբանության հետագա անառարկելի հաջողություններն ու առաջընթացը, ասույթների հաշվի շրջանակներում կոնյունկտիվ և դիսյունկտիվ նորմալ ձևերի գաղա-

---

[11] ***Родный Н.И.,*** Очерки по истории и методологии естествознания.М., 1975, էջ 178: Տե՛ս նաև ***Ջիվելեգով Ա. Կ.,*** Լեոնարդո դա Վինչի: Երևան, 1986, էջ 147; 149:

[12] «Արդյունքում, եթե վիճելի հարցեր առաջանան, բանավեճի կարիքը երկու փիլիսոփաների միջև ավելին չի լինի, քան երկու հաշվարկողների: Քանզի բավարար կլինի, որ նրանք ձեռքներն առնեն փետրագրիչները, նստեն հաշվիչ տախտակների առաջ և միմյանց ասեն (ասես՝ բարեկամաբար հրավիրելով). «եկե՛ք հաշվենք»»: (***Лейбниц Г.В.,*** Сочинения в четыех томах, т. 3, М., 1984, էջ 497):

փարի մշակումը շատ առումներով հաստատեցին Լեյբնիցի կանխատեսումները: Սակայն միաժամանակ հաստատվեց, որ կան մարդկային բանականության որակներ, տրամաբանական օրենքներ, որոնք ձևայնացնել և բանաձևերի տեսքով արտահայտել դեռևս հնարավոր չէ[13], և որ ձևայնացված համակարգը միշտ էլ ոչ լրիվ է արտահայտում բովանդակային օբյեկտ-համակարգի բաղադրիչները: Վերջին պնդումը տեսական լուրջ հիմավորում ստացավ 20-րդ դարի 30-ականների սկզբին ավստրիացի տրամաբան-մաթեմատիկոս Կ. Գյոդելի կողմից առաջադրած՝ ձևայնացված համակարգի ոչ լրիվության մասին թեորեմի շնորհիվ: Դրա համաձայն՝ ձևայնացված համակարգերը չեն կարող լրիվ[14] լինել՝ միաժամանակ պահպանելով անհակասականության սկզբունքը: Դա, ըստ էության, խոսում է նաև մարդկային մտածողության լիարժեք ձևայնացման անհնարինության մասին[15]:

Գիտության բնագավառում բանավեճերի դերը կասկածի տակ առնող տեսակետը կրկին արդիականություն ձեռք բերեց 19-րդ դարում: Սակայն շարժառիթներն ու փաստարկներն այս անգամ փոքրինչ այլ էին:

Տ. Ի. Օյզերմանը գրում է. «Հարյուր տարի առաջ բնախույզները, ըստ էության, համոզված էին, որ բնության մասին գիտությունների ձեռքբերումները կհանգեցնեն տարաձայնությունների աստիճանաբար վերացմանը, որոնց աղբյուրն իրենց հետազոտության առարկայի սպառմանն ավելի ու ավելի մոտեցող գիտությունների առաջընթացի կողմից հաղթահարվող մոլորություններն են»[16]: Այսինքն, նրանք վստահ էին, որ գիտության առաջընթացին զուգահեռ անխուսափելիորեն կնեղանա գիտնականների միջև մոլորությունների արդ-

---

[13] Օրինակ՝ մաթեմատիկական տրամաբանության միջոցներով վաղուց բանաձևվել են տրամաբանական մտածողության երեք հիմնական (նույնության, հակասության և երրորդի բացառման) օրենքները, սակայն չորրորդ՝ բավարար հիմունքի օրենքի պահանջը դեռևս չի հաջողվել արտահայտել բանաձևի միջոցով:

[14] Օբյեկտ համակարգի տարրերի և դրույթների՝ ձևայնացված համակարգում լիարժեք, ամբողջական արտացոլվածության իմաստով:

[15] Տե՛ս Философская энциклопедия. Т. 1, М., 1960 էջ 338:

[16] ***Ойзерман Т.И.,*** Проблемы историко-философской науки. М., 1969, էջ 339:

յունք հանդիսացող տարաձայնությունների շրջանակը, և մոտ ապագայում գիտության բնագավառից կանհետանան վեճերն ու վիճաբանությունները:

Սակայն գիտության առաջընթացը ոչ միայն չվերացրեց մտավոր պայքարի հանգեցնող միջավայրը, այլև մեծապես խթանեց գիտական բանավեճերը՝ կրկին հաստատելով իմացության ծավալների և չիմացության սահմանների մասին պատկերացումների ուղիղ համեմատականության վերաբերյալ սոկրատեսյան տեսակետը:

Ինչ ձևով ու եղանակով էլ որ իրականացվի գիտական գործունեությունը, այն ենթադրում է գիտնականների շփում, նրանց միջև գիտական աշխատանքի արդյունքների ու հեռանկարների մասին ինֆորմացիայի փոխանակում: Օբյեկտիվ գործընթացների, երևույթների համակարգված ու համակողմանի հետազոտությունն անխուսափելիորեն հարուցում է գիտնականների կապ ու համագործակցություն: Գիտնականը օբյեկտիվորեն, ցանկանում է նա, թե ոչ, աշխատում է ուրիշների համար և իր գործունեության ընթացքում հենվում է իր գործընկերների (նախորդ և ժամանակակից) գիտական գաղափարների վրա: «Հաղորդակցումը գիտության գոյության ձևն է, դրանից դուրս գիտությունը գոյություն չունի»,- եզրակացնում է Ա. Սոկոլովը[17]:

Գիտության կողմից հետազոտվող օբյեկտների բարդությամբ և գիտական ճանաչողության գործընթացի ներքին հակասականությամբ պայմանավորված գիտության զարգացման որոշակի անհերդաշնակության պատճառով փոխադարձ կապն ու կարծիքների փոխանակումը գիտնականների միջև կրում է հակասական բնույթ: Ահա թե ինչու գիտական իմացության բնագավառում կարծիքների փոխանակումը չի սահմանափակվում նրանով, որ գիտնականներն ուղղակի միմյանց տեղեկացնում են իրենց աշխատանքի և դրա արդյունքների մասին, այլ անխուսափելիորեն վերածվում է տեսակետների բախման գործընթացի, որոշակի հայացքների պաշտպանության,

[17] ***Соколов А.Н.,*** Проблемы научной дискуссии, էջ 125:

մյուսների գիտական քննադատության և հերքման՝ վիճելի հարցի լուծման կապակցությամբ ճիշտ մոտեցում մշակելու նպատակով:

Կապված գիտական գիտելիքի դիֆերենցման և ինտեգրացման ժամանակակից գործընթացների հետ՝ գիտական իմացության բնագավառում ավելի է մեծանում բանավեճերի, քննարկումների և, ընդհանրապես, հաղորդակցման նշանակությունը:

Գիտական հետազոտության օբյեկտների և իմացության բարդությունն ու հակասական բնույթը գիտության մեջ իրենց արտահայտությունն են գտնում տարբեր, միմյանց հակադիր ու հակասող պատկերացումների, գաղափարների, սահմանումների գոյության ձևով: Դրանց միջև մրցակցությունն ու պայքարն էլ հենց ընկած է գիտության զարգացման մեխանիզմի հիմքում: Այսպիսով, բանավեճը որոշակի իմաստով հանդես է գալիս իբրև **գիտական հայացքների, գաղափարների լինելիության և զարգացման ձև:**

Հայեցակետը, ըստ որի բանավեճը գիտության մեջ դիտվում է իբրև գիտնականների հաղորդակցման ձևերից մեկը, ներդաշնակում է այն տեսակետին, որը մտավոր պայքարը դիտարկում է իբրև գիտական գաղափարների զարգացման անխուսափելի, բնական ձև, քանի որ գիտական գաղափարներների փոփոխությունները չեն կարող տեղի ունենալ այլ կերպ, քան գիտնականների հաղորդակցման գործընթացում[18]: Այդ մոտեցումները լրացնում են միմյանց՝ ամբողջացնելով բանավեճի իմացաբանական կողմի վերաբերյալ պատկերացումները: Հաղորդակցման ժամանակ գիտնականները մտքեր են փոխանակում բարդ խնդիրների շուրջ, քննադատում և հերքում թյուր պատկերացումները, մշակում նոր, արդյունավետ մոտեցումներ ու լուծումներ: Նման դեպքերում բանավեճը հանդես է գալիս իբրև գիտական գիտելիքի զարգացման անհրաժեշտ տարր և եղանակ:

Տարակարծությունների ու վիճաբանությունների խոշոր «պայթյուններ» են արձանագրվում հատկապես գիտության մեջ հեղափոխական կամ շրջադարձային վերափոխումների փուլում: Դրան սովորաբար նախորդում է յուրատեսակ ճգնաժամային իրավիճակ, որը

[18] Տե՛ս նույնը, էջ 129:

գալիս է փոխարինելու զարգացման համեմատաբար հանգիստ, քանակական ու որակական թռիչքներով աչքի չընկնող փուլին: Ճգնաժամային փուլում, ինչպես նոբելյան մրցանակակիր, ֆիզիկոս Լուի դե Բրոյլն է նշում, կամ փորձը չի հաստատում տեսության կանխատեսումներից մեկը, կամ փորձի ընթացքում հանկարծ, հետազոտողների կամքից անկախ, հայտնաբերվում է նոր փաստ, որը չի համաձայնեցվում տեսության հետ[19]: Այդպիսի հակասությունների լուծումը ենթադրում է գոյություն ունեցող սկզբունքների ու մտածելակերպի վերակառուցում, կապված է նոր վարկածների, տեսությունների, հասկացությունների ձևավորման հետ, որոնք ի վիճակի են դուրս բերել գիտական միտքն իր բովանդակային տարրերի և իրականության միջև առաջացած հակասություններից:

Երբ գոյություն ունեցող տեսությունը չի կարող բացատրել հայտնաբերված նոր փաստերն ու երևույթները, բնականաբար, փորձեր են արվում նոր վարկածների ու տեսությունների միջոցով գիտությանը վերադարձնել նախկին ներդաշնակությունը, մեկնաբանել ու պարզաբանել բաց մնացած փաստերն ու իրողությունները: Գիտության մեջ ստեղծվում է բազմակարծության իրավիճակ: Իմացության հետագա առաջընթացին զուգահեռ, դրան փոխարինելու է գալիս յուրօրինակ երկվությունը[20]: Առաջադրված գաղափարներից կամ վարկածներից մեկը վեր է ածվում նոր փաստի, երևույթի բացատրման առավել հավանական տարբերակի, իր կողմն է գրավում ավելի ու ավելի շատ թվով համախոհներ՝ գիտական աշխարհը բաժանելով երկու բանակի՝ նոր պատկերացումների կողմնակիցների և հին տեսության պաշտպանների: Բնականաբար, հին պատկերացումներն անմիջապես չեն չքանում, և ոչ էլ նոր տեսակետի հաստատումն ու ամրագրումն է տեղի ունենում մեկ ակնթարթում: Դրանց միջև սկսվում է երկարատև ու անզիջում պայքար: Հնի կողմնակիցները բոլոր ուժերով ու միջոցներով պաշտպանում են նախկինում ընդունված պատկերացումները, ձգտելով հերքել նոր տեսակետը, թույլ չտալով դրան ամրապնդել իր դիրքերը գիտության մեջ: Նորի ջատագովներն, ընդհա-

[19] Տե՛ս ***Бройл Л. де***, По тропам науки. М., 1962, էջ 9:
[20] Տե՛ս ***Соколов А.Н.,*** նշվ. աշխ., էջ 133:

կառակը, բոլոր ուժերով ու միջոցներով ձգտում են հաստատել և կյանքի ուղեգիր տալ իրենց տեսությանը, զարգացնել այն՝ դարձնելով ավելի կատարյալ ու փաստարկված: Ծայր են առնում տևական բանավեճերն ու քննարկումները: Նոր տեսության համախոհները մատնանշում են ընդդիմախոսների դիրքորոշման մեջ առավել խոցելի տեղերը: Հին տեսության պաշտպաններն էլ, իրենց հերթին, միջոցներ են փնտրում ցույց տալու համար նոր տեսակետի թերություններն ու սխալները՝ անուղղակիորեն նպաստելով դրա փաստարկվածության ու հիմնավորվածության կատարելագործմանը[21]: Այդ առումով հատկանշական են վերը հիշատակված՝ Հյուգենսի ու Նյուտոնի, Բորի ու Էյնշտեյնի սկզբունքային ու անզիջում բանավեճերը:

Այսպիսով, հակամարտ կողմերի սուբյեկտիվ ձգտումները միավորվելով դառնում են օբյեկտիվ գործոն գիտական գիտելիքի զարգացման գործընթացում: Հակադիր գաղափարների պայքարը, իր արտահայտությունը գտնելով գիտական բանավեճերում, որպես կանոն, ավարտվում է այն տեսակետի օգտին, որը տվյալ իրավիճակում ավելի ճիշտ է արտացոլում իրերի դրությունը և ավելի է համապատասխանում գործնական պահանջներին:

Մտքերի բախումը, բանավեճը իմացության և, մասնավորապես, գիտական գիտելիքի զարգացման կարևոր օրինաչափություններից մեկն է: Դրա զանցառումը (որը կարող է դրսևորվել որոշակի տեսակետներ քննադատելը, այս կամ այն հիմնախնդրի շուրջ սեփական դիտողություններն արտահայտելը գիտնականներին արգելելու փորձերի ձևով) անխուսափելիորեն հանգեցնում է գիտության զարգացման համար բացասական հետևանքների: Նախորդ բաժնում դիտարկվեց Չեռնոբիլի օրինակը: Ցավոք, նման դեպքերը եզակի պատահականություններ չեն:

20-րդ դարի կեսերին համանման մի իրավիճակ էր ստեղծվել կենսաբանական գիտության մեջ՝ ակադ. Տ. Դ. Լիսենկոյի գործունեության հետևանքով: Լիսենկոն և նրա կողմնակիցները, ձգտելով չկորցնել իրենց տիրապետող դիրքերը գիտության մեջ, չէին հան-

[21] Տե՛ս նույն տեղում:

դուրժում որևէ հավակնություն սեփական հնացած ուսմունքի դեմ, թշնամաբար էին դիմավորում ամեն մի այլընտրանքային տեսակետ, յուրաքանչյուր նոր գաղափար ու հայտնագործություն՝ հիմքից «ոչնչացնելով» դրանք: Առանձնապես կատաղի էր նրանց պայքարը արևմտյան գիտության մեջ արդեն «քաղաքացիություն» ստացած գենետիկայի դեմ: Այդ պայքարին նրանք տալիս էին քաղաքական երանգավորում: Սովորական էր դարձել այլախոհների նկատմամբ վարչական ազդեցության միջոցների կիրառումը: Այս ամենն ունեցավ աղետալի հետևանքներ: Մեծ հարված հասցվեց ԽՍՀՄ-ում կենսաբանական գիտությունների առաջընթացին: Ըստ որոշ հետազոտողների՝ առնվազն 30 տարով կասեցվեց կենսաբանության այնպիսի կարևորագույն բնագավառի զարգացումը, ինչպիսին գենետիկան է[22]:

Ակադեմիկոս Պ.Լ.Կապիցան իր հարցազրույցներից մեկում նշում է. «Երբ որևէ գիտության մեջ չկան հակադիր պատկերացումներ, չկա պայքար, ապա այդ գիտությունը գնում է դեպի գերեզման, գնում է թաղելու իրեն» («Юность». 1967, № 1, «Приглашение к спору», էջ 79):

Տարակարծություն առաջ բերող հարցերի շուրջ մտքերի փոխանակումը, համատեղ քննարկումներն ու բանավեճերը իմացության և գիտելիքի զարգացման անհրաժեշտ պայման և օրինաչափություն: Սակայն ոչ բոլոր վիճաբանություններն են նպաստում իմացության առաջընթացին: Վեճերի դասակարգմանը նվիրված բաժնում դիտարկվեցին դրանց այնպիսի ձևեր և դրսևորումներ, որոնք ավելի շուտ հանգեցնում են հարցի ու ճանաչողության խճճմանը, մոլորությունների առաջացմանը: Բացի այդ, ոչ բոլոր դեպքերում և ոչ բոլոր հարցերի կապակցությամբ է, որ նպատակահարմար ու հանձնարարելի են հրապարակային քննարկումներն ու բանավեճերը: Երբեմն դրանք կարող են նաև խանգարել գործին: Այդ առանձնահատկությունները պետք է նկատի ունենալ և հաշվի առնել տարբեր հարցերի

---

[22] Տե՛ս ***Фролов И.Т.,*** Философия и история генетики. Поиски и дискуссии. М., 1988, էջ 16: Տե՛ս նաև ***Семёнов Н.,*** Наука не терпит субъективизма. «Наука и жизнь». 1965, № 4, էջ 38-43:

կապակցությամբ նպատակադրված ձևով բանավեճեր կազմակերպելիս, մեթոդական նկատառումներով դրանք գործածելիս:

3.3. «Ամեն ինչ լավ մեթոդի մեջ է...»

Բանավեճի գլխավոր կոչումը պետք է լինի ճշմարտության հասնելը՝ կարծիքների պայքարի, հակադիր տեսակետների բախման, մոլորությունների հայտնաբերման, սխալների ուղղման ու փոխըմբռնման հաստատման ճանապարհով: Դրանով է այն արժեքավոր իմացության համար և միայն այդպիսի նպատակադրման դեպքում կարող է օգուտ բերել: Բանավեճի այդ դիալեկտիկական տարբերակը նկատի ունեին հույները, երբ ասում էին, թե «վեճը ճշմարտության հայրն է», կամ էլ՝ «վեճերի մեջ է ծնվում ճշմարտությունը»: Բայց իրականության մեջ հաճախ են հանդիպում նաև սոփեստական և էրիստիկական բնույթի վիճաբանություններ: Թերևս դա է պատճառը, որ ժողովրդական իմաստության զինանոցում քիչ չեն նաև այն աֆորիզմներն ու արտահայտությունները, որոնք բացասաբար են որակավորում վեճի երևույթը. «Երբ վեճը եռում է, ճշմարտությունը գոլորշիանում է», «Վեճերի մեջ կորում է ժամանակը», «Ով վիճում է, նա ոչինչ չարժե»,– ասում է ռուսական ասացվածքը:

Որպես վեճի մասին տրամագծորեն հակառակ այս դատողությունների ու կարծիքների խտացված արտահայտություն, կարելի է ներկայացնել հետևյալ աֆորիզմը. «**Վեճերի մեջ ծնվում է ճշմարտությունը, բայց վեճերը կարող են նաև կործանել այն**»: Դրանք հզոր գործոն են մարդկային մտածողության, հաղորդակցման ու ճանաչողության բնագավառում և կարող են ունենալ ինչպես կառուցողական, այնպես էլ ապակառուցողական նշանակություն: Եթե վիճաբանությունը կազմակերպվում և ընթանում է արդյունավետ հունով, պահպանվում են տրամաբանական, հոգեբանական, բարոյագիտական կանոններն ու նորմերը, ապա այն վեր է ածվում էվրիստիկական, ճանաչողական և իմացաբանական անփոխարինելի մեթոդի: Հարկ է նշել, որ բանավեճի իմացաբանական և մեթոդաբանական տեսանկյունները սերտորեն փոխկապակցված են, միահյուսված, պայմա-

նավորված են մեկը մյուսով: Դրանց տարբերությունն ունի գործառնական բնույթ, իսկ առանձին վերլուծությունը՝ առավելապես ճանաչողական նշանակություն:

Մեթոդը (methodos - հուն.՝ դեպի նպատակ տանող ուղի), որն ընդհանուր նշանակությամբ ըմբռնվում է իբրև նպատակին հասնելու հնար, սկզբունք, որոշակի ձևով կարգավորված գործունեություն, կարող է դիտարկվել նաև որպես ճանաչողության միջոց կամ եղանակ: Գիտականորեն հիմնավորված մեթոդների նպատակաուղղված կիրառումը նոր գիտելիքի ստացման ամենաէական պայմանն է: «Ամեն ինչ լավ մեթոդի մեջ է, - գրում է Ի. Պ. Պավլովը: - Լավ մեթոդի դեպքում անգամ մեծ տաղանդ չունեցող մարդը կարող է շատ բան անել: Իսկ վատ մեթոդի դեպքում նույնիսկ հանճարեղ մարդը կարող է անօգուտ աշխատել»[23]:

Դեռևս հին ժամանակներից է գալիս բարդ ու դժվարին հարցերի շուրջ հրապարակային բանավեճեր կազմակերպելու ավանդույթը: Հին աշխարհի իմաստունները, հետազոտելով ճշմարիտ գիտելիքի ստացման եղանակներն ու մեթոդները, հանգեցին այն եզրակացության, որ, ըստ էության, նոր և հավաստի գիտելիքի ստացման առավել հավանական եղանակներից մեկը բանավեճերի մեթոդն է, և որ բանավեճի միջոցով ճշմարտության բացահայտումը, հակասությունների հայտնաբերումն ու հաղթահարումը հայտնագործությունների ու գաղափարների փորձաքննության արժեքավոր եղանակ է:

Օբյեկտիվ իրականության երևույթների մասին գիտելիքը մեծապես պայմանավորված է ճանաչողության, այդ գիտելիքի ստացման, դրա ճշմարտության և հավաստիության ստուգման մեթոդներով, վերջիններիս զարգացածության ու կատարելության մակարդակով: Իմացության ճանապարհին մարդկային միտքը բացահայտում է ուսումնասիրվող երևույթների հետազոտման նոր եղանակներ, անընդհատ մշակում ու կատարելագործում է եղած ձևերն ու մեթոդները: Այն, թե իմացության տվյալ գործընթացում ճանաչողության բազմազան եղանակներից ու մեթոդներից որը պետք է գործածել, օբյեկտի-

[23] ***Павлов И.П.,*** Полное собрание сочинений. Изд. 2-е, т. 5, М.-Л., 1952, էջ 26:

վորեն պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Այդ առումով էական է դիտարկվող օբյեկտի բնույթը: Տարբեր են, օրինակ, ֆիզիկական, հասարակական, կենսաբանական, քիմիական երևույթների ուսումնասիրման մեթոդները: Այս կամ այն մեթոդի ընտրությունը կախված է նաև այն բանից, թե տվյալ երևույթի որ առանձնահատկություններն են ուսումնասիրվում, որ տեսանկյունից է դրան մոտենում ճանաչող սուբյեկտը: Մարդը հետազոտման օբյեկտ է ամենատարբեր գիտությունների համար՝ անատոմիայի, ֆիզիոլոգիայի, հոգեբանության, սոցիոլոգիայի, փիլիսոփայության: Այդ գիտություններից ամեն մեկն իր ուշադրությունը կենտրոնացնում է նրա էության այս կամ այն որոշակի կողմի վրա՝ հետազոտության համար օգտագործելով սեփական մեթոդները, որոնք տարբերվում են այլ գիտություններին հատուկ մեթոդաբանական սկզբունքներից: Տարբեր են իմացության զգայական և տրամաբանական փուլերում գործածվող մեթոդները: Դրանց ընտրության հարցում որոշակի նշանակություն ունեն նաև սուբյեկտիվ գործոնները՝ մարդկանց նախասիրությունները, հակումները, մտավոր պատրաստվածության մակարդակը և այլն:

Այսպիսով, մարդկային իմացության ամեն մի կոնկրետ բնագավառ ունի իրականության հետազոտման իր յուրահատուկ մեթոդները: Կան մեթոդներ էլ, որոնք ունեն ընդհանուր բնույթ և կիրառելի են մի քանի բնագավառների համար: Բայց կան նաև այնպիսք, որոնք հավասարապես կիրառելի են իմացության բոլոր բնագավառների համար, ունեն համընդհանուր բնույթ: Դա բացատրվում է ճանաչողության օբյեկտ հանդիսացող երևույթներին բնորոշ ընդհանուր օրենքների գոյությամբ, ինչպես նաև նրանով, որ արտաքին աշխարհի երևույթների իմացության գործընթացն էլ իր հերթին ունի ընդհանուր օրինաչափություններ:

Ընդհանուր առմամբ, **մեթոդը որոշակի միջոց, գործողություն է (կամ գործողությունների համակարգ), որին բնորոշ են. դետերմինավորվածությունը (պայմանավորվածությունը որոշակի օինաչափությամբ), նպատակաուղղվածությունը, արդյունավետությունը, խնա-**

յողականությունը, հուսալիությունը, պազությունն ու մատչելիությունը:

Ամեն մի մեթոդի հիմքում ընկած է որոշակի օրինաչափության կամ օրենքների իմացությունն ու գործունեության ընթացքում դրանց հաշվի առնելը: Մեթոդական մոտեցում ցուցաբերել որևէ երևույթի նկատմամբ՝ նշանակում է մշակել և իրականացնել որոշակի կարգավորված գործունեություն, որը հիմնված է այդ երևույթի զարգացման ներքին օրինաչափությունների, դրա լինելիության սկզբունքների իմացության վրա և համապատասխանեցված է դրանց:

Հակադիր տեսակետների բախումը, մտավոր պայքարը, ինչպես այս գլխի առաջին մասում հիմնավորվեց, մարդկային իմացության զարգացման և առաջընթացի օբյեկտիվ օրինաչափություն է, ուստի կարող է գիտակցաբար ու նպատակաուղղված ձևով գործածվել իբրև իմացության եղանակ, ձև, մեթոդ: Այն ունի ընդհանուր բնույթ և կիրառելի է մարդկային իմացության բոլոր բնագավառներում:

Բանավեճերի մեթոդը՝ որպես **բարդ, տարակարծություններ առաջ բերող հարցերին լուծում գտնելու եղանակ**, որպես **որոշ դրույթների պաշտպանման ու հիմնավորման և մյուսների հերքման միջոց**, լայնորեն կիրառվում է ամենատարբեր ասպարեզներում՝ լինի դա քաղաքականություն, արվեստ, թե արդարադատություն: Այդ մեթոդին են դիմում, երբ դժվարություններ են առաջանում **տեսական դրույթների ըմբռնման հարցում**, **հակասություններ են հայտնաբերվում մարդկանց պատկերացումներում** կամ նրանց գործողություններում: Բանավեճն օգնում **է զանազան գաղափարների ու տարբերակների միջից ընտրել առավել արդյունավետները, համեմատել ու առդնել որևէ հարցի վերաբերյալ հակադիր տեսակետները, բացահայտել դրանց առավելություններն ու թերությունները, արժեքավորել դրանք:** Օգնում է **ելք գտնել բարդ իրադրություններից, հաղթահարել հին ու կարծրացած պատկերացումները:** Բանավեճերը **նպաստում են ճկուն մտածելակերպի զարգացմանը, ձևավորում ակտիվ կենսադիրքորոշում, ինչպես նաև հնարավորություն տալիս պատկերացում կազմել ընդդիմախոսի (կամ վիճող կողմերի) մտավոր կարողությունների, գեղագիտական ճաշակի, բարոյական հատ-**

կանիշների մասին: Առողջ, ազատ ու անկաշկանդ վիճաբանությունները հանգեցնում են ոչ միայն **ճշմարտության հայտնաբերմանը**, այլև մեծապես նպաստում, **բարենպաստ միջավայր են ստեղծում արդարության հաղթանակի համար:**

Գործերի քննության մրցակցային, ասել է, թե՝ կանոնակարգված բանավեճի սկզբունքով են կառուցվում դատավարությունները: Պառլամենտական վեճերի ու քննարկումների ընթացքում են ձևավորվում հասարակական հարաբերությունները կարգավորող օրենքներն ու իրավական ակտերը: Պառլամենտի քննարկմանն են ներկայացվում այս կամ այն հանձնաժողովի, աշխատանքային խմբի, քաղաքական ուժերի, կառավարության կամ առանձին պատգամավորների կողմից մշակված օրենքի, որոշման տարբեր նախագծեր: Դրանց կապակցությամբ արվում են դիտողություններ, առարկություններ ու առաջարկություններ: Եղած նախագծերի միջից համեմատական վերլուծության ու առդրման ճանապարհով ընտրվում է առավել նպատակահարմար ու արդյունավետ տարբերակը (կամ տարբերակները): Մանրամասն քննարկումների, բանավեճերի ընթացքում ավելի են հստակեցվում դրա ձևակերպումները, ճշգրտվում են գործածվող հասկացությունների շրջանակները, հայտնաբերվում, շտկվում և լրամշակվում են նախագծի թյուր ու թերի կողմերը: Արդյունքում այն ստանում է ավելի կատարյալ, տրամաբանական-իրավաբանական տեսակետից ավելի ամբողջական ու կուռ կառուցվածք: Նույնը կարելի է ասել նաև զանազան խնդիրների շուրջ համաձայնագրերի ու պայմանագրերի կապակցությամբ տարբեր մակարդակների բանակցությունների, խորհրդակցությունների վերաբերյալ:

Անփոխարինելի է բանավեճի մեթոդի դերը գիտության բնագավառում: Կարծիքների, տեսակետների բախումն ու մրցակցությունը գիտության մեջ միջոց է և եղանակ **նոր գիտական հասկացությունների, սահմանումների, պատկերացումների մշակման, արդեն գործածվողների հստակեցման ու ճշգրտման համար:** Ա. Ն. Սոկոլովը նկատում է, որ գոյություն ունեցող գիտական հասկացությունների զարգացման, փոփոխման, ինչպես նաև նորերի փնտրման գործընթացն անխուսափելիորեն ուղեկցվում է դրանց բովանդակության մասին

սուր բանավեճերով, քանզի գիտությունը մշտապես ձգտում է իր հասկացությունների բովանդակության և դրանց գործառնության ոլորտի կոնկրետ ու հստակ սահմանմանը[24]:

Բանավեճերի ու քննարկումների միջոցով **հասկացությունների, գաղափարների հստակեցումը** նպաստում է դրանց ավելի խիստ ու ճշգրիտ ձևակերպմանը, հավաստի գիտելիքի սահմանազատմանը թյուր պատկերացումներից, ինչպես նաև վերջիններիս և դրանց վրա կառուցված տեսությունների հերքմանը: Գիտական հասկացությունների շուրջ բանավեճերը **գիտական գիտելիքը պաշտպանում են դոգմատիզմից ու կարծրատիպերից, արգելակում գիտության մեջ կեղծ պատկերացումների ներթափանցումը:**

Իհարկե, վիճաբանության մեթոդաբանական նշանակությունը չի սահմանափակվում հասկացությունների ճշգրտման ու սահմանման շրջանակներով: Բանավեճերը, հատկապես գիտական նոր պատկերացումների ձևավորման շրջանում, մեծապես **նպաստում են նյութի հավաքմանն ու կուտակմանը**: Մրցակից կողմերից ամեն մեկը ձգտում է հավաքել, վերլուծել ու համակարգել իր տեսակետը հիմնավորող և հակառակորդի պատկերացումները հերքող որքան հնարավոր է ավելի շատ նյութեր ու փաստեր՝ դրանով իսկ նպաստելով գիտելիքների զարգացմանն ու իմացության առաջընթացին: Այդ առումով Ա. Սոկոլովը հիշատակում է ֆրանսիացի կենսաբան, քիմիկոս Լ. Պաստյորի փորձերի և ինքնածնության տեսության շուրջ 19-րդ դարում ծավալված բուռն բանավեճերը, որոնք հանգեցրին միկրոօրգանիզմների վերաբերյալ հսկայական գիտական նյութի կուտակմանը՝ բարենպաստ հող նախապատրաստելով գիտության նոր բնագավառի՝ միկրոկենսաբանության առաջացման համար[25]:

Գիտության ասպարեզում, և ոչ միայն այնտեղ, հաճախ են ստեղծվում այնպիսի իրավիճակներ, երբ կոնկրետ հարցի լուծման համար առաջարկվում են զանազան եղանակներ ու ուղիներ, քննարկվող երևույթի մեկնաբանության կապակցությամբ առաջ են քաշվում ամենատարբեր ենթադրություններ ու վարկածներ: Դրանց

---

[24] ***Соколов А.Н.,*** Проблемы научной дискуссии, էջ 136:
[25] Տե՛ս նույնը, էջ 138:

սխալ կամ արժեքավոր ու հեռանկարային լինելը, ինչպես արդեն նկատել ենք, միշտ չէ, որ հնարավոր է պարզել գիտափորձեր դնելու ճանապարհով: Այդ դեպքում ո՞րն է ելքը: Ինչպե՞ս որոշել այս կամ այն գաղափարի նշանակությունն ու գիտական արժեքը, դրա ճշմարտացիությունն ու սխալականությունը: Արդյո՞ք սպասել մինչև իրերի բնական ընթացքն անշրջելիորեն պատասխանի այդ հարցերին: Իսկ ինչպե՞ս վարվել, երբ անհրաժեշտ է կանխորոշել գիտական հետազոտության (գիտափորձի, գործունեության) բացասական հետևանքների հնարավորությունն ու խուսափել դրանցից: Նման դեպքերում ևս օգնության է գալիս քննարկումների ու բանավեճերի մեթոդը, որը հնարավորություն է տալիս կոնկրետ հարցի լուծման համար առաջադրված տարբեր եղանակների միջից, դրանց համեմատման ու առդրման ճանապարհով, ընտրել առավել նպատակահարմարն ու լավագույնը, ինչպես նաև **մտավոր գիտափորձի** եղանակով վերլուծել այս կամ այն գիտական գաղափարի կենսագործման հնարավոր դրական և բացասական հետևանքները: Այսպիսով, մտքերի փոխանակումն ու դրանց պայքարը գիտության մեջ հանդես է գալիս որպես յուրօրինակ «**տեսական պրակտիկա»,** որը թույլ է տալիս միջնորդավորված վերիֆիկացիայի, ֆալսիֆիկացիայի[26] գործիքակազմի ինչպես նաև ճշմարտության ներգիտական չափանիշների[27] գործադրմամբ կազմակերպել **գաղափարի փորձաքննություն**: Տվյալ դեպքում բանավեճը ներկայանում է իբրև տարբեր կարծիքները, պատկերացումներն ու գաղափարները միմյանց, ինչպես նաև մարդկության կողմից արդեն կուտակված գործնական փորձի ու տեսական գիտելիքների հետ առդրման ու համեմատման եղանակ:

---

[26] Նեոպոզիտիվիզմի փիլիսոփայության շրջանակներում մշակված սկզբունքներ, որոնք թույլ են տալիս առաջին դեպքում փորձնական տվյալների հիման վրա անմիջականորեն կամ միջնորդավորված (տրամաբանական կշռադատությունների ու հետևեցումների) եղանակով ստուգել-հիմնավորել գիտելիքի ճշմարիտ լինելը, իսկ երկրորդ դեպքում՝ սխալությունը: *Տե՛ս* ժամանակակից բուրժուական փիլիսոփայություն: Ուս. ձեռնարկ համալս. փիլ. ֆակ. համար: Խմբ. Բոգոմոլով Ա. Ս. և ուրիշներ.: Եր., 1983, էջ 138-148:

[27] Այդպիսիք են՝ ներքին անհակասականությունը, բովանդակային և ձևական լրիվությունը, արտաքին անհակասականությունը, կանխադրույթների անկախությունը, դրույթների պարզությունն ու հստակությունը:

Բանավեճերն օգնում են **ստուգել գիտական պատկերացումների փաստարկվածության աստիճանն ու համոզիչ լինելը**: Բաց քննարկման համար առաջադրելով նոր գաղափարներ՝ դրանց կողմնակիցները հնարավորություն են ստանում պարզել, թե որտեղ է իրենց գաղափարների թուլությունն ու թերությունը, որտեղ՝ առավելությունը, որտեղ է դրանց հիմնավորումն անբավարար և այլն: Բարդ հիմնահարցերի շուրջ գիտակցաբար կազմակերպված վիճաբանությունները նպաստում են տեսակետների միջև եղած հակասությունների ճիշտ մեկնաբանությանը, էվոլյուցիային ու արդյունավետ լուծմանը:

Ա. Ն. Սոկոլովն իր «Գիտական վիճաբանության հիմնախնդիրները» աշխատության մեջ անդրադառնում է նաև 19-րդ դարի վերջին քիմիայում լուծույթների հիդրատային (ջրօքսիդային) հին տեսության և նոր ձևավորվող՝ էլեկտրոլիտիկ դիսոցման (տարաբաժանման) տեսության կողմնակիցների միջև ծայր առած վիճաբանությանը: Նոր տեսության կողմնակիցները, պայքարելով գիտության մեջ իրենց պատկերացումների հաստատման համար, գիտակցաբար գործածում էին հրապարակային քննարկումները՝ լայնորեն քարոզելով ու տարածելով իրենց հայացքները: Այդ քննարկումներն ու բանավեճերը հանգեցրին ոչ միայն էլեկտրոլիտիկ դիսոցման տեսության կողմնակիցների թվի մեծացմանը, այլև այդ տեսության հիմքերն ամրապնդող նոր փաստերի հայտնագործմանը՝ գիտնականներից պահանջելով ինչպես փորձնական, այնպես էլ տեսական հետազոտությունների անընդհատ ընդլայնում: Քիմիկոսների վեճի լուծմանը նպաստելու համար Գիտությանն օժանդակող բրիտանական ասոցիացիան 1890 թ. հրավիրեց համագումար, որին մասնակցեցին հակամարտ տեսակետները ներկայացնող գիտնականներ տարբեր երկրներից: Համագումարին նախորդող և դրա ժամանակ տեղի ունեցած բանավեճերի ու քննարկումների արդյունքը եղավ այն, որ էլեկտրոլիտիկ դիսոցման տեսությունն ամրապնդեց իր դիրքերը, և նրա հաղթանակն այլևս կասկած չէր հարուցում[28]:

[28] Տե՛ս ***Соколов А.Н.,*** նշվ. աշխ., էջ 138-139:

Ինչպես այս օրինակից կարելի է նկատել, վիճաբանություններն ունեն մեկ այլ կարևոր մեթոդաբանական նշանակություն ևս: Գիտական հիմնախնդիրների քննարկման գործընթացում ներգրավելով բազմաթիվ հետազոտողների, իսկ հաճախ էլ՝ գիտության տարբեր բնագավառներ ներկայացնող և տարբեր երկրներում ապրող գիտնականների՝ վեճերը նպաստում են գիտական հասարակության մեջ ճշմարտացի հայացքների տարածմանն ու հաստատմանը, հանդես գալով որպես դրանց **պրոպագանդման գործնական միջոց** և եղանակ:

Հակադիր տեսակետների պայքարը, բանավեճն ու քննարկումները հնարավորություն են տալիս իմացության և մտածողության բնագավառում **խուսափել քարացածությունից, կարծրամտությունից ու միակողմանիությունից:** Ինչպես ժողովրդական ասացվածքն է ասում՝ մի խելքը լավ է, երկուսն՝ ավելի: Մարդկային մտքի հանճարները, լավ հասկանալով և բարձր գնահատելով վիճաբանության կարևոր մեթոդաբանական նշանակությունը այս և վերը քննարկված մյուս առումներով, մեծ տեղ են հատկացրել դրան իրենց գործունեության մեջ:

Գիտական հարցերի շուրջ քննարկումների ու բանավեճերի կազմակերպմանը մեծ նշանակություն էր տրվում 20-րդ դարի խոշորագույն ֆիզիկոսներից մեկի՝ Ա. Իոֆֆեի ղեկավարած գիտական դպրոցում: Հիմնականում այդ նպատակին էին ծառայում այստեղ անցկացվող տեսական սեմինարները: Քննարկումները լինում էին բավականին բուռն: Երիտասարդներն իրենց զգում էին լուրջ բանավեճերի լիիրավ անդամներ: Անվանի գիտնականի հետ վիճելը հեշտ էր և հաճելի: Միշտ լսում էր մինչև վերջ, գնահատում էր զրուցակցի սեփական մտքերը, երբեք չէր ճնշում իր հեղինակությամբ: Վիճում էր ինչպես հավասարը հավասարի հետ: Եթե զրուցակիցը թյուր գաղափարներ էր ներկայացնում, նա չէր զայրանում, այլ քաղաքավարի և համոզիչ ձևով ցույց էր տալիս դրանց անհիմն լինելը: Իսկ երբ պա-

տահում էր այնպես, որ ինքն էր սխալվում, խոստովանում էր, փոխում սխալ որոշումները[29]:

Նույնը կարելի է ասել նաև մեկ ուրիշ հռչակավոր ֆիզիկոսի՝ Լ. Լանդաուի մասին: Նրա վարած սեմինարներին բնորոշ էին ազատ, գործնական բանավեճերը: Սեմինարի ամբողջ ընթացքում տիրում էր անկաշկանդ մթնոլորտ: Բարձր էին գնահատվում հաջող կատակները, պատկերավոր համեմատությունները, սրամտությունները, բառախաղերը, որոնց միջոցով քննարկվող գաղափարներին տրվում էր ավելի հստակ ու ակնառու ձև[30]: Հետազոտության «մեթոդն ավելի կարևոր է, քան հայտնագործությունը»,– նշում էր Լանդաուն[31]:

Ժամանակակից գիտությունը տարբեր գիտնականների համատեղ ուժերով բարդ խնդիրների լուծման հարուստ փորձ ունի: Այսօր գիտության զարգացումն անհնար է պատկերացնել առանց գիտական կոլեկտիվների, հիմնարկների և հաստատությունների համատեղ ու փոխհամաձայնեցված գործունեության: Գիտության մեջ հսկայական դեր են խաղում մեր ժամանակների համար սովորական դարձած գիտաժողովները, հավաքները, սեմինար-խորհրդակցությունները և այլն: Դրանց խնդիրը ոչ միայն թարմ ինֆորմացիայի փոխանակումն է, այլև գիտական վիճելի հարցերի համակողմանի քննարկումը, վերջիններիս լուծում գտնելու կապակցությամբ բանավեճերի գիտակցաբար ու նպատակաուղղված վարումը:

Որոշ հետազոտողներ էլ իրավացիորեն ուշադրություն են հրավիրում բանավեճի մեթոդի դաստիարակչական հնարավորությունների վրա[32]: Հայտնի է, որ բանավեճը փաստարկողական գործունեության կազմակերպման նախընտրելի և արդյունավետ ձև է: Այն զգալիորեն հեշտացնում է ապացուցման, հերքման, հիմնավորման ու համոզման գործընթացները: Հաճախ այս կամ այն մտքի, գաղափարի

---

[29] Ըստ ***Соминский М.С.,*** Абрам Феодорович Иоффе. М.-Л., 1964, էջ 411-424:
[30] Տե՛ս ***Бессараб М.Я.,*** Академик Л.Д. Ландау. Страницы жизни. М., 1988, էջ 139; 155-163:
[31] Նույնը, էջ 159:
[32] Տե՛ս ***Слемнёв М.А., Васильков В.Н.,*** Диалектика спора, էջ 7-10:

ճշմարտացիության ու նպատակահարմարության բացահայտման և դրա մեջ դիմացինին համոզելու լավագույն միջոցը ոչ թե երկարաշունչ բացատրությունները, խրատներն ու ձանձրացնող քարոզներն են, այլ ազատ զրույցը, քննարկումներն ու բանավեճը: Այս առումով առանձնապես արժեքավոր է քննարկվող մեթոդի դերը կրթական և դաստարակչական գործընթացներում:

3.4. Բանավեճի մեթոդը ուսումնադաստիարակչական գործընթացում

Հետխորհրդային Հայաստանի կրթական համակարգում իրականացվող բարեփոխումները 1990-ականներից ի վեր զգալի փոփոխություններ են գրանցել կրթության բովանդակության, կրթական հաստատությունների կառուցվածքի, դրանց կառավարման սկզբունքների ասպարեզներում: Դրական և բացասական կողմերով հանդերձ, ձեռքբերումներ կան նաև նոր դասագրքերի, դասընթացների, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման առումներով: Նույնը դժվար է ասել դասավանդման մեթոդների նորացման, դրանց կատարելագործման մասին: Այստեղ առավել նկատելի են իներցիան ու պահպանողական մոտեցումները:

Մինչդեռ արժեքավոր ու արդյունավետ կարող է լինել ուսուցման ինտերակտիվ ձևերի ներառումն ու կարևորումը արդի կրթության մեթոդական զինանոցում: Այդ առումով արժեքավոր է ***բանավեճի*** մեթոդը: Վերջինս, իհարկե, մանկավարժության մեջ նորություն համարել չի կարելի: Այն գալիս է դեռևս հին ժամանակներից, և դրա արդյունավետությունն ու հնարավորությունները լավ են գիտակցել մեծ մտածողներն ու մանկավարժները: Սակայն հասարակական հարաբերությունների ժողովրդավարացման և բազմակարծության արմատավորման ներկայիս պայմաններում այդ մեթոդը դեռևս պատշաճ կիրառություն չի գտնում և դժվարությամբ է ներառվում դասավանդման գործընթացներում:

Ժամանակակից մանկավարժությունն առաջարկում և երաշխավորում է զանազան մեթոդների, ուսումնադաստիարակչական գործ-

ընթացի կազմակերպման ու իրականացման եղանակների հարուստ զինանոց և դրանց դասակարգման տարբեր մոտեցումներ:

Որոշ հեղինակներ նախընտրում են ժամանակակից կրթադաստիարակչական համակարգի շրջանակներում գործածվող մեթոդներն ու եղանակներն ուսումնասիրելիս դրանք դասակարգել ***ըստ այն աղբյուրների, որոնցից սովորողները գիտելիքներ են ձեռք բերում***՝ առանձնացնելով ***խոսքային*** (նյութի բանավոր շարադրումն ուսուցչի կողմից, զրույց), ***զննական*** (ցուցադրում, էքսկուրսիա, ինքնուրույն դիտումներ) և ***գործնական մեթոդները*** (վարժություններ, լաբորատոր ու գործնական աշխատանքներ)[33]:

Մանկավարժական գրականության մեջ առանձնացվում են նաև ուսուցման մեթոդների հետևյալ հիմնական խմբերը. 1) ուսումնահմացական գործունեության կազմակերպման և իրագործման մեթոդներ, 2) ուսումնահմացական գործունեության խթանման ու մոտիվացիայի մեթոդներ, 3) ուսումնահմացական գործունեության արդյունավետության նկատմամբ վերահսկողության ու ինքնավերահսկողության մեթոդներ[34]:

Ոմանք էլ առաջարկում են առանձնացնել ***ռեպրոդուկտիվ*** (վերարտադրող), ***պրոբլեմային*** (հարցի ուսումնասիրման մեթոդիկայի բացահայտման հետ կապված), ***մասնակի որոնումների ու հետազոտական*** մեթոդները[35]:

Դասակարգման նշված եղանակներից բացի, ուսուցման տարբեր մեթոդները, ձևերն ու եղանակները կարելի է դիտարկել նաև ըստ մասնակից կողմերի՝ ***սովորեցնողի և սովորողների հարաբերական ակտիվության***[36]: Այդ տեսանկյունից ուսուցման մեթոդները կբաժանվեն երեք խմբի:

---

[33] Տե՛ս Մանկավարժություն: Դասախոսությունների դասընթաց: Ընդ. խմբագրությամբ՝ Գ. Ի. Շչուկինայի և ուրիշների: Երևան, 1969, էջ 225-264:

[34] Տե՛ս Մանկավարժություն: Ուսումնական ձեռնարկ մանկավարժական ինստիտուտի ուսանողների համար: Խմբ.՝Յու. Կ. Բաբանսկու: Մաս 1, Երևան, 1986, էջ 226-227:

[35] Տե՛ս ***Лернер И. Я. Скаткин М. И.,*** О методах обучения. «Советская педагогика», 1965, №23:

[36] Տե՛ս ***Հովհաննիսյան Հ. Օ.,*** Բանավեճի մեթոդի առանձնահատկությունները դասավանդման և սովորողների մտավոր կարողությունների զարգացման գործընթացնե-

Առաջին խմբի մեջ կընդգրկվեն ուսուցման այն ձևերն ու մեթոդները, որտեղ ուսուցիչը հանդես է գալիս ակտիվ-ուսուցողական դերով, իսկ աշակերտների մասնակցությունն ունի հարաբերականորեն պասսիվ բնույթ: Նրանց խնդիրն է՝ ուշադիր լսել, ընկալել, յուրացնել և մտապահել ուսուցչի ասածը: Դպրոցական և բուհական դասավանդման ժամանակակից պրակտիկայում, մանավանդ նոր նյութի մատուցման ժամանակ, առավել գործածական է հենց այս *«դոնորռեցիպիենտային»* մոդելը: Իհարկե, այս մոդելը չի բացառում ունկնդիրների ակտիվությունն ընդհանրապես: Նրանց պասսիվությունն ունի սոսկ հարաբերական բնույթ: Նախ՝ հարկ է նկատել, որ լսարանի կողմից նոր նյութի ընկալման գործընթացը պետք է լինի ոչ թե մեխանիկական, ուրիշի մտքերի ու փաստերի սերտման, այլ՝ ակտիվ ընկալման-յուրացման գործընթաց: Բացի այդ, ունկնդիրները կարող են ուսուցչին կամ դասախոսին դիմել թեմայի վերաբերյալ իրենց հուզող և անհասկանալի հարցերով, խնդրել նրան պարզաբանել կամ ավելի մանրամասն մեկնաբանել այս կամ այն միտքը, դրվագը և այլն:

Երկրորդ խմբի մեջ մտնում են ուսուցման այն մեթոդներն ու եղանակները, որտեղ ավելի ակտիվ է սովորողը, և համեմատաբար պասսիվ է ուսուցչի դերը: Ուսուցիչը, իր սաներին հանձնարարելով որևէ խնդիր կամ առաջադրանք և նախօրոք անհրաժեշտ խորհուրդներ ու ցուցումներ (ներածական հրահանգավորում) տալով, աշխատում է այլևս չմիջամտել նրանց աշխատանքին: Սովորողներին տրվում է ինքնուրույն գործելու լայն հնարավորություն: Այդպիսի մոտեցումը հնարավորություն է ընձեռում բացահայտել և աստիճանաբար զարգացնել նրանց հուզական, կամային և, իհարկե, մտավոր կարողությունները:

Ուսուցման քննարկվող մեթոդի շրջանակներում ուսուցչի դերը պասսիվ լինելով հանդերձ՝ ամենևին էլ երկրորդական չէ, և չի կարելի այն թերագնահատել: Շատ կարևոր է, որպեսզի նա իր խորհուրդնե-

---

րում: «Մանկավարժական միտք», 2016 (3-4), էջ 151: Տե՛ս նաև ***Հովհաննիսյան Գ., Հովհաննիսյան Հ.,*** Բանավեճի մեթոդը ուսումնադաստիարակչական գործընթացում: Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտելիք» հրատ., 2006, էջ 10-12:

րով, դիտողություններով կարողանա ցանկալի հունի մեջ պահել իր սաներին, հմտորեն ցույց տա թույլ տրված սխալներն ու անճշտությունները, ճշի դրանք շտկելու եղանակներն ու ուղիները:

Վերջապես, մեթոդների ***երրորդ խումբը*** կազմում են ուսուցման և դասավանդման գործընթացի կազմակերպման այն ձևերն ու եղանակները, որոնց բնորոշ է մասնակից կողմերի երկուստեք ակտիվություն: Այդպիսիք են թեմատիկ զրույցը, հարցի կամ խնդրի լսարանային քննարկումները: Մեթոդների այս շարքում առանձնահատուկ տեղ է գրավում ***բանավեճը:***

Ուսումնական զրույց-բանավեճը գործածվող ամենատարբեր մեթոդների համակարգում առանձնանում է սովորողների մոտ ճկուն մտածելակերպի զարգացման, ակտիվ կենսադիրքորոշման, գիտելիքների համատեղ որոնման, հայտնաբերման ու սխալների շտկման, մտքերի փոխանակության գործնական հմտությունների մշակման լայն հնարավորություններով:

19-րդ դարի գերմանացի ականավոր մանկավարժ Ադոլֆ Դիստերվեգն իր «Ձեռնարկ գերմանական ուսուցիչների կրթության համար» աշխատության մեջ, անդրադառնալով ուսուցման մեթոդներին, համալսարաններում ավանդաբար կիրառվող «գիտական» կամ «հաղորդող» (իր իսկ բնորոշմամբ՝ դեդուկտիվ, արիստոկրատական, երբեմն՝ դիալեկտիկական, երբեմն՝ դոգմատիկական) մեթոդից տարբերում է «տարրական» կամ «զարգացնող» մեթոդը (որն ունի ինդուկտիվ, դեմոկրատական, վերլուծական, էվրիստիկ բնույթ)[37]:

Դասավանդման զարգացնող-էվրիստիկ եղանակն իր հերթին կարող է դրսևորվել ***շարադրանքի*** կամ ***զրույցի ձևով***: Ըստ Դիստերվեգի՝ զարգացնող-շարադրական եղանակի կիրառման մեջ կատարելության է հասել Ֆր. Շլայերմախերը, զարգացնող-բանավեճայինում՝ Սոկրատեսը: Վերջինիս մեթոդը գերմանացի մտածողը համարում էր ուսուցչական արվեստի պսակը և պահանջում ուսումնական հիմնարկներում հնարավորինս կիրառել հարցողական-զգացողա-

[37] Տե՛ս ***Դիստերվեգ Ա.,*** Մանկավարժական ընտիր երկեր: Երևան, 1963, էջ 212-213:

կան-շարադրական եղանակը, այսինքն՝ սոկրատեսյան կամ ծայրահեղ դեպքում՝ շլայերմախերական մեթոդը[38]:

Ա. Դիստերվեգը, պաշտպանելով հնից եկող ավանդման հարցուպատասխանային մեթոդը, դրա լավագույն ձևը համարում է էվրիստիկ զրույցը կամ քննարկումը, որն արթնացնում է աշակերտների մտավոր ուժերը, ստիպում որոնել ու կշռադատել: Նրա կարծիքով սխալ է այն սկզբունքը, երբ աշակերտին ստիպում են, որ նա ավելի շատ լսի, քան խոսի: «Մեծ տարբերություն կա, երբ ինքդ ես խոսում և երբ ուրիշին ես խոսակցության գրավում: ... Աշակերտների խոսքը լսելու փոխարեն իր խոսելը, լուրջ սխալանք է, դա ուրիշ բան չէ, քան վատ սովորություն, որն իր հերթին վերին աստիճանի կործանիչ է ազդում աշակերտների վրա»[39]:

Ուսուցման ավանդական ձևի դեպքում դասախոսն ինքն է շարադրում նյութը, ձևակերպում և լուծում խնդիրը (դուրս բերում բանաձևը, ապացուցում թեորեմը և այլն): Իսկ սովորողը պարտավոր է հասկանալ և մտապահել ուրիշի միտքը, հիշել ձևակերպումը, լուծման սկզբունքը, ապացուցման ընթացքը: Ամեն ինչ հանգեցված է ուրիշի մտքերը, ուրիշի փաստարկները յուրացնելուն և վերարտադրելուն[40]: Մինչդեռ, ուսուցման հիմքը պետք է լինի ոչ թե այն ինֆորմացիան հիշելը, որը դասախոսն առատորեն մատակարարում է աշակերտներին (թեև դա ևս կարևոր է), այլ իրենց՝ սովորողների ակտիվ մասնակցությունն այդ ինֆորմացիայի ձեռքբերման գործընթացին, նրանց ինքնուրույն մտածողությունը, ինքնուրույնաբար գիտելիքներ ձեռք բերելու զարգացող կարողությունը, ինքնուսուցման ընդունակությունները[41]:

Այդպիսի պահանջներին լավագույնս համապատասխանում են կառուցողական բնույթ և ճանաչողական կողմնորոշում ունեցող բանավեճերն ու քննարկումները: Ճիշտ կազմակերպված բանավեճը

---

[38] Տե՛ս նույնը, էջ 213-216:
[39] Նույնը, էջ 139-140:
[40] Տե՛ս ***Կրուտեցկի Վ. Ա.,*** Մանկավարժական հոգեբանության հիմունքները: Երևան, 1976, էջ 249:
[41] Նույնը, էջ 310:

խթանում է մտածողությունը, առաջ է բերում ընդհանուր շահագրգռվածության մթնոլորտ, զարգացնում նախաձեռնությունը, սովորողների մոտ դաստիարակում ինքնուրույն մտածելու, փնտրելու, սեփական տեսակետը հստակ շարադրելու և հիմնավորելու ունակություններ, պայմաններ է ստեղծում փորձի փոխանակման և գիտելիքներով փոխադարձ հարստացման համար: Նման հնարավորություններն ու առանձնահատկություններն այդ մեթոդը դարձնում են օժտված սովորողների հայտնաբերման, նրանց ինքնադրսևորման և մտավոր ուժերի զարգացման անփոխարինելի միջոց:

Բանավեճը կարելի է գործածել ուսումնական գործընթացի բոլոր օղակներում՝ երբեմն որպես ինքնուրույն մեթոդ, երբեմն էլ՝ զուգակցված ուրիշ մեթոդների հետ, որպես օժանդակ կամ բաղկացուցիչ մաս՝ հարստացնելով դրանց բովանդակությունը և լուծելով որոշակի կոնկրետ խնդիրներ (հարցի վրա կենտրոնացնել լսարանի ուշադրությունը, խթանել սովորողների մտածողությունը, ընկալունակությունը, ճշգրտել առաջ եկած կամ գոյություն ունեցող տեսակետներն ու ձևակերպումները և այլն):

Իհարկե, կուռ, հարուստ ու բանիմաց շարադրանքը, լինի դա պատմելու, բացատրության, թե դասախոսության ձևով, նույնպես հետաքրքրություն է առաջացնում, արթնացնում է միտքը, ուսուցչի համոզիչ, վառ խոսքը հուզական ներգործություն է ունենում սովորողների վրա, ուժեղացնում նյութի դաստիարակչական ազդեցությունը: Ավանդման այդ եղանակը, սակայն, սովորողներից պահանջում է տևական և լարված ուշադրություն, ինչը միշտ չէ, որ հնարավոր է ապահովել: Հաճախ դժվար, հոգնեցուցիչ է լինում անընդհատ լռել և միայն լսելը: Նման դեպքերում օգնության են գալիս աշխույժ զրույցն ու բանավեճը, խորհուրդ է տրվում շարադրանք-մենախոսությունը զուգակցել զրույց-բանավեճի մեթոդի հետ:

Այս մեթոդը նախընտրելի է մեկ այլ տեսանկյունից ևս: Պատմելու ձևով նոր նյութի մատուցման կամ դասախոսության ժամանակ դանդաղ ըմբռնող սովորողները միշտ չէ, որ հարմարվում են ընդհանուր ռիթմին և հաճախ բաց թողնելով դասախոսության առանձին դրվագներ՝ դադարում են հետևել դասին: Դասախոսության դեպքում

ուսուցիչն անհամեմատ ավելի քիչ հնարավորություն ունի հետևելու, թե ինչպես է ընկալվում կամ յուրացվում նյութն իր սաների կողմից: Նա կարող է այդ մասին որոշակի պատկերացում կազմել միայն դասի վերջում՝ մի քանի ստուգիչ հարցեր տալով նրանց[42], կամ էլ այդ մասին կարող է գուշակել լսարանի և նրա անդամների արտաքին պահվածքից, ընդհանուր մթնոլորտից և այլն: Այս վերջին եղանակն ավելի քիչ հավաստի է, քանի որ, ինչպես ցույց է տալիս փորձը, դասաժամին ունկնդիրների լուռ պահվածքը, հայացքով ուսուցչին հետևելը, անգամ նրա դատողություններին համաձայնության նշաններ անելը հաճախ խաբուսիկ է լինում:

Այլ է զրույցի կամ բանավեճի ժամանակ: Դասավանդման այդ եղանակը ոչ միայն առաջ է բերում ընդհանուր աշխուժություն, քննարկմանը մասնակցելու ընդհանուր շահագրգռվածության մթնոլորտ, կենտրոնացնում սովորողների ուշադրությունը, այլև հնարավորություն է տալիս հարց ու պատասխանի օգնությամբ, աշակերտների առանձին դատողությունների, ելույթների ու արտահայտությունների միջոցով հետևել նրանց մտքի աշխատանքին, նկատել նրանց սխալները և հենց տեղում շտկել դրանք: Բանավեճը թե՛ ուսուցչի, թե՛ սովորողների համար նպաստավոր պայմաններ է ստեղծում նաև ինքնաստուգման ու ինքնաճշգրտման համար:

Քննարկվող մեթոդը կիրառելի է ինչպես ցածր տարիքային խմբերում, այնպես էլ ավագ տարիքի սովորողների շրջանում: Եթե առաջին դեպքում այն ընդունում է ընդգծված հարց ու պատասխանի ձև, ապա երկրորդ դեպքում ավելի նպատակահարմար է, և խորհուրդ է տրվում զրույցը, ուսումնական բանավեճը կազմակերպել ազատ ու անկաշկանդ քննարկումների ձևով[43]:

Բանավեճը դասավանդման ընթացքում կարող է տեղի ունենալ ինչպես աշակերտների, այնպես էլ ուսուցչի և աշակերտների միջև: Այն կարող է լինել նախապես չծրագրավորված, հանպատրաստից և

---

[42] Հարկ է նկատել, որ այս դեպքում ևս գործի է դրվում զրույցի, հարց ու պատասխանի մեթոդը:

[43] Տե՛ս Մանկավարժություն: Դասախոսությունների դասընթաց: Խմբ.՝ Շչուկինայի և ուրիշների, էջ 239-240:

ունենալ, այսպես ասած, **ընթացիկ կամ օժանդակ բնույթ**: Դրա նախաձեռնությունը կարող է պատկանել ինչպես աշակերտներին, այնպես էլ ուսուցչին: Վերջինս կարող է աշակերտներին նրբորեն կամ աննկատ կերպով ներքաշել որևիցե խնդրի աշխույժ քննարկման և բանավեճի մեջ՝ հարուցելով նրանց հետաքրքրությունն ու կենտրոնացնելով ուշադրությունը հարցի վրա: Դա արվում է մասնավորապես այն դեպքերում, երբ լսարանում զգացվում է թեթևակի ցրվածության, անտարբերության մթնոլորտ: Ուսուցիչը, ընդհատելով ելույթ ունեցողին, դասը պատմողին (կամ իր խոսքը), դասարանի ուշադրությունը հրավիրում է նրա այս կամ այն դատողության վրա և, դիմելով աշակերտներին (հատկապես առավել անտարբեր կամ դասը խանգարող սովորողներին), հարցնում՝ արդյոք նրանք համաձա՞յն են տվյալ մտքի հետ, թե՞ այլ կարծիքի են, չկա՞ն արդյոք ուրիշ տեսակետներ: Փաստորեն, դասավարման մի եղանակից, մեթոդից (տվյալ դեպքում՝ շարադրական) անցում է կատարում մեկ այլ՝ բանավեճի մեթոդին, ինչը նպատակ ունի նոր լիցք ու թարմություն հաղորդել դասին, այն դարձնել ավելի արդյունավետ:

Բանավեճերն արդյունվետ են այս կամ այն պատմական իրադարձության, հայտնագործության, գյուտի նշանակության ու դրա մեկնաբանության, գրական կերպարների վերլուծության կապակցությամբ: Թ. Գ. Ջուհարյանն իր «Հայ գրականության մեթոդիկայում» խորհուրդ է տալիս, անգամ, գրական և գրականագիտական թեմաների շուրջ աշակերտների ուժերով կազմակերպել յուրատեսակ գրական դատեր[44]: Նման թեմաներով բանավեճերը, իհարկե, լինում են ավելի ընդարձակ և ծավալուն՝ լցնելով ամբողջ դասաժամը, երբեմն էլ՝ ավելին: Այդպիսի քննարկումներ ու բանավեճեր անց են կացվում առավելապես տվյալ ծրագրի առանձին բաժինների կամ թեմայի ընդհանրացնող կրկնության ժամանակ, և նպատակ ունեն թարմացնել սովորողների հիշողությունը, լրացնել բաց թողածը, ամրապնդել գիտելիքները, ձևավորել նրանց մոտ կայուն համոզմունքներ: Դրանք հնարավորություն են ընձեռում նաև պատկերացում կազմել վիճող

[44] ***Ջուհարյան Թ. Գ.,*** Հայ գրականության մեթոդիկա: Երևան, 1980, էջ 500-502:

կողմերի մտավոր պատրաստվածության, աշխարհայացքային առանձնահատկությունների, նրանց գեղագիտական ճաշակի, բարոյական ու կամային հատկանիշների մասին:

Ուսուցիչը կարող է անգամ սովորողներին նոր նյութի հետ ծանոթացնել բանավեճի օգնությամբ, ավելի ճիշտ՝ կազմակերպելով զրույց-բանավեճ, օգնել նրանց՝ հենվելով նախորդ դասերից իրենց ծանոթ նյութի վրա, քննարկումների ու վիճաբանությունների ճանապարհով, կատարելով որոշակի վերլուծություն՝ անել կոնկրետ եզրահանգումներ, ձեռք բերել նոր գիտելիքների ու մտքերի իմացություն: Այդպես կարելի է վարվել, օրինակ, ֆիզիկական նոր օրինաչափության ուսումնասիրման, անծանոթ թեորեմի ապացուցման ժամանակ և այլն:

Արժեքավոր է նաև արտադասարանական քննարկումների ու բանավեճերի կազմակերպումը: Դա կարող է արվել ֆակուլտատիվ ժամերի հաշվին, «գիտակների ակումբի» շրջանակներում, տվյալ առարկայի գծով միջդասարանական կամ համադպրոցական մրցույթի ժամանակ:

Այդպիսի միջոցառումները նպատակ ունեն խորացնել սովորողների գիտելիքները, ընդլայնել նրանց կենսափորձն ու աշխարհայացքը, զարգացնել տարբեր հմտություններ ու բազմիմացություն, ինչպես նաև հայտնաբերել օժտված, ստեղծագործական կարողություններ ունեցող անհատներին և նպաստել նրանց ունակությունների դրսևորմանն ու կատարելագործմանը:

Բանավեճի մեթոդը դասավանդման ժամանակ կարող է դրսևորվել կամ գործածվել նաև **ոչ բացահայտ ձևով, ներունակորեն**: Դասավանդողը կարող է նոր նյութը մատուցել ոչ թե անմիջական բանավեճի եղանակով, այլ շարադրանքին տալ ներունակ բանավեճի ձև՝ ներկայացնելով այս կամ այն տեսակետի և դրա հակոտնյայի կապակցությամբ եղած փաստարկներն ու հակափաստարկները, տվյալ երևույթի ուսումնասիրության առիթով կատարել պատմական էքսկուրս, ծանոթացնել դրա վերաբերյալ ժամանակին գոյություն ունեցած տարբեր ու իրար հակասող մեկնաբանությունների, տալով այդ երևույթի գիտական բացատրության պատմական և տրամաբա-

նական զարգացումը: Այս մեթոդը հիշեցնում է Դիստերվեգի մատնանշած շլայերմախերական եղանակը:

Այդպիսի մոտեցում կարելի է ցուցաբերել, օրինակ, արեգակնային համակարգի կառուցվածքի ուսումնասիրման նախնական փուլում. սովորողներին ծանոթացնել տիեզերքի՝ ժամանակին գոյություն ունեցող երկրակենտրոն և արևակենտրոն տեսություններին, դրանց օգտին բերվող փաստարկներին ու հակափաստարկներին, անդրադառնալ այդ տեսակետների միջև տևական և անհաշտ պայքարի որոշ դրվագների:

Ներունակ բանավեճի մեթոդը կարելի է կիրառել նաև երկրային խմբի մոլորակների ուսումնասիրման ժամանակ՝ ներկայացնելով Հրատ (Մարս) մոլորակի վրա կյանքի գոյության հարցի շուրջ 20-րդ դարի առաջին կեսերից ի վեր ընթացող բանավեճերը, լույսի երևույթի բացատրության ժամանակ՝ անդրադառնալով 18-րդ դարում Նյուտոնի և Հյուգենսի՝ նախորդ շարադրանքում հիշատակված գիտական բանավեճին և այլն: Մարդկային մտքի և գիտության զարգացման պատմությունն անսպառ նյութ ու հնարավորություններ է տալիս այդպիսի պատմական ակնարկների, դասապրոցեսը «զարգացնող-շարադրական» եղանակով կազմակերպելու համար: Դասավանդման այդ ձևը չի հոգնեցնում, չի ձանձրացնում ունկնդիրներին, ընդլայնում է նրանց աշխարհայացքը, նյութի շարադրանքը դարձնում հետաքրքիր, ուշագրավ ու տպավորիչ:

Հաճախ էլ բանավեճի մեթոդը նախընտրելի է այնպիսի միջադեպերի ժամանակ, երբ ուսուցիչը, չցանկանալով սխալ թույլ տված իր աշակերտին պատրաստի վիճակում հրամցնել ճիշտ ձևը, փորձում է թույլ տրված սխալների հմուտ ցուցադրման եղանակով օգնել կամ ստիպել նրան ինքնուրույն կերպով գտնել խնդրի ճիշտ լուծումը, հանգել անհրաժեշտ եզրակացության և այլն: Ահավասիկ մասնավոր մի իրավիճակ:

Դասը պատասխանող աշակերտը փորձում է սահմանել քառանկյունը.

– Քառանկյուն է կոչվում այն պատկերը, որը կազմված է չորս կետերից և դրանք միացնող հատվածներից:

Ուսուցիչը, ցանկանալով ցույց տալ այդպիսի սահմանման անկատարությունը, գրատախտակի վրա վերցնում է չորս կետեր, որոնցից երեքը (կամ բոլորն էլ) գտնվում են միևնույն ուղղի վրա, և հատվածներով միացնում դրանք (նկար 1): Ստացվում է եռանկյուն (կամ ուղիղ գիծ): Աշակերտը, հասկանալով իր բացթողումը, և փոքր-ինչ մտորելով լրացնում է սահմանումը.

– Քառանկյուն է կոչվում այն պատկերը, որը կազմված է չորս կետերից և դրանք միացնող հատվածներից: Ընդ որում՝ տրված կետերից և ոչ մի երեքը չպետք է գտնվեն նույն ուղղի վրա:

Այս անգամ էլ ուսուցիչը վերցնելով չորս կետեր՝ դրանք միացնում է այնպես, որ միացնող հատվածները հատվում են: Ստացված պատկերն այս դեպքում ևս քառանկյան նման չէ (նկար 2): Փորձելով ելք գտնել ստեղծված իրավիճակից՝ աշակերտը կատարում է երկրորդ ճշգրտումը կամ վերապահումը իր սահմանման մեջ, որից հետո այն դառնում է ճիշտ ու կատարյալ.

– Քառանկյուն է կոչվում այն պատկերը, որը կազմված է չորս կետերից և դրանք հաջորդաբար միացնող չորս հատվածներից: Ընդ որում՝ տրված կետերից ոչ մի երեքը չպետք է գտնվեն նույն ուղղի վրա, իսկ դրանք միացնող հատվածները չպետք է հատվեն[45] (նկար 3):



Նկար 1



Նկար 2



Նկար 3

Սոկրատեսյան սկզբունքով կառուցված այսպիսի բանավեճերը հաճախ շատ ավելի արդյունավետ են գործում, քան երկարաշունչ

[45] Սահմանումն ըստ՝ ***Պոգորելով Ա. Վ.,*** Երկրաչափություն: Ուսումնական ձեռնարկ միջնակարգ դպրոցի 8-10-րդ դասարանների համար: Երևան, 1987, էջ 67:

բացատրությունները: Մեկ անգամ սեփական ուժերով շտկված սխալը աշակերտը դժվար թե նորից կրկնի: Ինքնուրույն կերպով հայտնաբերված ճշմարիտ գիտելիքը հազիվ թե մոռացվի, իսկ մոռացվելու դեպքում էլ այն հեշտ վերականգնելի է:

Դիստերվեգն ուսուցիչներին խորհուրդ էր տալիս, որ ուսուցման առավել արժեքավոր ձևը ոչ թե սովորողին գիտելիքներ հաղորդելն է, այլ նրան այնպես առաջնորդելը, որ նա ինքը գտնի և ինքնուրույնաբար դրան տիրապետի: Ուսուցման այդպիսի մեթոդը ամենալավը, բայց և ամենադժվարինն է, ամենահազվագյուտը, - նշում է անվանի մանկավարժը[46]: «Իսկական ուսուցիչն իր աշակերտին ցույց է տալիս ոչ թե պատրաստի շենքը, որի մեջ դրված է հազարամյակների աշխատանք, այլ նրան դրդում է աղյուսներ շարել, իր հետ միասին կառուցել շենքը, նրան կառուցել է սովորեցնում: ... Վատ ուսուցիչը ճշմարտությունը մատուցում է, լավ ուսուցիչը սովորեցնում է գտնել այն»[47]:

Քննարկվող մեթոդն անփոխարինելի է աշխարհայացքային, գեղագիտական, բարոյագիտական խնդիրների ուսումնասիրման ու վերլուծության ժամանակ: Այն օգտակար և արդյունավետ է դաստիարակչական առումով: Ի տարբերություն բարոյագիտական պատումի կամ դասախոսության, որ շարադրում է ուսուցիչը, բարոյական թեմաներով բանավեճը մի մեթոդ է, որն իրենց՝ սովորողներին ներգրավում է բարոյական արարքների մասին գնահատականներ և դատողություններ մշակելու գործընթացի մեջ:

Ուսուցիչները երբեմն խուսափում են հասարակական կյանքի բարդ խնդիրների, բարոյագիտական բնույթի նուրբ հարցերի վերաբերյալ բանավեճերից: Իհարկե, այնքան էլ նպատակահարմար չէ այդպիսի թեմաների քննարկումը պարտադրել սովորողներին, երբ նրանց մոտ բացակայում է համապատասխան տրամադրվածությունն ու հետաքրքրությունը, սակայն չի կարելի նաև դրանց կողքով անտարբեր անցնել, երբ դրանք հուզում են սովորողներին, տարակարծությունների ու վեճերի տեղիք տալիս: Այդպիսի դեպքերում բանավեճի կամ զրույցի կիրառումը պահանջում է դիալեկտիկորեն

---

[46] ***Դիստերվեգ Ա.,*** Մանկավարժական ընտիր երկեր, էջ 212:
[47] Նույն տեղում:

մտածելու ուսուցչի ընդունակություն, մանկավարժական վարպետություն: Դա խորապես ստեղծագործական աշխատանք է, որը բացառում է պատճենավորումն ու մանրախնդիր կանոնավորումը:

Բանավեճը պետք է կազմակերպել և վարել այնպես, որ այն հանգեցնի աշակերտների մոտ բարոյական որակների մասին հարուստ, կոնկրետ բովանդակությամբ հագեցած պատկերացումների, կայուն համոզմունքների, որոշակի վերաբերմունքի և ակտիվ կենսադիրքորոշման ձևավորմանը: Ուսուցչի խնդիրը ոչ այնքան սովորողներին բարոյական կատեգորիաների պատրաստի ընդհանրացումներ առաջարկելն է, որքան նրանց խորհրդածությունների ու որոնումների մղելը, ինքնուրույն որոշումներ կայացնելու ճիշտ ուղի մատնանշելը:

Բանավեճի սկզբունքներով էին կազմակերպվում «Քաղաքականություն և հասարակական բարոյագիտություն» թեմայով դասընթացի պարապմունքները Հայաստանի ամերիկյան համալսարանում 1990-ականներին: Հենց սկզբից դասախոսը ձևակերպում էր խնդիրը կամ վարկածի ձևով ներկայացնում որևիցէ տիպական պրոբլեմային իրավիճակ: Օրինակ.

«Խորհրդարանը քննարկում է ոճրագործության համար դատապարտված հանցագործների նկատմամբ մահապատիժը որպես պատժի ձև ընդունելու հարցը: Դուք խորհրդարանի անդամ եք, որը կրոնական սկզբունքներից ելնելով, հավատացած է, թե մահապատիժը անբարոյական է և չպետք է թույլատրվի: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ձեր ընտրողների 65 տոկոսը կողմ է մահապատժին:

Որպես խորհրդարանի անդամ, ինչպիսի՞ գործոններ Դուք հաշվի կառնեք կողմնորոշվելու, թե ինչպես քվեարկել: Դուք կքվեարկեք մահապատժին կո՞ղմ, թե՞ դեմ»[48]:

Խնդրի նման ձևակերպումից անմիջապես հետո խոսքը տրվում էր ունկնդիրներին, որոնք բարձրաձայն դատողություններ էին անում, ներկայացնում իրենց տեսակետները, հիմնավորում, փաստարկում,

[48] Դասախոս Ռոբերտ Թեմբեքճյանի նյութերից (1994 թ.):

անհամաձայնություն արտահայտում հակառակ տեսակետների վերաբերյալ, վիճում: Այդ բանավեճերի ընթացքում, եթե անգամ վերջին մի լուծում կամ տարբերակ չէր էլ մշակվում, ապա ընդգծվում էին տվյալ հիմնահարցի լուծման ժամանակ կարևոր դեր խաղացող գործոնները, նախանշվում լուծման հնարավոր կամ առավել ընդունելի եղանակներն ու ուղիները:

Հասարակական կյանքի ու հարաբերությունների ժողովրդավարացման, աշխարհայացքային ու գաղափարական պլյուրալիզմի պայմաններում ուսումնադաստիարակչական գործընթացում բանավեճի մեթոդի արմատավորումն ու դրա հնարավորությունների լայնորեն կիրառումն արժեքավոր է ոչ միայն կրթության և դաստիարակության գործընթացի արդյունավետության բարձրացման տեսակետից, այլև առանձնակի օժտվածություն ունեցող սովորողների հայտնաբերման, նրանց մտավոր ու հոգևոր կարողությունների զարգացման, լիարժեք սոցիալիզացիայի, տեղի ունեցող հասարակական գործընթացներին մասնակից ակտիվ քաղաքացիների ձևավորման, արդյունավետ հաղորդակցման հմտությունների մշակման առումով:

Ուսուցման և դաստիարակչական գործունեության բնագավառում բանավեճի մեթոդի դերի, նշանակության առանձնացումն ու ընդգծումը, իհարկե, նպատակ չունի բացարձակացնել կամ գերագնահատել դրա դերն ու ընձեռած հնարավորությունները: Մեթոդներից ամեն մեկն ունի իր առանձնահատկությունները, իր առավելություններն ու թերությունները, հետևաբար՝ գործառնման իր շրջանակները: Դրանցից յուրաքանչյուրը լուծում է որոշակի խնդիրներ և պետք է կարողանալ ճիշտ ընտրություն կատարել կոնկրետ դեպքի համար: Հաճախ առավել նպատակահարմար է և ավելի արդյունավետ կարող է լինել տարբեր մեթոդների հաշվենկատ, խելացի զուգակցումը, դրանց համատեղ գործածությունը դասավանդման ընթացքում: Ընդհանրապես, այս կամ այն մեթոդի (մեթոդների) ընտրությունը կախված է տվյալ դասի նպատակներից ու խնդիրներից, նյութի բովանդակությունից, բարդության աստիճանից, լսարանի առանձնահատկություններից (մտավոր կարողություններից, տրամադրվածությունից, ծավալներից): Այդ հարցում քիչ դեր չեն խաղում

նաև ուսուցչի նախասիրությունները, հակումները, նրա բնավորությունը, պատրաստվածության աստիճանը, փորձը և այլն:

Իսկ բանավեճի մեթոդի գործածության շրջանակները, ինչպես արդեն նշվել է, շատ ավելի լայն են, քան ուսումնադաստիարակչական գործընթացի բնագավառը: Լինելով մարդկային հաղորդակցման, իմացության և գիտելիքի զարգացման ընդհանուր օրինաչափություն՝ բանավեճերը մեթոդաբանական առումով հանձնարարելի են մտավոր գործունեության ամենատարբեր բնագավառներում: Դրանք լայնորեն կիրառվում են սոցիալական, քաղաքական, իրավական ոլորտներում, գիտական գիտելիքի շրջանակներում, տեղեկատվության և գովազդի կազմակերպման ասպարեզում: Ժամանակակից ԶԼՄ-ները հագեցած են բաց քննարկման համար առաջադրվող նյութերով ու բանավեճերով: Ավելացնենք նաև բոլոր տեսակի «կլոր սեղանները», պառլամենտական վեճերն ու քննարկումները, պետական, միջպետական տարբեր մակարդակների բանակցությունները ու խորհրդակցությունները, և պատկերն ավելի ամբողջական կդառնա:

ԳԼՈՒԽ 4
ԲԱՆԱՎԵՃԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ԿԱՆՈՆՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

4.1. Տրամաբանականի և արտատրամաբանականի երկընտրանքը

Տարաձայնություն առաջ բերող հարցի շուրջ մտքերի փոխանակության գործընթացը կառուցողական հունով տանելու, արդյունավետ հաղորդակցվելու համար անհրաժեշտ է բանավեճի կանոնների՝ մտավոր աշխարհում ընդունված մեթոդաբանական սկզբունքների իմացությունն ու կիրառումը: Բազմաթիվ են այդ կանոններն ու օրենքները: Դրանք վերաբերում են ինչպես վեճի տրամաբանությանն ու կառուցվածքին, բարոյահոգեբանական, գեղագիտական կողմերին ու առանձնահատկություններին, այնպես էլ այդ գործընթացի կազմակերպման, արարողակարգի ու վարվեցողության սկզբունքներին:

Արիստոտելն իր «Տոպիկայում», անդրադառնալով վեճի սկզբունքորեն տարբեր ձևերին, դրանց հիմնական կանոններին ու բնորոշ առանձնահատկություններին, նկատում է, որ ի տարբերություն վեճի մյուս ձևերի (վեճ ուսուցչի և աշակերտի միջև, վեճ հանուն վեճի) ու դրանց մասնակիցների, նրանց համար, ովքեր կշռադատումբանավիճում են փորձի, գիտելիքների ձեռքբերման նպատակով, «զրուցում են ճշմարտության հետազոտման համար», չկան մշակված որոշակի կանոններ ու ընդհանուր դրույթներ: Նա գրում է. «Ինչ վերաբերում է դիալեկտիկական զրույցներին, որտեղ կշռադատում են ոչ թե հանուն վեճի, այլ հմտությունների ձեռքբերման կամ [ճշմարտության] հետազոտման համար, ապա դեռևս ոչ ոք չի քննել, թե ինչի պետք է ձգտի այնտեղ պատասխանողը, ինչի հետ համաձայնի և ինչի հետ չհամաձայնի, որպեսզի պատշաճ կամ ոչ պատշաճ ձևով պաշպանի թեզիսը,– այսպիսով, քանի որ նրանց համար չունենք մեր

նախորդներից մեզ թողած [տոպեր[1]], ապա մենք պետք է փորձենք որոշ բան ինքներս ասել»[2]:

Ի տարբերություն Արիստոտելի, բանավեճի երևույթն ուսումնասիրող մեր ժամանակակիցները գտնվում են շատ ավելի շահեկան վիճակում, քանի որ այսօր հրապարակում կա նշված խնդիրներին նվիրված բավականաչափ հարուստ նյութ. տարբեր ուսումնասիրություններ, մասնագիտական գրականության մեջ առաջարկվում են արդյունավետ վիճաբանության բազմաթիվ կանոններ, երաշխավորություններ, ցուցումներ:

Այդուհանդերձ, հին ժամանակներից ի վեր գիտնական-հետազոտողների շրջանում տարակարծությունների տեղիք է տալիս հաղորդակցման, բանավեճի և փաստարկման գործընթացներում *մի կողմից՝* **տրամաբանական-բովանդակային** և *մյուս կողմից՝* **արտատրամաբանական (հոգեբանական, էթիկական, գեղագիտական, պերճախոսական, լեզվամշակութային, արարողակարգային և այլն) գործոնների հարաբերակցության հարցը**:

Եթե հին սոփեստները գտնում էին, որ դատական (հրապարակային) ճառի ուժեղ կողմը գործընթացի մասնակիցների մոտ համակրանքի, հակակրանքի, զայրույթի կամ էլ ոգևորության զգացմունքներ արթնացնելն է, ապա Արիստոտելը համարում էր, որ այդ զգացմունքներն ավելի շատ դատավորին են վերաբերում, քան նրա կողմից քննվող գործին: Նա գտնում էր, որ դատարանում զայրույթի, կարեկցանքի կամ նախանձի զգացմունքներ առաջացնելը նույնն է, թե «ոմն մեկը ծռի այն քանոնը», որով պետք է չափումներ կատարի: Արիստոտելը դատական խոսքի ուժեղ կողմը համարում էր ապացուցողականությունը և տրամաբանորեն փաստարկվածությունը[3]:

Նեոհռետորիկայի (Խայիմ Պերելման, Էրվին Բետտինգաուս) և դրա պրագմատիկ թևի որոշ տեսաբաններ (Հենրի Ջոնսթոն, Կարսթեն Բրեդեմայեր) ևս, վերլուծելով հաղորդակցման բաղադրիչների դերակատարությունը, առավել կարևորում են արտատրամաբանա-

---

[1] Ընդհանուր դրույթներ, կանոններ - Հ. Հ.:
[2] ***Аристотель.*** Соч., т. 2, էջ 516:
[3] Տե՛ս ***Аристотель.*** Поэтика. Риторика. СПб., 2007, էջ 84:

կան գործոնների նշանակությունը՝ մասնավորապես շեշտադրելով հոգեբանական ազդեցության ձևերը[4]:

Որոշ հետազոտողներ էլ, վկայակոչելով տարբեր ուսումնասիրություններ, պնդում են, թե հաղորդակցման գործընթացներում իմաստաբովանդակային, խոսքային միջոցներով փոխանցվում է տեղեկատվության 7%-ը, մնացյալը կատարվում է ձայնի (մոտ 38%) և «մարմնի լեզվի»՝ ժեստերի, դիմախաղի միջոցով (մոտ 55%)[5]: Ոմանք էլ առաջարկում են 35% և 65% հարաբերակցությունը՝ առավել մեծ դեր հատկացնելով զրուցակցի նկատմամբ վերաբերմունք արտահայտող՝ հաղորդակցման ոչ խոսքային ձևերին (մարմնի դիրք, ժեստեր, հայացք, դիմախաղ, հույզեր արտահայտող շարժուձև, հոգոց, ծիծաղ, ձայնի հնչերանգ, ձեռքսեղմումներ և այլն)[6]:

Փաստարկման երևանյան դպրոցը՝ չթերագնահատելով բանավեճի և փաստարկման գործընթացում արտատրամաբանական գործոնների նշանակությունը, այդուհանդերձ, **փաստարկման գործընթացի հիմքում տեսնում և առանցքային բաղադրիչ է համարում տրամաբանական-բովանդակային գործոնը[7]:**

Իհարկե, մտավոր հաղորդակցումը, բանավեճն ու փաստարկումը բազմագործոն երևույթներ են: Այստեղ կարևոր նշանակություն ունեն քննարկվող խնդրում իրազեկությունը, մասնագիտական պատրաստվածությունն ու գիտելիքները, էրուդիցիան, խոսքի մշակույթը, փորձը, էթիկական, գեղագիտական, հոգեբանական գործոնները, պերճախոսական հնարները, արարողակարգային նորմերը:

Սակայն, պետք է ընդունել, որ տարակարծություն առաջ բերող խնդրի շուրջ մտքերի փոխանակության, փաստարկման գործընթացն առաջին **հերթին տրամաբանական մտածողության ու մտավոր գործունեության բնագավառ է:** Առանց ճիշտ, կուռ և հետևողական

---

[4] Տե՛ս ***Брутян Г.А.,*** Очерк теории аргументации. Ер., 1992, էջ 121-127: Տե՛ս նաև ***Бредемайер К.,*** Черная риторика: Власть и магия слова. Пер. с нем., М., 2005, էջ 19-20:

[5] Ըստ՝ ***Վարդումյան Ս.,*** Կառավարչական հմտությունների զարգացում: Ուսումնաօժանդակ ձեռնարկ: Եր., 2014, էջ 114-115:

[6] ***Պետրոսյան Ա.,*** Գործարար հաղորդակցություն: Եր., 2003, էջ 21-22:

[7] Տե՛ս ***Брутян Г.А.,*** նշվ.աշխ. էջ 127-140; 156-168:

մտածողության անհնար է պատկերացնել ինչպես մասնագիտական պատրաստվածությունն ու գիտելիքները, էրուդիցիան և փորձառությունը, այնպես էլ համոզիչ, տպավորիչ խոսքն ու ազդեցիկ ելույթը:

4.2. Տրամաբանության ուժը

4.2.1. Կանոնավոր մտածողության հիմնարար սկզբունքները

Արդյունավետ բանավիճելու և փաստարկելու համար նախ և առաջ պահանջվում է **ճիշտ մտածելու կարողություն:** Փաստերը հզոր զենքեր են սեփական տեսակետն ապացուցելու և հակառակ մոտեցումները հերքելու համար: Սակայն դրանք ինքնին դեռ ոչինչ չեն նշանակում: Որպեսզի փաստերը «խոսեն», մտավոր հզոր դաշտ է հարկավոր: Միայն այդ դեպքում դրանք կարող են վերածվել հարձակողական կամ պաշտպանական զորեղ միջոցի:

Բայց միշտ չէ, որ այդպես է լինում: Հաճախ արժեքավոր փաստերը վերածվում են անմշակ հումքի անձև կույտի, որը պիտանի չէ ոչ պաշտպանվելու, ոչ էլ, մանավանդ, հարձակվելու համար: Անկանոն թափթփված երկաթի խարտուքը մագնիսական դաշտի ազդեցության տակ ստանում է որոշակի ձև, կառուցվածք: Համանման բան է կատարվում նաև փաստերի հետ, երբ դրանք ընկնում են խիստ տրամաբանական մտածողության դաշտը[8]:

17-րդ դարի ականավոր ֆիզիկոս և փիլիսոփա Բլեզ Պասկալը մարդու ամենամեծ արժանիքն ու առաջընթացի գրավականը համարում էր մտածելու նրա կարողությունը: «Ուրեմն ջանանք լավ մտածել»,- կոչ էր անում մեծ ֆրանսիացին[9]: Իհարկե, ճիշտ ու հստակ մտածել սովորելը մեկ օրվա խնդիր չէ: Մարդու մտածողությունը զարգանում է նրա ողջ կյանքի ընթացքում: Անհատական հմտությունները, մտավոր կոփվածությունը ձեռք են բերվում ամենօրյա

---

[8] Տե՛ս ***Слемнёв М.А., Васильков В.Н.,*** Диалектика спора, էջ 87:
[9] Антология мировой философии. Т. 2, М., 1970, էջ 304:

տեսական ու գործնական աշխատանքի ժամանակ: Այնուհանդերձ, ավելորդ չեն դատողությունները մտքի ճիշտ զարգացման ամենահիմնական նորմերի մասին, որոնց խորը իմացությունն անհրաժեշտ պայման է արդյունավետ ու կառուցողական բանավեճ մղելու համար:

Ավանդական տրամաբանությունը սովորեցնում է, որ ճիշտ մտածողությունը հիմնվում է տրամաբանության չորս հիմնական օրենքների իմացության և գործառնման վրա: Դրանք են՝ **նույնության, հակասության, երրորդի բացառման և բավարար հիմունքի օրենքները**[10]**:** Այդ օրենքները, իբրև մտածողության ընդհանուր կանոններ, իրենց արտահայտությունն են գտնում նաև վիճաբանության՝ մտավոր գործունեության առանձնահատուկ բնագավառում: Որպես դրանց արտահայտություն, բանավեճի գործընթացում կարևոր դեր են խաղում **որոշակիության, անհակասականության, հետևողականության և հիմնավորվածության սկզբունքները:** Վերջիններիս իրագործումն օգնում է բանավեճին տալ տրամաբանական ճշտություն, խուսափել անորոշությունից, երկիմաստությունից, ձևական-տրամաբանական հակասությունից, արտահայտվող դրույթների մերկախոս ու անհիմն լինելուց: Դրանց խախտման դեպքում վեճի գործընթացը դառնում է քաոսային ու անկառավարելի: Այն ստեպստեպ փակուղի է մտնում, իսկ արդյունքները զրկվում են օբյեկտիվ նշանակությունից:

Տրամաբանության հիմնական օրենքների պահանջներն անտեսող զրուցակիցը երբեմն հիշեցնում է Մ. Սալտիկով-Շչեդրինի «Մի քաղաքի պատմություն» երգիծավեպի այն հերոսին, որը «մեկ անգամ սկսեց բացատրել գլուպովցիներին մարդու իրավունքները, բայց, բարեբախտաբար, վերջացրեց նրանով, որ բացատրեց Բուրբոնների իրավունքները: Մեկ ուրիշ անգամ նա սկսեց նրանից, որ, համոզում էր քաղքենիներին՝ հավատալ բանականության աստվածուհուն,

---

[10] Կանոնավոր մտածողության հիմնական օրենքների մեկնաբանությանը կարելի է ծանոթանալ տրամաբանության բուհական դասագրքերում: Տե՛ս, օրինակ, ***Բրուտյան Գ. Ա.,*** Տրամաբանության դասընթաց: Եր., 1987, էջ 131-147: Տե՛ս նաև ***Հովհաննիսյան Հ. Օ.,*** Փաստարկում և հռետորություն, Եր., 2015 էջ 39-47:

բայց վերջացրեց նրանով, որ խնդրեց ճանաչել Պապի անսխալականությունը»:

Նույնության օրենքի խախտումներով են կառուցված հետևյալ ձևակերպումները. *«սերը-մուսուլմանական կոնֆլիկտ», «Հանցագործությունները լինում են կանխամտածված, չկանխամտածված, առանձնապես վտանգավոր և խմբակային»:* Առաջին ձևակերպման մեջ հակամարտող կողմերից մեկը սահմանվում է ըստ ազգության, իսկ երկրորդ կողմը՝ ըստ կրոնական պատկանելության: Երկրորդ օրինակում հանցագործությունների տեսակներն առանձնացնելու (դասակարգելու) նպատակով մեկ որոշակի հատկության փոխարեն կիրառվել են երեքը՝ ըստ նախապես պլանավորման, ըստ վտանգավորության աստիճանի և ըստ կատարողների թվի: Արդյունքում խախտվել են նաև հասկացության ծավալի բաժանման կանոնները[11]:

Որոշակիության սկզբունքը չի պահպանվել նաև հետևյալ երկխոսության մեջ.

Զինվորը դիմում է հրամանատարին.

- Ասացե՛ք խնդրեմ, հրամանատար, արդյոք կարելի՞ է պատժել մարդուն այն բանի համար, որ նա երբեք չի արել:

- Իհարկե՝ ո՛չ, - ասում է հրամանատարը:

-Այդ դեպքում խնդրում եմ ինձ չպատժել, որովհետև ես չեմ կատարել Ձեր երեկվա հրամանները:

Հետևողականությունը, ինքն իրեն և արդեն հայտնի իրողություններին չհակասելու պահանջների պահպանումը ևս անհրաժեշտ գործոն է ելույթի համոզչականության, արժանահավատության, ելույթ ունեցողի նկատմամբ վստահության ձևավորման առումներով: Հակառակ դեպքում խոսքը կորցնում է համոզչականությունը, վտանգվում է հռետորի հեղինակությունը:

Հաջորդ տարում ապասվելիք իրադարձությունների թեմայով 2014 թ. դեկտեմբերին ասուլիս էին տալիս և կանխատեսումներ անում երկու քաղաքական գործիչներ: Նրանցից մեկն իր տեսակետները շարադրում էր ոչ կատեգորիկ, հավանական ոճով՝ կիրա-

[11] Դրանց մասին տե՛ս ***Քրտության Գ. Ա.,*** նշվ. աշխ., էջ 70-75:

ռելով «հնարավոր է, որ...», «չի բացառվում...», «թերևս...», «կարծում եմ, որ...» արտահայտությունները: Երկրորդը հանդիմանեց իր գործընկերոջը այդ ոճի համար.

– Հանրությունն ու լրագրողները մեզանից սպասում են ավելի վստահ և միանշանակ գնահատականներ: Իսկ Դուք շարունակ խոսում եք խիստ թեական ու պայմանական դատողություններով: Լավ կլիներ մի անգամ էլ ասեիք՝«համոզվա՛ծ եմ, որ», «վստա՛հ եմ ...»: Իսկ ես, օրինակ, կարծում եմ, որ հնարավոր է...

Դահլիճն արձագանքեց զուսպ ծիծաղով:

Հակասություն կա զրպարտության հետևյալ սահմանման մեջ. «Սույն օրենսգրքի իմաստով՝ զրպարտությունը անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը»: *(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1998 թ., հոդ. 1087.1 կետ 3):*

Ակնհայտ է, որ եթե տվյալը փաստացի է, ապա չի կարող չհամապատասխանել իրականությանը, իսկ եթե չի համապատասխանում իրականությանը, ապա չի կարող փաստացի լինել: Փաստացի լինելու հանգամանքը, ըստ էության, պետք է վերաբերի հրապարակային կեպով տարածելուն, ոչ թե իրականությանը չհամապատասխանող տեղեկությանը: Խմբագրման կարիք ունեցող նման ձևակերպումներն իրավական փաստաթղթերում հազվադեպ չեն:

Բավարար հիմունքի օրենքն էլ պնդում է, որ կշռադատությունների ընթացքում կիրառվող ցանկացած դրույթ պետք է լինի բավարար չափով հիմնավորված, անհրաժեշտորեն բխի ճշմարիտ նախադրյալներից: Չհիմնավորված հայտարարությունները, կասկածելի փաստերը, ասեկոսների վրա կառուցված պնդումները «արջի ծառայություն» կարող են մատուցել հեղինակին: Նշված օրենքի զանցառումն է ընկած նաև նախապաշարմունքների ու կարծրատիպերի մեծամասնության հիմքում:

4.2.2. Սահմանման կարևորությունն ու կանոնավորությունը

Ս. Պովարնինը վեճը սկսելու կարևորագույն նախապայման է համարում կողմերի **իրազեկությունը** տվյալ հիմնախնդրի շրջանակներում[12]: Առանց նյութի, խնդրո առարկայի մեջ կողմերի իրազեկության հնարավոր չէ բանավեճ սկսել: Իսկ եթե այն սկսվի էլ, կվերածվի դատարկ, առարկայազուրկ շատախոսության:

Քննարկվող թեմայում իրազեկությունը՝ լեզվական և տրամաբանական հղկված կարողությունների պարագայում թույլ է տալիս հստակ սահմանել բանավեճի առարկան, մտքերի փոխանակության տվյալ գործընթացում քննարկվելիք հարցերի շրջանակը:

Թեզիսն ամեն մի բանավեճի ելակետն է, դրա միջուկն ու առանցքը, որի շուրջ էլ ծավալվում է ամբողջ պայքարը: Հետևաբար, այն պետք է հնարավորինս ամփոփ, պարզ ու հասկանալի լինի, ազատ լինի երկիմաստությունից, հստակ արձանագրված լեզվական միջոցներով, և բացահայտված լինի դրա էությունը: Այս պահանջների բավարարումը հնարավորություն է տալիս խուսափել բազմաթիվ թյուրիմացություններից, դատարկ լեզվակռիվներից ու իմաստակությունից: Մինչև որոշակված ու հստակեցված չլինի թեզիսը, բանավիճելն անիմաստ է ու անարդյունք: Թեզիսին ճշգրիտ տրամաբանական ձև տալու համար նախ և առաջ պետք է ճշգրտել այն հասկացությունների և դրանք արտահայտող լեզվական միավորների բովանդակությունը, որոնցից կազմված է տվյալ դրույթը, և որոնց միջոցով սահմանվում է վեճի առարկան: Հասկացությունների անորոշությունը, մտքի անփութությունը լուրջ խոչընդոտներ են բանավեճի գործընթացում[13]:

Անորոշ հասկացությունների, չճշգրտված տերմինների, բազմիմաստ բառերի գործածումը կարող է հանգեցնել անցանկալի հետևանքների, դժվարացնել հաղորդակցումը, խանգարել վիճելի հար-

---

[12] Տե՛ս ***Поварнин С.И.,*** Спор. О теории и практике спора, էջ 76-77:

[13] Այդ մասին զգուշացնում է նաև Արիստոտելը: Տե՛ս ***Аристотель,*** Соч., т. 2, էջ 370:

ցի քննարկմանը, լուրջ մոլորությունների պատճառ դառնալ[14]: Այդպիսի անճշտություններն ու թերասածությունները կարող են նաև հակահարձակման առիթ տալ հակառակորդին, տեղիք տալ բազմաթիվ հնարքների ու իմաստակությունների:

Եթե թեզիսում կան անհասկանալի, բազմիմաստ բառեր ու արտահայտություններ, պետք է բացահայտել դրանց իմաստը, ճշգրտել ու հստակեցնել դրանք: Անհրաժեշտ է սահմանել անծանոթ հասկացությունները՝ հասցնելով բյուրեղյա հստակության:

Երբեմն էլ ապացուցման հիմքերի դերում հանդես են գալիս հենց սահմանումները: Ուստի դրանց տրամաբանական կանոնավորությունը ևս մի կարևոր գործոն է հաղորդակցման և բանավեճի կառուցողականությունն ապահովելու առումով:

Ինչպիսին էլ լինեն սահմանումները (բառային, հասկացութային, առարկայական, մերձավոր սեռի և տեսակային տարբերության սկզբունքով կառուցված, գենետիկ, թե օպերացիոնալ), դրանք տրամաբանական ընդհանուր կանոններին զուգահեռ պետք է բավարարեն նաև հետևյալ պահանջները:

- ***Սահմանումը պետք է լինի համաչափ:*** Այսինքն՝ **սահմանվող** և **սահմանող** հասկացությունների ծավալները պետք է համընկնեն: Հակառակ դեպքում սահմանումը լինում է ***լայն*** կամ ***նեղ:***

Օրինակ՝ «Կողոպուտը ուրիշի սեփականության դեմ ուղղված հանցագործությունն է» սահմանումը լայն է, քանի որ կողոպուտից բացի ուրիշի սեփականության դեմ ուղղված այլ հանցագործություններ ևս գոյություն ունեն (ուրիշի գույքը փչացնելը և այլն): Իսկ «պատիժը պետական հարկադրանքի ձև է, որը սահմանվում է դատարանի վճռով այն անձի նկատմամբ, որը մեղավոր է ճանաչվել տնտեսական ոլորտում կատարած հանցագործության համար» տարբերա-

---

[14] Գործնական հաղորդակցման, բանակցությունների խնդիրներով զբաղվող մասնագետները աշխատանքային շատ բախումների, անհամաձայնությունների հիմքերը տեսնում են նաև արտահայտությունների, դատողությունների ոչ միանշանակ գործածման ու ընկալման և դրանցից բխող՝ կողմերի հստակ, լիակատար փոխըմբռնման պահանջների խախտման մեջ (Տե՛ս ***Sullivan J., Kameda N., Nobu T.,*** Bypassing in Managerial Communication. In: “Business Horizons”, January-February, 34(1), Tokyo, 1991, p.71-80):

կում սահմանումը նեղ է, քանի որ պատիժներ սահմանվում են ոչ միայն դատարանի կողմից և ոչ միայն տնտեսական ոլորտում կատարված հանցագործությունների համար:

- ***Սահմանման ընթացքում պետք է բացառել նույնաբանությունը (տավտոլոգիա):*** Այսինքն՝ չի կարելի սահմանվող հասկացության բովանդակությունը բացահայտելու նպատակով գործածել նույն այդ հասկացությունը: **Օրինակ՝** «խարդախը նա է, ով խարդախություն է անում» կամ՝ «վիրավորանքը մարդու արժանապատվությունը, ինքնասիրությունը վիրավորող արտահայտություններն ու հայտարարություններն են»:
- ***Սահմանելիս չպետք է թույլ տալ շրջապտույտ:*** Երբ Ա հասկացությունը սահմանվում է Բ-ի օգնությամբ, ապա Բ-ն սահմանելիս չի կարելի վերադառնալ սկզբնական Ա հասկացությանը: **Օրինակ՝** «տրամաբանությունը գիտություն է կանոնավոր մտածողության մասին, իսկ կանոնավոր է այն մտածողությունը, որն ընթանում է տրամաբանության օրենքներին համապատասխան»:
- ***Անհրաժեշտ է հնարավորինս խուսափել ժխտական ձևակերպումներից:***

Իհարկե, կան դեպքեր, երբ երևույթի էությունը բացահայտվում, ի ցույց է դրվում հենց ժխտական դատողությունների ու ձևակերպումների օգնությամբ, ինչպես **օրինակ՝** *անմեղսունակ* – իր վարքն ու գործողությունները կառավարելու անընդունակ, դրանց էությունը և հետևանքները չգիտակցող:

Սակայն այն դեպքերում, երբ հնարավոր է սահմանումը ձևակերպել հաստատական դատողությունների միջոցով, պետք է խուսափել ժխտական ձևակերպումներից ու դատողություններից: **Օրինակ՝** ընդունելի չեն այսպիսի սահմանումները. «էմպատիան ոչ սիմպատիա է, ոչ էլ անտիպատիա», «դատարանը ոչ կառավարական կազմակերպություն չէ»: Նման սահմանումներից պարզ չէ, թե ըստ էության ինչ է իրենից ներկայացնում սահմանվող հասկացությունը կամ երևույթը:

- ***Սահմանման ընթացքում պետք է բացառել այլաբանությունները, գեղարվեստական համեմատությունները, փոխաբերությունները:***

Այլաբանությունները, գեղարվեստական համեմատություններն ու փոխաբերությունները, անշուշտ, որպես պերճախոսական հնարներ բավական ազդեցիկ են և կիրառելի են գեղարվեստական խոսքի, հրապարակային ելույթի շրջանակներում: Սակայն դրանք որպես հասկացությունների սահմանումներ առաջարկելը էապես խճճում է ասելիքը՝ կասկածի տակ դնելով խոսողի մասնագիտական գիտելիքներն ու իրավիճակի ադեկվատ ընկալման հանգամանքը:

Օրինակ՝ չի կարելի որպես հասկացության սահմանում ներկայացնել հետևյալ դատողությունները. «ծերունիները կյանքի խիղճն են և իմաստությունը», «ճշմարտությունը բանականության դուստրն է և իմաստության մայրը», «երիտասարդությունը՝ կյանքի գարունն է, և խոստում՝ ուղղված ապագային»: Թեև այսպիսի այլաբանություններն ու փոխաբերությունները խոսքը դարձնում են գունեղ, պատկերավոր ու հուզական, այնուհանդերձ դրանք իբրև սահմանումներ գործածելն անընդունելի է:

4.2.3. Փաստարկներին ներկայացվող պահանջներ: Օպտիմալության կանոնը

Բանավեճի տրամաբանական կառուցվածքում կարևոր տեղ են գրավում փաստարկները: Դրանք «դատապաշտպաններ» են, որոնցից կախված է թեզիսի ճակատագիրը: Փաստարկները չպետք է կասկածների տեղիք տան: Կեղծիքը, կասկածելի փաստերը, անճշմարտանման լուրերը, ասեկոսները պետք է վճռականորեն բացառել փաստարկման համակարգից: Ճշմարտացիությունը փաստարկներին ներկայացվող պահանջների նվազագույնն է միայն, որն, իհարկե, անհրաժեշտ է, բայց ոչ բավարար: Կարևոր է նաև, որ դրանք լինեն համոզիչ, ուշագրավ, դիպուկ, հասկանալի, ճիշտ ձևակերպված, տպավորիչ և այլն:

Պահանջներից մեկն էլ վերաբերում է առաջադրվող փաստարկների քանակին[15]: Այդ պահանջը հայտնի է որպես **փաստարկների օպտիմալության կանոն**[16]: Դրա համաձայն՝ **պետք է խուսափել ինչպես ոչ բավարար քանակությամբ փաստարկներ ներկայացնելու, այնպես էլ ավելորդ փաստարկներով խոսքը ծանրաբեռնելու գործելակերպից:**

Պարզ է, որ փաստարկների ոչ բավարարության դեպքում հնարավոր չէ լիարժեք կերպով հիմնավորել ու ապացուցել տեսակետը: Սակայն ավելորդ փաստարկները ևս կարող են խանգարել գործին:

Ավելցուկային փաստարկների շարքում կարող է հայտնվել թույլ դատողություն, որևէ խոցելի դրվագ, որը կստվերի փաստարկման գործընթացը: Պատկերավոր ասած՝ մեկ կաղ զինվորը կարող է փչացնել ամբողջ զորահանդեսը: Ավելցուկային փաստարկները կարող են ձանձրացնել լսարանին: Վերջապես, ավելորդ փաստարկները, երբ հարցն առանց դրանց էլ պարզ է, կարող են կասկածներ հարուցել դրույթի ճշմարտության ու փաստարկողի անաչառության վերաբերյալ: Փոքր-ինչ խմբագրելով ժողովրդական այն իմաստությունը, թե «ով չափից ավել է ապացուցում, նա ոչինչ չի ապացուցում», կարելի է ասել. **«ով չափից ավել է ապացուցում, նա հակառակն է ապացուցում»:**

Հավելյալ փաստարկները պետք է խնամքով դասակարգել ու պահել որպես **պահուստային փաստարկներ**՝ ըստ անհրաժեշտության գործածելու հեռանկարով:

Չափի սկզբունքը վերաբերում է նաև ելույթին՝ ընդհանրապես: Այն չպետք է ծանրաբեռնված լինի ավելորդ դրույթներով, անհարկի կրկնություններով, չպետք է լինի ձանձրույթ հարուցելու աստիճանի երկարաշունչ: Տեղին է հնչում Ու. Չերչիլի դիտարկումը՝ հռետորը պետք է սպառի թեման, ոչ թե լսարանի համբերությունը[17]:

---

[15] Արիստոտելը «Տոպիկա» աշխատության 8-րդ գրքում նկատում է, որ որոշակի սխալ է այս կամ այն մտքի ապացուցումը կառուցել առավելագույն թվով փաստարկների հիման վրա, երբ դա կարելի է անել սահմանափակ և ավելի քիչ թվով փաստարկների օգնությամբ: Տե՛ս ***Аристотель.,*** Соч., т. 2, էջ 525:

[16] Տե՛ս ***Հովհաննիսյան Հ. Օ.,*** Փաստարկում և հռետորություն, Եր., 2015 էջ 87-88:

[17] ***Черчилль У.,*** Афоризмы. Харьков, 2012, էջ 238:

4.2.4. Ապացուցում և հերքում

Եթե բանավեճի հենքը փաստարկողական և հակափաստարկողական համակարգերն են, ապա փաստարկման տրամաբանական միջուկը ապացուցումն ու հերքումն են:

Ապացուցել նշանակում է ցույց տալ փվյալ դրույթի ճշմարտացիությունը, այսինքն համապատասխանությունը իրականությանը:

Ապացուցումը ձևի տեսակետից անհրաժեշտ մտահանգում[18] է կամ անհրաժեշտ մտահանգումների շղթա՝ կշռադատություն:

Հավանական (կամ ճշմարտանման) մտահանգումները[19] չի կարելի ներկայացնել որպես ապացույցներ: Դրանք կիրառելի են դրույթի հիմնավորման, վարկածի առաջադրման նպատակով: Այս դեպքում էլ, սակայն, անհրաժեշտ է հետևել դրանց եզրակացությունների հավանականության աստիճանը բարձրացնող պայմանների ապահովմանը և խուսափել ճշմարտանման մտահանգումների ընթացքում առավել հաճախ հանդիպող այնպիսի սխալներից, ինչպիսիք են.

- ***հապճեպ ընդհանրացումները,***
- ***կարծիքին հակասող դեպքերի անտեսումը,***
- ***ոչ էական և ոչ բավարար նմանությունների հիման վրա համանմանության կառուցումը,***
- ***«սրանից հետո՝ նշանակում է սրա պատճառով» մտածելակերպը***:

Հապճեպ կամ շուտափույթ ընդհանրացման սխալը կատարվում է այն դեպքում, երբ մտքի «ծուլության», ժամանակի սղության կամ այլ պատճառներով խիստ սահմանափակ թվով դեպքերի դիտարկ-

---

[18] Անհրաժեշտ է կոչվում այն մտահանգումը, որի դեպքում ճշմարիտ նախադրյալներից որոշակի տրամաբանական կանոնների համաձայն բխեցվող եզրակացությունն ունի միանշանակ ճշմարիտ բնույթ: Անհրաժեշտ մտահանգումներ են, օրինակ, դեդուկցիան, լրիվ ինդուկցիան:

[19] Հավանական են կոչվում այն մտահանգումները, որտեղ ճշմարիտ նախադրյալներից բխեցվող եզրակացությունն ունի առավել կամ պակաս հավանական բնույթ: Այդպիսիք են ոչ լրիվ ինդուկցիան և անալոգիան:

ման արդյունքում ստացված եզրակացությունը շտապում են տարածել ամբողջ դասի նկատմամբ:

Օրինակ: *Այն փաստը, որ Ռուսաստանի Դաշնությունում կատարված և արդեն բացահայտված մի քանի հանցագործություններ կատարվել են «կովկասյան ազգության ներկայացուցիչների կողմից», դեռևս չի նշանակում, որ ՌԴ-ում կատարվող բոլոր հանցագործությունների հեղինակները կովկասցիներ են, առավել ևս՝ որ բոլոր կովկասցիները հանցագործներ են: Կամա թե ակամա երբեմն իրականացվող նման «քարոզչական» ակցիաները կառուցվում են հապճեպ ընդհանրացման և կարծիքին հակասող դեպքերի անտեսման ճանապարհով:*

Սոփեստն այդ սխալները թույլ է տալիս միտումնավոր, հակառակորդին մոլորեցնելու խորամանկ մտադրությամբ: Ա. Շոպենհաուերը գրում է. «Երբ մենք կառուցում ենք ինդուկցիա, և հակառակորդը համաձայնում է առանձին դեպքերի հետ, որոնց հիման վրա այն պետք է կառուցվի, ապա հարկ չկա նրան հարցնել, թե նա համաձայն է արդյոք դրանցից բխող ընդհանուր ճշմարտության հետ, այլ պետք է հրապարակել այն առանձին դեպքերի թվարկումից հետո, որպես արդեն ճանաչված ու ընդունված, քանզի երբեմն հակառակորդին կարող է թվալ, թե ինքը ճանաչել է այն, ինչպես նաև՝ ունկնդիրներին, ովքեր հիշում են թվարկված առանձին փաստերը, որ պետք է հանգեցնեին այդ նպատակին»[20]:

Առանձին դեպքերում էլ, երբ գործ ունեն միամիտ, միջակ մտավոր կարողությունների տեր մարդկանց հետ, կամ էլ, երբ ունկնդիրների շրջանում նկատելի է որոշակի բարենպաստ հոգեբանական նախատրամադրվածություն քննարկվող հարցի կապակցությամբ, եզրակացություն անելու «պատիվը» կարող է վերապահվել նաև զրուցակիցներին:

Ինդուկտիվ մեթոդի ջատագով Ֆր. Բեկոնը նկատում է, որ ժխտական (ձևավորված կարծիքին, սկզբնական տպավորությանը հակասող) փաստերի անտեսումն ու դրանց նկատմամբ արհամար-

[20] ***Schopenhauer A.,*** Handschriftlicher Nachlass, Bd. 2, էջ 89:

հանքը սխալների, սնահավատության ու նախապաշարմունքների գլխավոր պատճառն է: Այդ առումով հատկանշական է աֆորիզմային դարձած նրա օրինակը, երբ ոմն մեկին աստվածների հզորությունը ճանաչել տալու և դրա մեջ համոզելու նպատակով տաճարում ցույց են տալիս այն մարդկանց պատկերները, ովքեր ուխտելու շնորհիվ փրկվել են նավաբեկությունից, իսկ նա հարցնում է. «Հապա որտե՞ղ են նրանց պատկերները, ովքեր զոհվել են ուխտելուց հետո»[21]:

Ոչ լրիվ ինդուկցիայի էությունը լուսաբանող հրաշալի ստեղծագործություն է Հովի. Թումանյանի «Նեսոյի քարաբաղնիսը» պատմվածքը: Հիվանդ համագյուղացուն փրկելու նպատակով ծերունի Նեսոն առաջարկում է նրան «քարաբաղնիս անել»: Բուժման այդ եղանակի արդյունավետությունն ապացուցելու համար նա սկսում է մեկ առ մեկ հիշել այն համագյուղացիների անունները, որոնք փրկվել են քարաբաղնիսի շնորհիվ. *«Մարանանց Դանիելը, Մաթոսանց Միհաիսը, Ծարուրանց Ստեփանը, Մաշկավորանց Միկոն...»: Սակայն այս անգամ, մեղմ ասած, քարաբաղնիսն իրեն չի արդարացնում. հիվանդը խեղդամահ է լինում գոլոշիներում: «Ու մինչդեռ ներքև Կիրակոսի կինը սուգ էր անում, կրերը արևում նստուրած տղերքը պարմում էին, թե քանի-քանի հոգի են խեղդվել քարաբաղնիսից. Հանրսանց Հարոնը, Մելքոնանց Վանեսը, Հեխվերդոնց Աղեն, Շիմալանց Շամիրը... ո՞ր միևն ասես»*:

Նմանատիպ «թերություններով» են կառուցվում տարատեսակ լոտոների հաճախակի հանդիպող գովազդները: Թվարկվում են միայն դրական դեպքերը: Բացակայում են տվյալներ վաճառքից ստացված գումարի, շահումների ֆոնդի իրական ծավալի, պարտված տասնյակ հազարավոր մարդկանց, շահող ու չշահող դեպքերի վիճակագրական հարաբերակցության մասին: Հարցն ունի ոչ միայն տրամաբանական, այլև բարոյական և իրավական տեսանկյուններ:

Համանմանության եղանակով կառուցված կշռադատությունները որպես ճշգրիտ ապացույցներ ներկայացնելու փորձերը նույնքան

---

[21] ***Бэкон Ф.,*** Сочинения в двух томах, т. 2, էջ 20:

սխալ են ու անընդունելի, որքան ոչ լրիվ ինդուկցիայի դեպքում: Առօրյա կյանքում, գիտության ամենատարբեր բնագավառներում հաճախ են դիմում համանմանությունների օգնությանը: Սակայն դրանից քիչ չեն օգտվում նաև սոփեստները, որոնք իրենց կշռադատությունները գիտակցաբար կառուցում են առարկաների մեկ-երկու ոչ էական հատկությունների հիման վրա, միաժամանակ անտեսելով այդ առարկաների միջև եղած էական տարբերություններն ու հակասությունները:

Վերը նշված օրինակում Նեսոն Կիրակոսի հիվանդության դեպքում քարաբաղնիսի բարերար ազդեցությունն հիմնավորելու համար դիմում է նաև համանմանության օգնությանը.

«- Մի տարի էս մեր Աբգարն էլ էսպես մրսել էր: Ղանթափու ծաղիկ բերին, չայ շինեցին, խմացրին, պրաշոկ բերին, ջուր արին տվին իրան, քացախ քսեցին, բան չի դառավ:

Ասի տղեք, բերեք ես դրան մի քարաբաղնիս անեմ: ...Սա թե՝ վախում եմ: Ախր նա էլ սրա նման մի լեղապատառ օքմին ա: ...Հիմի կանգնել ա, թե Նեսո ջան, վախենում եմ, ինչ քարաբաղնիս մի անիլ:

Ականջ չի դրինք, բերեցինք կեծացած քարերն եփման ջուրը լցրինք ու հենց էնպես բուղը վեր ըլելով սրա հետ կոխեցինք տեղի տակը.- վա՜յ մեռա հա, մեռա: Լսողն ո՞վ ա: Վրեն նստրուտեցինք: ...Հիմի սա տակից գոռում ա, ոնց ա գոռում... էնքան գոռաց մինչև դինջացավ: Բաց արինք, տեսանք ջուր ա կտրել: Էն էր ու էն, լավացավ, տեղիցը վեր կանգնեց ողջ-առողջ մարդ:

Նեսո քիչու պատմությունը որ վերջացավ, վեր կացան, վերմակները եր քաշեցին: Գոլոշին օդեն բռնեց: Բայց Կիրակոսը...»:

Նեսոն իր դատողությունները կառուցում է ոչ էական, սոսկ արտաքին նմանությունների հիման վրա: Իհարկե, Աբգարի նման Կիրակոսն էլ հիվանդացել, անկողին էր ընկել ու տանջվում էր: Աբգարի նման նա էլ վախենում էր քարաբաղնիսից, հետո նրա պես գոռգոռում, դիմադրում ու փորձում էր դուրս պրծնել հաստ վերմակների տակից: Սակայն այս ամենը միայն արտաքին, երևութական նմանություններ են: Ծերունի Նեսոն հաշվի չէր առել և երևի թե չէր էլ կարող հաշվի առնել այնպիսի էական հատկանիշներ, ինչպիսիք են հի-

վանդության ախտորոշումը, դրա բարդության աստիճանը, հիվանդի օրգանիզմի դիմադրողականության չափը և այլ կարևոր գործոններ: Իսկ հետևանքները ողբերգական էին:

Հայտնի է, որ արսենի որոշ միացություններ օգտագործվում են ատամնաբուժության մեջ, ինչպես նաև ներաստենիայի, արյան պակասության, հյուծվածության և այլ հիվանդությունների բուժման նպատակով: Մկնդեղը նույնպես արսենի միացություններից է: Սակայն դա դեռ չի նշանակում, թե այն որպես դեղամիջոց կարելի է օգտագործել հիվանդներին բուժելու համար: Այս դեպքում իհարկե, իրենց բաղադրակազմում արսեն պարունակելու փաստը էական նմանություն է դրա բոլոր միացությունների համար: Բայց այդ միացությունների միջև կան նաև ոչ պակաս էական տարբերություններ, ինչպես արսենի չափաբաժինն է այդ միացություններում, այն նյութերը, որոնց հետ արսենը միացություններ է կազմում և այլն: Դրանց անտեսումը նույնպես կարող է ճակատագրական հետևանքներ ունենալ:

Հաճախ էլ համանմանության մեթոդին են դիմում այն դեպքերում, երբ փորձում են ապացուցել սոցիալական, տնտեսական, մշակութային և այլ բնագավառներում այս կամ այն պետության առաջավոր փորձի կիրառելիությունն ու օգտակարությունը սեփական երկրի համար: Նշում են առաջ եկած խնդիրների, հասարակական զարգացման տվյալ փուլի, տնտեսական համակարգի, պատմական անցյալի, ժողովրդագրական և բազմաթիվ այլ նմանություններ ու զուգահեռներ, ինչպիսիք որ հնարավոր են: Բայց միշտ չէ, որ նման ձեռնարկումները հաջողությամբ են պսակվում: Շատ անգամ այս կամ այն ծանրակշիռ, սակայն նախնական հաշվարկներում ուշադրության չարժանացած հանգամանքների բերումով նման «պատվաստումներն» ունենում են չնախատեսված, երբեմն էլ՝ տրամագծորեն հակառակ հետևանքներ:

Հետխորհրդային առաջին տարիներին շատ էր խոսվում Ռուսաստանի տնտեսությունը «շոկային թերապիայի» միջոցով ճգնաժամից հանելու և նորմալ զարգացման հունի մեջ դնելու անհրաժեշտության մասին: Այդ տեսակետի օգտին բերում էին արևմտյան որոշ

երկրների, Լեհաստանի, Հարավային Կորեայի, անգամ Սինգապուրի օրինակը, որոնք տարբեր ժամանակներում անցել են այդ ճանապարհով: Բայց կյանքը ցույց տվեց այդ վարկածի, տեսակետի անիրագործելիությունը ռուսական իրականության համար: Իսկ դրա հիմնական ջատագովներից մեկը՝ 1990-ականների սկզբին Ռուսաստանի վարչապետի պաշտոնը զբաղեցնող Եգոր Գայդարը ստիպված էր թողնել պաշտոնը:

Այս ամենը, իհարկե, չի նշանակում, թե սկզբունքորեն պետք է բացառել ամեն տեսակի համանմանությունները կշռադատությունների ընթացքում: Ամենևին: Համանմանությունն ու ճշմարտանման մյուս մտահանգումները, անհրաժեշտ մտահանգումներին զուգահեռ, հավասարապես հատուկ են մարդկային մտածողությանը և նույնքան գործածական են, որքան անհրաժեշտ մտահանգումները: Պետք է հիշել միայն, որ այդ մտահանգումներից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, եզրակացությունների հավանականության իր աստիճանը և ըստ այդմ էլ՝ կիրառելիության ու երաշխավորվածության իր սահմանները: Այդ իրողությունների անտեսումն ու զանցառումն է, որ կամ ակամա սխալ է, կամ էլ, երբ առկա է միտումնավորության, նենգամտության գործոնը, սոփեստական հնարք է, որն անթույլատրելի է բանավեճերի ընթացքում:

Նշվեց, որ իբրև ապացուցում կարող են հանդես գալ անհրաժեշտ մտահանգումները: Այս աշխատության շրջանակներում, սակայն, նպատակահարմար չէ անդրադառնալ անհրաժեշտ մտահանգումների և դրանց մասնավոր կանոնների վերլուծությանը, քանզի այդ հարցերը բավականաչափ քննարկվում են տարբեր մասնագիտական ձեռնարկներում և շատ թե քիչ ամբողջական տրամաբանական ցանկացած դասագրքի շրջանակներում:

Ապացուցման և հերքման տրամաբանական կանոնավորությունն ապահովելու համար անհրաժեշտ է բացառել նաև հաճախ հանդիպող այնպիսի սխալներ, ինչպիսիք են.

- **Սխալ հիմքը**
- **Հիմքի կռահումը (կամ չապացուցված փաստարկ)**
- **Կրկնաբանությունը (տավտալոգիա)**

- **Շրջապտույտը**:

Սխալ հիմք կոչվող սխալի դեպքում դրույթի ապացուցման (կամ հերքման) նպատակով ներկայացվում է իրականությանը չհամապատասխանող փաստարկ (դատողություն):

Օրինակ: *Պետական կառավարման բոլոր մարմիններն ունեն օրենսդրական գործառույթներ:* Մարզպետարանը պետական-տարածքային կառավարման մարմին է: Հետևաբար, *մարզպետարանը ևս կարող է իրականացնել օրենսդրական գործառույթներ:*

Իսկ երբ իրականությանը չհամապատասխանող փաստարկն առաջադրվում է այդ փաստի գիտակցումով և կանխամտածված ձևով, ապա գործ ենք ունենում ***ստի*** հետ:

Հիմքի կռահում (կամ չապացուցված փաստարկ) սխալը կատարվում է այն դեպքում, երբ ապացուցման հիմքերը կամ հիմքերից մեկն ինքը հինավորված չէ և ապացուցման կարիք ունի: Ու քանի որ հիմքի ճշմարտության հարցը դեռևս լուծված չէ, այն չի կարող ապացուցման համար փաստարկ ծառայել:

Օրինակ: *16-րդ դարում Լուվենյան համալսարանի պրոֆեսոր Ֆրուադմոնը հաղթեց եկավ Կոպեռնիկոսի դեմ: «Երկիրը չի կարող մոլորակ լինել,- ասում էր նա,- չի կարող պտտվել Արևի շուրջ, քանի որ Երկրի կենտրոնում գտնվում է դժոխքը, իսկ վերջինս պետք է որքան հնարավոր է հեռու լինի երկնքից, քանի որ այնտեղ գտնվում է դրախտը: Հետևաբար, Երկիրը գտնվում է երկնային տարածության կենտրոնում»*[22]*:*

Ուշադիր լինելու դեպքում դժվար չէ նկատել, որ «դժողքը գտնվում է Երկրի կենտրոնում», «դժոխքը գտնվում է դրախտից առավելագույնս հեռու», «դրախտը գտնվում է երկնքում» դատողություններն իրենք հիմնավորման ու ապացուցման կարիք ունեն:

Կրկնաբանությունը, ինչպես և սահմանման պարագայում, այնպիսի սխալ է, երբ թեզիսի ապացուցման նպատակով վկայակոչվում է հենց նույն թեզիսը, անգամ եթե ձևակերպված է այլ բառերով**: Օրի-**

---

[22] Ըստ՝ Сборник упражнений по логике. Под ред. Клевчени А.С. и Бартона В.И., Мн., 1990, էջ 194:

նակ՝ *«Այս դրույթը ճշմարիտ է, որովհետև կասկածից վեր է, որ այն չի կարող սխալ լինել»:* Որոշ դեպքերում էլ անազնիվ վիճողը քողարկում ու պերճախոս արտահայտություններով զարդարում է հակառակորդին ու ունկնդիրներին հրամցվող նույնաբանությունը, այնպես, որ առաջին հայացքից այն հաճախ աննկատելի կարող է լինել անուշադիր զրուցակիցներին: Ահավասիկ նույնաբանության մեկ այլ՝ դժվար նկատելի տարբերակ. *«Նույնաբանությունը դատողությունների ընթացքում և մտավոր հաղորդակցման ժամանակ անթույլատրելի է, քանի որ այն անընդունելի է թե՛ տրամաբանական և թե՛ բարոյական տեսանկյուններից»:*

Շրջապտույտ կամ արատավոր շրջան (circulus in demonstrando) կոչվող սխալի դեպքում տվյալ դրույթն ապացուցելու համար ներկայացվում է որևէ փաստարկ, իսկ վերջինիս հիմնավորման նպատակով վկայակոչվում է սկզբնական դրույթը:

Սկզբում ապացուցում են, որ «մարդու զգայարանները կատարյալ են (թեզիս), որովհետև դրանք ճիշտ են արտացոլում իրականությունը (փաստարկ)», իսկ քիչ հետո ապացուցում են հակառակը. «մարդու զգայարանները ճիշտ են արտացոլում իրականությունը (թեզիս), որովհետև դրանք կատարյալ են (փաստարկ)», կամ՝ «դրանք կատարելագործվել են երկարատև էվոլյուցիայի ընթացքում»: Նման օրինակները բազմաթիվ են. «Շարժումը, տարածությունը և ժամանակը մատերիայի անքակտելի հատկանիշներն են, որովհետև մատերիան առանց դրանց գոյություն ունենալ չի կարող» և ընդհակառակը՝ «Մատերիան առանց շարժման, տարածության և ժամանակի չի կարող գոյություն ունենալ, որովհետև դրանք մատերիայի անքակտելի հատկանիշներն են»:

Արատավոր շրջան կոչվող թե՛ սխալը, թե՛ իմաստակությունն առավել հաճախ են հանդիպում երկարատև վիճաբանությունների, երկարաշունչ շարադրանքների ընթացքում, որտեղ ունկնդիրների ու զրուցակիցների անուշադրության և կարճ հիշողության պատճառով դրանք շատ անգամ աննկատ են մնում:

Ահավասիկ մեկ օրինակ՝ չապացուցված փաստարկի և շրջապտույտի հաջորդական կիրառմամբ:

Լրագրողը, փորձելով վիճարկել պաշտոնյայի այն դրույթը, թե պառլամենտական ընտրություններն «կտրոնային համակարգի» դեպքում գաղտնի են, նկատեց, որ ընտրությունների ժամանակ յուրաքանչյուր ընտրող ստանում է համարակալված քվեաթերթիկ: Այդ համարը մնում է նաև հանձնաժողովի մոտ պահվող կտրոնի վրա, որտեղ նշվում է տվյալ ընտրողի համարն՝ ըստ ընտրողների ընդհանուր ցուցակի: Հետևաբար, հեշտությամբ կարելի է իմանալ, թե ընտրողներից ով ինչպես է քվեարկել:

– Այո, այդ ամենն այդպես է,– ասաց պաշտոնյան,– բայց մեզ մոտ ոչ ոք չի հետաքրքրվում ընտրողի անցով:

– Ինչո՞ւ եք այդպես կարծում:

– Չէ՞որ ասացի՝ ընտրությունները գաղտնի են[23]*:*

Թե՛ ապացուցումը և թե՛ հերքումը կարելի է իրականացնել ***ուղղակի*** և ***անուղղակի*** եղանակներով: Ուղղակի ապացուցման և հերքման դեպքերում ներկայացվում են այնպիսի փաստարկներ, որոնցից անմիջականորեն բխում է դրույթի ճշմարտացիությունը կամ սխալությունը:

Անուղղակի ապացուցման դեպքում ցույց է տրվում առաջադրված թեզիսին հակասող դրույթի սխալ լինելը, և երրորդի բացառման օրենքի հիման վրա բխեցվում դրույթի ճշմարտացիությունը: Ապացուցման այս եղանակը կոչվում է **ապագոգիկ:** Մեկ այլ տարբերակում ժխտվում են թեզիսից բացի մյուս բոլոր հնարավոր ենթադրությունները քննարկվող հարցի վերաբերյալ, և թեզիսը հայտարարվում է ապացուցված՝ որպես միակ հնարավոր ենթադրություն տվյալ հարցի վերաբերյալ: Այս եղանակն էլ կոչվում է **բաժանարար** անուղղակի ապացուցում:

Հռետորական նկատառումներով (խոսքն առավել տպավորիչ ու համոզիչ դարձնելու համար) անուղղակի ապացուցման ու հերքման նպատակներով կիրառվում է նաև ***reductio ad absurdum*** (հանգեցում անհեթեթության) տարբերակը: Այս եղանակի դեպքում պայմանա-

---

[23] *Ըստ* Сборник упражнений по логике. Под ред. Клевчини А.С., Минск, 1977, էջ 94-95:

կանորեն ընդունվում է քննարկվող դրույթի ճշմարտացիությունը, և ցույց է տրվում ու մեկնաբանվում, թե ինչ անհեթեթ եզրակացություններ ու հետևանքներ են բխում դրանից: Այդ եզրակացությունների անհեթեթ լինելը վկայում է սկզբնական ենթադրության սխալ և անընդունելի լինելը:

4.2.5. Համատեքստային և ենթատեքստային գործոններ

Կարևոր է բանավեճի ընթացքում գործածվող դրույթներն ու արտահայտությունները դիտարկել ու վերլուծել ոչ միայն դասական, այլև ոչ դասական տրամաբանական համակարգերի տեսանկյուններից: Արժեքավոր է, մասնավորապես, ***փոխակերպական տրամաբանության*** գործիքակազմը: Տրամաբանական այդ համակարգն ուսումնասիրում է մտքի բացահայտ և ոչ բացահայտ ձևերը, մտքի բացահայտ ձևերից ոչ բացահայտ ձևերի բխեցման կանոնները, ոչ բացահայտ ձևերի միջոցով մտքի բացահայտ ձևերի իմաստի ու նշանակության ճշգրտման սկզբունքները[24]:

Մտքի բացահայտ ձևը կշռադատությունների այն համակարգն է, որն ամրագրված է լեզվական միջոցներով (գրավոր կամ բանավոր խոսքի միավորներով) և ընկալելի է զրուցակցի զգայարանների համար:

Մտքի ոչ բացահայտ ձևը կշռադատությունների այն համակարգն է, որն ակնհայտորեն ամրագրված չէ լեզվական միջոցներով (արտաքին, ատասանված-առարկայացված խոսքի միավորներով), ընկալելի չէ զգայարանների միջոցով, սակայն այն կարելի է բխեցնել, դրա մասին կարելի է կռահել առաջադրված տեքստի համատեքստն ու ենթատեքստը վերլուծելու արդյունքում: Ըստ այդմ՝ մտքի ոչ բացահայտ ձևերը լինում են **համատեքստային** և **ենթատեքստային**:

Համատեքստը կշռադատությունների այն համակարգն է, որի շրջանակներում գործածվում է տվյալ դրույթը (միտքը կամ արտա-

---

[24] Տե՛ս ***Брутян Г.А.,*** Трансформационная логика. Ереван, 1983:

հայտությունը), և որի վերլուծությունը թույլ է տալիս հստակեցնել ու ճշգրտել դրույթի իմաստն ու նշանակությունը: Երբեմն էլ տրամաբանական համատեքստին փոխարինում կամ լրացնում է ***ֆիզիկական համատեքստը***՝ այն պայմաններն ու հանգամանքները (լսարանի կրթամակարդակը, ժողովրդագրական կազմը, գործի հանգամանքները, քաղաքական իրավիճակը և այլն), որոնց պարագայում ներկայացվում է ելույթը, շրջանառվում է դրույթը, միտքը:

Ենթատեքստը այն դատողությունների համակարգն է, որոնք թեև ակնհայտ կերպով ամրագրված չեն տեքստի լեզվական միավորների օգնությամբ, սակայն դրանք կարելի է բխեցնել, դրանց մասին կռահել տեքստի դատողությունների լրացուցիչ վերլուծության արդյունքում:

Առանց տրամաբանական կամ ֆիզիկական համատեքստը հաշվի առնելու հնարավոր չէ միանշանակ մեկնաբանել հետևյալ դատողությունների իմաստը. «Կիրակոսը Պետրոսին ասաց. «Համա՞ թե ավազակն ես դու», «Գևորգյանը մշտապես հպարտանում էր այդ օպերացիայով», «Դասախոսը գոհ մնաց լսարանից», «Նա սիրում էր նկարել մարտի տեսարաններ»: Եթե Պետրոսին ուղղված՝ Կիրակոսի հայտարարությունը հնչել է դատավճռի կամ կենցաղային լեզվակռվի ընթացքում, ապա այն կմեկնաբանվի որպես վիրավորանք ու կշտամբանք, իսկ եթե այդ հայտարարությունը հնչել էր, երբ Պետրոսը Կիրակոսի համար հաճելի անձնավորության հետ անակնկալ հանդիպում էր կազմակերպել, ապա նշված խոսքերը պետք է ընկալել որպես հաճոյախոսություն: Երկրորդ օրինակում, կախված իրավիճակից, «օպերացիա» արտահայտությունը կարող է ունենալ վիրահատական միջամտության, ռազմական, ֆինանսական, հետախուզական կամ էլ հակաահաբեկչական գործողության իմաստ: Երրորդ և չորրորդ դատողությունների իրական իմաստը ևս կարելի է ճշգրտել միայն տրամաբանական կամ ֆիզիկական համատեքստի հստակեցմամբ:

Փաստարկներ ներկայացնելիս կարևոր է հաշվի առնել տրամաբանական և ֆիզիկական համատեքստը, որի խորապատկերում դրանք հնչելու են:

Անեկդոտը, որը կարելի է պատմել տղամարդկանց շրջապատում, կարող է ոչ հարգալից ժեստ ընկալվել կանանց միջավայրում: Նման իրավիճակում հայտնվեց, օրինակ, Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինը՝ Գերմանիայի Դաշնության կանցլեր Ա. Մերկելի հետ համատեղ ասուլիսի (հունիս, 2013 թ.) ընթացքում առաջին ամուսնական գիշերվա մասին անեկդոտ պատմելով[25]:

Ինչպես համատեքստի, այնպես էլ ենթատեքստի ոչ ճիշտ հաշվի առնելը կամ անտեսելը կարող է թուլացնել ասելիքը, հանգեցնել ոչ ցանկալի արդյունքի և ընդհակառակը[26]:

Օրինակ: Հայաստանի կապի բնագավառում հայտնի «Արմենթել» ընկերությունը բաժանորդներին գրավելու նպատակով 2007 թ. ամռանն առաջարկում էր մի ծառայություն, որից գիշերային ժամերին օգտվելու դեպքում սահմանվում էր նվազեցված սակագին: Գովազդի ոճն ու բովանդակությունը հուշում էին, որ այդ ծառայությունը հասցեագրված էր հիմնականում երիտասարդ, սիրահարված ու ռոմանտիկ բաժանորդներին: Գովազդը հայտարարում էր. «Գիշեր է գալու, թեժ է լինելու»: Վերոհիշյալ թիրախային խմբի համար, իրոք, գրավիչ կարգախոս է … եթե հաշվի չառնենք ֆիզիկական համատեքստը: Բանն այն է, որ 2007 թ. ամռանը Հայաստանում առկա էր բավականին բարձր ջերմաստիճանային ռեժիմ, առանձին օրերին օդի ջերմաստիճանը ստվերում հասնում էր մինչև 39^0C-ի: Ամառային տապի պայմաններում թեժ գիշերվա մասին խոսելը, թեկուզև փոխաբերական իմաստով, հազիվ թե առանձնապես ոգևորիչ ու գրավիչ լինի: Գովազդը ավելի գրավիչ կարող էր լինել, եթե ակնարկեր. «Գիշեր է գալու, զով է լինելու...»: Ամռան տապի պայմաններում զով գիշերվա գաղափարը ակտիվանալու, սիրելի մարդու հետ ինքնամոռաց ու ռոմանտիկ զրույցի բռնվելու ավելի գրավիչ ու նպաստավոր համատեքստ կարող է լինել, քան զրույցի թեժության մասին ակնարկը:

---

[25] https://www.youtube.com/watch?v=1hHICrGqV-Y (դիտումը՝ 26.06.2019 թ.):

[26] Տե՛ս ***Հովհաննիսյան Հ. Օ.:*** Փոխակերպական տրամաբանության մեթոդաբանական և կիրառական տեսանկյունները: «Փոխակերպական տրամաբանություն». գիտական հոդվածների և նյութերի ժողովածու: Գիրք 2: Եր., 2008, էջ 619-626: Տե՛ս նաև ***Հովհաննիսյան Հ. Օ.,*** Փաստարկում և հռետորություն: Եր., 2015 էջ 67-77:

«Գիշեր է գալու, թեժ է լինելու» տարբերակով գովազդը ավելի տեղին կլիներ, թերևս, ձմռան ամիսներին, երբ թեժության (ջերմության) մասին հիշատակումն ինքնին հաճելի տրամադրություն կստեղծեր:

Մեկ այլ օրինակ, այս անգամ՝ *ենթատեքստի* ոչ ճիշտ հաշվարկման մասին: ՀՀ-ում ավտոմեքենաների վաճառքով զբաղվող «Megna» և «Muran» ընկերությունները էլեկտրոնային ԶԼՄ-ներով տարածվող իրենց գովազդում հորդորում էին. «Եվս մեկ ավտովթար: Պահպանե՛ք թույլատրելի արագությունը հատկապես մայրուղիներում: Մտածե՛ք մինչև ղեկին նստելը»: Մինչդեռ ավելի ճիշտ կլիներ վարորդներին հորդորել ու պահանջել. «***Մի՛ գերազանցեք*** սահմանված արագությունը»: Այլապես, առաջին տարբերակը կարելի է մեկնաբանել այնպես, թե պետք է ***պահպանել*** ավտոմայրուղիներում սահմանված առավելագույն արագությունը և չի կարելի դրանից ավելի դանդաղ արագությամբ մեքենա վարել (ինչպես, օրինակ, որոշ արագընթաց մայրուղիների վրա): Երկրորդ՝ պետք է պահպանել սահմանված արագությունը ***մայրուղիներում***, իսկ մյուս ավտոճանապարհներին կարելի է և չպահպանել: Երրորդ՝ հարց է առաջանում. իսկ ղեկին նստելուց հետո մտածել պետք չէ՞…

Համատեքստի և ենթատեքստի, դրանց միջոցով դատողության հնարավոր մեկնաբանությունների հարցը չափազանց կարևոր է իրավական, քաղաքական բնույթի բանավեճերում ու փաստաթղթերում: **Այսպես:** Առաջին քաղաքական-իրավական փաստաթուղթը, որով Լեռնային Ղարաբաղը ժամանակին ընդգրկվել է Ադրբեջանի կազմում, 1921 թ. հուլիսի 5-ի ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի պլենումի որոշումն է: Գործին քաջատեղյակ քաղաքագետներն ու քաղաքական գործիչները, վկայակոչելով այդ ժամանակ ձևավորված իրավաքաղաքական և պատմական գործոնները (համատեքստը), բազմիցս փաստել են, որ այդ որոշումը միջազգային իրավունքի տեսանկյունից ուժ չունեցող, ապօրինի որոշում է, քանզի 1921 թ. ո՛չ Հայաստանը և ո՛չ էլ Ադրբեջանը (թեկուզ արդեն խորհրդայնացված) Ռուսաստանի մաս չէին կազմում, որպեսզի Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցության ստորաբաժանումներից մեկը որոշեր այդ պետությունների կազմն ու

սահմանները: (Խորհրդային Միությունը կազմավորվեց միայն 1922 թ. դեկտեմբերին, որի կազմի մեջ մտան նաև Խորհրդային Հայաստանն ու Ադրբեջանը): Այնուհանդերձ, այդ որոշման մեջ կա ձևակերպում, որն ադրբեջանցի որոշ քաղաքական գործիչներ փորձում են օգտագործել՝ «գնդակը հայկական կողմի կիսադաշտ փոխանցելու համար»: Կովբյուրոյի պլենումի որոշման մեջ գրված է. «...Որոշեցին. ելնելով մուսուլմանների և հայերի միջև խաղաղության հաստատման անհրաժեշտությունից, ինչպես նաև Վերին ու Ներքին Ղարաբաղների և Ադրբեջանի հետ նրանց ունեցած տնտեսական մշտական կապերից՝ Լեռնային Ղարաբաղը **թողնել (оставить)**[27] Ադրբեջանական ՍՍՀ սահմաններում, նրան տրամադրելով լայն մարզային ինքնավարություն՝ ինքնավար մարզի կազմի մեջ մտնող ք. Շուշի վարչական կենտրոնով»[28]: Ադրբեջանցի ընդդիմախոսները առաջ են մղում «թողնել» արտահայտության սեփական մեկնաբանությունը. «թողնել կարելի է միայն այն, ինչն այնտեղ եղել է»:

Իհարկե, այդ մեկնաբանությունը կարելի է հերքել՝ վկայակոչելով թեկուզև Կովբյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի որոշմանը նախորդած՝ Ադրբեջանի հեղկոմի 1920 թ. նոյեմբերի 30-ի դեկլարացիան (որով Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը ճանաչվում են Հայաստանի Սցիալիստական Հանրապետության բաղկացուցիչ մաս)[29] և դրան հաջորդած՝ Հայաստանի սովնարկոմի 1921 թ. հունիսի 12-ի դեկլարացիան (որով ԼՂ-ն հռչակվում է ՀՍՍՀ անօտարելի մաս)[30], նաև պատմագիտական փաստարկներ բերելով: Սակայն մնանք բառերի աշխարհում: Հասկանալի է, որ աշխարհաքաղաքական իրողություններն ու ուժերի դասավորությունը պատմական այդ ժամանակահատվածում այնպիսին էր, որ Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցության վերնախավը հակված էր զիջումներ անել Ադրբեջանի Հանրապետություն անվանված նորաստեղծ քաղաքական միա-

---

[27] Ընդգծումը մերն է:
[28] Տե՛ս ***Манасян А.С.,*** Карабахский конфликт: международно признанные основания проблемы (папка правовых и политических документов). Степанакерт, 2007, էջ 24:
[29] Տե՛ս նույնը, էջ 13:
[30] Նույնը, էջ 16:

վորին: Սակայն հայկական պատվիրակությունը հավանաբար կարող էր գոնե շտկումներ պահանջել Ի. Ստալինի և Ն. Նարիմանովի կողմից առաջադրված ձևակերպման տեքստում, որպեսզի որոշման մեջ ամրագրվեր, եթե ոչ՝ «Լեռնային Ղարաբաղը փոխանցել (передать)», ապա գոնե՝ «Լեռնային Ղարաբաղն ընդգրկել (включить)» հարևան երկրի կազմում:

Քաղաքական գործիչների շուրթերից երբեմն կարելի է լսել «1915 թ. Թուրքիայում հայերի դեմ իրականացված ցեղասպանություն» արտահայտությունը, որը ենթատեքստային մեկնաբանությունների առումով չի կարելի հաջող ձևակերպում համարել: **Նախ՝** թուրքական իշխանությունների կողմից հայերի ցեղասպանության ու բնաջնջման քաղաքականությունը ժամանակագրական առումով ավելի լայն ընդգրկումներ ունի: Այլ բան է, որ այդ քաղաքականությունն առավել բուռն դրսևորում ունեցավ և իր գագաթնակետին հասավ Առաջին համաշխարհային պատերազմի հարմար առիթով: **Եվ երկրորդ՝** պատմական ու աշխարհաքաղաքական իրողություններին անծանոթ մարդու մոտ հարց կարող է առաջանալ. «Իսկ ի՞նչ գործ ունեին հայերը Թուրքիայում: Գուցե արտագնա աշխատանքի՞ էին գնացել...»:

Թեև մարդկության դեմ իրականացված հանցագործություններն ու մարդկային ողբերգությունները համեմատելն ինքնին անշնորհակալ գործ է, այնուհանդերձ, պետք է նկատել, որ հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանությունն իր մտահղացմամբ ու հետևանքներով ավելի քստմնելի հանցագործություն էր, քան Երկրորդ համաշխարհայինի տարիներին հրեաների դեմ իրականացված Հոլոքոստը: Քանզի հայերին բնաջնջել են իրենց իսկ բնօրրանում՝ հայրենազրկելով նաև Եղեռնից մազապուրծ նրանց սերունդներին, մինչդեռ Հոլոքոստն իրականացվեց Եվրոպայում: Ի դեպ, Գերմանիան Ճանաչեց նացիստների կողմից իրականացված հանցագործությունը և տարիներ շարունակ փոխհատուցում է հրեական կողմին պատճառած վնասների համար, մինչդեռ Թուրքիան ամեն կերպ փորձում է պահպանել ժխտողական կեցվածքը՝ դրանով իսկ շարունակելով իր հանցավոր քաղաքականությունը:

Փաստարկման և բանավեճի արդյունավետությունը, հիմնված լինելով տրամաբանական սկզբունքների վրա, չի սպառվում, սակայն, զուտ տրամաբանական և բովանդակային բաղադրիչներով: Էական նշանակություն ունեն նաև արտատրամաբանական գործոններն ու սկզբունքները:

4.3. Արտատրամաբանական գործոններ

Այսպիսի անվանումը պայմանական է, քանզի այդ հնարներն ու սկզբունքները տրամաբանությունից դուրս, առավել ևս՝ անտրամաբանական համարել չի կարելի: Պարզապես, քանի որ այդ սկզբունքները դուրս են ավանդական-ձևական տրամաբանության առարկայական տիրույթից և ունեն իմացաբանական, էթիկական, արարողակարգային, հոգեբանական ուղղվածություն ու հիմնավորումներ, տարբերելու համար ավանդական տրամաբանության նորմերից, ընդունված է դրանք արտատրամաբանական անվանել:

4.3.1. Նախնական համաձայնության սկզբունքը

Այս սկզբունքի համաձայն (հատկապես, երբ զրուցակցի կամ լսարանի հետ կան որոշակի տարաձայնություններ)՝ նախընտրելի չէ ելույթը սկսել անհամաձայնության հայտարարություններ և առարկություններ անելով. «Ի սկզբանե ուզում եմ ասել, որ Դուք չարաչար սխալվում եք»: Առավել ևս չի կարելի թույլ տալ ընդդիմախոսին վիրավորող արտահայտություններ. «Այն, ինչ Դուք ասում եք, երեխայամիտ ցնդաբանություն է»: **Խորհուրդ է տրվում ելույթը սկսել՝ համաձայնության կետերն ամրագրելով:**

Այսպիսի մարտավարությունն ունի **իմացաբանական** և **էթիկական** հիմնավորումներ:

Նախ՝ անհրաժեշտ է հիշել, որ ինչպես չկա բացարձակ ճշմարտություն (ճանաչողության առարկան սպառիչ կերպով արտացոլող, իմացության հետագա ընթացքում անվերանայելի ու անքննադատելի դրույթ), այնպես էլ չկա բացարձակ մոլորություն: Ամեն մի մոլորու-

թյուն, որն արժանի է քննարկման, պարունակում է ռացիոնալ հատիկ: Դրանով է գրավիչ, կայուն, և միայն դրա միջոցով այն կարելի է հերքել: Հարյուր տոկոսով մերժելով ընդդիմախոսի տեսակետը՝ որպես կանոն, գոնե մի քանի տոկոսով նոր մոլորության մեջ կհայտնվեք:

19-րդ դարի ռուս նշանավոր փիլիսոփա Վլ. Սոլովյովն իր «Գերմարդու գաղափարը» աշխատության մեջ գրում է. «...յուրաքանչյուր մոլորություն, որի մասին արժե խոսել, իր մեջ պարունակում է ճշմարտություն, այդ ճշմարտության առավել կամ պակաս աղավաղումն է, դրանով է դիմանում, դրանով է հրապուրիչ, դրանով է վտանգավոր, և միայն դրա միջոցով այն կարող է հասկացվել ինչպես հարկն է, արժեքավորվել և վերջնականապես հերքվել»[31]: Իսկ գերմանացի գրող Էրվին Շտրիտմատտերը նկատում է, որ երկու վիճողներից համակրելի է նա, ով հնարավոր է համարում ընդդիմախոսի դրույթների ու հայացքների ճշմարտացիությունը և ոչ թե փրփուրը բերնին պնդում իր ասածի ճշմարտությունը[32]:

Երկրորդ: Հարյուր տոկոսով, հենց շեմքից մերժելով զրուցակցի տեսակետը, առավել ևս հեգնական տոն ու վիրավորական գնահատականներ գործածելով՝ կարելի է գրգռել զրուցակցի (ընդդիմախոսի) ինքնասիրությունը, դրդել դիրքային պայքարի՝ ավելի կարծրացնելով նրա դիրքորոշումը:

Ուստի նախընտրելի է ելույթը սկսել ոչ թե անհամաձայնության մասին հայտարարություններով, այլ կողմերի դիրքորոշումներում համաձայնության կետերն ու ընդհանուր եզրերն ամրագրելով: **Օրինակ**՝ *«Ես հասկանում եմ Ձեր վրդովմունքը: Խորն եմ գնահատում հիմնախնդրի և դրա բաղադրիչների մասին Ձեր մեկնաբանությունները: Մարդկայնորեն համակրանքով եմ վերաբերվում հիմնախնդիրը շուրջապատյալ լուծելու Ձեր ազնիվ մղումին: Բայց այն եղանակը, որն առաջարկում եք լուծման համար, ցավոք, այնքան էլ իրատեսական չէ...»:*

---

[31] ***Соловьев Вл. С.,*** Сочинения в 2-х томах, т. 2, М.,1990, էջ 628:

[32] Ըստ՝ ***Թրուտյան Գ. Ա.,*** Իմաստասիրական երկխոսություններ: Հ. 2, Երևան, 1986, էջ 501:

Նախնական համաձայնության այս սկզբունքը թույլ է տալիս ոչ միայն չմեղանչել ճշմարտության առջև, այլև հաղթահարել հոգեբանական բարդույթներն ու լարվածությունը՝ ընդդիմախոսին հրավիրելով կառուցողական երկխոսության:

Դիտարկվող առումով տիպական է հայտնի փաստաբան Պյոտր Ալեքսանդրովի՝ ի պաշտպանություն Վերա Զասուլիչի 1878 թ. արտասանած ճառի նախաբանը.

«Պարոնայք ատենակալներ: Ես ունկնդրեցի դատախազի վայելուչ ու զուսպ ճառը և շատ առումներով նրա հետ միանգամայն համաձայն եմ: Մենք տարաձայնություններ ունենք շատ քիչ հարցերում: Բայց և այնպես, պարոն դատախազի ելույթից հետո իմ խնդիրը չհեշտացավ: Հարցն այս գործի փաստերը չեն, այդ առումով ամեն ինչ պարզ է: Այնքան պարզ է, որ եթե սահմանափակվենք միայն հունվարի 24-ի իրադարձություններով, ապա քննարկելու բան էլ չկա: Ո՞վ կժխտի, որ ինքնիրավ սպանությունը հանցագործություն է, ո՞վ կարող է ժխտել նաև մեղադրյալի պնդումն այն մասին, որ շատ դժվար է ինքնիրավ դատաստանի համար ֆեռք բարձրացնելը:

Այս ամենը ճշմարտություններ են, որոնք վիճարկել չի կարելի: Բայց բանն այն է, որ հունվարի 24-ի դեպքը չի կարելի դիտարկել մեկ այլ դեպքից առանձին: Քննության առարկա դեպքը այնքան է կապված, այնքան է միահյուսված նախնական կալանքի վայրում հունիսի 13-ին կատարված փաստի հետ, որ գեներալ-աղյուտանտ Տրեպովի դեմ մահափորձի իմաստը հասկանալի կդառնա, եթե համադրենք կատարվածն այն դրդապատճառների հետ, որոնց հիմքերը դրվել են նախնական կալանքի վայրում տեղի ունեցած իրադարձություններով...»[33]:

---

[33] Տե՛ս Судебные речи известных русских юристов. Сборник. Москва, 1958: https://www.e-reading.club/bookreader.php/1001858/Sudebnye_rechiya_izvestnyh_russkih_yuristov.html (դիտումը՝ 22.09.2019 թ.): Ճառին և գործի մանրամասներին կարելի է ծանոթանալ նաև http://www.hist.msu.ru/ER/Etext/Zasulich.htm կայք-էջում (դիտումները՝ 22.09.2019 թ.): Նշենք միայն, որ դատարանը կայացրել է Վ. Զասուլիչին արդարացնող որոշում:

4.3.2. Հանդուրժողականությունն ու հարգանքը ընդդիմախոսի անձի և այլընտանքային տեսակետների նկատմամբ

Առանց կողմերի զսպվածության, փոխադարձ հարգանքի ու պարտավորվածության հնարավոր չէ արդյունավետ հաղորդակցում: «Պետք է հանդուրժող լինենք ամենատարբեր կարծիքների նկատմամբ: Եթե անգամ համաձայն չենք դրանց հետ, համենայն դեպս հանգիստ կերպով պիտի լսենք»,- խորհուրդ է տալիս 16-րդ դարի ֆրանսիացի իրավաբան և իմաստասեր Միշել Մոնտենը[34]: Երկու բանավիճողներից համակրելի է նա, ով հնարավոր է համարում ընդդիմախոսի դրույթների ու հայացքների ճշմարտացիությունը և ոչ թե ինքնամոռաց պնդում իր տեսակետի ճշմարտացիությունը:

Չթերագնահատելով հույզերի դերը մարդկային գործունեության բնագավառում՝ այնուհանդերձ պետք է նկատել, որ մասնագիտական հարցերի շուրջ բանավեճը պետք է լինի մտքերի և ոչ թե մարդկանց ճակատամարտ: Հակառակ դեպքում դժվար է չհամաձայնել Դեյլ Քարնեգիի այն մտքի հետ, թե վիճաբանության մեջ լավագույն արդյունքի հասնելու միակ միջոցը դրանից խուսափելն է[35]:

Հեգնանքը, ծաղրը, վիրավորական արտահայտությունները խոսում են զրուցակցի վատ դաստիարակության, տակտի բացակայության, հաճախ էլ՝ տրամաբանական փաստարկների պակասի կամ դրանց բացակայության մասին:

Պետք է հիշել, որ հայհոյողը, որպես կանոն, հատկապես երրորդ մարդկանց (լսարանի) աչքում հայտնվում է նույն հարթության վրա, որտեղ ցանկանում էր տեսնել հայհոյանքի հասցեատիրոջը:

Ահավասիկ երևույթը բնութագրող մի հումորային դրվագ նորբայազեդցի աշուղ Սազայու կենսագրականից: Գյուղերից մեկի հոդայում հավաքված գյուղացիները տաք-տաք վիճում են աշուղական արվեստի հարցերի շուրջ: Վեճն այնքան է թեժանում, որ սկսում են իրար վիրավորել ու քաշքշել: Երկու օր անց այդ գյուղ է ժամանում ա-

---

[34] ***Монтень М.,*** Опыты. Избранные главы. М.,1991, էջ 446:

[35] ***Carnegie D.,*** How To Win Friends And Influence People. New-York, 1981, (Part 3, Chapter 1), էջ 116:

շուղ Սազային: Վիճողներից երկուսը դիմում են աշուղին՝ պարզելու, թե իրենցից ո՞վ է ճիշտ: Սազային, տեսնելով, որ վիճողները հավասարապես անտեղյակ են վիճաբանության առարկայից, փորձում է պարզապես հաշտեցնել նրանց: Սակայն՝ ապարդյուն: Այնժամ աշուղը հետաքրքրվում է, թե նրանցից ո՞վ ու՞մ է ավելի շատ վիրավորել: Նրանք թե՝ «երկուսս էլ: Նա ինձ էշ է անվանել, ես էլ՝ իրեն: Հիմի ուզում ենք, որ դու որոշես, թե մեզանից ո՞վ է ճիշտ»:

- Էրկուսդ էլ ճիշտ եք,- ասում է Սազային և վեճը համարում փակված[36]:

Հարգանքը ընդդիմախոսի և լսարանի նկատմամբ ելույթի հաջողության գրավականներից է: Խոսքի գործընկերային ոճն ու հարգալից կեցվածքը, երբեմն էլ հակառակորդ կողմի և ունկնդիրների մասնագիտական, մտավոր կամ բարոյական արժանիքների վերաբերյալ թափանցիկ ակնարկները, նուրբ հաճոյախոսությունը երաշխավորում են նրանց համակրանքը ելույթ ունեցողի ու նրա տեսակետի նկատմամբ:

Հակառակ դեպքում, երբ նկատելի են խոսողի անհարգալից կեցվածքը, արհամարհական տոնը, կնճռոտված դեմքն ու մռայլ հայացքը, ի միջի այլոց վերաբերմունքը լսարանի և այնտեղ նստած մարդկանց տեսակետների նկատմամբ, լսարանում ձևավորվում է ակամա դժգոհություն ու ոչ բարյացակամ վերաբերմունք բանախոսի և նրա դրույթների նկատմամբ:

Սեփական տեսակետից տարբերվող, այլընտրանքային կարծիքների ու մոտեցումների նկատմամբ հանդուրժողական կեցվածքը, դրանք իրավահավասար քննարկելու պատրաստակամությունն ու գործելակերպը կարծրամտությունից ու մոլորություններից խուսափելու կարևոր երաշխիք է:

Բանավեճի հաջողությունը շատ բանով կախված է **մասնակիցների տակտից**: Անշուշտ, վիճելիս պահանջվում է որոշակի համառություն, սեփական տեսակետը պաշտպանելու հաստատակամություն: Բայց բոլորովին անտեղին է և գործին չի օգնում ավելորդ համառու-

---

[36] Տե՛ս ***Սազայի,*** Ո՞վ Հայաստան: Երևան, 1993, էջ 276:

թյունը, երբ հակառակորդի դրույթների ճշմարտությունն ակնառու է, իսկ սեփական տեսակետի սնանկությունն արդեն հիմնավորապես ապացուցվել է նրա կողմից: Նույնը կարելի է ասել նաև ավելորդ զիջողականության դեպքում: Սեփական սխալների ընդունումը, ինքնաքննադատությունը, ինչպես նաև հարգալից վերաբերմունքը հակառակորդի նկատմամբ երբեք էլ չպետք է նշանակի ավելորդ համաձայնվողականություն, պարտվողականություն: Այն չի բացառում սկզբունքայնությունն ու համոզվածությունը սեփական տեսակետի ճշմարտացիության մեջ: Ճանաչողական կողմնորոշում ունեցող վիճաբանության կարգախոսը պետք է լինի արիստոտելյան հայտնի սկզբունքը. «Պլատոնն իմ բարեկամն է, բայց ճշմարտությունն ավելի թանկ է»[37]:

Ռոջեր Ֆիշերը և Ուիլյամ Ուրին Հարվարդի համալսարանի շրջանակներում մշակվող՝ վեճերի ու բանակցությունների վարման բազմաբնույթ ծրագիրը ներկայացնող համատեղ ուսումնասիրության մեջ, ընդգծելով վիճաբանության, գործնական բանակցություններ վարելու ինչպես դիրքային, կոշտ և անզիջում, այնպես էլ չափազանց մեղմ ու անսկզբունքային տարբերակների անարդյունավետությունն ու աննպատակահարմարությունը, փոխարենն առաջարկում են այդ երկու տարբերակների նկատմամբ միջանկյալ դիրք գրավող՝ վիճաբանության, այսպես կոչված, սկզբունքային եղանակը, որը չբացառելով չափավոր, փոխշահավետ զիջողականությունը, չի բացառում նաև սկզբունքային պայքարն ու վճռական մոտեցումները[38]:

Բանավեճի ընթացքում փաստարկների կարծրությունը պետք է ուղեկցվի և լրացվի խոսքերի մեղմությամբ, գործընկերային-բարեկամական ոճով, սեփական տեսակետն ունենալու և այն պաշտպանելու առումով չկաշկանդվածության, փոխադարձ հարգանքի մթնոլորտով:

---

[37] Բնագրում («Նիկոմախի էթիկա») այդ սկզբունքը շարադրված է հետևյալ կերպ. «...ամեն դեպքում մեր պարտքն է հանուն ճշմարտության փրկության հրաժարվել անգամ մեզ համար թանկից ու մտերիմից, հատկապես, եթե մենք փիլիսոփաներ ենք: Թեև և՛ մեկը, և՛ մյուսը թանկ են, բարեպաշտությունը ճշմարտությունը վեր դասելն է»: ***Аристотель,*** Сочинения в четырех томах. Т. 4, М., 1983, էջ 59:

[38] Տե՛ս ***Fisher R., Uri W.,*** Getting to Yes, էջ 9-14:

4.3.3. Ապակենտրոնական ուղղվածություն

Այս սկզբունքը ենթադրում է խնդիրը ոչ միայն սեփական շահերի ու արժեհամակարգի տեսանկյունից գնահատելու, սեփական դիրքորոշումը հստակ ձևակերպելու կարողություն, այլև **այն ընդդիմախոսի տեսակյունից վերլուծելու և գնահատելու, ինչպես նաև չեզոք, անկանխակալ դիտորդի տեսանկյունից, մասնավորապես՝ օրենքի, իրավական կամ այլ նորմերի համատեքստում մեկնաբանելու կարողություն և պատրաստակամություն:**

Այսպիսի տրամադրվածության դեպքում կողմերն օգնում են միմյանց խնդրի կարգավորման, հոգեբանական բարդույթների հաղթահարման և եկուստեք ընդունելի հանգուցալուծման մշակման գործում[39]:

Հակառակ մոտեցումը էգոցենտրիկ (եսապաշտական) կեցվացքն է, երբ կողմերից յուրաքանչյուրը խնդրի վերաբերյալ ունի իր կարծր դիրքորոշումը, նրան չեն հետաքրքրում այլոց տեսակետները, ձգտում է ընդդիմախոսին և ներկաներին պատադրել սեփական կարծիքը, դրսևորում է անբարյացակամ վարք, կոպիտ կերպով ընդհատում է ընդդիմախոսին, փորձում է ավելի ու ավելի բարձր բղավել:

Այդպիսի դեպքերում, երբ կողմերը չեն փորձում միմյանց հասկանալ, խնդիրը հակառակ կողմի տեսանկյունից վերլուծել, վրա է հասնում չեզոքության և օբյեկտիվության դաշտն ապահովող երրորդ կողմի անհրաժեշտությունը: Միշտ չէ, սակայն, որ երրորդ կողմն ապահովում է **մեդիացիայի**[40] սկզբունքները: Որպես կանոն, միջնորդ կողմը «գործի մեջ է մտնում» իր շահերի ու հետաքրքրությունների փաթեթով, ինչն ավելի է բարդացնում խնդիրը: Հակամարտ կողմերը ստիպված են լինում հաշվի առնել ոչ միայն ընդդիմախոսի, այլև միջ-

---

[39] Տե՛ս ***Стешов А.В.,*** Как победить в споре. О культуре полемики. Л., 1991, էջ 155:

[40] Վեճերի այլընտրանքային կարգավորման տեխնոլոգիա երրորդ՝ չեզոք և անկանխակալ կողմի մասնակցությամբ, որն անշահախնդիր կերպով օգնում է կողմերին մշակել հարցի երկուստեք ընդունելի լուծում: Հիմնվում է կամավորության, գաղտնապահության, փոխադարձ հարգանքի, կողմերի իրավահավասարության, մեդիատորի չեզոքության և անաչառության, արարողակարգի թափանցիկության սկզբունքների վրա:

նորդ կողմի թաքնված կամ անթաքույց շահերն ու հետաքրքրությունները:

4.3.4. Կառուցողական քննադատություն

Մտավոր պայքարն առանց քննադատական դիտարկումների, ընդդիմախոսի տեսակետի և փաստարկների մեջ եղած թերություններն ի ցույց դնելու հնարավոր չէ: Քննադատությունը որևէ տեսակետի, գաղափարի, դիրքորոշման քննարկումն է, վերլուծությունը՝ դրա թերությունների, խոցելի կողմերի, ինչպես նաև դրական տարրերի վերհանման նպատակով: Այն ենթադրում է ժխտողական, մերժողական դիրքորոշում դիտարկվող տեսակետի կամ դրա որոշ բաղադրիչների նկատմամբ: Սակայն միայն այդքանը մերկապարանոց կլինի և չի կարող ապահովել բանավեճի կառուցողական ընթացքը: Ավելին, այդպիսի վարքագիծը կարող է առաջ բերել դժգոհություն լսարանում, կարծրացնել ընդդիմախոսի կեցվածքը, հարմար առիթ տալ հակահարձակման համար: Կարևոր է, որ մերժողական դիրքորոշումը լինի փաստարկված, հիմնավորված խոսուն ու համոզիչ փաստարկներով: Սակայն ժխտողական դիրքորոշման համոզիչ փաստարկվածությունն էլ դեռևս բավարար չէ քննդատությունը կառուցողական համարելու առումով:

Կարևոր է նաև քննադատված-մերժված տեսակետի (դատողության, դրույթի) փոխարեն առաջարկել ավելի կատարյալ, ավելի ճիշտ և նպատակահարմար տարբերակը:

Պետք է առաջնորդվել ***ոչ միայն «ոչ», այլև՝ «ինչու՞ ոչ» և եթե «ոչ», ապա՝ «ինչ»*** բանաձևով: Այլապես, բանավիճողն կարող է մեղադրվել ոչ կառուցողականության, չարամիտ ժխտողականության մեջ: Եվ, որ էլ ավելի կարևոր է՝ նման գործելաոճը, նորանոր խոչընդոտներ հարուցելով, որևէ կերպ չի կարող նպաստել քննարկվող խնդրի լուծմանն ու առաջընթացին՝ սպառնալով բանավեճը վերածել դիրքային հակամարտության ու դատարկ լեզվակռվի:

4.3.5. Ճիշտ լսել-հասկանալու կարևորությունը

Հաղորդակցման և բանավեճի արդյունավետությունը երաշխավորող կարևոր պայմաններից մեկն էլ ընդդիմախոսին և, ընդհանրապես, ստացված տեղեկատվությունը ճիշտ հասկանալու ու մեկնաբանելու կարողությունն է:

Կարելի է առանձնացնել զրուցակցին լսել-հասկանալու առնվազն երեք տարբերակ: Հնարավոր է լսել և չհասկանալ, երբեմն էլ ձևացնել, թե հասկացել են: Կարելի է լսել և հասկանալ ասվածը: Սակայն կարելի է **լսել և հասկանալ ոչ միայն այն, ինչն ասված է, այլև այն, ինչը բացահայտ ասված չէ, սակայն կարելի է կռահել, բխեցնել լրացուցիչ վերլուծության արդյունքում**: Լսելու վերջին տարբերակը, որն, անշուշտ, լավագույնն է, ենթադրում է ելույթի տրամաբանական և ֆիզիկական համատեքստի, դրա ենթատեքստի, հեղինակի դիրքորոշման ու վարքի դրդապատճառների վերլուծության մեջ խորամուխ լինելու կարողություն:

Դրա համար անհրաժեշտ է պատասխանել ոչ միայն «ո՞վ ո՞ւմ է ասում», «ի՞նչ է ասում», «ինչպե՞ս է ասում» , այլև՝ **«ինչո՞ւ է ասում», «ե՞րբ», «ի՞նչ պայմաններում»** հարցերին:

Հաճախ «դիրքային» պայքարի մեջ մտնելու փոխարեն նախընտրելի է բացահայտել զրուցակցի (ընդդիմախոսի) մոտիվացիան, որը թույլ կտա ընտրել առավել դիպուկ, ազդեցիկ ու արդյունավետ փաստարկներ:

Փոխըմբռնման և անցակալի իրավիճակներից խուսափելու առումով արժեքավոր է նաև **վեճի հնդկական կանոնին** հետևելը: Այն խորհուրդ է տալիս՝ մինչև զրուցակցի, ընդդիմախոսի տեսակետը վերլուծելը, առավել ևս՝ քննադատելը նախ վերաշարադրել տեսակետը, ստանալ զրուցակցի համաձայնությունը, որ իրեն ճիշտ են հասկացել, հետո միայն անցնել դրա վերլուծությանն ու քննադատությանը:

Այդպիսի գործելակերպն արդարացված է երկու առումներով: Նախ՝ թույլ է տալիս ճիշտ հասկանալ զրուցակցին, բացառել թերի ըմբռնումներն ու թյուր մեկնաբանությունները: Եվ երկրորդ՝ ապահո-

վագրում է մեզ՝ ընդդիմախոսի կողմից իր տեսակետն ու դրույթները կամայականորեն փոփոխելու և իրեն չհասկանալու մեջ մեղադրելու անցանկալի գործելակերպից, երբ մեր քննադատական վերլուծությունն արդեն հնչել է:

Ուստի որոշակի դեպքերում նախընտրելի է մինչև զրուցակցի դրույթների քննադատությանն անդրադառնալը հարցնել. «Ես Ձեզ ճի՞շտ եմ հասկացել: Դուք պնդում եք այսպես և այսպե՞ս...», «Կարծում եմ՝ Ձեզ ճիշտ հասկացա: Դուք ուզում եք ասել, որ...», «Եթե Ձեզ ճիշտ եմ հասկացել՝ Ձեր ասածից հետևում է, որ...»: Եվ միայն այն դեպքում, երբ զրուցակիցը հաստատում է, որ իրեն ճիշտ ենք հասկացել, կարելի է անցնել նրա դրույթների վերլուծությանն ու քննադատությանը:

4.3.6. Հարց ու պատասխանի մշակույթ

Բանավեճի գործընթացում կարևոր դերակատարություն ունեն հարցերն ու պատասխանները:

Հարցը պետք է ձևակերպվի տվյալ լեզվի կանոններին համապատասխան, պետք է լինի պարզ և հասկանալի: Ցանկալի է բացառել բազմիմաստ բառերն ու արտահայտությունները: Հակառակ դեպքում անհրաժեշտ է դրանք հստակեցնել: Այլապես, հնարավոր են թյուրըմբռնումներ ու զավեշտալի իրավիճակներ:

Օրինակ: Լրագրողը հետևողականորեն հետաքրքրվում էր նորանշանակ վարչապետից, թե նախորդ վարչապետի «մարդկանցից» ովքեր են լինելու նոր կառավարության կազմում: Վարչապետը մեկերկու խուսափողական պատասխան տալուց հետո որոշեց հեգնել, թե նախորդ վարչապետը (որը տղամարդ էր) **կի՛ն** կարող է ունենալ, **մարդ** ունենալ չի կարող (հետևեց հավաքվածների ծիծաղը):

Հարցում եղած ոչ ճիշտ շեշտադրումները ևս կարող են ոչ միայն թյուրըմբռնման տեղիք տալ, այլև առիթ հանդիսանալ խուսափողական, երբեմն էլ՝ հեգնական պատասխանների:

Օրինակ: ԱՄՆ նախագահ Ա. Լինքոլնի աշխատակիցը մտնում է նրա սենյակ այն պահին, երբ նա մաքրում էր իր կոշիկները: Զարմացած աշխատակիցը դիմում է նախագահին.

– Դուք մաքրում եք Ձե՞ր կոշիկները:

Հետևում է նախագահի պատասխանը.

– Իսկ Դուք ուրիշի՞ կոշիկներն եք մաքրում:

Նույնատիպ իրավիճակ կարող են ստեղծել նաև անտեղին, ավելորդ հարցերը.

Բանկ է ներխուժում դիմակավորված կողոպտիչը և ավտոմատի փողն ուղղելով ներկաների վրա՝ գոռում.

– Պառկե՛լ: Արա՛գ: Սողացե՛ք այս պատից դեպի մյուսը:

– Կողոպո՞ւտ է, սըր,– հարցնում է վախեցած գանձապահուհին:

– Ո՛չ, սիրունիկս, հատակի մաքրում:

Երբ հարցերը շատ են, դրանք պետք է տալ հաջորդաբար՝ հնարավորություն ու ժամանակ տալով զրուցակցին մեկ առ մեկ պատասխանելու համար: Իսկ մեկ ելույթի մեջ մի քանի հարցեր զետեղելու պարագայում անհրաժեշտ է հստակ համարակալել ու շեշտադրել դրանցից յուրաքանչյուրը՝ ընդգծելով, որ դրանցից ամեն մեկի համար ակնկալվում է առանձին պատասխան:

Չի կարելի հարցերի տարափ տեղալ զրուցակցի գլխին, նրան «հարցախեղդ անել»՝ ասելով. «Դու՝ մտավորականդ, ինչպե՞ս կարող էիր այդպիսի հանցագործություն կատարել: Գուցե հանցակիցների պարտադրա՞նքն է եղել պատճառը: Եվ հետաքրքիր է իմանալ՝ ովքե՞ր են նրանք: Իսկ գուցե դրամի փա՞յլն էր գայթակղիչ: Խի՞ղճդ էր անզգայացել, թե՞ չէիր գիտակցում արարքիդ հետևանքները: Արդյոք չէի՞ր մտածում հարազատներիդ մասին»: Նման դեպքում կարելի է նույնքան ոչ աղեկվատ ու ոչինչ չասող պատասխան ստանալ. օրինակ՝ «Այո՛»:

«Новое время» թերթի թղթակիցը, նկարագրելով «հոկտեմբերի 27-ի» դատավարության նիստերից մեկը, որին մասնակցում էին ՀՀ Ազգային ժողովի տուժող ճանաչված պատգամավորները՝ գլխավոր մեղադրյալին հարցեր տալու համար, գրում է, որ այդ գործընթացը դիտող մարդկանց մոտ խիստ բացասական տպավորություն էր ստեղծվել ինչպես պատգամավորների հարցերից, այնպես էլ մեղադրյալի ոչ պարկեշտ պատասխաններից: Այդ երևույթը հետևյալ կերպ է մեկնաբանում Վազգեն Սարգսյանի իրավահաջորդների ներ-

կայացուցիչ Մ. Ջանոյանը. «Ի վերջո, պատգամավորներն արհեստավարժ իրավաբաններ չեն և հաճախ չեն իմանում, թե ինչպես կանոնավոր տալ հարցը, որպեսզի խուսափել անպատկառ պատասխաններից»: Լրագրողի մեկնաբանմամբ՝ հարց տալու համար հրավիրված պատգամավորները, ըստ էության, հարցի փոխարեն ցուցմունք էին տալիս, «նրանք պատմում էին, թե ինչ է տեղի ունեցել և դրա հիման վրա փորձում էին ինչ-որ բան իմանալ» («Новое время», 2001, №768):

Լինում են իրավիճակներ, երբ **ուղղակի տրված հարցը** էթիկական նկատառումներով կամ էլ հարց տվողի իրական նպատակները ի սկզբանե բացահայտելու առումով նախընտրելի չէ: Նման դեպքերում օգնության են գալիս **անուղղակի հարցերը:** Օրինակ՝ «Երբևէ դավաճանե՞լ եք Ձեր կնոջը» (առավել ևս՝ «Քանի՞ անգամ եք դավաճանել Ձեր կնոջը») հարցի փոխարեն կարող է տրվել «Ինչպե՞ս եք վերաբերվում դեպքերին, երբ հանգամանքների բերումով ամուսիններից մեկը դավաճանում է մյուսին» նրբանկատ հարցը, որը որոշակի ենթադրություններ անելու հիմքեր կարող է նախապատրաստել:

Անուղղակի հարցեր տալիս պետք է ճիշտ հաշվարկել տրվելիք պատասխանի արժեքավորությունը, արժանահավատությունը, դրա համապատասխանությունը հարցի հիմքում դրված նպատակին: Միջազգային կազմակերպությունների աջակցությամբ հայաստանյան ՀԿ-ներից մեկը 2004 թ. անցկացրել էր սոցիոլոգիական հետազոտություն բուհերում կոռուպցիոն երևույթները վեր հանելու նպատակով: Ստացված արդյունքների հիման վրա որոշ ԶԼՄ-ներ շտապեցին ահազանգել բուհերում կոռուպցիոն երևույթների աննախադեպ տարածվածության մասին: Ուսումնասիրության հեղինակները հարցմանը մասնակցած ուսանողներին չնեղացնելու և աղավաղված տեղեկություններ չստանալու նպատակով նրանց տվել էին ոչ թե ուղղակի («Երբևէ դրսևորե՞լ եք կոռուպցիոն վարքագիծ»), այլ անուղղակի հարց՝ «Արդյոք ձեր ֆակուլտետում կա՞ն կոռումպացված վարք դրսևորող ուսանողներ»[41]: Հասկանալի է, որ այդ հարցը կարող է վեր հա-

[41] *Տե՛ս* Կոռուպցիայի ընկալումը և ռիսկերը բարձրագույն ուսումնական հաստատություններում: ՄԱԶԾ, ՀՈՒՋ, Երևան, 2004, էջ 17:

նել միայն երևույթի մասին տեղեկացվածության ցուցանիշը, բայց ոչ երբեք՝ դրա տարածվածության, ինչպես հրապարակվել էր ԶԼՄ-ներում: Անշուշտ, երևույթի տարածվածության արժանահավատ ցուցանիշ կարելի էր ստանալ միայն անուղղակի հարցերի միջոցով, բայց ոչ այնպես, ինչպես դա արվել էր նշված հետազոտության մեջ: Ճիշտ կլիներ ռեսպոնդենտներին առաջարկել երկու հարց. ա)քանի՞ սովորող կա ձեր կուրսում և բ) քանի՞ ուսանող կա ձեր կուրսում, որոնք պարբերաբար դրսևորում են կոռուպցիոն վարքագիծ: Այս հարցերին ի պատասխան ստացված թվերի բաղդատման արդյունքում էլ կստացվեր հետաքրքրող ցուցանիշը: Արդարացված չէ նաև ուսանողներին առաջարկել կոռուպացվածության ցուցանիշի տեսանկյունից համեմատել կրթության, օրենսդիր և գործադիր իշխանության, տեղական ինքնակառավարման, առողջապահության, ոստիկանության, արդարադատության, մաքսային, հարկային և այլ ոլորտները, ինչպես կատարվել էր նշված հետազոտության մեջ[42]:

Ասելիքը զրուցակցին հասկանալի դարձնելու, ինչպես նաև ցանկալի ինֆորմացիան անուղղակի կերպով ստանալու համար **կարելի է ճշգրտել ու վերաձևակերպել հարցը:**

Վերջապես, **պատասխանը պետք է համապատասխանի հարցի բովանդակությանը:** Հակառակ դեպքում խախտվում է նույնության օրենքը (որոշակիության պահանջը): Այդպիսի պայմաններում կանոնավոր փաստարկում և արդյունավետ բանավեճ վարելը դառնում է անհնար:

4.3.7. Խոսքի մշակույթ

Խոսքի որակը ոչ միայն սուբյեկտի մտավոր կարողությունների որոշակի ցուցանիշ է, այլև յուրօրինակ «այցեքարտ» կյանքի տարբեր իրավիճակներում:

Խոսքի մշակույթը կոնկրետ պայմաններում այնպիսի լեզվական միջոցներ ընտրելու և գործածելու կարողությունն է, որը թույլ է տալիս ապահովել առավելագույն արդյունավետություն հաղորդակցման ըն-

[42] Տե՛ս նույնը, էջ 15:

թացքում: Այլ կերպ ասած՝ խոսքի մշակույթը միտքն արտահայտելու համար առավել ճիշտ բառերի և տվյալ լեզվական համակարգին բնորոշ քերականական (ձևաբանական, շարահյուսական) կառույցների, տրամաբանական և ոճական միջոցների գործածման կարողությունն է:

Մայրենի լեզվի նկատմամբ «հոգատար ու հարգալից» վերաբերմունքը նաև քաղաքացիական որոշակի կեցվածքի, ազգային արժեքների նկատմամբ վերաբերմունքի ու հայրենասիրության արտահայտություն է:

Խոսքը կարող է լինել ինչպես ըմբռնելի, այնպես էլ՝ անըմբռնելի, ճիշտ կառուցված կամ անփույթ, տեղին կամ անտեղին, դիպուկ կամ ոչ դիպուկ, տրամաբանված և անտրամաբանական, հարուստ և աղքատ, ինքնատիպ և շտամպավորված (տրաֆարետային):

Ընդհանուր առմամբ խոսքի որակը էապես պայմանավորված է մտածողության որակով և ընդհակառակը: Լեզվի և մտածողության կապի առանձնահատկությունը մեկնաբանող՝ Գ. Բրուտյանի **լեզվաբանական լրացչության սկզբունքի համաձայն**՝ միտքն արտահայտող բառերի (լեզվական թաղանթի) վերլուծությունը լրացուցիչ ինֆորմացիա է տալիս մտքի առարկայի ընկալման, արժեքավորման, դրա նկատմամբ սուբյեկտի ենթագիտակցական վերաբերմունքի մասին[43]:

Գեղեցիկ, դիպուկ, մասնագիտորեն գրագետ շարադրված խոսքը բարձրացնում է խոսողի հեղինակությունը, նրա նկատմամբ վստահությունն ու հարգանքը: Հակառակ դեպքում տուժում են թե՛ խոսողի և թե՛ նրա կողմից ներկայացվող կառույցի հեղինակությունն ու վարկը:

Չի կարելի շփոթել *ընկալումը ըմբռնման* հետ, *ավելորը արվեստագիտության* հետ, *գենդերը տենդերի* հետ և այլն: Պետք է հնարավորինս խուսափել ոչ նորամտիվային (գրական լեզվի կանոններից շեղվող) խոսքի դրսևորումներից ու ժարգոնային արտահայտություն-

---

[43] Լեզվաբանական լրացչության հայեցակարգի մասին տե՛ս ***Բրուտյան Գ. Ա.,*** Փիլիսոփայություն և լեզու: Եր., 1972, էջ 117-144:

ներից (ինչպես օրինակ՝ «ընդդիմախոսը բլեֆ է անում», «տափածի մեկն է», «ղալա՛թ ես արել», «մուտիտ անել», «յուղ վառել» և այլն):

Նման դեպքերում լսողների մոտ առաջանում է բացասական ռեակցիա, անվստահություն ելույթ ունեցողի և նրա դրույթների նկատմամբ, հօդս է ցնդում հարգանքը, ձևավորվում է կասկած նրա մասնագիտական գիտելիքների վերաբերյալ:

Տարբեր են նաև բանավոր և գրավոր խոսքին ներկայացվող պահանջները: Գրավոր խոսքին, որպես կանոն, ավելի բնորոշ է պաշտոնական ոճը: Այստեղ ավելի շատ են հանդիպում մասնագիտական տերմիններն ու հասկացությունները: Իսկ բանավոր ելույթների դեպքում, սովորաբար, կիրառվում է ավելի հարուստ բառապաշար, գեղարվեստական արտահայտչամիջոցներ, կարևորվում են առոգանությունը, ձայնը, տեսողական կոնտակտը զրուցակիցների հետ, ժեստերը:

Լեզվի քերականական նորմերի ու պահանջների պահպանումը խոսքի մշակույթի հենքն է: Դրանց հանգամանալից շարադրանքը կարելի է գտնել համապատասխան դասագրքերում և լեզվաբանական աշխատություններում: Սակայն կան նաև խոսքի որակն ապահովող **արտաքերականական գործոններ**, որոնք պակաս կարևոր չեն հաղորդակցման արդյունավետությունն ապահովելու առումով:

Այդ գործոններից մեկը **խոսքի պարզությունն ու հասկանալիությունն է:**

19-20-րդ դդ. իրավաբանական մտքի և դատական ճարտասանության երախտավորներից մեկը՝ Պյոտր Սերգեիչը (Պորոխովշչիկով), խորհուրդ է տալիս «խոսել ոչ թե այնպես, որ Ձեզ կարողանա հասկանալ դատավորը, այլ այնպես, որ նա չկարողանա Ձեզ չհասկանալ»[44]:

Խոսքի պարզությունը պայմանավորված է նյութի խորը իմացությամբ, ելույթի հստակ (ընդդիմախոսի և ունկնդիրների համար ըմբռնելի) կառուցվածքով, շարադրանքի տրամաբանական կանոնավորությամբ, փաստարկների համոզչականությամբ:

---

[44] ***Сергеич П.,*** Искусство речи на суде. М., 1988, էջ 18:

Երբեմն խոսքը խճճվում է դերբայական դարձվածների ոչ ճիշտ ձևակերպման կամ դրանք կիրառել չկարողանալու, «խոտան» (հաճախ կրկնվող, սակայն՝ անհարկի ու ավելորդ) բառերի գործածման պատճառով:

Օրինակ: Էլեկտրոնային լրատվամիջոցի 2018 թ. տարածած տեղեկությունը վերնագրված էր. *«Ուսրիկանների, քննիչների ու ՀՀ ՊՆ Ռազմական ոստիկանության ծառայողների կողմից Երևանում առանձնակի դաժանությամբ սպանություն կատարած ու հայրենաբերված 20-ամյա զինծառայողը կալանավորվեց»:* Մի պահ տպավորություն է ստեղծվում, թե սպանություն կատարողները ոստիկանները, քննիչներն ու ՌՈ ծառայողներն են:

Մտքերի անփույթ, խճողված շարադրանքի ուշագրավ հատված կա Ա. Չեխովի «Դու և Դուք» հումորային պատմվածքում.

- Իսկ ի՞նչ կարիք կար մեր միջամտության: Իր կինն է, ինքն էլ դաստիարակում է... Երբ երկուսը կռվում են, երրորդը չպետք է խառնվի... Աբրամկան սկսեց հանգստացնել նրան, որ գինետրանն այլանդակություններ չանի, իսկ նա հագցրեց Աբրամկայի ականջին: Աբրամկայի աշխատողն էլ՝ նրան... Իսկ նա բռնեց նրան, բարձրացրեց ու գետնով տվեց... Այդ ժամանակ նա հեծավ նրան ու սկսեց մեջքին թմբկահարել... Մենք նրա ուրքերից քաշելով հանեցինք մյուսի տակից:

– Ո՞վ՝ ո՞ւմ:

– Պարզ է՝ ում... Ում վրա հեծել էր:

– Ո՞վ:

– Դե հենց նա, ում մասին պատմում եմ:

Տպավորիչ խոսքի մյուս կարևոր որակը **ճշգրտությունն է:**

Պետք է առանձնացնել ճշգրտության երկու տեսանկյուններ՝ **բովանդակային և լեզվական: Բովանդակային ճշգրտությունը** ցույց է տալիս, թե միտքը որքանով է ճիշտ արտացոլում (ներկայացնում, բնութագրում) իրականությունը, տվյալ երևույթը: **Լեզվական ճշգրտությունը** ցույց է տալիս, թե որքանով են խոսքը, ընտրված բառերն ու արտահայտչամիջոցները ճիշտ արտացոլում միտքը: Այս եր-

կու բաղադրիչներն էլ խիստ կարևոր են խոսքի ճշգրտությունն ապահովելու առումով:

Ցավոք թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքում հաճախակի են բառերի սխալ գործածության դեպքերը, մտքի անհաջող ձևակերպումներ: Եվս երկու օրինակ էլեկտրոնային լրատվամիջոցների տարածած հաղորդագրություններից. «Արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը կասկածի տակ է դնում ԼՂ հարցով ԵԽԽՎ զեկուցողի կողմնակալությունը» (իհարկե, ճիշտ կլիներ ասել՝ **կասկածի տակ է դնում անկողմնակալությունը**), «Հարցը պետք է քննարկել իրավական կոնտեքստի ենթատեքստում» (պարզապես պետք էր ասել՝ հարցը պետք է քննարկել **իրավական համատեքստում**): Պոպ ժանրի հայտնի երգերից մեկում ասվում է. «Հիմա եկել, ի՞նչ ես մեղանչում»: Տեքստի հեղինակն ակնհայտորեն շփոթել է **մեղանչել-մեղք գործել** արտահայտությունը **զղջալ, ապաշխարհել, գուցե նաև՝ աղաչել** արտահայտությունների հետ:

Չի կարելի շփոթել, օրինակ, *հասկացություն* և *հասկացողություն*, *բավարար* և *բավական*, *իրազեկություն* և *իրավասություն*, *արժանանալ* և *ստանալ*, *ընկալում* և *ըմբռնում*, *զգայություն* և *զգացողություն* հասկացությունները: Ահավասիկ մի աղյուսակ՝ բառերի ու հասկացությունների սխալ և ճիշտ գործածման օրինակներով:

Աղյուսակ 1

Բառերի ու հասկացությունների սխալ և ճիշտ գործածման օրինակներ

Սխալ տարբերակ	**Ճիշտ տարբերակ**
Ազատ հայրենիքի *հասկացողությունը* մշտապես առաջնորդել է հայդուկներին:	Ազատ հայրենիքի *գաղափարը (այսինքն՝հասկացությունը)* մշտապես առաջնորդել է հայդուկներին:
Նրա կինը *բավարար* գեղեցիկ է:	Նրա կինը *բավականին* գեղեցիկ է:
Երկրում *բավարար* բարձր է *հանցագործությունների* մակարդակը:	Երկրում *բավական(ին)* բարձր է *հանցավորության* մակարդակը:
Տուժողը մեղադրյալի կողմից *արժանացել է* մարմնական վնասվածքների:	Մեղադրյալը տուժողին *պատճառել է* մարմնական վնասվածքներ:
Այդ հարցերը չեն մտնում մեր կազմակերպության *իրազեկության* շրջանակների մեջ:	Այդ հարցերը չեն մտնում մեր կազմակերպության *իրավասության* շրջանակների մեջ:

Առանց որևէ պայմառի, խուլիգանական մղումներով նա վիրավորել է տուժողներին:	*Խուլիգանական դրդումներով* նա վիրավորել է տուժողներին:

Խոսքի հաջորդ արժեքավոր որակը **տեղին լինելն է:** Այսինքն՝ համապատասխանությունը սահմանված նպատակին, թեմային, խնդիրներին, իրավիճակին, ժամանակին, ձևավորված ֆիզիկական կամ տրամաբանական համատեքստին:

Միշտ չէ, որ գեղարվեստորեն համեմված խոսքը տեղին է ու արդյունավետ: Նպատակահարմար չէ, օրինակ, Ազգային ժողովի ամբիոնից ներկայացվող ելույթը ծանրաբեռնել անհարկի պերճախոսություններով, մակդիրներով, այլաբանություններով, խոսքին ավելորդ հուզականություն հաղորդող պատկերավորման միջոցներով: Սգո արարողության պարագայում տեղին չէ «բարի օր» կամ «բարով տեսանք» ողջույնը: Դատական բանավեճի ընթացքում տարակուսանք կարող է հարուցել տուժողի վնասվածքները բնութագրելիս փաստաբանի «ստացել է ահավոր վերքեր» ձևակերպումը: Տվյալ դեպքում նախընտրելի է իրավական բառամթերքում կիրառվող՝ «ծանր մարմնական վնասվածքներ» արտահայտությունը:

Խոսքի արժանիքներն ավելացնող կարևոր որակներից մեկն էլ **մաքրությունն է՝ զերծ լինելը բարբառային դրվագներից, ժարգոնային արտահայտություններից, խոտան բառերից, սխալ շեշտադրումներից, «ը՞-ը՞-ը՞»-երից ու «ա՞-ա՞-ա՞»-երից:**

Ժարգոնային արտահայտությունների (ինչպես օրինակ՝ *ԿԺԺալ* - զվարճանալ, *գցել* - խաբել, ուրիշի ունեցվածքը յուրացնել, *խոխմա* - հումոր, կատակ, զվարճալի) անցանկալիության մասին խոսելն ավելորդ է: Դրանք, ինչպես նաև բարբառային դրվագները տեղին կարող են լինել թերևս միայն բառացի մեջբերումներ ու վկայակոչումներ անելու դեպքում:

Նույնքան անցանկալի է նաև մտածելու, բառը մտաբերելու նպատակով խոսքի ակամա դադարները «ը՞-ը՞-ը՞»-երով ու «ա՞-ա՞-ա՞»-երով լրացնելու սովորույթը: Այդպիսի դեպքերում, ինչպես Պ. Սերգեիչն է արտահայտվում, լսարանում նստած մարդկանց

«ականջները թառամում են»[45], իսկ նյարդերը՝ ձգվում: Նախընտրելի է պարզապես լուռ խորհելն ու մտածելը, քան դադարն անիմաստ ձայնարկություններով լցնելը:

Բավականին հաճախ են հանդիպում տարատեսակ **ավելորդաբանություններն ու խոտան արտահայտությունները,** որոնք ևս ունակ են փչացնել խոսքից ու ելույթից ստացված տպավորությունը: Դրանք պետք է դիտարկել որպես վատ սովորություն, երբ խոսողը հաճախակի և միանգամայն անտեղի կրկնում է տվյալ արտահայտությունը: Օրինակ՝ «Հայաստանի երրորդ հանրապետության Սահմանադրությունը, հա՞, ընդունվել է 1995 թվականին: Եվ, ինչպես հայտնի է, հա՞, այն բարեփոխվել է 2005 թվականին: 2015 թ., հասկանում եք, տեղի ունեցան նոր փոփոխություններ, ընդունվեց նոր Սահմանադրություն: Հիմա, ուրեմն, խոսքը գնում է նոր ինչի՞...՝ փոփոխությունների մասին, այո՞»: Տվյալ դրվագում «հա՞»-երի, «ուրեմն»-ների և «հասկանում եք»-ների փոխարեն կարող էին լինել «չէ՞»-եր, «հետևաբար»-ներ... Դրանից գործի էությունը չէր փոխվի: Դրանք ավելորդ, խոսքն անհարկի ձգձգող, բովանդակային առումով ոչինչ չասող և տպավորությունը փչացնող արտահայտություններ են:

Խոտան բառերի կապակցությամբ տեղին է հիշել մի հին անեկդոտ: Տերտերին հացի են հրավիրում: Իսկ տերտերը, որ շատ էր ձգտում մյուսներից առանձնանալ իր «հարուստ» բառուբանով, յուրահատուկ խոսելաոճով, արձագանքում է. «Նամանավանդ ձիս կապեմ, գամ»…

Խոսքի ամենակարևոր արժանիքներից մեկն էլ **լակոնիկությունն է՝ հակիրճ ու սեղմ, միաժամանակ ամփոփ լինելը:** Հայտնի ասացվածքն ասում է. «Հակիրճությունը տաղանդի քույրն է»:

Ոմանք կարծում են, թե լակոնիկությունն ապահովվում է կարճ արտահայտությունների ու նախադասությունների միջոցով, քանզի դրանք հեշտ են հիշվում: Լակոնիկ խոսել, չի նշանակում զերծ մնալ շարահյուսական բարդ կառույցներից՝ դերբայական դարձվածներով ու մակբայներով, համասեռ ու ստորադաս անդամներով նախադա-

[45] ***Сергеич П.,*** նշվ. աշխ., էջ 51:

սություններ կազմելուց: Եթե հռետորը խոսում է ըստ էության, ապա այդ միջոցները կարող են նպաստել խոսքի վարպետության դրսևորմանը:

Խոսքի լակոնիկությունը հիմնականում ձեռք է բերվում մտքերի ճշգրիտ արտահայտման, հստակ ձևակերպման, անիմաստ ու անհարկի բառեր չգործածելու, շատախոսության և ավելորդ արտահայտությունների բացառման շնորհիվ:

Շատախոսության հաճախակի հանդիպող տարատեսակ է **պլեոնազմը** (հուն.՝ ավելորդություն)՝ ավելորդաբանության այն տարբերակը, երբ բառակապակցության մեջ իրար հաջորդող բառերն իմաստային առումով կրկնում են միմյանց: Պլեոնազմ պարունակող արտահայտություններ են. «տեղափոխվել ապրելու հյուրանոցում» (բավական է ասել՝տեղափոխվել հյուրանոց), «ոտքով քայլել» (բավական է ասել՝ քայլել), «հարյուր դրամ փող», (պարզ է, որ հարյուր դրամն այլ բան լինել չի կարող, քան՝ փող, ուստի՝ «հարյուր դրամ» բառակապակցությունն այլևս հավելման կարիք չունի), «Հարյուր հոգի մարդ էր հավաքվել» (այստեղ էլ «հոգի» և «մարդը» բառերից մեկն ավելորդ է), «Հավաքվենք, մի հատ նստենք, տեսնենք՝ ինչ ենք որոշում» («մի հատ նստենք» բառակապակցությունն ավելորդ է): Նույնպիսի սխալ են պարունակում «առաջին պրեմիերա», «նորից կրկնել», «մթնոլորտային օդ», «ետ վերադառնալ», «ներկրել Հայաստան արտասահմանից», «ինքնախոստովանական ցուցմունք», «քաղաքական գործիչը, որը, որ...», «Ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներս բերելու դեմ արձանագրություն»[46] բառակապակցությունները:

Անհրաժեշտ է նկատել նաև, որ որոշ պլեոնազմներ, շարունակ գործածվելով, ամրագրվել, կարծրացել են լեզվական համակարգում և սխալ չեն համարվում, օրինակ՝ «իջնել ներքև», «վեր բարձրանալ»: Երբեմն էլ դիտարկվող սկզբունքով կառուցված բառակապակցությունը նպատակ ունի կարևորել ու ընդգծել հիմնական հասկացու-

[46] Այդպես է կոչվում Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=76203 (դիտումը՝ 24.09.2019 թ.):

թյան բովանդակության կամ ծավալի այս կամ այն բաղադրիչը, ուստի որոշ դեպքերում արդարացված է նաև այդպիսի պլեոնազմների կիրառությունը: Օրինակ՝ «մասնակցային ժողովրդավարություն», «կանանց իրավունքներ և ազատություններ», «արվեստի և կինոյի պատմություն», «հռետորիկայի և դատական ճարտասանության պատմություն»:

Բայց դա չի նշանակում, որ պետք է նորմալ համարել, առավել ևս՝ խրախուսել անհարկի բառաբարդումներն ու շարադրանքի բարդացումները: *«Հանրային ծառայողի մասին» ՀՀ օրենքում ամրագրված է. «Հանրային ծառայողը, ծառայության առանձնահատկություններին համապատասխան, ծառայողական պարտականությունները կատարելիս քաղաքականապես չեզոք է»* (հդվ.27 կ.2): Ճիշտ կլիներ ձևակեպել. *«Հանրային ծառայողը պաշտոնեական պարտականությունները կատարելիս քաղաքականապես չեզոք է»:*

Խոսքն ավելի տպավորիչ ու ազդեցիկ է, երբ լակոնիկությունը համադրվում է խոր և լսարանի հուզական աշխարհի վրա ներգործող բովանդակության հետ: Այդպիսի արդյունքի հասնելու համար խոսքը պետք է օժտված լինի **արտահայտչական (էքսպրեսիվություն[47]) և հուզական որակներով**: Այդ որակները պայմանավորված են հռետորի մտածողության ինքնատիպությամբ, իր դրույթների ճշմարտացիության և արդարացիության մեջ համոզվածությամբ և իր համոզմունքը վառ ու պատկերավոր խոսքի միջոցով զրուցակիցներին փոխանցելու կարողությամբ:

Սակայն խոսքի հուզական ու արտահայտչական որակները, ինչպես արդեն նշվեց, պետք է լինեն չափի մեջ: Դրանք արդյունավետ ու տեղին են այն դեպքում, երբ ծառայում են ելույթի բովանդակությունն ավելի համոզիչ դարձնելուն, մտքի առավել կարևոր դրվագներն ընդգծելուն, դրանց վրա ընդդիմախոսի և ունկնդիրների ուշադրությունը բևեռելուն: Հակառակ դեպքում, երբ պերճախոսական հնարները (այդ թվում նաև ձայնը, դիմախաղը, ժեստերը) համադրված չեն պատշաճ բովանդակությամբ և կրում են ավելի շատ

[47] Expressio - լատ.՝ արտահայտում:

ձնական բնույթ, կարող են ունենալ հակառակ ազդեցություն՝ առաջ բերելով ունկնդիրների տարակուսանքը, քամահրական ժպիտն ու դժգոհությունը:

Տպավորիչ խոսքի կարևորելի որակներից մեկն էլ **բառապաշարի հարստությունն է, արտահայտչամիջոցների բազմազանությունը:**

Բառապաշարը հարստացնելու համար լավ միջոց է գեղարվեստական գրականության ընթերցումը: Հատկանշական է, որ տպավորիչ խոսքով առանձնացող քաղաքական գործիչները, դատական, ակադեմիական ճարտասանության ոլորտի երևելի ներկայացուցիչները պրակտիկ գործունեությունը համատեղել են գիտական և կամ գրական ու գրականագիտական գործունեության հետ[48]: Բառապաշարը հարստացնելու մյուս արդյունավետ միջոցը **հոմանիշների և բացատրական բառարանների ընթերցումն է**: Վերջապես լավ միջոց է նաև **հոմանիշների ու հականիշների շարքեր կազմելու, համանունների հետ գործառնություններ պահանջող վարժություններ կատարելը**[49]:

4.4. Պերճախոսական հնարներ

Բազմաթիվ են խոսքը գեղեցկացնող, ասելիքի կարևոր հատվածներն ընդգծող, մտքերի հստակեցմանն ու լսարանի կողմից դրանց ըմբռնմանը նպաստող պերճախոսական հնարները: Հաղորդակցման տարբեր ձևերի, մասնավորապես բանավեճի ընթացքում դրանց հմուտ ու տեղին կիրառությունը էապես ավելացնում է բովանդակային և հոգեբանական ներգործության ուժը, խորացնում տպավորությունը:

---

[48] Տե՛ս ***Հովհաննիսյան Հ. Օ.,*** Փաստարկում և հռետորություն: Եր., 2015, էջ 120:

[49] Այդպիսի վարժություններ միշտ էլ կարելի է գտնել տարատեսակ շտեմարաններում: Տե՛ս, օրինակ, ***Դեմիրճյան Ա., Ջուլֆայան Ռ.:*** Հայոց լեզվի վարժությունների և առաջադրանքների շտեմարան: Եր., 2014: Տե՛ս նաև ***Ավետիսյան Յու.,*** Հայոց լեզու և խոսքի մշակույթ: Գիրք Ա, Եր., 2014:

4.4.1. Կրկնություն

Կրկնությունը պետք է տարբերել կրկնաբանությունից: Վերջինը տրամաբանական սխալ է: Կրկնությունը թույլ է տալիս խոսքի որոշակի հատվածի վրա կենտրոնացնել ընկդիմախոսի և լսարանի ուշադրությունը, ընդգծել առանձին դրվագների կարևորությունը, հեշտացնել էական հատվածների մտապահումը և ավելացնել խոսքի ներգործող ուժը:

Կրկնությունները կարող են լինել պարզ և բարդ, անընդհատ և մերթ ընդ մերթ (միջակայքային):

Պարզ կրկնության դեպքում տվյալ միտքը, գաղափարը կրկնվում է նույն բառերի ու արտահայտությունների միջոցով: **Օրինակ՝** *«Ուշադրությո՛ւն, ուշադրությո՛ւն: Մեկ անգամ ևս՝ ուշադրությո՛ւն»:*

Բարդ կրկնության պարագայում տվյալ միտքը, գաղափարը կրկնվելիս ներկայացվում է տարբեր բառերի ու նախադասությունների միջոցով: **Օրինակ՝** *«Ուշադրությո՛ւն: Առանց դասի թեմայի վրա ուշադրությունը կենտրոնացնելու, դրա հիմքերի մեջ խորանալու Դուք պարապմունքից շատ բան յուրացնել չեք կարող: Թե՛ արևմտյան, թե՛ արևելյան կրթական համակարգերում, դրանց միջև որոշակի տարբերություններով հանդերձ, ուշադրության կենտրոնացումը համարվում է ուսումնական գործընթացի արդյունավետության անհրաժեշտ պայման: Հիրավի, տեղին է այն համեմատությունը, երբ երևույթը մեկնաբանվում է հաղորդակի և ռադիոընդունիչի օրինակով. եթե հաղորդակը ռադիոալիքները ստեղծում է մի հաճախականությամբ, իսկ ընդունիչը «նստած է» մեկ այլ հաճախականության վրա, հաղորդակցումն անհնար է...»:*

Անընդհատ կրկնությունը ենթադրում է խոսքի տվյալ հատվածում տվյալ դրույթի անմիջականորեն իրար հաջորդող կրկնություններ, ինչպես դա կատարվել է վերը դիտարկվող օրինակներում:

Մերթ ընդ մերթ (միջակայքային) կրկնության դեպքում տվյալ միտքը կրկնվում է ոչ թե անընդհատ, այլ որոշակի միջակայքերով (ինչպես, օրինակ, երգի կրկներգը): Ահավասիկ մի դրվագ զոհված

մարտիկների հիշատակին նվիրված՝ Գեղամ Սարյանի «Սերմնացանները չդարձան տուն» ստեղծագործությունից .

Հոգնած նայում եմ ես ճամփաներին -
Սերմնացանները չդարձան տուն.
Հանգան շողերը լուռ կատարներին -
Սերմնացանները չդարձան տուն:
…
Լույսերը վառվեցին խրճիթներում -
Սերմնացանները չդարձան տուն.
Ահեղ լռություն է ճամփաներում -
Սերմնացանները չդարձան տուն…

4.4.2. Պատկերավոր խոսք

Մարդն ունի մտածողության երկու եղանակ՝ մտապատկերային և հասկացութային: **Մտապատկերը** զգայական ճանաչողության ձև[50] է, որը մարդու գիտակցության մեջ վերարտադրում է ճանաչողության առարկայի այն հատկությունները, որոնք առավել վառ են տպավորվել: Այստեղ տարբերակված չեն էական և ոչ էական հատկությունները: **Հասկացությունը** վերացական-տրամաբանական իմացության ձև է և գիտակցության մեջ ամրագրում է միայն էական և ընդհանուր հատկությունները:

Մտապատկերային մտածողություն ունեն բոլորը՝ փոքր երեխայից մինչև իմաստուն այր: Հասկացութային մտածողություն ունեն միայն հասուն և որոշակի իմացական կարողություններ ունեցող մարդիկ: Վերջիններից էլ ոչ բոլորը կարող են առանց հոգնելու հետևել վերացական հասկացություններով ու տերմիններով հագեցած խոսքին: Ուստի կարևոր է կարողանալ ասելիքը մատուցել նաև պարզ և տպավորվող պատկերների միջոցով:

[50] Մտապատկերը երբևէ ընկալված առարկայի զգայական կերպարի վերարտադրությունն է գիտակցության մեջ այդ առարկայի բացակայության պայմաններում (երբ առարկան անմիջականորեն չի ներգործում զգայարանների վրա):

Դեյլ Քարնեգին, ընդգծելով պատկերավոր խոսքի կարևորությունը, գրում է. «Գոյություն ունի ուշադրություն գրավելու բացառիկ կարևոր մի եղանակ, որը սակայն արհամարհվում է: Միջակ հռետորը, ըստ երևույթին, չի էլ ենթադրում դրա գոյությունը: … Պատկերներ, պատկերներ, պատկերներ: … Հարստացրե՛ք դրանցով ձեր խոսքը. և՛ հետաքրքիր կլինի ձեզ լսել, և՛ դուք մեծ ազդեցություն կունենաք: Երբևէ նկատե՞լ եք, որ սերնդե-սերունդ փոխանցվող գրեթե բոլոր ասացվածքներն առաջ են բերում կենդանի պատկերներ»[51]:

Փաստաբան Մ. Մ. Տետելբաումը բամբասանքի երևույթը ներկայացնում է հետևյալ համեմատությամբ. *«Բամբասանքն իմ պատկերացմամբ սև ու մազմզոտ սարդ է: Նա դուրս է սողում բամբասողի գարշահոտ բերանից ու սկսում է հյուսել, պատել մարդկանց կպչուն, կեղտոտ սարդոստայնով... Բամբասողը հաշվենկատ է. անգամ բացարձակապես անհիմն մեղադրանքը ազնիվ մարդուն ցավալիորեն կվիրավորի, ցավ կպատճառի, կիսլի առողջությունը, կյանքի տարիները: Բամբասանքը նման է մարդու վրա նետված ցեխագնդի. ժամանակի ընթացքում գունդը չորանում է, իսկ հետքը՝ մնում»*[52]:

Արտագաղթի վտանգների մասին խոսելիս կարելի է վկայակոչել տնտեսական մտահոգիչ ցուցանիշներ, ասել, որ արտագաղթողների հիմնական մասը կազմում են աշխատունակ քաղաքացիները և վերատադրողական տարիքի երիտասարդները, որ խախտվում է ժողովրդագրական հավասարակշռությունը, աշխատողների և թոշակառուների նորմալ հարաբերակցությունը, թուլանում է երկրի պաշտպանունակությունը: Սակայն ոչ պակաս, գուցե և ավելի տպավորիչ կարող է լինել ասելը, որ *արտագաղթը մեր հայրենիքի կտրված զարկերակն է, որը, անընդհատ արտահոսելով, արնաքամ է անում մեր հայրենիքը*[53]:

---

[51] ***Карнеги Д.,*** Как вырабатывать уверенность в себе и влиять на людей, выступая публично. Ереван, 1989, էջ 69:

[52] Ըստ՝ ***Ивакина Н.Н.,*** Основы судебного красноречия (риторика для юристов). М., 2007, էջ 95:

[53] Իր ելույթներում արտագաղթի մասին խոսելիս այդպիսի տպավորիչ համեմատություններ («ազգին մարմնին վրայ կոտտացող սարսափազդու վէրք մը», «ազգի ներքին արիւնահոսութեան») է գործածում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ 1-ինը:

Պատկերավոր խոսքի հնարավորությունները գործածելիս պետք է զգույշ լինել, ճիշտ գնահատել լսարանի ճաշակը և չափի զգացում ունենալ գեղագիտական ու էթիկական սկզբունքները չխախտելու համար: Օրինակ՝ մարդու համառությունն ու հաստատակամությունը բնութագրելու համար կարելի է գործածել «պողպատե կամքի տեր է», «չինական պարսպի պես աննկուն խառնվածք ունի», սակայն անընդունելի է «էշի պես համառ է» ձևակերպումը:

4.4.3. Հռետորական հարց

Արտաքինից հարցական նախադասություն է, սակայն ըստ էության արտահայտում է որոշակի դատողություն: Այս միջոցին են դիմում սեփական դատողությունների կապակցությամբ ընդդիմախոսի և լսարանի լռելյայն կամ բարձրաձայն համաձայնությունն ու աջակցությունը ստանալու նպատակով: Սովորաբար այս հնարը գործի է դրվում, երբ լսարանում կա որոշակի ընդհանուր կարծիք ու տրամադրվածություն:

Օրինակ՝ *«Մի՞թե կարելի է հավատալ անուղղելի խաբեբայի հավատրիացումներին»:* Երբեմն էլ, ազդեցությունն ուժեղացնելու համար, հռետորը հարցից հետո բարձրաձայն կարծես հաստատում է ունկնդիրների գիտակցության մեջ ինքնաբերաբար առաջ եկած պատասխանը (բարդ կրկնություն): **Օրինակ՝** *«Կարո՞ղ ենք մենք՝ 1915 թ. ցեղասպանության զոհերի ժառանգներս, մոռանալ և սերունդների հիշողությունից ջնջել անմարդկային հանցագործության այդ փաստը: Ո՛չ: Չե՛նք կարող:»*

Քննարկվող առումով տիպական են և բարձրաճաշակ Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» ստեղծագործության հետևյալ տողերը.

Նըստած է Շահը. նըրա առաջին
Ահա իրիկվան քեֆի սեղանը...

---

http://www.armenianorthodoxchurch.org/archives/3337;
http://www.armenianorthodoxchurch.org/archives/3413 (դիտումը՝ 28.06.2019):

...
Ու լի դառնությամբ հարցնում է նա
Դալուկ, մարմարիոն Թմկա տիրուհուն.
— Պարսախան տո՛ւր ինձ, մարդիկ սևաչյա,
Մի՞թե Թաթուլը քաջ չէր ու սիրուն...
— Քաջ էր ու սիրուն քեզնից առավել.
Մի բարձր ու ազնիվ տղամարդ էր նա.
Կնոջ մարդությամբ ամրոց չէր առել,
Չէր եղել կյանքում երբեք խաբեբա...

Ահավասիկ մի հատված իր քաղաքական հակառակորդ Կատիլինայի[54] դեմ Մ. Ցիցերոնի մեղադրաճառից.

«Մինչև ե՞րբ պիտի, վերջապես, չարաշահես մեր համբերությունը, Կատիլինա: Դեռ երկա՞ր պիտի համառես քո վայրի խելագարությամբ: Մինչև ե՞րբ դու, վերջապես, մոռանալով ամեն չափ ու սահման, պիտի գոռոզանաս քո հանդգնությամբ: ... Մի՞թե դու չես նկատում, որ կաշկանդված ես, քանզի այստեղ բոլորը գիտեն քո դավադրության մասին: ... Օ՜, ժամանակներ, օ՜, բարքեր: Քեզ, Կատիլինա, վաղուց էր պետք կոնսուլի հրամանով մահապարժի ենթարկել: Եթե պատվարժան Պուբլիոս Սցիպիոնը՝ գերագույն քուրմը, չգրավելով պետական որևէ պաշտոն, կարողացավ սպանել Տիբերիոս Գրակքոսին, որը փորձում էր միայն աննշան կերպով փոխել պետական կարգը, ապա մի՞թե մենք, օժտված կոնսուլական արժանապատվությամբ, պետք է հանդուրժենք Կատիլինային, որը պատրաստվում է ամբողջ աշխարհը ողողել արյունով, ոչնչացնել կրակով և անապատի վերածել այն»[55]*:*

---

[54] Լուցիուս Սերգիուս Կատիլինա (Ք.ա. 108-62 թթ.) – դատարանի որոշմամբ չկարողանալով առաջադրվել կոնսուլական ընտրություններում՝ դավադրություն է կազմակերպել իշխանությունը ուժով զավթելու համար: Ցիցերոնի պահանջով հեռացվել է Հռոմից և խռովություն բարձրացնելով՝ ռազմական բախման ժամանակ սպանվել:

[55] ***Цицерон М. Т.,*** Речи в двух томах. Т. 1., М., 1962. Первая речь против Луция Цергия Катилины.
http://ancientrome.ru/antlitr/t.htm?a=1267350009 (դիտումը՝ 28.09.2019 թ.):

4.4.4. Աստիճանավորում

Պերճախոսական այս հնարը ենթադրում է բառերի, հոմանիշների ու գնահատականների այնպիսի դասավորություն, որտեղ յուրաքանչյուր հաջորդն ավելի արտահայտիչ է, ավելի ազդեցիկ ու խիստ, քան նախորդը: Աստիճանավորման այդ եղանակը կոչվում է **աճող աստիճանավորում**: Կարող է լինել նաև հակառակը, երբ փաստարկներից ու գնահատականներից ամեն հաջորդն ավելի մեղմ է, ավելի հանդուրժող ու չեզոք, քան նախորդը: Աստճանավորման այդ եղանակը կոչվում է **նվազող աստիճանավորում:**

Աստիճանավորումները թույլ են տալիս ավելացնել և նվազեցնել հուզական ներգործությունը, խորացնել տպավորությունը, գնահատականների ավելացմամբ փոխել լսարանի հոգեբանական ու հուզական լարվածության մակարդակը: Այդ ընթացքում բառերն էլ արտասանվում են համապատասխանաբար ինտոնացիայի աճմամբ կամ նվազմամբ: Մեկ **օրինակ** Պարույր Սևակի բանաստեղծություններից.

Եվ ինչո՞ւ պիտի չհպարտանանք...
Կա՛նք: Պիտի լինե՛նք: Ու դեռ շատանա՛նք:
(«Քիչ ենք, բայց հայ ենք»)

Մեկ այլ օրինակ՝ *«Որքան էլ ցավալի է, պետք է փաստել, որ քաղաքացի X-ը խախտել է օրենքը: Բայց խոսքը ակամա կամ սովորական մի խախտման մասին չէ: X-ը դա արել է կանխամտածված ու գիտակցելով իր գործողությունների վտանգավորության աստիճանը: Նա կատարել է ծանրագույն հանցագործություն և արժանի է ամենախիստ պատժի»:* Կամ էլ՝ *«Դուք դեպքը բնութագրեցիք որպես արտառոց: Ես այն կանվանեմ՝ անցանկալի, ծայրահեղ տհաճ, մեր քաղաքական հաստատությունները վարկաբեկող, պետական համակարգը խարխլող»:*

Եվ ընդհակառակը. «*Խիստ է ասված՝ հանցագործություն: Նրա արարքը օրենքի սովորական խախտում է, իրեն ոչ սազական մի սխալ, անցանկալի վրիպակ, որը շտկելու ճիշտ տարբերակը, թերևս, անկեղծորեն ներողություն խնդրելը կարող է լինել»:*

4.4.5. Հակադրություն

Ինչպես որ նկարիչը լույսի ու ստվերի ճիշտ համադրության միջոցով հարթության վրա իր ստեղծած պատկերներին հաղորդում է որոշակի տարածականություն, ընդգծում դրանց ծավալը, այնպես էլ հռետորը հակադրությունների գեղեցիկ համադրության եղանակով մտքին տալիս է առանձնակի խորություն, խոսքը դարձնում ավելի պատկերավոր ու տպավորիչ:

Այս հնարի օգնությամբ ընդգծում են անհրաժեշտ միտքը, դրան տալիս գաղափարային բնույթ, խորացնում և ամրագրում տպավորությունը: Հակադրությունը գրավում է բառերի ու արտահայտությունների անսովոր զուգադրությամբ, թողնում անջնջելի տպավորություն: Օրինակ՝ «Ուղտին նստած՝ կուզեկուզ ման չեն գա»: Տպավորիչ, խորիմաստ և բոլոր ժամանակների համար բնորոշ է Պ.Սևակի հետևյալ միտքը.

Մարդ կա՝ աշխարհն է շալակած դրանում,
Մարդ կա՝ ելել է շալակն աշխարհի:

(«Մարդ էլ կա, մարդ էլ»)

Հույն պատմիչ, փիլիսոփա Պլուտարքոսի վկայությամբ՝ Օկտավիանոս Օգոստոս կայսրը, ցանկանով խաղաղեցնել աղմկող ազնվազարմ երիտասարդներին և նրանց ուշադրությունը բևեռել, իր խոսքը սկսում է հետևյալ կերպ. «Ականջ արեք, պատանիներ ծերուկիս, որին պատանեկության տարիներին ծերունիներն էին ունկնդրում...»[56]:

4.4.6. Բումերանգ կամ հակադարձ հարված

Երբեմն սեփական դիրքորոշման պաշտպանության լավագույն ձևը հակահարձակումն է, հակառակորդի դիրքերին ու նրա հայացքներին ուղղված արդյունավետ հակահարվածները: «Բումերանգն»

---

[56] ***Плутарх.,*** Изречения царей и полководцев. «Застольные беседы». Ленинград, «Наука», 1990. http://ancientrome.ru/antlitr/t.htm?a=1438015000 (դիտ.՝ 28.09.2019 թ.):

այդպիսի հակահարվածների առավել արդյունավետ ու տպավորիչ եղանակներից մեկն է: Տվյալ հնարքի էությունն այն է, որ ընդդիմախոսի դրույթը, փաստարկը, ամգամ ռեպլիկը շուռ է տրվում, գործածվում նրա դեմ: Կրկնապատկվում է փաստարկի ուժը և ներկաների վրա թողած տպավորությունը: Բարդ վիճակի մեջ է հայտնվում ընդդիմախոսը, լսարանի համար ակնհայտ է դառնում նրա ոչ նախանձելի վիճակը:

1993 թ. հայկական հեռուստատեսության եթերում իշխանավորի և ընդդիմադիրի միջև ծավալված մի բանավեճի ընթացքում իշխող ուժի ներկայացուցիչը, պնդելով, որ Հայաստանում առկա է համեմատաբար կայուն սոցիալ-տնտեսական վիճակ, թռուցիկ համեմատություն անցկացրեց Ադրբեջանի, Վրաստանի և Ուկրաինայի հետ, ինչի համատեքստում, ըստ նրա, Հայաստանն ավելի շահեկան վիճակում էր ներկայանում: Ի վերջո, նա ընդդիմախոսին «բարեկամաբար» խորհուրդ տվեց մի քիչ էլ դրսի աչքերով նայել Հայաստանին՝ առաջարկելով հետևյալ ձևակեպումը.

– Դրսից Հայաստանի ֆեռքբերումներն ավելի լավ են երևում, Ընդդիմախոսը դիմեց բումերանգի.

– Հավանաբար Դուք ճիշտ եք... Թերևս դրանով պետք է բացատրել այն փաստը, որ մեր համաքաղաքացիների կեսից ավելին լքել է հայրենիքը, դրսից զմայլվում է նրա ֆեռքբերումներով և ոչ մի կերպ չի ցանկանում վերադառնալ Հայաստան:

Հակադարձ հարվածի տարատեսակներից մեկն էլ հակառակորդի առանձին արտահայտությունների, բացականչությունների ու առարկությունների գործածումն է հեղինակի դեմ: Քննարկվող հնարքը լավագույնս կարող են գործածել արագ կողմնորոշվող, ճկուն միտք և սուր լեզու ունեցող մարդիկ:

Ներկայացվող հնարի կիրառման երկու ուշագրավ դրվագ Ք.ա. 4-րդ դարի հույն հռետոր Դեմոսթենեսի կենսագրական ավանդազրույցներից: Դրանցից մեկում Դեմոսթենեսը բումերանգի հեղինակն է, մյուսում՝ թիրախը:

Մի անգամ Դեմոսթենեսը հանցանքի պահին բռնացրեց մեկին, որը ցանկանում էր գողանալ հռչակավոր հռետորին պատկանող իրը:

Հանցագործը սկսեց արդարանալ, թե չգիտեր, որ իրը Դեմոսթենեսին է պատկանում: Այնժամ Դեմոսթենեսը հակադարձեց. *«Բայց չէ՞ որ դու լավ գիտեիր, որ այդ իրը քե՛զ չի պատկանում»*:

Մեկ այլ դրվագ վերաբերում է Դեմոսթենեսի և ռազմական ու քաղաքական գործիչ Ֆոկիոնի բանավեճին: Դեմոսթենեսը, հանդիմանելով Ֆոկիոնին, ասաց. *«Դու ծաղրում ես աթենացիներին: Զգուշացի՛ր, սակայն: Երբ նրանք զայրանան, կսպանեն քեզ»: Ֆոկիոնը հակադարձեց. «Հնարավոր է ինձ սպանեն, երբ գլուխները կորցնեն: Բայց երբ խելքի գան, քե՛զ կսպանեն»*[57]:

Ա. Շոպենհաուերը բերում է հետևյալ օրինակը՝ մեկն ասում է. *«Չէ որ նա երեխա է, չի կարելի նրան խիստ վերաբերվել»: Retorsio: «Հենց դրա համար էլ, որ նա երեխա է, պետք է սանձել նրան, որպեսզի նա չամրապնդի իր վատ հակումները»*[58]:

4.4.7. Հիպերբոլաներ և մեյոզիսներ

Հիպերբոլան բնութագրվող երևույթի որոշ հատկությունների չափազանցումն է: **Օրինակ՝** *«ամբողջ աշխարհն է պեղյակ այդ մասին», «հազար անգամ քաղաքացին զգուշացվել էր չթույլատրված հարվածներում փողոցն անցնելու վտանգավորության մասին, սակայն՝ ապարդյուն»*:

Այս հնարը հաճախ է հանդիպում գովաբանական խոսքում: Քվինտիլյանուսը Ցիցերոնի մասին ասել է. *«Նախախնամությունը Ցիցերոնին երկիր է ուղարկել, ըստ երևույթին, նրա համար, որպեսզի նրանով օրինակ տա, թե ինչ աստիճանի զորեղ կարող է լինել խոսքը: ... Միանգամայն արդարացիորեն ժամանակակիցները նրան անվանեցին դատական ճարտասանության արքա, ... և նրա անունը դարձավ պերճախոսության հոմանիշ սերունդների համար»*[59]:

---

[57] http://el-vowano.ru/cytaty-frazy/2013-05-15-12-45-34.html (դիտումը՝ 28.09.2019 թ.):
[58] ***Schopenhauer A.,*** Eristisce Dialektik. Handschriftlicher Nachlass, էջ 95:
[59] ***Квинтилиан М.Ф.,*** Правила ораторского искусства. Кн. X, [110-112], СПб, 1896. http://ancientrome.ru/antlitr/t.htm?a=1271386796#1-109 (դիտումը՝ 28.09.2019 թ.):

Մեյոզիսը (նվազեցում կամ նվազաբանություն) բնութագրվող երևույթի որոշ հատկությունների մտածված նվազեցումն է, երևույթի թեթևությունը, փոքրությունը, խնդրի հեշտությունը ընդգծելու նպատակով: Օրինակ՝ «մի բուռ հայրենիք», «մի մատ երեխա», «իրավաբան դառնալը բարդ գործ չէ: Պարզապես հարկավոր է մի երկու օրենսգիրք սովորել» և այլն[60]:

Մեյոզիսի տարատեսակներից է **լիտոտան** (կամ լիտոտես, հուն.՝ պարզություն, մեղմություն): Հիմքում ընկած է կրկնակի ժխտման տրամաբանական գործողությունը: Օրինակ՝ «համաձայն եմ»-ի փոխարեն գործածվում է «չեմ առարկում», «լավ է»-ի փոխարեն՝ «վատ չէ», «կողմ եմ»-ի փոխարեն «դեմ չեմ», «հաճելի»-ի փոխարեն «տհաճ չէ» տարբերակը:

Երբ հիպերբոլան ու մեյոզիսը զուգորդվում են չարամիտ հեգնանքով, վերածվում ճոռոմաբանության, հետապնդելով ոչ կառուցողական նպատակներ, փոխակերպվում են էթիկական տեսանկյունից անթույլատրելի հնարքի, որի մասնավոր դրսևորումներից է այսպես կոչված «կանացի փաստարկը»: Այդ և նմանատիպ հնարքների վերլուծությունը ներկայացված է սույն աշխատության հինգերորդ գլխում:

4.4.8. Հումորն ու սրամտությունը բանավեճի ընթացքում

Սեփական տեսակետը պաշտպանելու, ընդդիմախոսին հերքելու, ինչպես նաև խոսքն ավելի ուշագրավ ու տպավորիչ դարձնելու զորեղ միջոցներ են հումորն ու սրամտությունը: Հումորը վիճաբանությանը հաղորդում է աշխուժություն, օգնում է հաղթահարել հոգեբանական արգելքները, հաղորդակցման ընթացքը դարձնում անկաշ-

---

[60] Մասնագիտական գրականության մեջ չափազանցության և նվազաբանության սահմանման-դասակարգման հարցում կան որոշ տարաձայնություններ: Որոշ հեղինակներ չափազանցաբանությունների շարքն են դասում նաև «մի բուռ ազգ», «երկու քայլ ճանապարհ» տարբերակները՝ խնդրի լուծումը պայմանավորելով ճարտասանի նպատակադրության, լսարանի վրա ունցած ներգործության համատեքստով: Տե՛ս ***Միրզոյան Վ. Ա.,*** Ճարտասանություն: Եր., 2010, էջ 247-248; ***Петров О.В.,*** Риторика. М., 2004, էջ 95-96:

կանդ, դյուրին ու հաճելի: Չափավոր հումորն ու սրամտությունը, խոսքին որոշակի սրություն տալով, սակայն, չեն վիրավորում ընդդիմախոսին, հաճախ էլ բարենպաստ մթնոլորտ են ստեղծում կնճռոտ հարցերի քննարկման համար: Դրանք հնարավորություն են տալիս խուսափել սուր հակադրություններից և լիցքաթափել ստեղծված լարվածությունը:

Դիպուկ, սրամիտ դատողություններն ու համեմատությունները երբեմն ավելի լավ են բնութագրում բարդ ու խճճված իրողությունները և ավելի ակնառու ձևով բացահայտում դրանց էությունը, քան երկարաշունչ, խրթին վերլուծություններն ու բացատրությունները: Հաճախ էլ կատակը ծառայում է իբրև ուղեկից այնպիսի ճշմարտությունների, որոնք առանց դրա օգնության չէին հասնի նպատակին:

Պետք է նկատել նաև, որ ընդդիմախոսի թերությունները ու սխալները բացահայտելիս հումորն ու չափավոր ծաղրը շատ դեպքերում ավելի նախընտրելի են, քան ծանձրալի մեկնաբանությունները ու քարոզները: Բարեկամաբար, կատակի ձևով արված դիտողությունները, որպես կանոն, չեն վիրավորում ընդդիմախոսին և նրբանկատորեն ընդունվում են նրա կողմից:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի 1995 թ. մարտի 20-23-ի արտահերթ նիստում, երբ վարչապետի մասնակցությամբ քննարկվում էր 1995 թ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրն ու բյուջեն, խոսակցություն բացվեց բյուջետային հիմնարկներում ծառայողների աշխատավարձների տարբերակման սանդղակի մասին: Պատգամավորներից մեկը, ուշադրություն հրավիրելով այն փաստի վրա, որ ոստիկանության կրտսեր սպայական կազմի ներկայացուցիչը ստանում է 4 անգամ ավել աշխատավարձ, քան իրեն դասավանդող պրոֆեսորի կոչում ունեցող դասախոս-գիտնականը, խնդրեց վարչապետին պարզաբանել այդ իրողությունը: Վերջինս բացատրեց, որ, գործող կարգի համաձայն, ուժային գերատեսչությունների ծառայողներին օրական երկու անգամ սնունդ է տրվում կամ դրան համարժեք հավելավճար՝ աշխատավարձին, որը շուկայական գործող գների պայմաններում կազմում է այդպիսի տարբերություն: Սակայն, պատգամավորը պահն օգտագործելով, հարցրեց.

– Իսկ ի՞նչ է, պրոֆեսորը չի սնվում:

Դահլիճում աշխուժություն սկսվեց և այնտեղից ձայնակցեցին.

– Իսկ նախարարները չե՞ն ուզում սնվել:

Չնայած վարչապետը փորձեց նորից վկայակոչել գործող օրենքները, սակայն ստեղծված իրավիճակն ակնհայտ էր բոլորի համար, և նա զիջեց, խոստանալով բյուջետային հիմնարկներում աշխատավարձի առաջիկա փոփոխությունների ընթացքում հաշվի առնել և վերանայել համանման իրողությունները:

Նուրբ հումորը նաև պաշտպանության արդյունավետ միջոց է: Դրա շնորհիվ կարելի է կասեցնել հակառակորդի անսպասելի հարձակումները կամ, համենայն դեպս, թուլացնել դրանց տպավորությունը: Հայտնի ճշմարտություն է վոլտերյան այն միտքը, թե այն, ինչ ծիծաղելի է, այլևս վտանգավոր չէ:

Սխալների, արատների, անհեթեթ դատողությունների վրա ծիծաղելը միշտ էլ օգտակար է ու խրախուսելի, այն կարելի է համարել դրանցից ձերբազատվելու լավագույն տարբերակը: Նա, ով կարողանում է սրամիտ, աշխույժ խոսքով գրավել ունկնդիրների ուշադրությունն ու շահել նրանց համակրանքը, ամենաբարդ ու վճռական հարցերի կապակցությամբ դիպուկ սրախոսություններով ու ծիծաղաշարժ համեմատություններով կարողանում է ստիպել հակառակորդին ծիծաղել իր իսկ սխալների ու անճշտությունների վրա, նա ունի զգալի առավելություն և մեծապես շահում է վիճաբանությունների ընթացքում:

Սրախոսությունը, իհարկե, մեծ ուժ է բանավեճի ընթացքում, և պետք է կարողանալ այն ծառայեցնել բարի նպատակների, դրանից օգտվել խելացի և տեղին: Ք.ա. 5-4-րդ դդ. նշանավոր փիլիսոփա Դիոգենես Սինոպացուն ասում են. «Շատերը ծիծաղում են քեզ վրա»: Նա պատասխանում է. «Իսկ նրանց վրա ավանակներն են ծիծաղում: Բայց ինչպես նրանք ուշադրություն չեն դարձնում ավանակների վրա, այդպես էլ ես արհամարհում եմ ինձ վրա ծիծաղողներին» [61]:

[61] http://biograpedia.ru/node/444 (դիտումը՝ 28.09.2019 թ.):

Սրամտությունն ու հումորը խրախուսելի են և ընդունելի իրենց չափավորության մեջ: Դրանց առատությունը կարող է առաջ բերել հակառակ ազդեցություն և տհաճ տպավորություն թողնել:

Ֆ. դը Լառոշֆուկոն գրում է. «Սրախոսությունը մտքի ամենահաճելի և ամենավտանգավոր հատկությունն է: Նուրբ կատակը միշտ հաճելի է մարդկանց, բայց և մարդիկ սկսում են խուսափել նրանից, ով չափից շատ է կատակում: Այնուամենայնիվ, սրախոսությունը թույլատրելի է, եթե խառնված չէ չարամտությանը...

Դժվար է կատակող միտք ունենալ և խուսափել խեղկատակ կամ ծաղրող երևալուց: Չափի զգացում պետք է ունենալ, որպեսզի, շարունակ սրախոսելով հանդերձ, հեռու մնալ թե՛ մեկ, թե՛ մյուս ծայրահեղություններից»[62]:

Անշուշտ, **պետք է խուսափել հումորը կծու հեգնանքի ու բացահայտ ծաղրի վերածելուց,** ինչը դիմացինին կարող է խոցել ինչպես ամենաթունդ վիրավորանքը: Անազնիվ վիճողները չարամտորեն այդ միջոցին են դիմում հակառակորդին հոգեպես ընկճելու և նրան վարկաբեկելու նպատակով: Ծաղրը անտակտության, մտքի աղքատության նշան է և սովորաբար գործի է դրվում, երբ չեն բավարարում կամ բացակայում են տրամաբանական ապացույցներն ու փաստարկները:

4.4.9. Փոխանունություն կամ մետոնոմիա

Գործածվում է այն դեպքերում, երբ որոշակի երևույթներ միմյանց հետ կապված են այնպես, որ մեկի անունը տալը հիշեցնում, ենթադրում է նաև մյուսը: Օրինակ՝ կարող են փոխանվանվել երևույթներ, որոնք կապված են պատճառահետևանքային կապով, պարունակողը կարող է հիշատակվել պարունակության փոխարեն: Պետության անվանման փոխարեն կարող է տրվել դրա մայրաքաղաքի անունը կամ գերբի պատկերը: Տվյալ երկրի իշխանությունների տեսակետը ներկայացնելիս հաճախ ասվում է. «պաշտոնական

---

[62] ***Լառոշֆուկո Ֆ.***, Մաքսիմներ և բարոյախոսական խորհրդածություններ: Երևան, 1978, էջ 196-197:

Երևանը, Մոսկվան, Վաշինգտոնը»: Ստեղծագործությունների փոխարեն տրվում է դրանց հեղինակի անունը: Օրինակ՝ «Պարույր Սևակ կարդալ կամ սիրել» և այլն:

Փոխանունությանը բնորոշ է նշանի գործածումը նշանակության *(մարզիկը ստիպեց հնչեցնել սեփական երկրի հաղթական օրհներգը)*, պարունակողի հիշատակումը պարունակվողի *(երկու բաժակ խմել)*, հատկության գործածումը կրողի *(մարզիկի հնարամտությունն օգնեց հաղթահարել մկանների 120-կիլոգրամանոց «սարի» դիմադրությունը)*, ստեղծագործության հիշատակումը հեղինակի (*պարոն «Սուսերով պար»*), ունեցվածքի հիշատակումը սեփականատիրոջ փոխարեն*(տիկին 12 միլիարդ)* և ընդհակառակը:

Այդպիսի «անվանափոխությունների» նշանակությունը լսարանի ուշադրությունը նրան առավել ծանոթ առարկայի կամ ելույթ ունեցողի տեսակետից առավել կարևոր իրողության վրա կենտրոնացնելն է:

Ահավասիկ մի հատված Սիցիլիայի տեղապահ Գայուս Լիցինիուս Վերրեսի դեմ Մ. Ցիցերոնի մեղադրական ճառից. «Նա գանձարանը հափշտակողն է, Ասիայի և Պամֆիլիայի կեղեքիչը, ... Սիցիլիայի կործանողը: Եթե դուք նրա վերաբերյալ խիստ և անաչառ վճիռ կայացնեք, ապա ձեր հեղինակությունը, որը պատշաճ է ունենալ, կամրապնդվի, սակայն եթե նրա ահռելի հարստությունը ճնշի դատավորների ազնվությունն ու բարեխղճությունը, ... բոլորը կտեսնեն, որ պետության մեջ դատարան չգտնվեց, դատավորների համար ոչ մի դատապարելի բան չգտնվեց, իսկ մեղադրյալի համար՝ մեղադրող»[63]: Ցիցերոնը, չտալով Գ. Վերրեսի անունը, փոխարենը հիշեցնում է նրա հարստությունը, որի միջոցով մեղադրվողը կարող էր ներգործել դատավորների վրա: Վերջիններիս փոխարեն էլ հռետորը խոսում է նրանց բարեխղճության և ազնվության մասին:

Փոխանունության ձևերից է համարվում **սինեկդոխան**: Հայերեն գրականության մեջ գործածվում է *համընթռնում* եզրը[64]: Ընդունված

---

[63] ***Цицерон М.Т.,*** Речи в двух томах. Т.1., М., 1962. Речь против Гая Верреса. http://ancientrome.ru/antlitr/t.htm?a=1267350002 (դիտումը՝ 28.09.2019 թ.):

[64] Տե՛ս ***Միրզոյան Վ. Ա.,*** Ճարտասանություն: Եր., 2010, էջ 245:

է, որ մետանոմիայի դեպքում օբյեկտներն ու երևույթները համեմատում-զուգադրում են հիմնականում ըստ որակի, իսկ սինեկդոխայի պարագայում՝ ըստ քանակի[65]:

Սինեկդոխային բնորոշ է սեռի հիշատակումը տեսակի, ամբողջի գործածումը մասի, եզակիի գործածումը հոգնակիի, հատուկ անունի կիրառումը հասարակի փոխարեն և ընդհակառակը: Օրինակ՝ «արտադրող գյուղացին գնորդ չի գտնում», «մամուլն անվերջ աղմկում է այդ մասին», «օրենսդիրը պարտավոր է անդրադառնալ տվյալ իրադարձությանը», «մի կտոր հաց ուտել» և այլն:

Նշված պերճախոսական հնարները հաճախ լրացվում են գեղարվեստական-պատկերավոր համեմատություններով, այլաբանություններով: Օրինակ՝ «շունը տիրոջը չի ճանաչում», «անառակ կնոջ գլխին քառասուն լաչակ կա», «գժի հախից հարբածն ա գալիս», «երաժշտությունը վճարողն է պատվիրում», «մարդ կա՝ աշխարն է շալակած տանում, մարդ կա՝ ելել է շալակն աշխարհի» և այլն:

4.4.10. Ելույթի կառուցման եղանակները

Ելույթի ընթացքում փաստարկների ներկայացման հաջորդականության մասին հարցը մասնագիտական գրականության մեջ տարբեր մեկնաբանությունների տեղիք է տալիս: Իսկ Դ. Քարնեգին այն դասում է հավերժական հարցերի շարքին՝ նշելով, որ յուրաքանչյուր հռետոր ամեն կոնկրետ իրավիճակում պետք է յուրովի լուծում տա դրան, և, որ անհնար է առաջարկել մանրամասն, անթերի կանոններ ու օրենքներ բոլոր դեպքերի համար[66]: Ամերիկացի մտածողի այս դիրքորոշումը, ըստ էության, պրպտելու և խնդրին ստեղծագործաբար մոտենալու հորդոր է ընթերցողին:

Ա. Վ. Ստեշովը ելույթի կառուցման տարբեր եղանակների շարքում դիտարկում է նվազող միակողմանի, աճող միակողմանի, երկկողմանի փաստարկման և հակափաստարկման սկզբունքները[67]:

---

[65] Տե՛ս ***Петров О.В.,*** Риторика: учебник. М., 2004, էջ 99:

[66] ***Карнеги Д.,*** Как вырабатывать уверенность в себе и влиять на людей выступая публично. Ереван, 1989, էջ 56:

[67] Տե՛ս ***Стешов А.В.,*** Как победить в споре. О культуре полемики. Л., 1991, էջ 87-91:

***«

զական լարվածության, ապա, աստիճանաբար թուլացնելով ձևավորված մթնոլորտը, լիցքաթափում այն: Այս միջոցն առավել նախընտրելի է լսարանում անկումնային տրամադրությունների առկայության պարագայում կամ էլ կոնֆլիկտային իրավիճակներում:

Ելույթը ***«նվազող-աճող»*** տարբերակով կառուցելիս այն սկսում են անսպասելի, ցնցող հայտարարությամբ, առավել ուշագրավ դրույթներով, ապա բերվում են այդ հայտարարությունն ու դրույթները հիմնավորող, մեկնաբանող փաստարկներ: Հնարավորություն է տրվում զրուցակցին կամ ունկնդիրներին հաղթահարելու առաջին «շոկային» տպավորությունը, ապա շարունակում են նորից ավելացնել ազդեցությունը, խորացնել, ընդլայնել ու մեկնաբանել հաղորդված ինֆորմացիան: Այս դեպքում ևս ելույթը կարող է ավարտվել ամփոփիչ պնդումով, հայտարարությամբ կամ կոչով: Ճառի կառուցման այս եղանակն արդյունավետ է ժողովներում, միտինգային իրավիճակներում, նաև այն դեպքերում, երբ լսարանն աչքի է ընկնում տարասեռ կազմով, կարծիքների ու տրամադրությունների բազմազանությամբ[68]:

Համակողմանի փաստարկումը նախընտրելի է այն պարագայում, երբ քննարկվող հարցի վերաբերյալ առկա են կամ կարող են լինել մեկից ավելի այլընտրանքային ու իրարամերժ տեսակետներ: Ելույթը կառուցվում է այդ տեսակետների զուգադրության, դրանց առավելությունների և թերությունների ներկայացման ու վերլուծության եղանակով: Այլընտրանքային տարբերակների քննական վերլուծության խորապատկերի վրա հռետորը առանձնացնում ու ընդգծում է սեփական տեսակետը, հիմնավորում դրա նպատակահարմարությունն ու ճշմարտացիությունը: Որոշ դեպքերում էլ նման վերլուծությունից ու տեսակետների զուգադրումից հետո ընտրությունն ու եզրակացությունը թողնվում է լսարանին[69]:

Հակափաստարկման սկզբունքով ելույթը կարող է կազմակերպվել երկու դեպքում:

---

[68] Տե՛ս ***Հովհաննիսյան Հ. Օ.,*** Փաստարկում և հռետորություն: Դասընթաց իրավագիտության մագիստրանտների և իրավական ոլորտի աշխատողների համար: Եր., 2015, էջ 157:

[69] Տե՛ս նույնը, էջ 157-158:

Առաջին դեպքում այն հաջորդում է հակառակ կողմի ելույթին և կառուցվում է նրա փաստարկների, դրույթների վիճարկման ու դրանք ժխտող հակափաստարկների ներկայացման սկզբունքով: Այդ եղանակով են կառուցվում, օրինակ, գիտական ատենախոսության պաշտպանության ընթացքում ընդդիմախոսի դիտողություններին ի պատասխան հնչող՝ ատենախոսի ելույթը, դատարանում ներկայացված մեղադրանքին ի պատասխան հնչող պաշտպանական ճառը: Տվյալ դեպքում ելույթի կառուցվածքը հիմնականում պայմանավորված է լինում նախորդ ելույթի բովանդակությամբ: Հակափաստարկման հետևողական բնույթը, ընդդիմախոսի փաստարկներին հաջորդաբար անդրադառնալն ու դրանք չշրջանցելը երաշխավորում են լսարանի վստահությունն ու համակրանքը:

Երկրորդ դեպքում հակափաստարկման սկզբունքով ելույթը նախընտրելի է, երբ լսարանում արդեն իսկ առկա է որոշակի համոզմունք և նախատրամադրվածություն: Այդպիսի իրավիճակներում, մինչև սեփական դրույթի փաստարկմանն անցնելը, խորհուրդ է տրվում նախ վիճարկել և քննադատել տիրապետող կարծիքը, ցույց տալ դրա թերությունները և լսարանի մոտ կասկած (թերհավատություն կամ հիասթափություն) հարուցել դրա ճշմարտացիության և նպատակահարմարության վերաբերյալ: Եվ այն ժամանակ, երբ լսարանը այլևս վստահ չէ իր սկզբնական դիրքորոշման մեջ և պատրաստ է առավել ընդունելի դրույթի առկայության պարագայում վերանայել իր տեսակետը, կարելի է անցնել սեփական տեսակետի փաստարկմանն ու հիմնավորմանը:

Հնարավոր են նաև այլ տարբերակներ: Փաստարկների արդյունավետ հաջորդականության, ելույթի կառուցման հարցի կապակցությամբ ևս մեկ անգամ դրսևորվում են բանավեճի մշակույթի, ճարտասանության արվեստի տիրույթում ստեղծագործելու անսպառ հնարավորությունները:

ԳԼՈՒԽ 5
ՀՆԱՐՔՆԵՐԸ ՎԵՃԻ ԺԱՄԱՆԱԿ

5.1. Հնարքների էությունը: Դրանց դասակարգումը

Հանգամանալից ուսումնասիրել վեճի երևույթը, քննարկել բանավեճի գործընթացի տարբեր կողմերը և չանդրադառնալ այդ ընթացքում գործածվող զանազան հնարքների բազմությանը, թերի կլիներ: Հնարքների ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն վեճի երևույթի մասին առավել համակողմանի ու խոր պատկերացում կազմելու, իմացաբանական առումով, այլև հենց գործնական տեսակետից, քանի որ դրանց իմացությունն օգնում է մտավոր պայքարի ընթացքում ճիշտ կողմնորոշվելու, չշփոթվելու, սոփեստական խորամանկություններին չտրվելու, իսկ անհրաժեշտության դեպքում՝ դրանք մերկացնելու գործին: Հնարքների ուսումնասիրումը պակաս կարևոր չէ նաև գնալով ավելի ու ավելի մեծ ծավալներ ընդգրկող, բազմաբնույթ ու հակասական տեղեկատվության հոսքում ճիշտ կողմնորոշվելու առումով:

Հարուստ է մտավոր հաղորդակցման և մրցակցության ժամանակ հանդիպող խորամանկ միջոցների ու հնարքների աշխարհը: Այն ինքնին մի առանձին ուսումնասիրման առարկա է, քննարկման ու վերլուծության ծավալուն նյութ:

Ի՞նչ է բանավեճային (մտավոր պայքարի ընթացքում կիրառվող) **հնարքը:** Կարելի է առանձնացնել այդ հասկացության երկու՝ լայն և նեղ ըմբռնումները:

Լայն իմաստով հնարքների տակ, բացի տարբեր խորամանկությունները, կարելի է հասկանալ նաև բանավեճի այն բոլոր կանոնները, հռետորական, տրամաբանական միջոցները, արարողակարգի ու վարվեցողության սկզբունքները, որոնք մտավոր պայքարին տալիս են ճանաչողական բնույթ, օգնում այն ուղղել գործնական ու արդյունավետ հունով, հաղորդակցման ընթացքը դարձնում դյուրին ու հաճելի: Այս իմաստով, բանավեճերի ընթացքում կիրառվող տրամաբա-

նական և արտատրամաբանական բոլոր միջոցները, որոնք զերծ են տատատեսակ խորամանկություններից և ունեն կառուցողական միտում կանվանենք **հնարներ** (միջոց, եղանակ)[1]:

Նեղ իմաստով, որն, ի դեպ, առավել ընդունված ու մասնագիտական գրականության մեջ հաճախ հանդիպող տարբերակն է, հնարքների տակ հասկացվում են այն բոլոր **խորամանկ միջոցները, որոնց օգնությամբ «ձգտում են հեշտացնել վեճն իրենց համար և դժվարացնել այն հակառակորդի համար»[2]:** Այս երկրորդ խմբի տեխնոլոգիաները, հաղորդակցման արդյունավետությունն ապահովող սկզբունքներից ու նորմերից տարբերելու համար, հետագա շարադրանքում կանվանենք **հնարքներ:** Մանավանդ, որ նման տարբերակում հայերենն արդեն արել է, ինչն ամրագված է նաև արդի հայերենի բացատրական բառարաններում՝ **հնարք** տարբերակի դեպքում դիտարկելով նաև խորամանկության ու նենգամտության գործոնները[3]:

Ինչպե՞ս կողմնորոշվել հնարքների բազմության մեջ:

Դրանք ուսումնասիրելիս կարելի է ցուցաբերել տարբեր մոտեցումներ, որպես դասակարգման հիմք ընդունել հնարքների ամենատարբեր բնութագծեր: Կարելի է առանձնացնել, օրինակ, տրամաբանական բնույթի, հոգեբանական, հռետորական հնարքները և այլն: Սակայն, պետք է նկատել, որ նման տարբերակումն ունի առավելապես ճանաչողական նշանակություն: Իրականում հնարքներն այդպիսի «մաքուր» ձևով գրեթե չեն հանդիպում: Տրամաբանական, հռետորական ու հոգեբանական տարրերը, որպես կանոն, հանդես են գալիս շաղկապված, մեկը մյուսով պայմանավորված ու փոխմիահյուսված ձևով: Դրանով է մեծապես պայմանավորված այս կամ այն հնարքի արդյունավետությունը: Առանձին վերցրած ամեն մի հնարք, սովորաբար ունենալով իր տրամաբանական հիմքը, ատաղձը, ուղեկցվում է նաև հռետորական տարբեր միջոցներով և ունենում որո-

---

[1] Տե՛ս ***Աղայան Է. Բ.,*** Արդի հայերենի բացատրական բառարան: Հ.1, Եր., 1976, էջ 879:

[2] Սահմանումը Ս.Պովարնինինն է: Տե՛ս ***Поварнин С.И.,*** Спор. О теории и практике спора, էջ 92:

[3] Տե՛ս ***Աղայան Է. Բ.,*** նույն տեղում: Տե՛ս նաև Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան: Հ. 3, ԳԱ հրատ., Եր., 1974, էջ 360; 361:

շակի հոգեբանական ներգործություն ընդդիմախոսի և ունկնդիրների վրա: Տրամաբանական, հռետորական ու հոգեբանական ձևերի տարբերակումն ավելի շուտ կոչված է ուշադրություն հրավիրել առանձին հնարքների ընդգծված կողմի, առավել որոշիչ առանձնահատկությունների վրա:

Տեսական վերլուծությունների ընթացքում հաճախ են հանդիպում այնպիսի դեպքեր, երբ հեղինակներից մեկը տվյալ հնարքը դիտարկում է, ասենք, տրամաբանական հնարքների շարքում, իսկ մյուսը, նկատի ունենալով դրա ունեցած հոգեբանական ներգործությունը՝ հոգեբանական հնարքների խմբում, և ընդհակառակը: Այդպիսի «անհետևողականությունները» բավականին շատ են: Սակայն, դա ամենևին էլ չի նշանակում, թե հետազոտողները թույլ են տվել «աներեղի» սխալներ, կամ էլ, որ ավելորդ ու անիմաստ է հնարքների ամեն մի դասակարգում: Առանց դրա չափազաց բարդ կլիներ տարբնույթ հնարքների մեջ կողմնորոշվելն ու դրանք ուսումնասիրելը: Հնարքների դասակարգումը կարևոր է թե՛ ճանաչողական և թե՛ մեթոդաբանական առումներով:

Բարոյագիտական տեսանկյունից, բանավիճող կողմերի իրավական, գաղափարական և աշխարհայացքային հավասարության նորմերի, ինչպես նաև հաղորդակցման արդյունավետությունը երաշխավորող՝ չորրորդ գլխում քննարկված սկզբունքների պահպանման կամ խախտման տեսանկյունից հնարքների բազմությունը կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ **թույլատրելի** և **անթույլատրելի** կամ **ազնիվ** ու **անազնիվ** հնարքների: **Թույլատրելի են (ոչ ապակառուցողական)** այն հնարքները, որոնք հեշտացնելով վեճը դրանք գործածողի ու դժվարացնելով այն ընդդիմախոսի համար, չեն խախտում, սակայն, հաղորդակցման արդյունավետությունը երաշխավորող նորմերն ու կանոնները, չեն վիրավորում կամ վարկաբեկում հակառակորդին, պահպանում են վիճող կողմերի գաղափարական, իրավական ու բարոյական հավասարության սկզբունքները և, վերջապես, չեն խոչընդոտում ճշմարտության հայտնաբերմանը: **Անթույլատրելի** հնարքներն, ընդհակառակը, ունեն **ապակառուցողական բնույթ**, խափանում են վիճաբանության ճանաչողական նշանակությունը, խո-

չընդոտում քննարկվող հարցի արդյունավետ լուծմանն ու ճշմարտության հայտնաբերմանը: Դրանց հիմնական նպատակը ընդդիմախոսին ընկճելով և ունկնդիրների մոտ իմաստունի տպավորություն թողնելով՝ հաղթողի դափնիներ կորզելն է: Այդ հնարքները սովորաբար զուգորդվում են կամ հիմնված են լինում վերը նշված սկզբունքների ու կանոնների միտումնավոր խախտումների վրա: Հնարքների դասակարգման այս ձևի դեպքում ևս չկան անանցանելի անջրպետներ: Չնայած այս տարբերակում սահմանների թափանցիկությունը համեմատաբար ավելի քիչ է, քան վերը դիտարկված առաջին տարբերակում, սակայն այստեղ էլ քիչ չեն վիճելի հարցերն ու պայմանականությունները, հատկապես թույլատրելիի ու անթույլատրելիի սահմանագծում: Ա. Վ. Ստեշովը, օրինակ, սեփական տեսակետը պաշտպանելու ընթացքում թույլատրելի է համարում հակառակորդի հարցերին պատասխանելուց խուսափելն ու հրաժարվելը՝ «իրավունք չունենալու» պատրվակով[4]: Իսկ Ս. Պովարնինն այդ ձևը համարում է անթույլատրելի՝ անվանելով այն «ստրուկի հնարք»[5]:

Ոմանք էլ մտավոր պայքարի ժամանակ գործածվող հնարքները դասակարգում են ըստ բանավեճի տրամաբանական կառուցվածքի: Առաջին խմբի մեջ մտնում են այն հնարքները, որոնք վերաբերում են թեզիսին: Երկրորդի մեջ՝ փաստարկների, իսկ երրորդի մեջ՝ փաստարկներից թեզիսի բխեցման կամ ապացուցման հետ կապված հնարքները[6]:

Հնարքների բազմության մեջ, ըստ բնույթի ու բովանդակության, առանձնահատուկ տեղ են գրավում և վեճն ուսումնասիրողների շրջանում ավանդաբար մեծ հետաքրքրություն են ներկայացնում սոփեստական-ապակառուցողական հնարքները: Մարդկային մտածողությունը զերծ չէ սխալներից: Մեծ մասամբ դրանք թույլ են տրվում առանց որևէ միտումի, որպես հետևանք տրամաբանական անպատրաստվածության կամ ցածր մակարդակի: Այդ դեպքում գործ ունենք **պարալոգիզմի** հետ (հուն.՝ paralogismos – սխալ կշռադատություն): Սակայն քիչ չեն նաև այն դեպքերը, երբ սխալները թույլ են տրվում

---

[4] Տե՛ս ***Стешов А.В.,*** Как победить в споре. О культуре полемики, էջ 135:
[5] ***Поварнин С.И.,*** Спор. О теории и практике спора, էջ 100:
[6] Տե՛ս ***Слемнёв М.А., Васильков В.Н.,*** Диалектика спора, էջ 113:

գիտակցաբար, միտումնավոր ձևով: Այդպիսի քողարկված սխալները կոչվում են **սոփեստություններ** կամ **իմաստակություններ**: Սոփեստությունը ճարտարամիտ ու խորամանկ հնարք է, որի միջոցով տրամաբանորեն սխալ դատողությունը, կշռադատությունը ներկայացվում է որպես անթերի ու ճշմարիտ միտք: Դա յուրատեսակ ինտելեկտուալ խաբեություն է, որին դիմում են այն դեպքում, երբ խնդիր է դրվում ամեն գնով համոզել կամ հաղթել ընդդիմախոսին: Սոփեստական հնարքների վերլուծությունը մտքի մարզման լավ միջոց է: **Տրամաբանական կանոնների հետազոտությունը զուգահեռ սխալների ուսումնասիրումը ևս կարևոր միջոց է մտածողության զարգացման համար:**

Թեև անհնար է թվարկել վիճաբանությունների ժամանակ հանդիպող բոլոր հնարքները կամ տալ դրանց ճշգրիտ ու վերջնական դասակարգումը, այնուամենայնիվ, աշխատության այս մասում տեղին է խոսել ամենատարբեր վեճերի ընթացքում գործածվող մի շարք թույլատրելի ու անթույլատրելի հնարքների մասին, ներկայացնել ու քննարկել դրանց առավել գործածական, տիպական ձևերն ու եղանակները:

Տարատեսակ խորամանկությունների ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն մտածողության զարգացման, կյանքի տարբեր իրավիճակներում ճիշտ ու արագ կողմնորոշվելու համար, այլև այդ հնարքներին չտրվելու, անազնիվ վիճողների հետ պայքարում անփորձ ու անօգնական դրության մեջ չհայտնվելու, սեփական տեսակետը վստահորեն պաշտպանելու առումներով:

Ռազմական նշանակալից հաջողությունների հասած մեծ զորավարների մարտավարության կարևոր խնդիրներից մեկը մշտապես եղել է հակառակորդի բանակի, զենք ու զինամթերքի, ավանդույթների, նրա մարտավարության հանգամանալից ուսումնասիրությունը: Այդպես է նաև վիճաբանության, ասել է թե՝ մտավոր պայքարի ընթացքում: Ինչպես Արթուր Շոպենհաուերն է նկատում, «ճշմարտությունը լավագույնս պաշտպանելու համար հաճախ անհրաժեշտ է նաև անազնիվ հնարքների իմացությունը»[7]:

[7] Տե՛ս ***Schopenhauer A.,*** Handschriftlicher Nachlass, Bd. 2, էջ 78:

5.2. Թույլատրելի կամ «մարտավարական» հնարքներ

Բանավեճերի ժամանակ հանդիպող «մարտավարական» կամ թույլատրելի հնարքները, այսպես կոչված, անվտանգ կամ անմեղ խորամանկություններ են, որոնք հեշտացնելով վեճը դրանք գործածողի համար և դժվարացնելով այն ընդդիմախոսի համար, այդուհանդերձ, չեն վիրավորում զրուցակցին, մոլորություններ չեն տարածում, չեն խախտում կողմերի իրավական, բարոյական, գաղափարական, աշխարհայացքային հավասարության նորմերն ու արդյունավետ հաղորդակցման մյուս սկզբունքները: Պարզապես, այդ հնարքները որոշակի դիրքային, մարտավարական առավելություն են բերում հեղինակին կամ օգնում են չկորցնել ունեցածը:

Այդ հնարքների շարքն են դասվում **«ուշացած»** կամ **ձգձգված պատասխանը, նախօրոք պատասխանը, զգուշավոր ճշգրտումները, կամակոր հակառակորդին «բռնացնելու» եղանակները, անթույլատրելի հնարքների դիմագրավման մի շարք սկզբունքներ:**

5.2.1. «Ուշացած» կամ ձգձգված պատասխան

Բանավեճի ընթացքում կարևոր է արագ մտածելու և կողմնորոշվելու կարողությունը: Սակայն երբեմն դժվար է անմիջապես պատասխանել ընդդիմախոսին՝ հիմնավորապես առարկելով նրա դրույթը կամ առաջադրած փաստարկները: Անգամ ինչ-ինչ հանգամանքներում իսպառ կորչում է կողմնորոշվելու ու հստակ դատելու կարողությունը: Դա կարող է պատահել ինչպես տվյալ պահին անհրաժեշտ նյութի բացակայության, այնպես էլ մտածողության հանկարծակի արգելակման հետևանքով, որի պատճառը կարող են լինել հոգեկան լարված, գրգռված վիճակը, հոգնածությունը, ներքին վախը, հուզմունքը և այլն: Հոգեկան մեխանիզմի ու մտածողության այդպիսի արգելակումների հնարավորությունն ավելի մեծ է անվստահ, չափազանց զգայուն, երկչոտ ու ամոթխած մարդկանց մոտ:

Շատ դեպքերում (հատկապես, երբ յուրաքանչյուր սայթաքում կարող է օգտագործվել ելույթ ունեցողի դեմ) արդարացված չէ շո-

կային իրավիճակի ազնիվ խոստովանությունը. «Ձեր հարցն ինձ շփոթեցրեց, այս պահին Ձեզ պատասխանել չեմ կարող», առավել ևս՝ «Այսօր չեմ կարողանում կենտրոնանալ, դրան կանդրադառնանք վաղը» և այլն:

Այդպիսի իրավիճակներից խուսափելու համար կարևոր են ելույթին նախօրոք և հիմնավոր կերպով պատրաստվելը, ելույթի հիմնադրույթներն ու կառուցվածքն ամրագրող ***համառոտագիր*** ունենալը: Սակայն լինում են իրավիճակներ, անսպասելի շրջադարձեր (հարցեր, դիտողություններ), որոնք դժվար է կանխատեսել ու նախապես պատրաստվել դրանց:

Նման դեպքերում օգնության կարող են հասնել էրուդիցիան, խնդրո առարկայի հետ կապված լրացուցիչ տեղեկավության տիրապետելը, հոգեբանական թրծվածությունն ու ինքնատիրապետման կարողությունը:

Սակայն ինչպիսին էլ լինեն «հանկարծակի անզորության» պատճառները՝ տվյալ պահին անհրաժեշտ հակափաստարկների բացակայությունը, թե ուղղակի հոգեկան ուժերի տեղատվությունը, չի կարելի խուճապի մատնվել, «կորցնել գլուխը», վիատվել:

Այդպիսի դեպքերում խորհուրդ է տրվում հակառակորդի համար **աննկատ ձևով ձգձգել պատասխանը:** Դա կարելի է անել առաջադրված փաստարկի կապակցությամբ լրացուցիչ հարցեր տալով (չնայած իրականում դրանց կարիքն այնքան էլ չի զգացվում), պատասխանը սկսելով հեռվից, տվյալ հարցի հետ թեկուզև սերտորեն չկապված, սակայն միջնորդավորված կերպով առնչվող որևէ խնդրի քննարկումից: Երբեմն էլ այդ նպատակով սկսում են առարկել հակառակորդի երկրորդական, ոչ կարևոր մտքերը և այդ ընթացքում հավաքելով ուժերը, հերքում են նրա հիմնական, գլխավոր փաստարկները: Կարևորը ժամանակ շահելով ուշքի գալը, մտքերը հավաքելն ու կենտրոնանալն է:

Այս հնարքը դեռևս վաղնջական ժամանակներում գործածում էին հին դիալեկտիկները: Պլատոնի «Պրոտագորաս» երկխոսության մեջ այդ միջոցին է դիմում նաև Սոկրատեսը. «Պրոտագորասի այդ խոսքերն ունկնդիրներից շատերի մոտ առաջ բերեցին բարձրաձայն

գովեստներ: Իսկ ինձ մոտ սկզբում, երբ նա արտասանեց այդ, իսկ մյուսներն աղմկեցին, գլուխս պտտվեց ու աչքերս մթնեցին, կարծես ինձ հարվածեց հաղթանդամ մի բռնցքամարտիկ: Հետո ես, ճիշտն ասած, ժամանակ շահելու և կշռադատելու համար, թե իրականում ինչ է ասում պոետը, դիմում եմ Պրոդիկոսին.

– Պրոդիկո՛ս, չէ՞ որ Սիմոնիդեսը քո երկրացին է, դու պարտավոր ես օգնել նրան: Քեզ եմ դիմում, ինչպես, Հոմերոսի խոսքերով, Աքիլեսից նեղված Սկամանդրեսը օգնության էր կանչում Սիմոենտեսին՝ ասելով. «Շտապի՛ր, եղբա՛յր իմ, այս հզոր մարդուն մենք միասին պիտի սանձենք...»»[8]:

Ընդդիմախոսին սեփական շփոթվածությունն ու հոգեվիճակը չմատնելու համար խորհուրդ է տրվում չնայել երկչոտ հայացքով, երկրորդական թեմայի շուրջ խոսելիս չիջեցնել-չթուլացնել ձայնը, անհրաժեշտ է խոսել վստահ, համոզիչ տոնով և այլն:

Առանձին դեպքերում էլ պատասխանի ձգձգման եղանակին են դիմում, երբ ընդդիմախոսի փաստարկը թվում է ճշմարիտ, բայց հնարավոր սխալներից խուսափելու համար, այնուամենայնիվ, նախընտրում են անմիջապես չընդունել այն և ցուցաբերել որոշակի զգուշավորություն[9]: Կտրելուց առաջ մեկ անգամ ևս չափելու այդ սկզբունքը միանգամայն հասկանալի ու ընդունելի կարելի է համարել տարբեր վիճաբանությունների ընթացքում:

5.2.2. Նախօրոք պատասխան

Ընդհանրապես, հնարավոր է ժամանակային առումով ընդդիմախոսին պատասխանելու երեք տարբերակ: Նրան կարելի է պատասխանել անմիջապես իր ելույթից հետո: Սա ամենահաճախ հանդիպող ձևն է: Նման «շուտափույթ» պատասխանները հաճախ նպատակահարմար, իսկ երբեմն էլ ուղղակի անհրաժեշտ են անցանկալի

---

[8] ***Платон,*** Собрание сочинений в 4-х томах. Т. 1, М., 1990, էջ 451-452:
[9] Տե՛ս ***Поварнин С.И.,*** Спор. О теории и практике спора, էջ 93:

ուղղությամբ խոսակցության զարգացումը կանխելու, հակառակորդի ոչ նրբանկատ գործողությունները կասեցնելու առումով[10]:

Կարելի է ձգձգել, վերը դիտարկված նկատառումներով ուշացնել պատասխանը:

Եվ, վերջապես, հակառակորդին կարելի է **պատասխանել** նաև **նախօրոք**՝ մինչև նրա ելույթ ունենալը:

Այս հնարքը կիրառվում է այն դեպքում, երբ բանավիճողը ցանկանում է նախապես կանխել իրեն ուղղվելիք քննադատությունը կամ անցանկալի հարցերը:

Պատասխանատու ելույթից, բանավեճից առաջ կարևոր է ոչ միայն խորամուխ լինել հիմնախնդրի ու թեմայի մեջ, համակարգել սեփական փաստարկները, այլև ճշտել, թե ով է լինելու ընդդիմախոսը, ովքեր են լինելու լսարանում, ինչ աշխարհայացքային, գաղափարական արժեհամակարգերի կրողներ են նրանք: Այդպիսի տեղեկացվածությունը թույլ է տալիս կռահել նաև, թե ինչ հնարավոր հակափաստարկներ ու կռվաններ կարող են առաջարկվել նրանց կողմից:

Երբ այդքանը պարզ է, փաստարկողը կարող է լավագույնս պատրաստվել հնարավոր հակափաստարկները դիմագրավելու համար: Սակայն երբեմն պատասխանն ավելի հեռահար, արդյունավետ ու համոզիչ կարող է լինել, եթե հնչի նախքան հակառակորդի արտահայտվելը՝ կանխելով կամ զգալիորեն չեզոքացնելով նրա մեղադրանքները:

Նախօրոք պատասխանի էությունը հետևյալն է: Չսպասելով ընդդիմախոսի առարկություններին՝ ելույթ ունեցողը նախօրոք ներկայացնում է հնարավոր դիտողություններն ու առարկությունները, վերլուծելով մերժում դրանք:

Այդպիսի մարտավարությունը հնարավորության է տալիս **նախ**՝ խուսափել սուր հակադրությունից՝ թույլ չտալով հակամարտության շիկացում: **Երկրորդ**՝ ելույթ ունեցողն ինքն է առանց անցանկալի սրացումների ձևակերպում հակառակորդի հնարավոր առարկությունները: **Երրորդ**՝ դա զրկում է հակառակորդ կողմին ոչ միայն հա-

[10] Տե՛ս ***Стешов А.В.,*** Как победить в споре. О культуре полемики, էջ 136:

կափաստարկները սեփական մեկնաբանությամբ ներկայացնելու, այլև դրանք կրկնելու գայթակղությունից: Եթե անգամ հակառակորդ կողմը համառի և կրկնի դրանք, տպավորությունն արդեն այն չի լինի, որոշ դեպքերում էլ կարող է առաջ բերել ներկաների բողոքն ու դժգոհությունը: **Չորրորդ՝** ունկնդիրների մոտ ձևավորվում է ելույթ ունեցողի համար շահեկան այն տպավորությունը, որ ինքը, ազնիվ լինելով, չի փորձում անտեսել տվյալ խնդրի վերաբերյալ այլընտրանքային մոտեցումները, խույս տալ քննադատությունից, այլ շրջահայացորեն հաշվի է առնում անգամ հնարավոր հակադիր տեսակետները:

Այս հնարքը, ըստ էության, միանգամայն թույլատրելի է: Սակայն պետք է հաշվի առնել որոշ առանձնահատկություններ՝ այն անազնիվ ու անթույլատրելի հնարքի չվերածելու, ինչպես նաև հակառակորդի կողմից ելույթ ունեցողի դեմ շուռ տալը կանխելու համար:

Նախ, խորհուրդ չի տրվում նախօրոք պատասխանի հնարքը **կիրառել երկրորդ դեմքով** կամ հասցեականորեն[11]՝ «Պարոն X-ը կարող է ինձ հետ չհամաձայնել, պնդելով, թե…»: Այդ դեպքում, անգամ, եթե հնարքի հեղինակը ճիշտ է կռահել հակառակորդի մտադրությունը, կարող է վերջինիս կողմից մեղադրվել զրպարտության և իրեն անհեթեթ մտքեր վերագրելու մեջ: Ուստի նախընտրելի են **երրորդ դեմքով և անորոշ հասցեականությամբ** արված դատողությունները. *«մեզ կարող են առարկել՝ ասելով, թե…», «հնարավոր է ոմանք չհամաձայնեն՝ պնդելով, որ…», «գուցե կգտնվեն մարդիկ, ովքեր կպնդեն հակառակը՝ բերելով հետևյալ փաստարկները…»*[12]:

Եթե, անգամ, հակառակորդը տարբեր առիթներով, մամուլի էջերում, տվյալ վիճաբանության շրջանակներից դուրս իր ելույթների ընթացքում թույլ է տվել այնպիսի արտահայտություններ ու դատողություններ, որոնք կոնկրետ դեպքում կարող են հանդես գալ իբրև հնարավոր առարկություններ, ապա դրանք ներկայացնելիս ու վերլուծելիս պետք է լինել ճշգրիտ, չաղավաղել և սեփական հայեցողությամբ

---

[11] Հատկապես, եթե տվյալ միտքը ընդդիմախոսի կողմից երբևէ և որևէ կերպ չի հրապարակվել:

[12] Տե՛ս ***Հովհաննիսյան Հ. Օ.,*** Փաստարկում և հռետորություն, էջ 174:

չվերակառուցել ընդդիմախոսի մտքերը: Դա արդեն վիճաբանության ընթացքում հանդիպող անթույլատրելի հնարքների բնագավառն է և վերաբերում է հակառակորդի թեզիսի ու դրույթների միտումնավոր աղավաղումներին, որը շոպենհաուերյան բնորոշմամբ կարելի է անվանել «ծուռումուռ մեկնաբանություն»[13]:

Վերջապես, հակառակորդին կարելի է և **չպատասխանել** կամ **պատասխանել լռությամբ,** անտեսել, արհամարհել նրա առանձին դիտողություններն ու արտահայտությունները, որոնք նպատակ ունեն շեղել զրուցակցի ուշադրությունը, այն հրավիրել կեղծ հետքի վրա, հանել նրան հոգեկան հավասարակշռությունից և այլն: Այդպիսի դեպքերում հակառակորդի դիտողություններին ու հնարքներին չպատասխանելը, դրանք արհամարհելը Ա. Վ. Ստեշովը դասում է վիճաբանության ընթացքում սեփական դիրքորոշման պաշտպանության նպատակով գործածվող թույլատրելի միջոցների շարքը[14]:

5.2.3. Զգուշավոր ճշգրտումներ

Ոչ ոք երաշխավորված չէ բանավեճի, ելույթի ընթացքում վրիպակներից ու ակամա սխալներից: Ինչպե՞ս վարվել այն դեպքում, երբ ելույթ ունեցողը վրիպակ է թույլ տվել, սակայն ընդդիմախոսի և լսարանում նստած մարդկանց պահվածքից, դեմքերի արտահայտությունից հասկանալի է, որ նրանք չեն նկատել վրիպակը:

Գուցե ազնվորեն հայտարարե՞լ սպրդած սխալի մասին, շտկել այն և նոր միայն առաջ անցնել: Այդպես կարելի է վարվել, իհարկե, երբ զրուցակիցը և լսարանում ներկա գտնվողները տրամադրված են բարյացակամորեն, ունեն կառուցողական կեցվածք: Սակայն, երբ առկա է մրցակցություն, երբ առաջնային են շահերը, թույլ տրված սխալի մասին ազնիվ խոստովանությունը կարող է շահարկվել և կիրառվել հեղինակի դեմ՝ նրա վարկը սասանելու նպատակով:

---

[13] Տե՛ս ***Schopenhauer A.,*** Handschriftlicher Nachlass. Bd. 2, էջ 94:
[14] ***Стешов А.В.,*** Как победить в споре. О культуре полемики, էջ 136:

Իսկ գուցե, քանի դեռ ներկաներից ոչ ոք չի նկատել սխալը ու չի խոսել այդ մասին, պետք է լռությա՞ն մատնել այն և շարունակե՞լ ելույթը: Այդ դեպքում էլ, սակայն, սխալը կարող է բացահայտվել հետո: Հեղինակը կդառնա սխալ մտքի քարոզիչ և կրկին հարցականի տակ կդրվի նրա վարկը:

Գուցե կարելի է կատակի՞ դիմել և «մեղքը» զրուցակիցների վրա գցել՝ ասելով. «Ես դիտավորյալ մի վրիպակ թույլ տվեցի իմ խոսքում: Ցանկանում էի ստուգել, թե որքանո՞վ ուշադիր էիք լսում…»: Նախ՝ այդպիսի կատակ կարող է իրեն թույլ տալ նա, ով ունի կարգավիճակային առավելություն զրուցակցի (կամ զրուցակիցների) նկատմամբ: Բացի այդ, տվյալ հնարքն արագորեն կկորցնի իր արդյունավետությունը, եթե ելույթ ունեցողը վրիպի երկրորդ կամ երրորդ անգամ:

Տվյալ իրավիճակում առավել արդյունավետ և էթիկական տեսակետից էլ շատ ավելի նախընտրելի է մի միջոց, որը կարելի է անվանել ***զգուշավոր ճշգրտում:*** Ելույթ ունեցողը, կրկին անդրադառնալով իր նախորդ մտքին, «զգուշորեն» շտկում է տեղ գտած վրիպակը: **Այսպես՝** *«Ես ցանկանում եմ կրկին անդրադառնալ իմ նախորդ մտքին և մի փոքր ավելի հանգամանալից վերաշարադրել ու մեկնաբանել այն, որպեսզի թյուրըմբռնումներ չլինեն…», կամ՝ «Թույլ տվեք ավելի հանգամանալից ու ավելի պարզ բացատրել նախորդ դատողություններս…»:*

Կարող է հարց առաջանալ. իսկ ի՞նչ անել այն դեպքում, երբ թույլ տրված սխալը լուրջ է և հնարավոր չէ «ձեռքի հետ» շտկել այն: Նման դեպքերում պետք չէ դիմել տարատեսակ խորամանկությունների: Դրանք ավելի կբարդացնեն վիճակը: Անհրաժեշտ է պարզապես ընդունել սխալը և ներողամտություն հայցել: Եվ, իհարկե, **ելույթին պատրաստվել այնպես ջանադրաբար, թեմայի մեջ խորամուխ լինելով, որ լուրջ ու կոպիտ սխալներ պարզապես չլինեն[15]:**

[15] Տե՛ս ***Հովհաննիսյան Հ. Օ.,*** Փաստարկում և հռետորություն, էջ 175-176:

5.2.4. Բանավեճ կամակոր հակառակորդի հետ

Պատահում է իրավիճակ, երբ ընդդիմախոսը դրսևորում է յուրօրինակ «կամակոր» վարքագիծ՝ մերժելով մրցակցի ամեն մի փաստարկ ու դատողություն, ինչպիսին էլ դրանք լինեն: Դա կարող է տեղի ունենալ ոչ միայն հոգեբանական հակադրման պարագայում, այլ նաև այն դեպքում, երբ կողմերից մեկը, զգալով իր մոտալուտ պարտությունը, սկսում է անխտիր մերժել ու կասկածի տակ առնել մյուսի առաջարկած բոլոր դրույթներն ու փաստարկները, թեկուզև դրանք ակնհայտ ճշմարտություններ լինեն:

Այսպիսի իրավիճակներում կարելի է, ի ցույց դնելով հակառակորդի ոչ ողջամիտ կեցվածքը, **ավարտել վիճաբանությունը**: Առանձին դեպքերում էլ թերևս կարելի է **հեգնական տոնի անցնել** և «զվարճանալ», ինչպես խորհուրդ է տալիս Ի. Ս. Տուրգենևն իր «Ո՞ւմ հետ վիճել» արձակ բանաստեղծության մեջ[16].

«Վիճի՛ր քեզանից խելոքի հետ, նա քեզ կհաղթի ... բայց քո պարտությունից դու կրող ես օգուտ քաղել քեզ համար:

Վիճի՛ր մտքով քեզ հավասար մարդու հետ. ով էլ հաղթի՝ դու կվայելես պայքարի հաճույքը:

Վիճի՛ր անգամ հիմարի հետ. ո՛չ փառք, ո՛չ օգուտ կբերի դա քեզ: Իսկ ինչո՞ւ երբեմն էլ չզվարճանալ:

Մի՛ վիճիր միայն Վլադիմիր Ստասովի հետ»:

Սակայն ինչպե՞ս վարվել այն դեպքերում, երբ վեճն ընդհատելհեռանալը կամ հեգնական տոնի ու ծաղրի անցնելը հանգամանքների բերումով շահեկան լինել չեն կարող բանավիճողի համար:

Կարելի է նաև կամակոր հակառակորդին «բռնացնելու», նրան «սանձելու» երկու եղանակ դիտարկել[17]:

Առաջին դեպքում թեզիսի ապացուցման համար անհրաժեշտ փաստարկները հրամցվում են ցրված, համատեքստային դատողությունների ձևով, առանձին-առանձին, այնպես, որ հակառակորդը

---

[16] ***Тургенев И.С.,*** Полное собрание сочинений в 30 тт. Т. 10, М., 1982, էջ 180-181:
[17] Տե՛ս ***Поварнин С.И.,*** Спор. О теории и практике спора, էջ 94:

չնկատի դրանց միջև կապն ու փաստարկողի իրական նպատակը: Այդ դեպքում նա կարող է և ընդունել բերված փաստարկները: Դրանից հետո մնում է միայն համադրել ու զուգակցել առանձին փաստարկները, և թեզիսն ապացուցված է: Սակայն այս հնարքը պահանջում է մեծ վարպետություն, վեճն ամբողջությամբ պատկերացնելու և այն պլանավորելու հմտություն ու փորձ, ինչը ոչ բոլորին է տրված:

Մյուս տարբերակը համեմատաբար ավելի դյուրին է ու պարզ: Այն իրականացվում է **անհրաժեշտ *A* դրույթին *հակասող ոչ A դրույթի* առաջադրման եղանակով:** Ընդդիմախոսը, որ որոշել էր ամեն կերպ հակառակվել և հերքել մրցակցի առաջադրած ամեն մի դատողություն, կարող է գլխի չընկնել ու առանց երկար-բարակ մտածելու մերժել նաև այդ դրույթը **(ճիշտ չէ, որ ոչ A)**: Իսկ հերքելով ցանկալի դրույթի հակասող դրույթը՝ նա ակամա կընդունի մրցակցի համար ցանկալի դրույթը (**ճիշտ չէ, որ ոչ A => A**):[18]

Տվալ հնարքը հիշեցնում է այն դեպքը, երբ փոքր երեխան, կամակորություն անելով և ամեն կերպ հակառակվելով ծնողներին, հրաժարվում է որևէ բան ուտել: Առանձին դեպքերում ծնողը դիմում է խորամանկության. «Սեղանին դրված ուտելիքին ձեռք չտաս, դա ուրիշ բալիկի համար է...» կամ «դու այսօր սոված պիտի մնաս...»: Երեխան այս անգամ էլ փորձում է անել հակառակը...

Տիպական մի անեկդոտ: Իսրայելցի և պաղեստինցի քաղաքական գործիչները վիճում են որոշակի տարածքի պատկանելության հարցի շուրջ: Իսրայելցի քաղաքական գործիչը մեղադրանք է ուղղում պաղեստինցի գործընկերոջը.

– Դուք՝ պաղեստինցիներդ, հազար տարի առաջ այստեղ երկու հարյուր հազար իսրայելցիների եք կոտորել ու անխնա բնաջնջել:

– Բայց հազար տարի առաջ այստեղ պաղեստինցիներ չեն եղել:

– Ահա և այն, ինչը ես ցանկանում էի ապացուցել,- եզրափակում է իսրայելցին:

---

[18] Կամակոր հակառակորդին բռնացնելու այս հնարքը վերլուծում է նաև Ա. Շոպենհաուերը «Էրիստիկական դիալեկտիկա» աշխատության մեջ: Տե՛ս ***Schopenhauer A.,*** Handschriftlicher Nachlass. Bd. 2, էջ 89:

Այս հնարքի թույլատրելի-անթույլատրելի լինելու կապակցությամբ կան հակասական կարծիքներ: Հարց է առաջանում. որքանո՞վ է թույլատրելի կամ արդյո՞ք թույլատրելի է վիճողի ոչ անկեղծ լինելը: Գ. Բրուտյանի կարծիքով՝ այդ անազնվությունը հազիվ թե կարելի լինի արդարացնել հակառակ կողմի անազնվությամբ: «Ստացվում է՝ ով ում կխորամանկի: Իսկ խորամանկությունը, կեղծավորությունը փաստարկման ամենևին էլ ոչ ամենաընդունելի ուղեկիցներն են: Դրա համար էլ բոլոր հիմքերը կան «հակադրության միջոցով փաստարկը» կեղծ փաստարկ համարելու համար»[19]: Որոշ հետազոտողներ էլ տվյալ հնարքը համարում են թույլատրելի, դրա կիրառությունն արդարացնելով ավելի մեծ անարդարության դեմ պայքարելու անհրաժեշտությամբ:[20]

Դժվար է միանշանակ համաձայնել տեսակետներից որևէ մեկի հետ: Թերևս պետք է ընդունել, որ կան թույլատրելիի և անթույլատրելիի սահանագծին գտնվող հնարքներ, որոնց թույլատրելիության կամ անթույլատրելիության հարցը պետք է լուծել կոնկրետ իրավիճակներում, կոնկրետ պայմանները հաշվի առնելով: Այդպիսի հնարքների գործածումը արդարացված կարող է լինել միայն ծայրահեղ, բացառիկ իրավիճակներում:

5.3. Ապակառուցողական հնարքներ

5.3.1. Թեզիսի նենգափոխում

Անազնիվ ու անփույթ բանավեճերի ընթացքում հաճախ հանդիպող սխալ կամ դրան համապատասխան՝ ապակառուցողական հնարք է թեզիսի նենգափոխումը[21]:

---

[19] ***Брутян Г.А.,*** Очерк теории аргументации. Ереван, 1992, էջ 55:

[20] ***Поварнин С.И.,*** Спор. О теории и практике спора, էջ 94:

[21] Հնարքի հիմքում ընկած է նույնության օրենքի՝ որոշակիության սկզբունքի խախտումը: Եթե այն կատարվել է ակամա, ապա կարելի է խոսել ***թեզիսի այլափոխման*** մասին:

Այս հնարքի դեպքում տվյալ դրույթի փոխարեն ապացուցվում կամ հերքվում է դրան նման, բայց ըստ էության տարբեր մեկ այլ դրույթ, և դա ներկայացվում է որպես սկզբնական դրույթի հերքում կամ ապացուցում:

Ըստ կատարված փոփոխության մասշտաբների և «հանդգնության» աստիճանի՝ դրույթի նենգափոխումները կարելի է բաժանել երեք խմբի՝ ***մասնակի, ամբողջական*** և ***իսպիտանարար նենգափոխումներ***[22]:

Մասնակի նենգափոխման դեպքում մտքի առարկան և դրան վերագրվող հատկությունը մնում են նույնը, սակայն փոխվում է դատողության քանակը, մոդալականությունը: Մասնակի նենգափոխումը կարող է կատարվել նաև տեսակետում որոշակի վերապահումներ ավելացնելով կամ դրանք անտեսելով, գնահատականների մեղմացմամբ կամ խստացմամբ և այլն:

Օրինակ՝ դրույթի քանակական բնութագրի փոփոխություն է կատարվում, երբ ոմն մեկը, չկարողանալով ապացուցել իր կողմից հռչակած *«բոլոր պաշտոնյաները կաշառակերներ են»* դրույթը, այն փոխարինում է *«պաշտոնյաների մի մասը կաշառակեր է»* դատողությամբ, սա էլ իր հերթին՝ *«առանձին պաշտոնյաներ կաշառակերներ են»* զգուշավոր պնդմամբ: Սովորաբար դրույթի ընդլայնումը (նաև գնահատականի խստացումը) ձեռնտու է հարձակվողի, իսկ նեղացումը (մեղմացումը)՝ պաշտպանվողի համար:

Երբեմն էլ հակառակորդի դրույթի սխալության պատրանք ստեղծելու և նրան քննադատության տակ առնելու նպատակով հնարավորության մոդալականությունը փոխարինում են անհրաժեշտության մոդալականությամբ: **Օրինակ՝** կողմերից մեկն ասում է. *«Հնարավոր է, որ Շեքսպիրի անձը մտացածին է»:* Մյուսը, հեշտ առարկելու նպատակով, խստացնում է նրա դրույթը. *«Ձեր այն պնդումը, թե Շեքսպիրն իրականում գոյություն չի ունեցել...»:* Նախորդը, նկատե-

---

[22] Տե՛ս ***Հովհաննիսյան Հ. Օ.,*** Փաստարկում և հռետորություն, էջ 188: Ա. Շոպենհաուերը թեզիսի նենգափոխման տարբերակները դիտարկելիս օգտագործում է «bescheiden»–համեստ, չափավոր, «unverschämt»–անամոթ և «Diversion» եզրույթները: Տե՛ս ***Schopenhauer A.,*** Eristisce Dialektik. Handschriftlicher Nachlass. Bd. 2, էջ 96:

լով ընդդիմախոսի հնարքի վտանգավորությունը, աշխատում է առավել ընդգծել իր դատողության հավանական բնույթը. *«Գրականության մեջ կա վարկած, ըստ որի, Շեքսպիրի անձը կարող է և մտացածին լինել»:*

Թեզիսի մասնակի նենգափոխումները կարող են կատարվել նաև գնահատականների փոփոխմամբ: **Օրինակ՝** «Պարոն X-ը ***խափ-տել է*** օրենքը» – «Փաստորեն Դուք պնդում եք, որ X-ը ***հանցագործ է***»: Այդպիսի «էֆեկտներ» կարելի է ստանալ բնական լեզվի հարստությունն օգտագործելով, հոմանիշների ու համանունների «խաղով». *առատաձեռնություն-վատնողություն, արվեստի ազատություն-արվեստի սանձարձակություն, ժողովրդավարություն-անարխիա, ուժեղ իշխանություն-բռնապետություն* և այլն[23]:

Ըստ ավանդության՝ թեզիսի մասնակի նենգափոխման միջոցով Հին աշխարհի հռչակավոր առակախոս Եզոպոսին հաջողվել է փրկել իր տիրոջը՝ փիլիսոփա Քսանթոսին անփառունակ պարտությունից ու ունեցվածքը կորցնելուց: Հերթական խնջույքներից մեկի ժամանակ գինեհար Քսանթոսն իր աշակերտի հետ մարդու հնարավորությունների մասին զրույցի ընթացքում պարծենում է, թե կարող է խմել ամբողջ ծովը: Գրազ է գալիս՝ գրավ դնելով իր ողջ ունեցվածքը: Սակայն Եզոպոսի օգնությամբ նա այս անգամ էլ կարողանում է խույս տալ անխուսափելի թվացող պարտությունից: Ահա թե ինչպես է դա նրան հաջողվում:

«Քսանթոսը գավաթը մոտեցրեց շուրթերին, բայց հանկարծ կանգ առավ և ասաց.

– Իսկ որտե՞ղ է դատավորը:

Դատավորը մոտեցավ: Քսանթոսը նրան հարցրեց.

– Բայց որո՞նք են մեր պայմանները:

– Դու պետք է ամբողջ ծովը խմես:

– Եվ վե՞րջ,– հարցրեց Քսանթոսը:

---

[23] Ֆր. Բեկոնն իրավացիորեն նկատում է, որ լեզուն երբեմն կարող է վերածվել սխալների ու խաբեությունների վտանգավոր աղբյուրի, իսկ գիտնականների հեղինակավոր ու բարձրագոչ բանավեճերը՝ «բառերի ու անվանումների շուրջ մղվող վեճերի»: ***Бэкон Ф.,*** Сочинения в двух томах. Т. 2, М., 1978, էջ 25:

– Վերջ,– ասաց դատավորը:

Քսանթոսը շուռ եկավ դեպի բազմությունը և ասաց.

– Իմ թանկագին քաղաքացիներ, ձեզ հայտնի է, որ շատ գետեր են թափվում ծովը՝ և ջրառատ, և հորդահոս: Իսկ ես գրազ եմ եկել, որ միայն ծովը խմեմ, ոչ թե գետերն էլ նրա հետ: Թող իմ ախոյանը բոլոր գետերի հունը փակի, որպեսզի ես ստիպված չլինեմ ծովի հետ միասին գետերն էլ խմել:

Եվ այսպես, փիլիսոփան վեճը շահեց: Ի փառս Քսանթոսի, բազմությունը բարձրաձայն աղմկեց...»[24]:

Ամբողջական անենգափոխման ժամանակ սկզբնական դրույթի փոխարեն առաջարկվում է մի նոր պնդում, որը առաջինին նման չէ ո՛չ մտքի առարկայով (դատողության սուբյեկտ), ո՛չ էլ դրան վերագրվող հատկությամբ (դատողության պրեդիկատ):

Օրինակ: Մեկը պնդում է, թե իշխանությունների գործելակերպը չի համապատասխանում օրվա պահանջներին, այնպես որ նրանց հրաժարական տալու ժամանակն է: Սակայն, հանդիպելով զրուցակցի համառ դիմադրությանը և չկարողանալով ապացուցել իր դրույթը, միանգամից առաջ է քաշում մի նոր թեզ՝ հայտարարելով. «Եվ, ընդհանրապես, նրանք իշխանության գլուխ են անցել ոչ սահմանադրական ճանապարհով»: Եթե հակառակորդը, կուլ տալով խայծը, սկսում է վիճարկել այս նոր դրույթը՝ հնարքն հաջողված է:

Հասարակական-քաղաքական երկխոսությունների մշակույթի չձևավորվածության պայմաններում այդպիսի հնարքները որոշակի տպավորություն են գործում հասարակական կարծիքի վրա՝ ամենևին էլ չհանգեցնելով ո՛չ խնդրի լուծմանը, ո՛չ էլ դրա ըստ էության պարզաբանմանը:

Ա. Շոպենհաուերը քննարկվող հնարքը լուսաբանում է հետևյալ օրինակով. մեզանից պահանջում են մեկնաբանել, թե ինչու չի կարելի վստահել հայտնի ֆիզիկական վարկածին, իսկ մենք, չունենալով համապատասխան փաստարկներ, սկսում ենք խոսել մարդկային

[24] Եզոպոսի առակները: Երևան, 1990, էջ 45-47:

գիտելիքի անհուսալիության ու խաբուսիկության մասին և ամեն կերպ տարածվել դրա շուրջ[25]:

Խափանարար անձնափոխման դեպքում թեզիսի փոփոխությունն ուղեկցվում է զրուցակցին հոգեկան հավասարակշռությունից հանելուն միտված հայտարարություններով, նրա անձնականին վերաբերող դրույթների առաջադրմամբ կամ այդպիսի ակնարկներով, ամբարտավան պահվածքով ու գործելակերպով: Այդ եղանակով հնարավոր է ստիպել հակառակորդին ընկնել ծայրահեղությունների մեջ՝ ընդլայնել սեփական թեզիսը, խստացնել իր գնահատականներն ու ձևակերպումները: Հայտնի է, որ զայրացած մարդն ավելի կոպիտ ու սուր գնահատականներ կարող է տալ, անել ավելի կոշտ հայտարարություններ, քան հոգեպես հանգիստ վիճակում: Իսկ խիստ ու ծայրահեղ գնահատականները շատ ավելի դժվար է ապացուցել, քան կշռադատված դրույթները:

Օրինակ: Պատգամավորին, որը օրենսդիր մարմնում ներկայացնում է կանանց դրության բարելավմանը միտված օրենքի նախագիծ, խորհրդարանական քննարկումների ժամանակ հանդիմանում են. «Լավ կլիներ՝ նախ կարողանայիք ձեր աղջիկների ու կնոջ «սանձերը ձգել», հետո միայն հայոց կանանց մասին օրենսդրական նախաձեռնություններով հանդես գայիք»: 100-ից 99%-ի դեպքում տուրուդմփոցն անխուսափելի է...

Դիվերսիայի կամ խափանման ամենակոպիտ ձևերից է վեճի անտակտ ընդհատումը: Դա այն դեպքն է, երբ վիճող կողմերից մեկը, տեսնելով, որ իր գործերը վատ են, փորձում է ամեն կերպ ընդհատել վեճը, ցուցադրաբար ընդգծում է, որ չի ցանկանում լսել դիմացինին, փակում է ականջները, երգում, սուլում և այլն: Իհարկե, նման վարքագիծն անգամ սոփեստական հնարքների շարքը դժվար է դասել:

5.3.2. Օգտապաշտական փաստարկ

Բավական տարածված է նաև այն սխալը և դրան համապատասխան՝ այն իմաստակությունը, երբ դրույթի ճշմարտությունն

[25] Տե՛ս ***Schopenhauer A.,*** Eristisce Dialektik. Handschriftlicher Nachlass. Bd. 2, էջ 92-93:

ապացուցելու փոխարեն սկսում են ապացուցել, թե այն օգտակար (կամ վնասակար) է ընդդիմախոսի համար: Այդ սկզբունքը սովորական և, կարելի է ասել, ընդունված երևույթ է քաղաքականության բնագավառում, որտեղ շահերն առաջնային դեր են խաղում: Այն հաճախ է հանդիպում նաև լայն զանգվածների շրջանում տարվող քարոզչական աշխատանքների ժամանակ: Օրինակ՝ ապացուցելու համար, որ Քվեբեկի անկախության պահանջն անհիմն է ու անօրինական, ապացուցում են, թե դա ինչ վնասներ կարող է բերել մյուս կանադացիներին: Եվ ընդհակառակը, ապացուցելու համար, որ այն օրինական է, ցույց են տալիս, թե ինչ օգուտներ կարող է բերել քվեբեկցիներին:

Բնական է, որ մարդիկ չեն կարող անտարբեր լինել սեփական շահի նկատմամբ, իսկ երբեմն էլ սեփական շահերը վեր են ամեն ինչից: «Ինչեր ասես, որ ի վիճակի չենք անելու շահի ազդեցության տակ»,– գրում է Կ. Ա. Հելվեցիուսն իր «Մարդու մասին» աշխատության մեջ[26]: Ֆրանսիացի փիլիսոփան նշում է, թե միևնույն հայացքները ճշմարիտ կամ կեղծ են թվում, կախված այն բանից, թե որքանով են մարդիկ շահագրգռված դրանք այդպիսին համարելու: Բոլորն ընդունում են երկրաչափական աքսիոմների ճշմարտությունը միայն նրա համար, որ դա չի շոշափում իրենց շահերը: Եթե դրանք որևիցե ձևով դիպչեին մարդկանց շահերին, ամենահստակ ապացուցված դրույթները կսկսեին նրանց վիճարկելի թվալ: Անհրաժեշտության դեպքում նրանք կարող են ապացուցել, որ պարունակվողը մեծ է պարունակողից[27]:

Շահադիտական փաստարկները, որ իրենց հարմարության պատճառով «գրպանի» փաստարկներ են կոչվում, մարդկանց վրա ունենում են հիպնոսող ազդեցություն: Ա. Շոպենհաուերը գրում է, թե այնտեղ, որտեղ հնարավոր է գործի դնել այդ հնարքը, ավելորդ են բոլոր մյուսները[28]: Այն ավելի համոզիչ է գործում, քան մարդկային բանականությանն ուղղված բազմաթիվ այլ փաստարկներ: «Եթե

---

[26] ***Гельвеций К.А.,*** Сочинения в 2-х томах, т. 2, М., 1974, էջ 468:
[27] Տե՛ս նույնը, էջ 465:
[28] ***Schopenhauer A.***, Eristisce Dialektik. Handschriftlicher Nachlass. Bd. 2, էջ 102-103:

կարողանան հակառակորդին հասկացնել, որ իր կարծիքը, անգամ, եթե այն ճշմարիտ է, կարող է վնաս հասցնել իր շահերին, ապա նա դեն կնետի այն այնպիսի արագությամբ, կարծես անզգուշորեն ձեռքն էր առել շիկացած երկաթի կտոր»[29]:

5.3.3. Թվացյալ հերքումներ

Երբեմն փորձված սոփեստները հակառակորդի թեզիսի հերքման փոխարեն հերքում են դրա օգտին բերված ապացույցները և այնպիսի կեցվածք ընդունում, թե ընդդիմախոսի թեզիսը ջախջախված է: Այնինչ, միակ ճիշտ հետևությունն այստեղ այն է, որ թեզիսն ապացուցված չէ: Իհարկե, ուսուցչի համար դժվար չէ հերքել երկրաչափական հայտնի թեորեմի օգտին թույլ աշակերտի կառուցած սնանկ ապացույցները: Սակայն դա ամենևին էլ չի նշանակում, թե տվյալ թեորեմը սխալ է: Կամ էլ այն փաստը, որ դատական գործընթացի ժամանակ դատախազին հաջողվել է հերքել դատապաշտպանի կողմից իր պաշտպանյալի անմեղության օգտին բերված փաստարկները, դեռևս չի նշանակում, որ տվյալ անձը մեղավոր է: Մեղադրող կողմը դեռ պետք է լրացուցիչ ջանքեր թափի նրա մեղքը հիմնավորապես ապացուցելու համար:

Որոշ դեպքերում էլ ընդդիմախոսին հերքելու, «բռնացնելու» նպատակով մատնացույց են արվում նրա խոսքի և գործի միջև եղած հակասությունները: Ահա մի հատված Հովհ.Թումանյանի «Անուշ» պոեմից.

- Ես էլ Սարոյին չեմ սիրում՝ ասի,
Տեսնում ես չոքած ինչպես եմ լալիս...
- Դու խաբո՞ւմ ես ինձ, սուրլի՛կ, խաբեբա՛,
.....
Էն ի՞նչ է հապա, որ տեղն ենք մտնում՝
Հեկեկում ես դու գիշերվա մթնում.
Էն ի՞նչ է հապա, որ դու երազում
«Սարո ջան, Սարո... Սարո՜» ես ասում...

---

[29] ***Schopenhauer A.***, նշվ. աշխ., էջ 103:

Նման դեպքերում, երբ թեզիսը վերաբերում է անմիջականորեն զրուցակցի վարքագծին, նրա գործունեությանը, հերքման այս եղանակը միանգամայն ընդունելի է:

Սակայն, երբեմն էլ այդ սկզբունքը գործի է դրվում այն ժամանակ, երբ զրուցակցի դատողություններն անմիջականորեն չեն վերաբերում իր վարքագծին: Այդ դեպքում նշված հնարքը ձեռք է բերում սոփեստական երանգավորում[30]: Ենթադրենք, ինչ-որ մեկը բողոքում է, թե Հայաստանում ապրելն անտանելի է դարձել: Նրան առարկում են. «Իսկ ինչո՞ւ հենց առաջին ինքնաթիռով չեք մեկնում Հայաստանից»: Կամ էլ, ասենք, հայրենասիրության ու խիզախության դասեր տվող պատերազմի վետերանին, փորձելով առարկել, իսկ ավելի ճիշտ՝ շփոթեցնել ու նեղը գցել, հանդիմանում են. «Իսկ ինչո՞ւ դու չզոհվեցիր ռազմաճակատում, այլ գերի ընկար»:

Նման մոտեցումը ոչ միայն անտրամաբանական է, այլև անտակտ ու ոչ բարոյական: Սովորաբար այդպիսի հնարքների են դիմում հակառակորդի «բերանը փակելու» համար, երբ դժվարանում են ըստ էության առարկել նրա դրույթները և դրանց հերքման համար առաջադրել ավելի լուրջ փաստարկներ:

Ս. Պովարնինն այդ հնարքի լուսաբանման առիթով քննարկում է հետևյալ օրինակը. *«Զինվորին ապացուցում են, որ պետք է ռազմաճակատ գնալ և մարտնչել: Նա պատասխանում է. «Ուրեմն վերցրեք հրացանը և ինքներդ էլ գնացեք»»*[31]:

Զինվորին սպառիչ պատասխանելու համար անհրաժեշտ են երկարաշունչ դատողություններ, որոնք ոչ նա, ոչ էլ ունկնդիրները չեն

---

[30] Երրորդի բացառման և հակասության օրենքները տարածվում են նույն նյութից (սուբյեկտից և պրեդիկատից) կազմված համապատասխանաբար՝ ***հակասող*** (այդպիսիք են ընդհանուր հաստատական և մասնավոր ժխտական, ընդհանուր ժխտական և մասնավոր հաստատական, եզակի հաստատական և եզակի ժխտական դատողությունների զույգերը) և ***հակադիր*** (հակասող և հակադեմ) դատողությունների վրա: Հակադեմ են նույն սուբյեկտից և պրեդեկատից կազմված ընդհանուր հաստատական և ընդհանուր ժխտական դատողությունները և նույն սուբյեկտն ունեցող այն դատողությունները, որոնց պրեդիկատները հակադեմ հասկացություններ են: Տե՛ս ***Բրուտյան Գ. Ա.,*** Տրամաբանության դասընթաց, էջ 138-144; 68-70: Տե՛ս նաև ***Հովհաննիսյան Հ. Օ.,*** Փաստարկում և հռետորություն, էջ 42; 55-56:

[31] ***Поварнин С.И.,*** Спор. О теории и практике спора, էջ 108:

հասկանում կամ չեն ընդունում: Մինչդեռ նրա «հնարամիտ» փաստարկը ոմանց թվում է ակնառու, պարզ ու հասկանալի: «Սկսեք կշռադատել, որ ամեն մեկն ունի իր պարտքը, որը պետք է կատարել, և առանց դրա պետությունը կկործանվի, որ նրա պարտքը, քանզի նա օրենքով կոչված է պետության պաշտպանության համար, մարտնչելն է: Եթե ինձ զորակոչի օրենքը՝ կգնամ և ես: Ասեք այս ամենը, մտածեք ավելի ծանրակշիռ առարկություններ. զինվորը և անգամ նրանից ավելի զարգացած որոշ մարդիկ, հաճախ չեն էլ հասկանա ձեր դատողությունները, անգամ, եթե չուզենան էլ «չհասկանալ»: Այնպիսի հասկացություններն, ինչպիսիք են «պարտք», «պետություն», «օրենք», դրա ծագումն ու նշանակությունը և այլն, նրանց համար չափազանց վերացական են, հեռավոր, աղոտ, բարդ և ուժ չունեն»[32]:

Այս հնարքի էությունն ավելի ցայտուն, ակնհայտ ձևով կարելի է բացահայտել հետևյալ ծիծաղաշարժ ու զավեշտական օրինակով: Մարզիչը մեկ րոպե տևող հանգստի պահին հանդիմանում ու դիտողություններ է անում բռնցքամարտիկին, որն անհաջող է վարել առաջին ռաունդը: Իսկ նրա սանը պատասխանում է. «Եթե ամեն ինչ այդքան լավ գիտես, ապա ինչո՞ւ ինքդ ռինգ չես մտնում» կամ՝ «Լավ է, ինքդ հագիր ձեռնոցներն ու շարունակիր մարտը»:

Նշված հնարքը բնութագրելով որպես հակառակորդի «բերանը փակելու» ձևերից մեկը՝ Պովարնինն ընդգծում է, որ այն «ոչ մի ընդհանուր բան չունի վեճի ընթացքում ճշմարտության համար ազնիվ պայքարի հետ»[33]:

5.3.4. Սուտ կամ կիսաճշմարտություն

Էրիստիկական և սոփեստական բնույթի վիճաբանությունների ընթացքում այնքան էլ հազվադեպ չէ մարդկային անկատարելիության այնպիսի դրսևորում, ինչպիսին սուտն է: Անազնիվ վիճողներն

[32] Նույն տեղում:
[33] Նույն տեղում:

իրենց թեզիսի ապացուցման կամ հակաթեզիսի հերքման նպատակով հաճախ չեն խորշում կեղծ, չհիմնավորված փաստարկներ առաջադրելուց: Նման քայլի են դիմում, և այն հաջողվում է հատկապես այն ժամանակ, երբ որոշակի վստահություն ու հեղինակություն են վայելում ընդդիմախոսի կամ ունկնդիրների մոտ:

Սակայն, սուտն անվտանգ ու անզոր կլիներ, եթե հանդես գար բացահայտորեն: Ի տարբերություն ճշմարտության, կանխամտածված սուտը երբեք «մերկ» չի լինում: Ստի մշտական ուղեկիցը խորամանկությունն է, որը զանազան «հագուստների» տակ քողարկում ու թաքցնում է նրա իսկական դեմքը, «շաղախում» ճշմարտության հետ:

Նույն սկզբունքով են տարածվում նաև տարատեսակ ապատեղեկատվությունները: ***Օրինակ:*** Ընդդիմախոսին կամ հանրությանը հրամցնելու համար դրույթը, թե երկու քաղաքական գործիչների միջև ձեռք է բերվել գաղտնի պայմանավորվածություն, ներկայացվում են նաև նրանց հանդիպման մի շարք մանրամասնություններ. տեղը, ժամը, տևողությունը, հանդիպման մյուս մասնակիցները, անգամ՝ հանդիպողների հագուկապը, հանդիպման արդյունքում հնչեցված տեսակետներ: Այս ամենի ճշմարտության մեջ լսարանը կարող է համոզվել տեղեկատվության այլ աղբյուրների օգնությամբ (օրինակ՝ լուրերի թողարկման համապատասխան ռեպորտաժը դիտելով): Հաշվարկն այն է, որ զրուցակիցը, հավաստիանալով տեղեկատվության՝ նշված բաղադրիչների ճշմարտացիության մեջ և վստահություն ձևավորելով տեղեկատվական աղբյուրի նկատմամբ, որպես ճշմարտություն կընկալի նաև գաղտնի պայմանավորվածություն ձեռք բերելու մասին դրույթը:

Նման հնարքներն ու ապատեղեկատվությունը դիմագրավելու և ծուղակը չընկնելու համար **հարկավոր է տարբերել էականը ոչ էականից,** կռահել տեղեկատվության հիմնական ասելիքը, «մեխը» և քննարկել այն առանձին:

5.3.5. Սուբյեկտիվ փաստարկ

Կեղծ կամ չստուգված փաստարկների գործադրման վրա հիմնված մյուս իմաստականությունը պովարինյան տերմինաբանությամբ կոչվում է «սուբյեկտիվ փաստարկ»[34]: Ի տարբերություն նախորդի՝ այս դեպքում սոփեստն իր միտքն ապացուցելու համար հիմնվում է հենց ընդդիմախոսի կամ ունկնդիրների թյուր ու սխալ պատկերացումների վրա: Այսինքն՝ իրեն անհրաժեշտ կեղծ փաստարկը նա փոխառնում է հենց ընդդիմախոսից: Նման հնարքը հաճախ է օգտագործվում ունկնդիրների համար վեճերի ընթացքում, երբ լսարանին համոզելու նպատակով դիմում են չստուգված, բայց նրա կողմից ընդունելի և ճշմարիտ համարվող դրույթների օգնությանը:

Տվյալ հնարքի կիրառման մասնավոր դրսևորումներ են, օրինակ, տարատեսակ նախապաշարմունքների, հանրային կարծիքում առկա կարծրատիպերի, սնահավատության շահարկումները, նախանշանների միտումնավոր մեկնաբանությունները և այլն:

Դիմացինի թերությունների ու սխալների շահարկումը կամ չարաշահումը, ըստ էության, ևս պետք է դասել ոչ թույլատրելի հնարքների ու սոփեստությունների շարքը: Սակայն Պովարնինն այդ հարցին մոտենում է որոշակի վերապահումով: Նա գտնում է, որ սուբյեկտիվ փաստարկի որոշ տարատեսակներ կարելի է թույլատրելի համարել մասնավորապես այն դեպքերում, երբ այդ հնարքին դիմողը չի թաքցնում իր կասկածը տվյալ փաստարկի ճշմարտացիության նկատմամբ («բացահայտ սուբյեկտիվ փաստարկ»), և երբ այդ հնարքին են դիմում ճշմարիտ դրույթի ապացուցման ու այլ բարի նպատակներով[35]:

Ըստ էության, հարցն այստեղ էլ հանգում է միջոց-նպատակ փոխհարաբերության հիմնախնդրի բարոյագիտական-փիլիսոփայական տեսանկյուններին, ինչի մասին խոսվեց կամակոր հակառակորդին «բռնացնելու» եղանակների կապացությամբ:

---

[34] Տե՛ս ***Поварнин С.И.***, Спор. О теории и практике спора, էջ 116:
[35] ***Поварнин С.И.***, նշվ. աշխ., էջ 117:

5.3.6. Նախապաշարմունքների և կարծրատիպերի և շահարկում

Բոլոր ժամանակներում էլ հանրային կարծիքում գոյություն ունեն զանազան կարծրատիպեր ու նախապաշարմունքներ: Դրանք կարող են անազնիվ վիճողի կողմից շահարկվել ընդդիմախոսի նկատմամբ հոգեբանական ճնշում գործադրելու, ինչպես նաև լսարանի վրա շահեկան տպավորություն թողնելու նպատակով:

Օրինակ՝ հանրահավաքի ժամանակ սկսված անձրևը կարող է մեկնաբանվել որպես «Աստծո պարգև» (կամ նրա անհամաձայնություն ու զայրույթ), ամպերի տակից արևի դուրս գալը՝ տվյալ գործի վրա «Աստծո լույսն իջնելու» իրողություն, հանկարծակի սկսված քամին՝ բողոքավոր քաղաքացիների տրամադրությանը համահունչ՝ «բնության ընդվզում» և այլն:

Նույնը վերաբերում է նաև կարծրատիպերի շահարկմանը: Դեռևս գործող գենդերային կարծրատիպերի շարքին պետք է դասել մտայնությունը, թե հասարակական-քաղաքական ակտիվությունը այնքան էլ կանացի զբաղմունք չէ, և որ այդ բնագավառում կանայք ավելի շատ օժանդակ դերակատարություն կարող են ունենալ: Գ. Հեգելը նկատում է, թե «Կանայք կարող են լինել կրթված, բայց նրանք ստեղծված չեն բարձրագույն գիտությունների համար... Պետությունը վտանգվում է, երբ կառավարության գլխին կանայք են, քանզի նրանք գործում են ոչ թե համընդհանուրի պահանջներով, այլ ղեկավարվում են պատահական հակումներով ու կարծիքներով»[36]:

2012 թ. ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ Երևան քաղաքի ընտրատարածքներից մեկում մրցակցության էին ելել ԱԺ պատգամավոր մեծահարուստ տղամարդը և կին լրագրողը: Վերջինս պարբերաբար իր գլխավոր մրցակցին հրավիրում էր հրապարակային բանավեճի: Տղամարդ թեկնածուն խուսափում էր՝ պատճառաբանելով, որ ջենտլմենավարի չի լինի կնոջ հետ վիճելը, նրա նկատմամբ տարած հաղթանակով հպարտանալը: Առանձին դեպքերում էլ գործի էր դրվում հեգնանքը («Կոռեկտ չեմ համարում կնոջ

[36] ***Гегель Г. В.,*** Философия права. М., 1990, էջ 215-216:

հետ բանավիճել: ... Համ էլ կին է, բա որ բանավեճի ժամանակ ինձ իրո՞ք ճանկռեց...»[37]):

5.3.7. Փաստարկերի «բազմապատկման» հնարքը

Այս հնարքի հիմքում ընկած է կրկնաբանության միտումնավոր կիրառումը: Այն պետք է սկզբունքորեն տարբերել նաև կրկնության պերճախոսական հնարից:

Փաստարկի «բազմապատկման» դեպքում նույն փաստարկը կրկնելով տարբեր ձևերով ու բառերով, ներկայացնելով ու վերլուծելով տարբեր տեսանկյուններից՝ փորձ է արվում լսարանի մոտ տպավորություն ստեղծելու, թե ապացուցվող տեսակետի օգտին բազմաթիվ փաստարկներ են ներկայացված, և այն բավականաչափ հիմնավորված է:

Օրինակ: Հիմնավորելու համար ***«ազատությունը լավ բան է»*** դրույթը՝ կարող են ասել.

ա) Ազատությունն անփոխարինելի արժեք է:

բ) Ազատությունը որևէ այլ արժեքի հետ համեմատել անգամ անկարելի է:

գ) Ազատությունը բացարձակ արժեք է:

դ) Առանց ազատության՝ կյանքն անիմաստ է:

ե) Հերոսները հանուն ազատության չեն վարանել անգամ իրեց կյանքը զոհաբերել:

զ) Հանուն ազատության են եղել Վարդան Մամիկոնյանի և նրա համախոհների զոհաբերությունները:

է) Ազատության համար է եղել նաև Աղբյուր Սերոբի, Անդրանիկ Օզանյանի ու նրանց զինակիցների պայքարը:

ը) Ազատության համար էին նաև մերօրյա ազատամարտիկների զոհողություններն ու զրկանքները:

---

[37] https://www.1in.am/73920.html; https://www.youtube.com/watch?v=qWdB2w_Ylgk (դիտումը՝ 29.09.2019թ.):

թ) Տպավորիչ ու համոզիչ են հնչում Միքայել Նալբանդյանի տողերը.

Թող որուրա իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թող դավ դնեն թշնամին,
Ես մինչ ի մահ, կախաղան,
Մինչև անարգ մահու այուն,
Պիտի գոռամ, պիտ կրկնեմ
Անդադար. ազատությո՜ւն:

Ներկայացված փաստարկներն ըստ էության դիտարկելու դեպքում հարկ է նկատել, որ որևէ նոր փաստարկ, քան հենց ապացուցվելիք դրույթը, (ազատությունը լավ բան է) ներկայացված չէ:

Թե՛ ճանաչողական, թե՛ բարոյական նկատառումներով անթույլատրելի՝ փաստարկների նման «բազմապատկումը» հանդիպում է հատկապես համեմատաբար թույլ լսարանի առջև բանավեճերի ու երկարաշունչ ելույթների ժամանակ:

5.3.8. Քողարկված փաստարկներ

Փաստարկներին առնչվող ուշագրավ, բայց մասնագիտական գրականության մեջ քիչ հետազոտված հնարքներից մեկն էլ կարելի է անվանել «քողարկված կամ ոչ բացահայտ փաստարկ»: Այդպիսի հնարքներն արագորեն նկատելու, ճիշտ կողմնորոշվելու և դրանցից խուսափելու գործում մեծապես օգտակար կարող է լինել Գ. Ա. Բրուտյանի փոխակերպական տրամաբանության համակարգի և հաղորդակցման գործընթացներում համատեքստային ու ենթատեքստային գործոնների դերի իմացությունը:

Վիճող կողմերից մեկը, մի շարք նկատառումներով չցանկանալով տվյալ փաստարկը (որը կարող է լինել նաև անհիմն կամ կեղծ) ակնառու ձևակերպել և բացահայտ ձևով առաջարկել ընդդիմախոսին, դա անում է ոչ բացահայտ, քողարկված եղանակով: Նա առաջադրում է այնպիսի դատողություն կամ դատողությունների խումբ, որոնք անուղղակիորեն հուշում են, կամ որոնցից անուղղակիորեն

բխում է նշված դրույթը: Ընդդիմախոսն էլ սովորաբար աննկատելիորեն ընդունում ու աստիճանաբար ընտելանում է դրան: Այս հնարքն իր էությամբ շատ նման է և ակամա հիշեցնում է տրոյական ձիու պատմությունը. հակառակորդին առաջարկվող, արտաքինից անվնաս թվացող կաղապարի, կառույցի ներսում թաքնված է իրական վտանգը:

Օրինակ: Սոփեստը, ցանկանալով ընդդիմախոսին (նաև ունկնդիրներին) հրամցնել «Մահմեդականությունը հավատարիմ չէ մարդասիրական սկզբունքներին» միտքը, բայց ենթադրելով, որ այն կարող է կասկածի տակ առնվել, դիմում է խորամանկության: Իր ելույթի ընթացքում նա տարբեր առիթներով մի քանի անգամ կրկնում է «միայն քրիստոնեական եկեղեցին է հետևողականորեն հավատարիմ մարդասիրական սկզբունքներին» դատողությունը: Սոփեստը վստահ է, որ զրուցակիցը, զուգադրելով այդ բացահայտ դատողությունն իր ունեցած գիտելիքների հետ (նա լսել է նաև մահմեդական և բուդդայական կրոնների մասին), կհանգի այն եզրակացությանը, որ «մահմեդականությունը հավատարիմ չէ մարդասիրական սկզբունքներին»:

Քողարկված փաստարկի հնարքը հաճախ է հանդիպում քարոզչական գործընթացներում և կարող է ունենալ տարբեր դրսևորումներ: Հաճախ, խոսելով այս կամ այն ժողովրդի մասին (հատկապես, երբ նրան ներկայացնում են որևէ լայն լսարանի), ընդգծում են այն փաստը, թե նա շատ հյուրասեր է: Միջին վիճակագրական ունկնդիրը կամ հեռուստադիտողը, որը չի եղել այդ երկրում և ծանոթ չէ տվյալ ազգի ներկայացուցիչների, իր ենթագիտակցության խորքերում ունի նրանց երկրում երբևէ հյուրընկալվելու հնարավորության միտքը: Տվյալ երկրում հայտնվելու պարագայում նա ինքնաբերաբար ստանալու է հյուրի կարգավիճակ և տեղացիների հետ հարաբերվելու է ինչպես հյուրը տանտերերի հետ: Այդ իրողության ենթագիտակցական ընկալումը կամ պոտենցիալ (ենթադրյալ) հյուրի զգացումն այս կամ այն չափով բնորոշ է ունկնդիրներից յուրաքանչյուրին: Եվ վերը նշված այն հայտարարությունը, թե տվյալ ժողովուրդը շատ հյուրասեր է, հաճախ իր ունեցած ներգործության տեսանկյունից գրեթե հա-

վասարազոր է նրան, եթե ուղղակի ասեին, թե «Հարգելի՛ հեռուստադիտող, տվյալ ժողովրդի ներկայացուցիչները Ձեզ շատ են սիրում»:

Քողարկված մտքերի ու գաղափարների այս մեթոդը բավականին տարածված է քաղաքական կյանքում: Այս կամ այն կուսակցության (քաղաքական ռեժիմի) բացահայտ գովազդն աննպատակահարմար գտնելով՝ կարող են անգամ ծավալել դրա այնպիսի քննադատություն, որի դրույթները միջին քաղաքացին, վերլուծելով, առդնելով իր ունեցած գիտելիքների, պատկերացումների և իրականության հետ, կարողանա ոչ միայն հերքել, չեզոքացնել դրանք, այլև հանգել հակառակ եզրակացությունների՝ ամրապնդելով իր համակրանքը տվյալ կուսակցության կամ ռեժիմի նկատմամբ: Եվ, ընդհակառակը, կարող են կազմակերպել այնպիսի «ջատագովություն» կամ այնպիսի «գովազդ», որն ունենա միանգամայն հակառակ նշանակություն[38]:

Այդ խնդիրներն, իհարկե, ավելի շատ վերաբերում են գիտակցության հետ մեքենայություններ անելու և զանգվածային հաղորդակցման բնագավառին: Սակայն, որպեսզի չթվա, թե շարադրանքը հեռանում է վիճաբանության ու բանավեճի՝ քննարկվող խնդիրներից, հարկ է նկատել, որ հենց վերոհիշյալ սկզբունքների ու երևույթների գիտակցման և դրանց գործնական կիրառության հիման վրա են երբեմն, հատկապես իշխանության գլուխ կանգնած ուժերը առաջ քաշում այնպիսի առերես ընդդիմախոսների և ձևավորում, այսպես կոչված, «գրպանի» այնպիսի ընդդիմություն, որոնց գործունեությունը, ծավալած բանավեճերն ու քննադատությունը միանգամայն հակառակ նշանակություն են ունենում՝ ավելի ամրապնդելով իշխանության դիրքերը:

---

[38] Փաստարկման ընթացքում թույլ տրված սխալների հետևանքով միանգամայն հակադարձ արդյունքի հնարավորության և դրանից զգուշանալու, խուսափելու անհրաժեշտության վրա ուշադրություն է հրավիրում Գ. Բրուտյանը: Տե՛ս ***Брутян Г.А.,*** Очерк теории аргументации, էջ 63-64:

5.3.9. Մանիպուլյացիաներ հեղինակության փաստարկների հետ

Հեղինակության փաստարկների գործածումը միանգամայն ընդունելի, երբեմն էլ անխուսափելի է: Ցանկացած անհատի գիտելիքները միշտ էլ ունեն որոշակի սահմաններ, կան հարցեր, որոնք դուրս են նրա իմացության կամ մասնագիտական հետաքրքրությունների շրջանակներից: Իհարկե, քիչ չեն այն գիտելիքները, որոնք մարդը ձեռք է բերում անմիջականորեն իր սեփական փորձի ընթացքում, սակայն էլ ավելի շատ է այն տեղեկույթի ու գիտելիքների քանակը, որը նա վերցնում ու յուրացնում է պատրաստի վիճակում՝ հենվելով ավելի խորագիտակ մարդկանց, իսկ առավել լայն իմաստով՝ նախորդ սերունդների փորձի ու գիտելիքների վրա: Հակառակ դեպքում անհնար է պատկերացնել նաև հասարակության առաջընթաց զարգացումը:

Հեղինակությունների վկայակոչման են դիմում ամենալուրջ գիտական բանավեճերից մինչև առօրյա զրույցներ: Հեղինակության փաստարկի գործածման առանձնահատուկ ոլորտ են նաև դատական վեճերը, որտեղ կողմերը վկայակոչում են զանազան օրենքներ ու նախադեպային որոշումներ, հիմնվում փորձագիտական եզրակացությունների ու գնահատականների վրա: Տարբեր առիթներով տարբեր հեղինակություններ են վկայակոչվել և դեռ էլի վկայակոչվելու են սույն հետազոտության շրջանակներում:

Հեղինակության փաստարկների գործածումը թույլատրելի է և խրախուսելի, եթե, իհարկե.

ա) ճիշտ է ընտրված հեղինակությունը (տվյալ բնագավառում նա ունի մասնագիտական խոր գիտելիքներ, հարուստ փորձ),

բ) գործածված է տեղին՝ ելնելով անհրաժեշտությունից, կամ էլ՝

գ) հեղինակության փաստարկը բերվում է եղած հիմնավորումն ավելի ամրապնդելու համար (որպես լրացուցիչ փաստարկ):

Մինչդեռ շատ են դեպքերը, երբ հայտնի գրող-գրականագետին, երգչին, ֆուտբոլիստին կամ հագուստի դիզայներին վկայակոչում են քաղաքական հիմնահարցի լուծման, երևույթին իրավական գնահատական տալու, պետական այս կամ այն պաշտոնյայի գործունեու-

թյունը իրավաբանորեն կամ քաղաքագիտական տեսանկյունից բնութագրելու համար և՝ ընդհակառակը:

Էլ ավելի վտանգավոր և անթույլատրելի է հեղինակություններին աղավաղված ներկայացնելը, նրանց կամայական ու ոչ ճիշտ մտքեր վերագրելը, ինչպես նաև մտացածին հեղինակություններ վկայակոչելը: Մինչդեռ, էրիստիկական բանավեճի ջատագով Ա. Շոպենհաուերը գրում է. «...ամբոխի համար միշտ էլ կգտնվեն հարգանք վայելող շատ հեղինակություններ, դրա համար էլ, երբ մեզ չեն հերիքում իսկական հեղինակությունները, կարելի է առաջադրել միայն թվացյալը և վկայակոչել այն, ինչը որևիցե մեկն ասել է միանգամայն ուրիշ իմաստով և ուրիշ հանգամանքներում: ...Հեղինակությունների հետ անհրաժեշտության դեպքում կարելի է անել այն ամենը, ինչ ցանկանանք՝ ոչ միայն թույլ տալ ձևափոխություններ, այլև միանգամայն աղավաղել միտքը կամ էլ անգամ վկայակոչել մտացածին, սեփական երևակայության արդյունք հանդիսացող հեղինակների. մեծ մասամբ հակառակորդի ձեռքի տակ գիրք չկա, և նա չի էլ կարող դրանից գլուխ հանել»[39]: Սակայն գերմանացի մտածողն ինքն էլ հետագա շարադրանքում խոստովանում և ցույց է տալիս, որ «լրջորեն ասած, որևէ դրույթի ընդհանուր ճանաչվածությունը չի ծառայում ոչ որպես ապացույց ոչ էլ անգամ որպես հավանական հիմնավորում դրա ճշմարտության համար»[40]:

Այդպիսի սխալներն ու իմաստակությունները պետք է ի սկզբանե բացառել կառուցողական նպատակներ հետապնդող ելույթների ու վիճաբանությունների ընթացքում, բացահայտել ու դատապարտել:

Յուրօրինակ սխալ է նաև բանավեճի ընթացքում հեղինակությունների վկայակոչման գործելակերպը չարաշահելը, միայն դրանով սահմանափակվելը և սեփական կարծիք ու դիրքորոշում չներկայացնելը: Ահա թե ինչ է գրում այդ կապակցությամբ 16-րդ դարի ֆրանսիացի փիլիսոփա Միշել Մոնտենը. «Մենք կարողանում ենք լուրջ կեցվածքով ասել. «Այսպես է ասում Ցիցերոնը», կամ «Այսպի-

[39] Տե՛ս ***Schopenhauer A.,*** Eristisce Dialektik. Handschriftlicher Nachlass. Bd. 2, էջ 97-98:
[40] Նույնը, էջ 98-99:

սին է Պլատոնի ուսմունքը բարոյականության մասին», կամ «Ահա Արիստոտելի խոսքերը»: Իսկ մե՞նք, մենք ի՞նչ կարող ենք ասել մեր անունից: Ինչպիսի՞ն են մեր սեփական դատողությունները: Ինչպիսի՞ն են մեր գործերը: Թե չէ դա թութակն էլ կարող էր ասել»[41]:

Պակաս անընդունելի ու վտանգավոր չէ նաև մյուս ծայրահեղությունը, երբ շեմքից մերժում ու չեն ընդունում ցանկացած հեղինակություն: Հեղինակությունների նկատմամբ քամահրական վերաբերմունքն ու նրանց լիակատար մերժումը ոչ այնքան հիվանդագին կասկածամտության արդյունք է, տրամաբանական անտակտության կամ սխալ մտածողության դրսևորում, որքան յուրահատուկ, կանխամտածված «տղայություն», որը հեղինակային փաստարկների չարաշահմանը զուգահեռ պետք է դասել ապակառուցողական հնարքների շարքը:

5.3.10. Հոգեկան հավասարակշռությունից հանելը

Բանավեճերի ժամանակ հանդիպող անազնիվ միջոցների զինանոցում զգալի տեղ են գրավում հոգեբանական անթույլատրելի հնարքները: Դրանք հիմնված են մարդու հոգեբանական առանձնահատկությունների, մարդկային էության նուրբ կողմերի ու թուլությունների լավ իմացության և դրանց հմուտ շահարկման վրա: Այդ հնարքներն ուղեկցվում են մտավոր հաղորդակցման շրջանակներում ընդունված բարոյահոգեբանական նորմերի ու սկզբունքների խախտումներով, պարունակում են չարամիտ խորամանկության ու խաբեության տարրեր՝ ենթադրելով անհարգալից վերաբերմունք ընդդիմախոսի անձի նկատմամբ:

Հոգեպես նորմալ վիճակում գտնվող մարդու գիտակցությունը, միտքն ու երևակայությունը գործում են հստակ ու անխափան, առավել ևս, երբ նա ոգևորված է, բարձր տրամադրությամբ: Իսկ երբ մարդն ընկճված է, ինչ-որ բանից սաստիկ հուզված, շփոթված կամ զայրացած, հույզերը ճնշում են բանականությունը, նա դժվարանում

[41] ***Монтень М.,*** Опыты. Избранные главы. М., 1991, էջ 105:

է կենտրոնացնել ուշադրությունը, կորցնում է ինքնատիրապետումը, արդյունքում՝ բանավիճում է ավելի վատ, քան սովորաբար:

Անազնիվ վիճողները չեն խորշում տարբեր եղանակներով հակառակորդին վրդովելուց ու հոգեկան հավասարակշռությունից հանելուց: Փորձում են գրգռել, վիրավորել նրան, ծաղրում են, խոսում ամբարտավան տոնով: Եվ եթե հակառակորդը տաքանում է, բռնկվում, ապա գործն հաջողված է: Ինչպես նկատում է Ա. Շոպենհաուերը, «զայրույթի պահին նա ի վիճակի չի լինի ճիշտ դատել և օգտվել իր շահեկան դիրքից»[42]: Իսկ զայրացնում են նրանով, որ «բացահայտ անարդարացիորեն են վերաբերվում նրան, գործածում են ամենատարբեր խորամանկություններ և, ընդհանրապես, իրենց պահում են անամոթաբար»[43]:

Թեզիսի նենգափոխումներին առնչվող սոփեստական հնարքների քննարկման ժամանակ նշվեց, որ այդ ճանապարհով կարելի է ստիպել հակառակորդին ընկնել ծայրահեղությունների մեջ, ընդլայնել սեփական թեզիսը, խստացնել իր գնահատականներն ու ձևակերպումները: Այդ եղանակով կարելի է նաև շփոթեցնել նրան, կաթվածահար անել մտածելու կարողությունը: Պովարնինն այդպիսի հնարքը նմանեցնում է «դերասանների հնարքին»[44]: Որոշ երգիչներ իրենց մրցակցին ձախողելու համար ելույթից առաջ նրան հաղորդում են ծայրաստիճան տհաճ որևիցե լուր, վշտացնում են կամ էլ վիրավորելով հանում հավասարակշռությունից՝ համոզված լինելով, որ դրանից հետո նա չի կարողանա տիրապետել իրեն և անհաջող ելույթ կունենա: Երբեմն այդպես են վարվում նաև ունկնդիրների ներկայությամբ պատասխանատու վեճերից առաջ:

Գեղարվեստական գրականության մեջ տեղ գտած տեսակետի համաձայն՝ Նապոլեոնի եգիպտական արշավանքի անհաջողության օբյեկտիվ պատճառների (անգլիական բանակի առավելություն, Ֆրանսիայի ներքաղաքական կյանքում տեղի ունեցող իրադարձություններ) շարքում դեր խաղաց նաև սուբյեկտիվ գործոնը՝ Ժոզեֆի-

---

[42] Schopenhauer A. Eristische Dialektik. Handschriftlicher Nachlass. Bd. 2, էջ 88:
[43] Նույն տեղում:
[44] *Տես* ***Поварнин С.И.,*** Спор. О теории и практике спора, էջ 101:

նայի կողմից Նապոլեոնին դավաճանելու լուրը, որը զորավարին իսկական շոկի մեջ գցեց (***Զավգորոդնյայա Վ.,*** «Կայսեր երջանիկ աստղը»[45]):

5.3.11. «Հոգու ընթերցանություն»

Նախորդ հնարքին ապակառուցողականության և անթույլատրելիության առումով գրեթե չի զիջում «հոգու ընթերցանությունը»[46]:

Սոփեստը, մի կողմ թողնելով հակառակորդի դրույթների ու փաստարկների ըստ էության քննարկումը և կարծես «թափանցելով» նրա մտքի ու հոգու խորքերը, հրապարակում է այն «թաքնված շարժառիթները», որոնք, ըստ իրեն, ստիպում են հակառակորդին պաշտպանել տվյալ տեսակետը, պայմանավորում են նրա վարքագիծն ու գործողությունները: Բնականաբար, այդ շարժառիթները վարկաբեկիչ, անգամ վտանգավոր են ընդդիմախոսի համար:

Օրինակ: *«Ինքներդ էլ համոզված եք իմ իրավացիության մեջ, միայն թե չեք ցանկանում ընդունել Ձեր սխալը», «Որքա՞ն են Ձեզ վճարել՝ այդ տեսակետը պաշտպանելու համար», «Դուք պաշտպանում եք նրան, որովհետև ինքներդ էլ մասնակից եք նրա հանցավոր գործունեությանը», «Միամիտ պետք է լինել՝ չհասկանալու համար. Դուք հաճախ եք խոսում բանակում առկա ոչ կանոնադրական հարաբերությունների մասին, որովհետև ցանկանում եք հանրային գիտակցության մեջ վարկաբեկել մեր պետականության ու անվտանգության ամենակարևոր հենասյունը»:* Նման չհիմնավորված հայտարարությունները հաճախ շփոթեցնում են հակառակորդին և «փակում նրա բերանը»: Որպես կանոն, դրանք հերքելը նույնքան դժվար է, որքան ապացուցելը:

«Հոգու ընթերցումները» առավել հաշվենկատ ու վտանգավոր են դառնում, երբ զուգորդվում են ուժի փաստարկներով ու նմանատիպ

---

[45] www.proza.ru/2018/12/07/277 (դիտումը՝ 28.08.2019 թ.):

[46] Այդ հնարքը ռուսալեզու հեղինակների մոտ հանդիպում է որպես «чтение в сердцах»: Տե՛ս ***Поварнин С.И.,*** նշվ. աշխ., էջ 99; ***Павлова Л.Г.,*** Спор, дискуссия, полемика, էջ 107:

ակնարկներով: **Օրինակ՝** *«Ձեր ելույթի իմաստը պարզ է՝ վարկաբեկել ուժային գերատեսչությունները, գցել դրանց հեղինակությունը և, ի վերջո, խնդիրներ առաջացնել ազգային անվտանգության տեսանկյունից»:*

Հաճախ էլ «հոգու ընթերցումները» վերածվում են ուղղակի զրպարտության՝ զուգակցվելով ստի ու կեղծ փաստարկների հետ: Այդպիսի դեպքերում արդարանալու փորձ անելը սովորաբար անօգուտ է, բացի այդ, անուղղակիորեն կարող է տպավորություն ստեղծվել, որ մեղադրվող կողմը, թեկուզև տեսականորեն, հնարավոր է համարում այդ մեղադրանքների իսկությունը: Իսկ դա ամենևին էլ նրա օգտին չէ: Խորհուրդ է տրվում պահանջել և պնդել, որ անազնիվ ընդդիմախոսն անհապաղ ծանրակշիռ փաստարկներ բերի՝ իր մեղադրանքներն ապացուցելու համար: Հակառակ դեպքում կարելի է հրապարակավ մերկացնել նրա հայտարարությունների զրպարտչական էությունը՝ դրանք շրջելով հենց հեղինակի դեմ: Կախված իրավիճակից՝ հնարավոր են նաև ավելի սուր պատասխաններ: Օրինակ՝ *«Յուրաքանչյուրը դիմացինին չափում է սեփական արշինով...», «Եթե Դուք համոզված լինեիք այն ամենում, ինչ ասում եք և ունենայիք փաստարկներ, ոչ թե հրապարակավ զրպարտչական ելույթ կունենայիք, այլ կվազեիք ԱԱԾ՝ ցուցմունքներ գրելու»* և այլն:

5.3.12. «Մոդայիկ» հասկացությունների ու գնահատականների շահարկումը: «Պիտակավորում»

Հոգեներգործությանն ուղղված անթույլատրելի հնարքներ են նաև ընդդիմախոսին և նրա դրույթներին չապացուցված գնահատականներ տալն ու «պիտակավորելը»:

Պատմական ցանկացած ժամանակաշրջանի համար կան դրական կամ բացասական երանգավորում ունեցող, գովասանքին կամ նախատինքին հավասարազոր մոդայիկ ածականներ, որոնք ոչ այնքան զարգացած մարդու, առավել ևս ամբոխի վրա ունենում են կարծես հիպնոսող ազդեցություն:

Մեր ժամանակներում բավական է հայտարարել, որ տվյալ պարոնի հայացքները, գաղափարները կրում են համայնավարական բնույթ, կամ մտածելակերպն ունի խորհրդային ժամանակների կնիքը, և նա կարժանանա ներկաների՝ լավագույն դեպքում կարեկցական վերաբերմունքին:

Լսարանի վրա մոգական ազդեցություն է ունենում նաև այն, երբ ինչ-որ մեկին ներկայացնելիս ընդգծում են, թե նա արտասահմանյան համալսարաններում մեծ հաջողությունների հասած, տիտղոսավոր մասնագետ է, հաջողակ գիտնական: Ներկաներից շատերը հմայված փորձում են նրա խոսքերում մարգարեություններ գտնել, եթե անգամ հեղինակավոր արտասահմանցու դրույթները հանրահայտ և սովորական իրողություններ են բովանդակում:

Պիտակավորման հնարքը սովորաբար առավել արդյունավետ է լինում և պսակվում է հաջողությամբ, երբ հակամարտող կողմերից մեկն ունենում է որոշակի առավելություններ մյուսի նկատմամբ: Օրինակ՝ ավելի մեծ հեղինակություն է վայելում ունկնդիրների շրջանում կամ էլ տրամադրության տակ ունենում է զանգվածային լրատվամիջոցներ:

1980-ական թվականների վերջին, երբ Հայաստանում և Արցախում սկիզբ էր առել համաժողովրդական շարժումը, ԽՍՀՄ կենտրոնական լրատվամիջոցներն այդ շարժման ղեկավարներին ու մասնակիցներին ներկայացնելիս գործածում էին ականջ չշոյող, հաճախ էլ երկյուղ և հակակրանք առաջացնող ածականներ ու պիտակներ՝ «ծայրահեղականներ», «ազգայնամոլներ», «անջատողականներ», «ահաբեկիչներ», «գրոհայիններ»: Իսկ այն տարիներին քաղաքացիների մի զգալի մասը, որ վստահություն ուներ կենտրոնական լրատվամիջոցների և հատկապես պաշտոնական լրատվական և վերլուծական ծրագրերի նկատմամբ, այդպիսի գնահատականներն ու պիտակներն անվերապահորեն ընդունում էր որպես ճշմարիտ ու արդարացի՝ համապատասխան դիրքորոշում որդեգրելով պիտակավորվող երևույթների ու գործիչների նկատմամբ:

Չապացուցված գնահատականներ տալու անպատասխանատու գործելակերպը դրսևորվում է նաև ընդդիմախոսի դրույթների վե-

բաբերյալ հայտարարություններով՝ «Բառախաղ է», «Ցնդաբանություն է», «Սոփեստություն է»: Կարող են հնչեցվել նաև անհիմն դրական գնահատականներ՝ «Հիանալի է ասված», «Խորիմաստ է» և այլն:

Եթե բազմամարդ հանրահավաքի ժամանակ ամբոխին ծանոթ, առավել ևս նրա համակրանքը վայելող մեկն ամբիոնից հայտարարում է, թե այսինչը պրովոկատոր (սադրիչ) է, հարցը կարելի է «լուծված» համարել: «Պրովոկատորին» թույլ չեն տա մոտենալ ամբիոնին, իսկ եթե ինչ-որ հրաշքով նրան հաջողվի էլ ամբիոն բարձրանալ, ապա ոչ ոք չի լսի, ամբոխը կբողոքի, կսուլի և կգոռգոռա:

Նման գնահատականները կարող են արտահայտվել նաև փոքր-ինչ ավելի «քաղաքավարի», բարդացված ձևերով. «Հակառակորդի դրույթներն անհիմն են ու չստուգված, այնպես որ, չարժե լրջորեն քննարկել դրանք», «Այդ ակնհայտ սխալ փաստարկների հերքմանը մենք կանդրադառնանք մեկ ուրիշ անգամ» և այլն: Այսպիսի հայտարարությունները վերը նշվածների նման նպատակ ունեն ունկնդիրների մոտ թյուր կարծիք ստեղծել հակառակորդի ու նրա փաստարկների վերաբերյալ, առաջ բերել բացասական վերաբերմունք, ինչպես նաև նրանց լռելյայն համաձայնությամբ խուսափել հակառակորդին ըստ էության պատասխանելուց: Եվ սովորաբար, որպեսզի ունկնդիրը հավատա ու ընդունի այդ անհիմն գնահատականներն ու հայտարարությունները, սոփեստը դիմում է այնպիսի փորձված միջոցի, ինչպիսին ներշնչումն է: Նա խոսում է հնչեղ, առարկություն չհանդուրժող եղանակով, կեղծ համոզվածությամբ, փոքր-ինչ ոգևորված ու պաթետիկ տոնով:

Լ. Գ. Պավլովան գրում է, որ վեճերի ժամանակ հարկավոր է զգուշանալ «այնպիսի տարածված հնարքից, ինչպիսին ինքնավստահ, անառարկելի, վճռական տոնն է: ...Իսկապես, երբ հակառակորդը, չունենալով որևիցե հիմք, իրեն պահում է շատ վստահ, մենք, անգամ եթե մեզ ճիշտ ենք համարում, սկսում ենք կասկածել սեփական դիրքորոշման մեջ: Իսկ եթե բավարար կերպով չենք պատկերացնում հիմնախնդիրը, ապա ընդհանրապես ընկրկում ենք նրա առջև: Նման իրավիճակում պահանջվում է ներքին զսպվածություն,

տոկունություն, գործնական տոն, խոսակցությունն ընդհանուր արտահայտություններից գործի էության քննարկմանն ուղղելու կարողություն»[47]:

5.3.13. Հեգնանք և ծաղր

Իհարկե, առողջ հումորն ու ծիծաղը ցանկալի և օգտակար են ամեն մի բանավեճի ու զրույցի ընթացքում: Դրանք հաղորդակցմանը հաղորդում են աշխուժություն, մթնոլորտը դարձնում անկաշկանդ, հաճելի ու հետաքրքիր: Դրան հակառակ՝ տհաճ տպավորություն են թողնում և վիճաբանությունների ընթացքում անթույլատրելի պետք է համարել հակառակորդի ու նրա դրույթների ծաղրը, կծու հեգնանքը, որոնք ուղղված են ունկնդիրների աչքում ընդդիմախոսի վարկաբեկմանը, նրա հեղինակազրկմանը և նպատակ ունեն, ընկճելով նրան, հաղթողի կեղծ լուսապսակ բերելու անազնիվ վիճողին: Փորձված սոփեստները չարամիտ հեգնանքն ու ծաղրը գործի են դնում հատկապես այն դեպքերում, երբ չունեն ծանրակշիռ փաստեր ու լուրջ առարկություններ հակառակորդին հերքելու համար և փորձում են խուսափել նրա դրույթների իրավահավասար քննարկումից:

Շոպենհաուերը գրում է. «Երբ մենք որոշակի ոչինչ չունենք՝ հակառակորդի առաջ քաշած փաստարկները հերքելու համար, ապա պետք է նուրբ հեգնանքով մեզ անհիրազեկ համարենք. *«Այն, ինչ Դուք ասում եք, անհասկանալի է իմ թույլ մտքին, գուցեև Դուք ճիշտ եք, բայց ես չեմ կարող դա հասկանալ, դրա համար էլ հրաժարվում եմ որևէ կարծիք արտահայտելուց»:* Այդ ձևով ունկնդիրների մոտ ստեղծվում է այն տպավորությունը, թե հակառակորդն անհեթեթություն է պնդում»[48]:

Գերմանացի մտածողը զգուշացնում է նաև, որ «այդ հնարքից կարելի է օգտվել միայն այն դեպքում, երբ միանգամայն վստահ ես, որ ունկնդիրների մոտ ավելի մեծ հեղինակություն ունես, քան հակա-

---

[47] ***Павлова Л.Г.,*** Спор, дискуссия, полемика, էջ 106:
[48] ***Schopenhauer A.,*** Eristische Dialektik. Handschriftlicher Nachlass., Bd. 2, էջ 101:

ռակորդը, օրինակ, երբ վիճում են պրոֆեսորն ու ուսանողը»[49]: Իհարկե, այդպիսի անհավասար պայմաններում անազնիվ մարդու համար շատ ավելի հեշտ է ունկնդիրներին, իսկ երբեմն էլ հենց ընդդիմախոսին ներշնչել նրա դրույթների անհեթեթության պատրանքը:

Ինչպե՞ս վարվել նման դեպքերում, ինչպե՞ս պատասխանել այդ հնարքին: Շոպենհաուերը տալիս է նաև այդ հարցի պատասխանը. «Այդ հնարքի հերքումն այսպիսին է. «Ներեցեք, բայց Ձեր խորաթափանցությամբ մեծ ջանք չի պահանջվում դա հասկանալու համար, հավանաբար, մեղքն այստեղ իմն է, քանի որ ես բավականին անորոշ շարադրեցի նյութը»: Իսկ հետո պետք է այնպես ծամել վերջինս և դնել հակառակորդի բերանը, որպեսզի նա nolens-volens ստիպված լինի հասկանալ ինչումն է բանը և համոզվի նրանում, որ մինչ այդ ինքն իսկապես չէր հասկացել: Այսպիսով հնարքը ետ է շրջվում հենց հակառակորդի դեմ. հակառակորդն ուզում էր ներշնչել մեզ, որ մենք «անհեթեթություն» ենք ասում, իսկ մենք ապացուցեցինք նրան իր «թերամտությունը»: Ե՛վ մեկը, և՛ մյուսը՝ նուրբ քաղաքավարությամբ»[50]:

Հատկանշական է, որ Շոպենհաուերը, հավատարիմ մնալով հնարքին հնարքով պատասխանելու իր որդեգրած սկզբունքին, հակառակորդի անազնիվ, հեգնական ակնարկ-դիտողությունը չեզոքացնելու և այն հեղինակի դեմ շուռ տալու ընթացքում հենց սկզբից դիմում է հոգեբանական մեկ ուրիշ հնարքի, որի մասին կխոսվի հաջորդիվ:

5.3.14. «Շողոքորթ» փաստարկներ

Հաճոյախոսություններ սիրում են բոլորը: Ոմանց էլ դուր է գալիս անգամ, երբ շողոքորթում են իրենց, երբ դիմացինը, թեկուզև առերես, բարձր կարծիք է հայտնում իրենց մասին, և վախենում են հակառակ գնահատականներից, սեփական «հեղինակությունը» կորց-

[49] Նույն տեղում:
[50] Նույն տեղում:

նելուց: Մարդկային այդ թուլությունը ևս որոշ դեպքերում շահարկումների առարկա է դառնում:

Դրույթը, որը բացահայտորեն ներկայացնելու դեպքում կարող է վիճարկվել, ներկայացվում է մշուշոտ, սուր անկյունները հարթած տեսքով, համաձայնություն ակնկալող խորամանկ հաճոյախոսությամբ. *«Անկիրթ ու չզարգացած մարդը կարող է և չհասկանալ, իսկ այդպիսիներով լի է մեր շրջապատը: Բայց Դուք՝ որպես զարգացած ու խելամիտ անձնավորություն, կարծում եմ՝ կհամաձայնեք, որ...», «Բոլորին հայտնի են Ձեր արդարամտությունն ու իմաստունությունը, ուստի, կարծում եմ՝ Դուք կընդունեք, որ...»:*

Այս նուրբ ու հաշվենկատ հնարքը բավականին գործածական է և հաճախ է հանդիպում նաև ամենասովորական առօրյայում: Իր կամակոր փոքրիկին ինչ-որ բանում համոզելու համար նշված եղանակին է դիմում նաև երիտասարդ մայրը. «Դու խելացի և մայրիկին լսող բալիկ ես, ուստի պետք է հասկանաս, որ...» և այլն: Այսպիսի «շողոքորթ փաստարկները» հաճախ հրաշալի «համոզիչ» ներգործություն են ունենում: Մարդը, ցանկանալով պահպանել ընդդիմախոսի վրա թողած լավ տպավորությունը և բարձր կարծիքն իր անձի ու կարողությունների վերաբերյալ, ակամա «կուլ է տալիս» փաստարկը: Եզոպոսն իր առակներից մեկում իրավացիորեն նկատում է. «Փառասիրությունը մթագնում է մարդու միտքը և թույլ չի տալիս տեսնելու սպառնացող վտանգը»[51]:

Իսկ ինչպե՞ս վարվել այդպիսի դեպքերում, երբ նկատվել է հակառակորդի խորամանկությունը:

Նման դեպքերում, երբ հնարքի հասցեատիրոջ կարգավիճակային առավելությունն ու հեղինակությունը թույլ են տալիս, և երբ հնարքի հեղինակի հետ հետագա հարաբերությունները առանձնապես կարևորություն չունեն, կարելի է հանդիմանելով զգուշացնել. *«Մի՛ փորձեք հաճոյախոսությամբ (կամ շողոքորթությամբ) համաձայնություն շորթել»:*

[51] Եզոպոսի առակները: Երևան, 1990, էջ 170:

Հակառակ պարագայում, երբ հնարքի հասցեատերը կարգավիճակային առավելություններ չունի, և երբ հնարքի հեղինակի հետ հետագա հարաբերությունները որոշակիորեն կարևոր են, կարելի է, *շնորհակալություն հայտնելով հաճոյախոսությունների և դրական գնահատականների համար, այնուհանդերձ նկատել, որ դրանք չկորցնելու հեռանկարից ելնելով՝ «ստիպված եմ չհամաձայնել առաջարկվող դրույթի հետ»:*

5.3.15. Ամոթի շահարկման հնարքը

Ունեցած ազդեցությամբ «շողոքորթ» փաստարկներին մոտ է **ամոթի շահարկման հնարքը**: Ամոթը վախի զգացման դրսևորումներից մեկն է: Վախի զգացում են ունենում, երբ կանգնած են կյանքը, առողջությունը կորցնելու վտանգին դեմ հանդիման: Ամոթի զգացումը՝ որպես հոգեբանական անհարմարավետության ներքին վիճակ, առաջանում է, երբ կանգնած են ոչ թե կյանքը կամ առողջությունը, այլ վարկը, հեղինակությունը կորցնելու վտանգի առջև:

Որպես կանոն, ընդդիմախոսը (ինչպես և լսարանում ներկաների մեծ մասը) ձգտում է լավ տպավորություն թողնել մյուսների վրա, անգամ ավելի լավ, քան ներքուստ ինքն իր մասին մտածում է: Ցանկանալով ընդդիմախոսին ընդունել տալ կեղծ կամ կասկածելի դրույթ, սոփեստն այն մատուցում է հետևյալ խորամանկ ձևակերպմամբ. *«Անշուշտ, ձեզ հայտնի է, որ գիտությունն արդեն վաղուց բացահայտել է...», «Հանրահայտ փաստ է...», «Բոլորն էլ գիտեն այն մասին, որ...»*, ապա հետևում է «հանրահայտ ճշմարտությունը»: Եվ եթե հակառակորդը վախեցավ «հանրահայտ դրույթներն» առարկելով, «ընդհանուրի կարծիքին» դեմ գնալով, անուս մարդու տպավորություն թողնել, վարկաբեկվել և համաձայնեց՝ ապա նա թակարդում է: Ընդ որում, որքան հոգով թույլ ու մտքով թերուս է մարդը, այնքան նա ավելի շատ է վախենում ընդունված չափանիշներից շեղվելուց կամ դրանք բարձրաձայն քննարկելուց:

Լավ իմանալով մարդկային այդ թուլությունը՝ սոփեստը կարող է իր ելույթը կառուցել այսպես. *«Ես շնորհակալ եմ ճակատագրին, որ*

այսօր այսպիսի խելացի մարդկանց լսարանում ելույթ ունենալու հնարավորություն ունեցա: Քիչ է պատահում, որ լսարանում հավաքված լինեն մարդիկ, որոնց ոչ միայն կարող ես ինչ-որ բան սովորեցնել, այլև որոնցից կարող ես շատ բաներ ինքդ սովորել: Ցավոք, մեր շրջապատը վիրտում է կիսագրագետ, սակայն մեծամիտ ու հավակնոտ «մասնագետներով»: Գործից անտեղյակ մարդկանց լսարանում գուցե պարակուսանք ու զարմանք հարուցեր, սակայն այսպիսի իրազեկ ու բանիմաց մարդկանց համար, ովքեր սեփական երկրի օրենսդրությունը հինգ մատի պես գիտեն, նորություն ասած չեմ լինի, եթե հիշեցնեմ, որ դեռևս 1995 թ. Հայաստանի Սահմանադրության մի շարք հոդվածներ դրա կազմողները վերցրել են հարևան Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրությունից»:

Լսարանում շատերի մոտ այդ հայտարարությունը, իրոք, տարակուսանք կարող է հարուցել: Սակայն, վախենալով անտեղյակ մարդու տպավորություն թողնել ներկաների մոտ, նրանք կարող են չհամարձակվել առարկել կամ ճշգրտող հարցեր տալ ելույթ ունեցողին: Արդյունքում կանցնի մի դրույթ, որն ամենևին էլ չի համապատասխանում իրականությանը:

5.3.16. Ուշադրությունը գլխավոր դրույթից շեղելը

Առանձին դեպքերում էլ սոփեստը, ձգտելով առանց առարկության անցկացնել բացահայտորեն արտահայտված այս կամ այն կեղծ դրույթը, տարբեր եղանակներով փորձում է շեղել հակառակորդի ուշադրությունը դրանից: Նա, ճանաչելով իր հակառակորդի բնավորությունը, աշխարհայացքային սկզբունքներն ու նախասիրությունները, կասկածելի դրույթից առաջ, որպես խայծ, դնում է այնպիսի մի միտք, որն իր բովանդակությամբ ու ձևով չի կարող անտարբեր թողնել ընդդիմախոսին: Վերջինիս ուշադրությունը խայծի վրա գրավելու նպատակով դիմում են նաև, այսպես կոչված, լրացուցիչ միջոցների. տվյալ միտքն արտասանում են անվստահ տոնով, դեմքի արտահայտությամբ ու միմիկայով ջանալով զգացնել տալ, որ դա իրենց թույլ կետն է: Եվ, ինչպես սովորաբար լինում է, հակառակորդն անմի-

ջապես, առանց երկար-բարակ մտածելու հարձակվելով այդ դրույթի վրա, անուշադրության է մատնում իսկական «վտանգը»:

Այս հնարքը հիշեցնում է շախմատը, երբ զոհաբերում են որևէ զինվոր՝ կարևոր ֆիգուրը փրկելու կամ էլ դիրքային ավելի լուրջ առավելության հասնելու նպատակով:

Ենթադրենք, սոփեստը փորձում է առանց առարկության անցկացնել այն կեղծ դրույթը, թե պրն X-ը զբաղվում է հանցագործ գործունեությամբ: Եվ նրան հայտնի է, որ իր զրուցակիցը բծախնդիր հավատացյալ է, որը կարող է զգայուն կերպով արձագանքել աթեիստական բնույթի ամեն մի դատողության: Ուստի սոփեստն իր միտքը շարադրում է հետևյալ կերպ. *«Եթե Ասված իսկապես գոյություն ունենար, ապա պրն X-ը չէր կարող այդպես անպատիժ զբաղվել հանցագործ գործունեությամբ...»,* և թվարկում է այդ գործունեության տեսակները: Հավատացյալ զրուցակցի ուշադրությունը, որպես կանոն, ավելի շուտ կգրավի և նա կզգաստանա Աստծո գոյության վերաբերյալ հայտնած կասկածից, քան մտքով կանցկացնի ստուգել նշված պարոնի հանցագործ լինելու մասին դատողությունը: Եվ եթե այդ պարոնը նրան սրտամոտ կամ հոգեհարազատ անձնավորություն չէ, ապա հարյուրից իննսուն դեպքում նա կսկսի հերքել Աստծո գոյություն չունենալու մասին միտքը և համոզել, որ վաղ թե ուշ բոլորն էլ կկանգնեն Աստծո դատաստանի առաջ: Անգամ, ակամա, Աստծո գոյության մասին իր դրույթն ավելի լավ հիմնավորելու և դիմացինին դրա մեջ համոզելու նպատակով, կարող է նաև պնդել, որ պրն X-ն էլ անպատճառ կպատժվի իր արարքների համար և այլն՝ այդպիսով կեղծ դրույթն ակամա ընդունելով որպես ճշմարիտ իրողություն:

5.3.17. Սեփական «առավելությունների» շահարկումները

Հազվադեպ չէ իրավիճակը, երբ տեսակետի ճշմարտացիության օգտին ներկայացվում են զրուցակցի նկատմամբ սեփական առավելություններն ընդգծող այնպիսի փաստարկներ (տարիքը, ստացած դիպլոմների քանակը, կուսակցության անդամների թիվը և այլն), որոնք բավարար հիմք չեն կարող լինել տեսակետի ապացուցման

համար: Այդ գործելակերպն ուղղված է ընդդիմախոսի վրա հոգեբանական ճնշում գործադրելուն և լսարանի վրա տպավորություն թողնելուն:

Օրինակ՝ *«Դուք դեռ շատ երիտասարդ եք: Ապրե՛ք ևս մի քսան տարի, հասե՛ք իմ տարիքին, այն ժամանակ ամեն ինչ կհասկանաք», «Ինչպե՞ս ես դու՝ հասարակ ծառայողդ, համարձակվում առարկել բազմափորձ տնօրենիդ»* և այլն:

Քաղաքական մրցավեճում հնչում է հանդիմանություն. *«Ձեր կուսակցությունը տակավին երիտասարդ է ու անփորձ: Գործե՛ք դեռ մի հիսուն տարի, հասե՛ք մեր տարիքին, այն ժամանակ իրողություններն ու իրադարձություններն ավելի հստակ կպատկերացնեք»:* Կամ՝ *«Նախ մի կարգին կրթություն ստացե՛ք, ինչպես ես, հետո փորձեք չափվել ինձ հետ»: Հավատացնում եմ՝ կրթությունն այսպիսի հարցերում ամենակարևորն է»:*

Իհարկե, կախված կոնկրետ իրադրությունից, տարբեր եղանակներ կարելի է առաջարկել այդպիսի «քննադատությունն» ու դիտարկումները չեզոքացնելու համար: Կարելի է ցույց տալ զրուցակցի առարկությունների և դիտարկումների ոչ էական լինելը և պահանջել, որպեսզի նա բերի առավել էական ու ծանրակշիռ փաստարկներ: Կարելի է նաև օգտվել «բումերանգի» հնարավորություններից: **Օրինակ՝** *«Իհարկե մեր կազմակերպությունը երիտասարդ է, բայց մենք երջանիկ առիթ ունենք սովորելու ձեր կուսակցության սխալների վրա», «Հուսով եմ՝ մասնագիտական կրթություն տալուց բացի Ձեզ սովորեցրել են նաև համեստություն և ընդդիմախոսին հարգալից վերաբերվելու, նրա տեսակետն ըստ էության վերլուծելու կարողություն»:*

Հնարավոր են նաև ավելի մեղմ կամ ավելի խիստ պատասխաններ՝ ըստ քննարկվող հարցի կարևորության, ընդդիմախոսի կարգավիճակի, նրա հետ հարաբերությունների հեռանկարի, լսարանի վրա թողնելիք տպավորության կարևորման և այլն:

5.3.18. Անծանոթ հասկացություններով շփոթեցնելու հնարքը

Առանձին դեպքերում էլ, հատկապես, երբ ընդդիմախոսը դյուրահավատ է, մտածում է դանդաղ և դժվարանում է ընթացքից կողմնորոշվել, առավել հանդուգն սոփեստներն արագ շատախոսելով, անհասկանալի ու բարդ արտահայտությունների հեղեղով փորձում են շշմեցնել, հոգեբանորեն ընկճել ընդդիմախոսին և ունկնդիրների մոտ թողնել բանիմաց հռետորի ու հաղթողի տպավորություն: Ավելի «համարձակները» չեն քաշվում անգամ մտքերն առանց որևէ կապի ու հետևողականության շարադրելուց, ուղղակի անիմաստ ու անհեթեթ դատողություններ արտահայտելուց: Եվ մինչ դանդաղ մտածող ընդդիմախոսը փորձում է հասկանալ ու վերլուծել ասվածը, սոփեստը հայտարարում է հաղթական եզրակացությունը և ավարտում վեճը:

Երբեմն էլ փորձում են ընդդիմախոսին ընկճել և խորագիտակ բանավիճողի տպավորություն թողնել գիտականակերպ դատողությունների և մասնագիտական հասկացությունների «գրոհով»: **Օրինակ՝** *«Հավանաբար Դուք էլ չեք հասկանում Ձեր հայացքների վտանգավորության աստիճանը: Այն, ինչ Դուք ասում եք, միջնադարյան օբսկուրանտիզմի, ծայրահեղ էգալիտարիզմի, քաղաքական կոնդիցիոնալիզմի և իրավագիտական ցիենտիզմի վտանգավոր մոլորություն է, որը կործանարար կարող է լինել մեր երկրի համար»:*

Այս հնարքի համար իրավիճակն էլ ավելի նպաստավոր է, երբ ընդդիմախոսը, վստահ չլինելով իր ուժերի վրա և վախենալով ծիծաղելի դրության մեջ հայտնվել, ավելի հակված է առանց առարկության ընդունել իրեն անհասկանալի դրույթներն ու արտահայտությունները, քան վերլուծել և բարձրաձայն հարցադրումներ անել դրանց կապակցությամբ: Ահա թե ինչ է գրում Շոպենհաուերը. «Եթե հակառակորդը հոգու խորքում գիտակցում է իր թուլությունը, եթե նա սովոր է լսել շատ անհասկանալի բաներ և ձևացնել, թե ամեն ինչ հիանալի հասկանում է, ապա կարելի է նրա վրա ներգործել դեմքի միանգամայն լուրջ արտահայտությամբ գիտականորեն կամ խորիմաստ հնչող դատարկաբանություններ տեղալով, որից թմրում են

նրա լսողությունը, տեսողությունն ու միտքը, և այդ ցնդաբանությունը կարելի է ներկայացնել իբրև սեփական դրույթի անվիճելի ապացույց»[52]: Հասկանալի է՝ դա արվում է ամենից հաճախ այնպիսի ունկնդիրների ներկայությամբ, որոնք շատ բան չհասկանալով վեճի թեմայից, կողմերի հաջողության ու անհաջողության մասին դատում են միայն արտաքին, երևութական չափանիշներով:

5.3.19. «Կանացի» փաստարկ

Այս հնարքից պակաս չեն օգտվում նաև տղամարդիկ: Սակայն, ինչպես նկատում է Ս. Պովարնինը, կանացի շուրթերին այն ձեռք է բերում առանձնակի փայլ ու ցայտունություն[53]: Այստեղից էլ՝ անվանումը՝ «կանացի» կամ «կնկա» փաստարկ:

Հնարքի էությունը հետևյալն է: Սեփական թյուր դրույթի նպատակահարմարությունն ընդունել տալու համար այն համեմատության մեջ են դնում ավելի ծայրահեղ ու անընդունելի տեսակետի հետ և առաջարկում ընտրություն կատարել այդ երկուսի միջև «կամ…, կամ»-ի սկզբունքով: Ենթադրվում է, որ զրուցակիցը, մերժելով առավել անընդունելի կամ անհեթեթ տարբերակը, կկանգնի զրուցակցի դրույթի՝ երկու չարյաց փոքրագույնի ընդունման փաստի առաջ: Հիրավի, վատը վատթարագույնի կողքին երբեմն կարող է լավի տպավորություն թողնել, մոխրագույնը սև ֆոնի վրա՝ թվալ սպիտակ:

Հանդիպում է նաև այս հնարքի կիրառման երկրորդ եղանակը, երբ առաջարկված դրույթից անարդարացիորեն բխեցնելով անհեթեթ ու անընդունելի եզրակացություններ՝ ստիպում են հրաժարվել դրանից:

Ահա մի դրվագ հասարակական կազմակերպության ներկայացուցչի և փախստականների հարցերով զբաղվող միջին պաշտոնյայի երկխոսությունից. *«Փախստականներին պետք է ըստ ամենայնի օժանդակել և սատարել: Չի՛ կարելի նրանց նկատմամբ ոչ սրտա-*

---

[52] ***Schopenhauer A.,*** Eristische Dialektik. Handschriftlicher Nachlass. Bd. 2, էջ 104:
[53] Տե՛ս ***Поварнин С.И.,*** Спор. О теории и практике спора, էջ 129:

ցալ վերաբերմունք դրսևորել»: - «Ուզո՞ւմ եք նրանց նվիրեմք մեր բնակարանները, իսկ ինքներս փողոցներո՞ւմ հայտնվեմք»: Առաջինը կարող է առարկել այդպիսի անհեթեթ մեկնաբանությանը. *«Դուք ինձ ճիշտ չհասկացաք»:* Իսկ երկրորդը կարող է շարունակել նույն ոգով. *«Կարծո՞ւմ եք՝ միայն Դո՞ւք եք հասկացող, իսկ մնացածներս հիմարներ ու անհասկացողնե՞ր ենք»:* **Կամ էլ՝** *«Ձեր բարձր խոսակցությունը խանգարում է նիստի ընթացքը: Խնդրում եմ լռություն պահպանել»: - «Ի՞նչ է, շուրթերս սոսնձե՞մ, թել-ասեղով կարե՞մ և աթոռի՞ն մեխվեմ»:*

5.3.20. Ուժի փաստարկ

Ապակառուցողական հնարքների դիտարկումը, թերևս, թերի կլիներ առանց ամենատարբեր վեճերի ժամանակ այնքան գործածական ուժի փաստարկի: Այնտեղ, որտեղ չեն հերիքում բանական փաստարկները, տրամաբանական ապացույցները, բացակայում են մտքի ճկունությունը, հարգանքն ու հանդուրժողականությունը հակառակորդի ու նրա տեսակետի նկատմամբ, մեջտեղ է գալիս ուժի փաստարկը, որպես կարծրամտության ու բռնության առանձնահատուկ դրսևորում: Իհարկե, խոսքն այստեղ ֆիզիկական ուժի կամ ուղղակի բռունցքի մասին չէ, այլ դրանց հնարավորության, գիտակցության մեջ դրանց արտացոլման:

Այս հնարքի դրսևորման սպեկտրը լայն է. սկսած ուղղակի սպառնալիքներից, վերջացրած անցանկալի, տհաճ հետևանքների մասին նուրբ ու անուղղակի ակնարկներով: Սակայն, ինչպիսի երանգավորում էլ ընդունեն և ինչպիսի դրսևորում էլ ունենան ուժի փաստարկները՝ «բռունցքի», «մահակի», «ոստիկանի», «քաղաքագլխի», թե առավել քաղաքակիրթ ձևեր, դրանց էությունը մնում է նույնը. հակառակորդին առաջարկվում է այնպիսի փաստարկ, որը նա ստիպված է ընդունել (կամ էլ չի կարող պատասխանել դրան) ինչ-որ տհաճ բանի նկատմամբ ունեցած վախից, վտանգավոր հետևանքներից խուսափելու համար:

Այդպիսի փաստարկները հաճախ անկասելի են և գործում են բավական «համոզիչ»՝ ստիպելով ընկրկել ու առերես համաձայնության գալ: Թեև դրանք ընդդիմախոսի« բերանը փակելու» լավ մեթոդ են թվում, սակայն ո՛չ արդյունավետ են, ո՛չ էլ հեռանկարային: Առերես համաձայնությունը երբեմն ավելի վտանգավոր է ու պայթյունավտանգ, քան բացահայտ մրցակցությունը:

Այդ առումով վերլուծության արժանի դրվագները շատ են: Ինչպես օրինակ՝ ինկվիզիցիայի ճնշման ներքո արևակենտրոն համակարգի գաղափարից Գ. Գալիլեյի առերես հրաժարվելու իրողությունը[54] կամ 5-րդ դարում հայերին կրոնափոխ անելու պարսից արքունիքի քաղաքականության և Վարդանանց պատերազմի պատմությունը:

Չպետք է թույլ տալ, որպեսզի փաստարկումը, «համոզման գործընթացից վերածվի պարտադրման գործընթացի»[55]:

Նման «համաձայնողական տեխնոլոգիաների» կիրառումը ենթադրում է անհարգալից վերաբերմունք զրուցակցի նկատմամբ և սովորաբար տալիս է հակառակ արդյունք: Ուստի պետք է ըստ ամենայնի բացառել դրանք կարևոր խնդիրների կապակցությամբ համաձայնության մշակման նպատակով ծայր առած քննարկումների ընթացքում:

Հանրային կարևորություն ունեցող խնդիրների արդյունավետ լուծումը պահանջում է առաջնորդվել փաստարկման երևանյան դպրոցի կարգախոսով. «**Ոչ թե ուժի փաստարկով, այլ փաստարկի՛ ուժով: Ոչ թե իշխանության փաստարկով, այլ փաստարկի՛ իշխանությամբ**»[56]**:**

* * *

Ապակառուցողական հնարքներն ավելի շատ են ու բազմազան և ներկայացվածներով չեն սահմանափակվում: Ինչպես որ իրավա-

---

[54] Տե՛ս ***Շտեկլի Ա. Է.,*** Գալիլեյ: Երևան, 1984, էջ 367-374:

[55] ***Асатрян М.В.,*** Экстраполяция и аргументация. В кн.: Философские проблемы аргументации. Под ред. Г.А. Брутяна, И.С. Нарского и др. Ереван, 1986, էջ 63:

[56] ***Брутян Г.А.,*** Очерк теории аргументации. Ереван, 1992, էջ 45:

կան օրենքները կամ քերականական նորմերն ավելի քիչ են, քան դրանց հնարավոր խախտումներն ու շեղումները, այնպես էլ բանավեճի արդյունավետությունը երաշխավորող կանոններն ու նորմերը սկզբունքորեն ավելի քիչ են, քան դրանց խախտումներն ու համապատասխան անթույլատրելի հնարքները: Վերջիններիս իմացությունը և, հատկապես, դրանց դիմագրավման ու չեզոքացման սկզբունքներին տիրպետելը ևս հարկ է դասել բանավեճի արդյունավետությունը երաշխավորող գործոնների շարքը:

5.4. Ապակառուցողական հնարքների դիմագրավման մեթոդաբանական սկզբունքները

Հաղորդակցման և բանավեճի մշակույթի զարգացման ճանապարհին կարևոր պայման է կառուցողականությունն ապահովող տրամաբանական ու արտատրամաբանական սկզբունքների, պերճախոսական հնարների իմացությունը և դրանց կիրառումը: Երկրորդ պայմանը ապակառուցողական հնարքների մասին պատկերացում ունենալն է: Երրորդը, թերևս, ապակառուցողական հնարքների դիմագրավման կարողություններն ու հմտություններն են:

Համադարման կամ բոլոր դեպքերի համար միասնական և ճշգիրտ ալգորիթմ առաջարկելը շատ դժվար է, եթե չասենք՝ անհնար: Անգամ գործնական հաղորդակցման ու հռետորական արվեստի այնպիսի վարպետ, ինչպիսին Դեյլ Քարնեգին է, մի առիթով նշում է խորհուրդների սահմանափակ հնարավորությունների մասին. «Որքան ավելի եմ ես դասավանդում հրապարակային ելույթներ ունենալու արվեստը, այնքան ավելի հստակ եմ հասկանում ու պարզորոշ գիտակցում, որ հնարավոր չէ տալ համընդհանուր կանոններ, որոնք ճիշտ լինեն կյանքի բոլոր դեպքերում: Շատ բան կախված է քննարկման առարկայից, գործողության տեղից ու ժամանակից և իրենից՝

մարդուց: Ինչպես Սուրբ Պողոսն է ասել, ամեն մեկը պետք է իրագործի իր փրկությունը»[57]:

Դ. Քարնեգիի դիտարկումն ընդունելով հանդերձ՝ հարկ է նկատել, որ խորհուրդներ տալու դժվարությունը դեռևս չի նշանակում դրանց անհնարինություն կամ ավելորդություն: Նախորդ շարադրանքում քննարկեցին առանձին հնարքների («հոգու ընթերցանություն», զրպարտություն, «շողոքորթ փաստարկ», թվացյալ առավելությունների շահարկում) դիմագրավման որոշակի տարբերակներ կոնկերտ դեպքերի համար: Իհարկե, անիմաստ է փորձել մոդելավորել հաղորդակցման տարբեր գործընթացներում, մասնավորապես վիճաբանությունների ընթացքում ստեղծվող բոլոր իրավիճակներն ու հնարավոր անթույլատրելի հնարքները և տալ դրանց չեզոքացման ճշգրիտ բանաձևերը: Բայց դրանց չեզոքացման ընդհանուր **մեթոդաբանական սկզբունքներ** ու մոտեցումներ մշակելը հնարավոր է և անհրաժեշտ:

Իսկ ինչպե՞ս վարվել հնարքը նկատելուց հետո, ինչպիսի՞ն պետք է լինի հակազդեցությունը նման դեպքերում: Այս հարցերն անգամ մասնագիտական գրականության մեջ տարակարծությունների տեղիք են տալիս:

Ազնիվ, բայց անփորձ բանավիճողը, որն արդեն որոշակիորեն ծանոթ է սոփեստական հնարքների բազմությանը, դիմակայելու նպատակով կարող է առաջարկել ունկնդիրների ներկայությամբ բացահայտել ապակառուցողական հնարքի էությունը, մերկացնել դրա հեղինակի իրական նկրտումները: Բազմափորձ, բայց անազնիվ վիճողն էլ կարող է առաջարկել սոփեստական հնարքին պատասխանել համարժեք հնարքով: Իսկ ինչպե՞ս պետք է վարվի ազնիվ և փորձառու բանավիճողը:

Անթույլատրելի հնարքը լիարժեք չեզոքացնելու և բացահայտելու համար անհրաժեշտ է իրականացնել **չորս քայլ.**

- *Նկատել ու հասկանալ հնարքը*

---

[57] ***Carnegie D.,*** How to Develop Self-Confidence and Influence People by public Speaking. N.Y., 1956, էջ 158:

- *Չդրվել հնարքի ազդեցությանը*
- *Ցույց տալ դրա հիմքում ընկած՝ հաղորդակցման արդյունավետությունը երաշխավորող նորմերի խախտումները*
- *Բացահայտել ու ապացուցել այդ խախտումների դիտավորությունը՝ դրանով իսկ հնարքը շրջելով հակառակորդի դեմ:*

Միշտ չէ, սակայն, և ոչ բոլոր հնարքների դեպքում է, որ հնարավոր է իրագործել բոլոր չորս քայլերը: Դիմագրավման առանձնահատկությունների և «բացահայտելիության աստիճանի» տեսանկյունից անթույլատրելի հնարքները նպատակահարմար է բաժանել **երեք խմբի:**

Առաջին խումբը կկազմեն այն հնարքները, որոնց դեպքում հնարավոր է իրականացնել վերը նշված բոլոր չորս քայլերը: Այդպիսիք են ուժի փաստարկը, սպառնալիքները, զրպարտությունը, թեզիսի խափանարար նենգափոխումը, վիրավորական արտահայտությունները, պիտակավորումը, հակառակորդի փաստարկներին չապացուցված գնահատականներ տալը: Օրինակ՝ պետք չէ փորձել արդարանալ և կամ հերքել զրպարտության դրույթները, այլ պետք է պահանջել ապացույցներ ու անհերքելի հիմնավորումներ, որոնց բացակայության պարագայում դժվար չէ ցույց տալ հակառակորդի նենգամտությունն ու զրպարտչական կեցվածքը: Նույն եղանակով կարելի է հերքել «պիտակավորումները»՝ կասեցնելով ընդդիմախոսին ու նրա դրույթներին չապացուցված գնահատականներ տալու գործելակերպը:

Կոպիտ և ակնառու հնարքները չեզոքացնելու ընթացակարգը հետևյալ կերպ է նկարագրում ռուս հետազոտող Ա. Վ. Ստեշովը: Վերլուծելով հակառակորդի փաստարկման ընթացքը՝ ընգդծում են ոչ միայն այնտեղ հայտնաբերված կեղծ դրույթներն ու անտրամաբանական հետևությունները, այլև այդ նենգափոխումների իրական շարժառիթները, դրանց միտումնավորությունը: Ապա հարձակման սլաքները ուղղում են ընդդիմախոսի դեմ՝ վարկաբեկիչ փաստերով ցույց տալով նրա ոչ օրինավոր լինելը, խարխլելով նրա հեղինակությունը: Ցանկալի է նաև, երբ այդ ամենն արվում է հումորով, սատի-

բայով: Տեղին են լարվածությունը լիցքաթափող անեկդոտները, սուր արտահայտությունները[58]:

Անթույլատրելի հնարքների ***երկրորդ խումբը*** կազմում են այն տեխնոլոգիաները, որոնց դեպքում հնարավոր է բացահայտել ընդդիմախոսի դատողություններում տեղ գտած սխալներն ու անճշտությունները, սակայն գրեթե անհնար է, և խորհուրդ չի տրվում փորձել ապացուցել դրանց միտումնավոր լինելու հանգամանքը: Այդ հնարքների թվին են պատկանում տրամաբանական սխալների, կանոնավոր մտածողության ընդհանուր և մասնավոր օրենքների խախտումների վրա կառուցված սոփեստությունները, ինչպիսիք են թեզիսի մասնակի և ամբողջական նենգափոխումները, կեղծ և չհիմնավորված փաստարկները, թվացյալ ապացուցումները: Պատրաստված մարդու համար դժվար չէ հայտնաբերել և ի ցույց դնել ընդդիմախոսի կշռադատություններում եղած տրամաբանական սխալները: Սակայն խորհուրդ չի տրվում բանավեճ սկսել դրանց միտումնավորության վերաբերյալ, եթե, իհարկե, սխալի ակնհայտ դառնալուց հետո ընդդիմախոսն ընդունում է այն և չի շարունակում համառել:

Օրինակ: Թեզիսի մասնակի կամ ամբողջական նենգափոխման դեպքում հարկավոր է ընդդիմախոսին և լսարանին ներկայացնել տրամաբանական կանոնավորության հիմնարար սկզբունքներից մեկի՝ որոշակիության պահանջի խախտման հետևանքով տեղ գտած սխալը և արդյունքում՝ բանավեճի մի նոր, երկրորդական կամ տվյալ համատեքստում անկարևոր հարցի շուրջ տեղափոխման փաստը: Պետք է հիշեցնել ընդդիմախոսին բանավեճի սկզբնական թեզիսի, հիմնական թեմայի ու նպատակի մասին, ճշգրտել հակաթեզիսը և քննարկումը վերադարձնել նախկին հունը:

Ընդդիմախոսի կշռադատություններում կեղծ փաստարկներ հայտնաբերելիս հարկավոր է ակնառու կերպով, անհերքելի օրինակների ու փաստերի միջոցով ցույց տալ դրանց անհամապատասխանությունն իրականությանը, տրամաբանական եղանակներով հերքել դրանց ճշմարտությունը և անցնել այդ շինծու փաստարկների վրա

[58] ***Стешов А.В.,*** Как победить в споре. О культуре полемики, էջ 142-143:

կառուցված կշռադատությունների հերքմանը: Նույն ձևով պետք է վարվել նաև կեղծ կամ թվացյալ ապացուցումների դեպքում:

Սակայն, ինչպես արդեն նշվեց, նպատակահարմար չէ պնդել այդ սխալների միտումնավորությունը: Քանզի, եթե բանավիճողը, ընդդիմախոսին մեղադրելով անազնիվ կեցվածքի մեջ, չկարողանա ապացուցել նենգամտության և միտումնավորության առկայությունը, ապա այդ քայլը կարող է որակվել որպես մերկախոս, չապացուցված մեղադրանք («հոգու ընթերցանություն») և ունկնդիրների մոտ ինքը կարող է անազնիվ վիճողի տպավորություն թողնել: Վեճը կարող է ընդունել լարված և սուր անձնական բնույթ: Բացի այդ, բացառված չէ, որ «մերկացնող» կողմն էլ սխալվի, նրան թվա, թե ընդդիմախոսը սխալը կատարել է միտումնավոր, սակայն իրականում այն լինի չգիտակցված: Այնպես որ, ավելի ճիշտ կլինի բավարարվել հակառակորդի դատողություններում սխալի բացահայտմամբ, չքննարկելով՝ միտումնավոր է այն կատարված, թե ակամա: Չէ՞ որ սխալի բացահայտումն արդեն միանգամայն բավարար է հակառակորդի կշռադատությունները հերքելու համար[59]:

Ապակառուցողական հնարքների ***երրորդ խումբը*** կազմում են այն նուրբ և գլխավորապես հոգեբանական ազդեցությանն ուղղված տեխնոլոգիաները, որոնց չեզոքացման համար չեն պահանջվում, անգամ հակացուցված են «հանգամանալից մերկացումները»: Այդպիսիք են «շողոքորթ փաստարկները», մտքի ոչ բացահայտ ձևերի օգնությամբ խոցելի կամ հակառակորդի համար անցանկալի դրույթի մատուցման մարտավարությունը (քողարկված փաստարկ), ինչպես նաև ներշնչման հոգեբանական հնարքներն ու ընդդիմախոսի ուշադրությունը շեղելուն, նրան կեղծ հետքի վրա հանելուն ուղղված գործողությունները: Այդպիսի հնարքները չեզոքացնելու ամենալավ եղանակն ու ամենախելացի հակամիջոցը **դրանք ճանաչելն ու դրանց ազդեցության տակ չընկնելն է**, խայծի կողքով անտարբեր անցնելը: Որոշ հեղինակներ նման դեպքերում թույլատրելի են համարում հակառակորդի դիտողությունների ու հարցերի արհամարհու-

[59] Տե՛ս ***Поварнин С.И.,*** Спор. О теории и практике спора, էջ 131:

մը[60]: Այդպիսի խարդավանքներին չտրվելն արդեն մեծապես պայմանավորում է դրանց անհաջողությունը:

Ի վերջո, պետք է հաշվի առնել նաև լսարանի գործոնը: Բանն այն է, որ անգամ բացահայտելության առաջին և երկրորդ խմբում ընդգրկված հնարքների պարագայում ոչ միշտ են կիրառելի ու երաշխավորված դրանց խափանման կապակցությամբ գիտական մեկնաբանություններն ու բացատրական աշխատանքը: Եթե վեճը տեղի է ունենում տեսական գիտելիքների առումով անպատրաստ, բարդ ու երկարաշունչ դատողություններ չսիրող ու չընկալող ունկնդիրների առաջ, ապա հիշյալ մեկնաբանությունները կարող են դժվարացնել վիճաբանությունը, թուլացնել տպավորությունը: Իսկ որպեսզի ունկնդիրներին հասու լինի, և նրանք կարողանան հասկանալ հնարքի էությունը, հաճախ անհրաժեշտ է ընդլայնել նրանց մտահորիզոնը, լրացուցիչ գիտելիքներ հաղորդել տրամաբանությունից, բարոյագիտությունից, հոգեբանությունից, փաստարկման տեսությունից, ինչը գրեթե անհնարին է: Նախ, անազնիվ հակառակորդն ամեն կերպ կձգտի թույլ չտալ զարգացնել երկարաշունչ բացատրություններ: Իսկ եթե նա այդպիսի քայլեր չձեռնարկի էլ, ապա շատ ունկնդիրներ կարող են չհասկանալ առաջարկվող մեկնաբանությունները, դրանք կթվան անհետաքրքիր ու ձանձրալի: Կարճամիտ մարդը զրուցակցի դատողություններում ամեն բարդը, իր համար դժվարամարսն ու անհասկանալին սովորաբար հակված է վերագրել նրա մտածողության արատավորությանը:

Այնպես որ, ապակառուցողական հնարքների չեզոքացման ուղղությամբ քայլեր ձեռնարկելիս, առավել ևս, երբ դա նախատեսվում է անել հրապարակայնորեն մերկացնելու, ունկնդիրների ներկայությամբ դրանք ըստ էության մեկնաբանելու ճանապարհով, պետք է հաշվի առնել, թե ովքեր են ունկնդիրները, ինչպիսին է նրանց պատրաստվածության ու մտավոր զարգացածության մակարդակը, և ըստ այդմ էլ՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պարզել, թե որքանո՞վ է նպատակահարմար, որքանո՞վ կարող է արդյունավետ լինել չեզո-

[60] Տե՛ս ***Стешов А.В.,*** Как победить в споре. О культуре полемики, էջ 136:

քացման այս կամ այն ձևը տվյալ պարագայում: Բացի այդ, ինչպես նախորդ բաժնում ապակառուցողական հնարքների դիմագրավման տարբերակները դիտարկելիս նշվեց, ոճի ընտրությունը, պատասխանի խոցող կամ մեղմ լինելը պայմանավորված է նաև քննարվող հարցի կարևորությամբ, բանավիճողների անձնական հարաբերությամբ, հարաբերություններում ընկերական և գործընկերային տրամադրությունները պահպանելու, լսարանի վրա թողած տպավորությունը կարևորել-չկարևորելու գործոններով[61]:

Կարող է հարց առաջանալ: Եթե ոչ բոլոր անազնիվ հնարքների դեպքում և ոչ բոլոր իրավիճակներում է հնարավոր կամ խրախուսելի դրանց հրապարակային բացահայտումն ու մեկնաբանումը, ապա թույլատրելի չէ՞ արդյոք նման դեպքերում սոփեստություններին դրանք խափանող սոփեստական հնարքներով պատասխանելը: Փաստարկման և վեճի տեսության ուշագրավ ու կարևոր այս հարցը բավականին վիճահարույց է, և չկա դրա՝ համընդհանուր ընդունելության արժանացած ու վերջնական լուծման որևէ տարբերակ: Հաճախ փորձում են շրջանցել այդ խնդրի սկզբունքային, մեթոդաբանական քննարկումները և այն լուծել յուրաքանչյուր կոնկրետ դեպքի և իրադրության համար առանձին: Առավել արմատականորեն տրամադրված տեսաբաններն էլ այդ հարցին մոտենում են տրամագծորեն հակադիր մեկնակետերից:

Ս. Պովարնինը, օրինակ, նշված խնդիրը համարում է վիճողի խղճի գործը: Դրա լուծումը մեծապես պայմանավորված է մարդու դաստիարակությամբ, մտավոր զարգացածության մակարդակով, բարոյական կերպարով և այլն: Սակայն, հավատարիմ մնալով վիճաբանության դիալեկտիկական և հակաէրիստիկական-հակասոփեստական սկզբունքներին, ռուս հետազոտողը նշում է, որ կան այնպիսի անազնիվ հնարքներ, ինչպիսիք են ընդդիմախոսին վշտացնելուն և վեճի վիժեցմանն ուղղված գործողությունները, որոնք անընդու-

[61] Այդ մասին տե՛ս նաև ***Վարդումյան Ս.,*** Կառավարչական հմտությունների զարգացում, էջ 122-124:

նելի են ազնիվ մարդու համար ցանկացած, թեկուզև արդարացուցիչ հանգամանքներում[62]:

Ա. Շոպենհաուերն, ընդհակառակը, խրախուսելով ու արդարացնելով վիճաբանության ժամանակ սոփեստական հնարքներով նախահարձակ լինելու սկզբունքը, ընդգծում է դրանց չեզոքացման նպատակով համարժեք անազնիվ հնարքների գործադրման նպատակահարմարությունը: Նա գրում է. «Երբ մենք նկատում ենք, որ հակառակորդն առաջադրում է թվացյալ կամ սոփեստական փաստարկ, մենք, ճիշտ է, կարող ենք հերքել այն՝ բացահայտելով դրա վտանգավորությունն ու խաբուսիկությունը, սակայն ամեն դեպքում ավելի լավ է դրան դիմագրավել նույնքան խաբուսիկ ու սոփեստական հնարքով և այդ եղանակով խափանել այն: Քանզի խնդիրն այստեղ ոչ թե ճշմարտությունն է, այլ հաղթանակը»[63]:

Ինչ խոսք, շոպենհաուերյան դիրքորոշումն անընդունելի է կառուցողական բանավեճերի ընթացքում: Այն ոչ միայն խափանում և խճճում է ճշմարտության որոնումը, վեճին հաղորդում ավելորդ լարվածություն, այլև առաջ է բերում նորանոր մոլորություններ ու խնդիրներ: Այդպիսի մոտեցումը պետք է ամեն կերպ բացառել ոչ միայն գիտական, իրավական, քաղաքական բանավեճերի այլև առօրյա ու կենցաղային վիճաբանությունների ընթացքում, որքան էլ որ բարի կամ ցանկալի լինի հետապնդվող նպատակը: Տեղին է այստեղ ներկայացնել Շոպենհաուերին Պովարնինի այն առարկությունը, թե «որտեղ հնարավոր է, այնտեղ նախընտրելի է չօրորվել կեղտի մեջ»[64]:

---

[62] ***Поварнин С.И.***, Спор. О теории и практике спора. “Вопросы философии”, 1990, № 3, էջ 132:
[63] ***Schopenhauer A.*** Eristische Dialektik. Handschriftlicher Nachlass. Lepzig [s.a.], Bd. 2, էջ 93:
[64] ***Поварнин С.И.***, նշվ. աշխ., էջ 133:

ՎԵՐՋԱԲԱՆ

Բանավեճն օրինաչափ երևույթ է մտավոր հաղորդակցման և իմացության բնագավառում: Անուրանալի է դրա ճանաչողական նշանակությունը: Սակայն, այն կարող է ունենալ ինչպես դրական, կառուցողական, այնպես էլ ապակառուցողական նշանակություն ու անցանկալի հետևանքներ: Տարակարծություն առաջ բերող հարցերի շուրջ մտքերի փոխանակությունը իմացության զարգացման, հասարակական կյանքում առաջացող խնդիրների լուծման ու առաջընթացի գործին ծառայեցնելու համար անհրաժեշտ է այդ երևույթի և դրա դրսևորումների շարունակական ուսումնասիրություն՝ տվյալ ասպարեզում գիտության տարբեր ճյուղերի ձեռքբերումների համադրության ու փոխադարձ հարստացման ճանապարհով:

Չնայած սույն աշխատության մեջ հետազոտված հիմնահարցերի լայն ընդգրկմանը, այնուամենայնիվ, անհնար է մեկ ուսումնասիրության շրջանակներում անդրադառնալ բանավեճի՝ բարդ ու բազմաղեմ այդ երևույթի բոլոր կողմերին, սպառիչ կերպով ընդգրկել դրանք: Բանավեճերը մարդկային գործունեության տարբեր բնագավառներում (քաղաքական, իրավական, գիտական, կրթադաստիարակչական և այլն) ունեն իրենց յուրահատկությունները, մեթոդական կիրառման շրջանակները, վարման, արարողակարգի սկզբունքներն ու պահանջները, որոնց հետագա հանգամանալից ուսումնասիրությունը արժեքավոր և հեռանկարային կարող է լինել ինչպես այդ երևույթի վերաբերյալ պատկերացումների, բանավեճի տեսության զարգացման ու հարստացման, այնպես էլ տվյալ ոլորտներում մտքերի փոխանակության գործընթացի կատարելագործման, դրա արդյունավետության բարձրացման տեսանկյուններից:

Փոփոխվող հասարակական կյանքն էլ առաջ է բերում բանավեճի վերաբերյալ գիտելիքների վերաիմաստավորման, անընդհատ զարգացման ու կատարելագործման անհրաժեշտություն:

Բանավեճի և փաստարկման հարցերի ուսումնասիրությունը կարելի է դասել այն «հավերժական» հիմնախնդիրների շարքը, որոնց նկատմամբ չմարող հետաքրքրությունը պատմական տարբեր

ժամանակահատվածներում աճում կամ նվազում է՝ կապված հասարակական կյանքի առանձնահատկությունների, գործնական պահանջների հետ: Հասարակության զարգացման տարբեր փուլերում այդ խնդիրները դիտարկվում են յուրովի՝ իրականության տվյալ համատեքստում առաջադրված պահանջներին համապատասխան:

Քաղաքակրթության զարգացմանը զուգընթաց ավելի ու ավելի է ընդլայնվում մտքերի փոխանակության, տեղեկատվության և, ընդհանրապես, հաղորդակցման գործընթացների դերն ու նշանակությունը: Կապված հաղորդակցման էլեկտրոնային միջոցների շարունակական կատարելագործման, համակարգչային նոր տեխնոլոգիաների ներդրման ու լայն կիրառման, դրա շնորհիվ տարածության, ժամանակի և ինֆորմացիայի յուրատեսակ «խտացման» հետ, մտավոր հաղորդակցումը ձեռք է բերում նոր որակներ ու նոր բովանդակություն: Ստանալով առաջնային նշանակություն՝ այն մեծապես պայմանավորում է հասարակական կյանքի տարբեր բնագավառներում տեղի ունեցող գործընթացների արդյունավետությունը: Այդ ամենը հիմք է տալիս խոսելու **ինֆորմացիոն հասարակության** մասին, որտեղ տնտեսության մյուս ճյուղերի նկատմամբ գերակայող է տեղեկատվական ոլորտը: Առանձին հետազոտողներ էլ, անգամ, ընդգծելով հաղորդակցման գործընթացների դերի կարևորությունը հասարակական կյանքում, մարդկային քաղաքակրթության զարգացման տարբեր փուլերը բացատրում ու մեկնաբանում են պատմական տվյալ ժամանակահատվածին բնորոշ՝ հաղորդակցման ծավալներով, դրա հիմնական ձևերի ու եղանակների, մեթոդների կատարելագործվածության աստիճանով[65]:

Հիրավի, անհնար է անտեսել կամ թերագնահատել հաղորդակցման գործընթացների աճող դերն ու կարևորությունը հասարակության զարգացման ճանապարհին: Հասարակական կյանքի արմատական վերափոխումներով հարուստ մեր ժամանակներում նկատելի է կարծիքների ազատ փոխանակության, հակադիր տեսակետների բախման, հրապարակային քննարկումների ու բանավեճերի յուրօրի-

[65] Տե՛ս ***McLuhen H. M.,*** The Gutenberg Galaxy. Toronto, 1962; ***Toffler A.,*** The Third Wave. N.Y., 1980:

նակ «մակընթացության» մի իրավիճակ, որն իր հետ բերում է այդ երևույթների գիտական ուսումնասիրության, դրանց արդյունավետ վարման մեթոդների կատարելագործման նկատմամբ հասարակայնորեն ձևավորված պահանջմունքների ու հետաքրքրությունների նոր ալիք:

Բանավեճի տեսության խնդիրների վերաբերյալ պատմափիլիսոփայական հարուստ ժառանգության առավել խոր և հանգամանալից ուսումնասիրման, հասարակական գործունեության տարբեր ոլորտներում վեճերի, դրանց առանձնահատկությունների ու մասնավոր կանոնների հետազոտման խնդիրներին զուգահեռ, նոր հեռանկարներ են բացվում բանավեճի երևույթի ուսումնասիրության բնագավառում՝ կապված հաղորդակցման ասպարեզում «համակարգչային հեղափոխության», մտածողության մեքենայացման, արհեստական ինտելեկտի ստեղծման ուղղությամբ իրականացվող գործընթացների հետ:

ՀԱՎԵԼՎԱԾ

Ռուսերենում վեճի երեվույթն արտացոլող հիմնական հասկացությունների բառարանային համեմատական ուսումնասիրության աղյուսակներ

	Դաղբաշյան Հ.: Բառարան ռուսերենից-հայերեն: Թիֆլիս, 1906:	**Ղարիբյան Ա.Ս.: Ռուս-հայերեն բառարան: Եր., 1982:**	**Ռուս-հայերեն բառարան: Չորս հատորով: Խմբ.՝ Էդ. Բ. Աղայան և ուրիշներ: Եր., 1954-1959:**
Спор	Այս բառը Դաղբաշյանի բառարանում չկա: Կա спорить ձևը – վիճել, վիճաբանել:	1. վեճ, վիճաբանություն: 2. վեճ, գժտություն: 3. վիճարկություն, փոխադարձ պահանջ:	վեճ, վիճաբանություն:
Дискуссия	այս բառը ևս չկա	դիսկուսիա, վիճաբանություն, բանավեճ:	դիսկուսիա, վիճաբանություն,
Полемика	Полемизироеать-բանակռվել, բանակռիվ մղել, полемика բանակռիվ (գիտական), полемический- բանակռվի, բանակռվական:	բանավեճ, բանակռիվ:	հոգն. չունի. բանավեճ, բանակռիվ: Научная п. գիտական բանավեճ:
Диспут	Գիտական վեճ, գիտական շարադրության հրապարակային պաշտպանությունը: Կա диспутант ձևը – (լատ.) նա, ով գիտական աստիճան ստանալու համար իր դի-	դիսպուտ, հրապարակային գիտական վեճ, բանավեճ:	դիսպուտ, գիտական վեճ (հրապարակային): դիսպուտ (դիսերտացիայի պաշտպանություն):

	սերտացիան պաշտ-պանում է):		
Прения	Կա միայն եզակի ձևը՝ прение – վիճաբանություն, բանակռիվ:	միայն հոգն. վիճաբանություն, մտքերի փոխանակություն, բանավեճ, վեճ, վիճաբանություն:	Прение, я, ավելի հճխ. հոգն. 1. (հնց.) վեճ, բանավեճ: 2. միայն հոգն. վիճաբանություններ, քննարկում:
Дебаты	(ֆր.) վիճաբանություններ, ընդդիմախոսություն (մնվդ. ազգային ժողովներում):	միայն հոգն. վիճաբանություններ, քննարկման վեճեր, մտքերի փոխանակություն:	եզ. չունի. վիճաբանություններ, հարցի քննարկում, վեճեր

	Русско-немецкий словарь. Под ред. А.Б. Лехвица, А.А. Лепинга, Н.П. Страховой. М., 1965.	**Русско-немецкий словарь. Под ред. К.Лейм. М., 1991.**	**Новейший французско-русский, русско-французский словарь. Харьков, 2005.**	**Русско-английский словарь. Под ред. О.С.Ахмановой. М., 1971.**
Спор	Streit *m;* Wortwechsel *m;* Wortgefecht *n;* - ы Streitigkeiten *pl.*	Streit *m;* Wortwechsel *m;* - ы Streitigkeiten *pl.*	discussion *f;* debat *m; юр.* litige *m;* altercation *f (перерекание);* contestation *f* (оспаривание).	argument; argumentation ; controversy.
Дискуссия	Discussion *f;* Besprechung *f;* Erorterung *f;* Aussptache *f.*	Discussion *f;* Besprechung *f;* Erorterung *f;* Aussptache *f.*	discussion *f;* debats *m pl.*	discussion; debate.

Полемика	Polemik *f.*	Polemik *f.*	polemique *f.*	controversy; polemic (s) *(pl);* dispute.
Диспут	Disput *m;* Disputation *f.*	Meinungsaustausch m; Discussion *f;* Aussprache *f.*	dispute *f;* discussion *f* publique.	public debate
Прения	Debatte *f;* Meinungsaustausch *m;* Diskussion *f;* Aussprache *f.*	Debatte *f;* Meinungsaustausch *m;* Discussion *f;* Aussprache *f.*	debats *m pl.;* discussion *f.*	debate *sg.;* discussion *sg.*
Дебаты	мн.: Debatte *f;* Wortkampf *m.*	Debatte *f;* Wortgefecht *n;* Redeschlacht *f.*	debats *m pl.*	debate *sg*.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(Ցանկում նշված են այն աղբյուրները, որոնցից մեջբերումներ են արված կամ որոնք հիշատակված են աշխատության շարադրանքում)

1. ***Աղայան Է. Բ.,*** Արդի հայերենի բացատրական բառարան, հ.1: Եր., 1976:
2. ***Բրուտյան Գ. Ա.,*** Իմաստասիրական երկխոսություններ, հ.2: Եր., 1986:
3. ***Բրուտյան Գ. Ա.,*** Տրամաբանության դասընթաց: Եր., 1987:
4. ***Բրուտյան Ա., Բրուտյան Գ.,*** Քաղաքական փաստարկման 101 կանոն: Եր., 2003:
5. ***Գաբրիելյան Հ.,*** Հայ փիլիսոփայական մտքի պատմություն: Չորս հատորով, հ. 1; 2: Եր., 1956; 1958:
6. ***Գալստյան Խ. Ա.,*** «Քաղաքական բանակցություններ. տեսություն և պրակտիկա»: Եր., 2007:
7. ***Դավիթ Անհաղթ,*** Երկեր: Աշխարհաբար թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ս.Ս.Արևշատյանի: Եր., 1980:
8. ***Դաւիթ Անյաղթ,*** Երկասիրութիւնք փիլիսոփայականք: Համահավաք քննական բնագրերը և առաջաբանը Ս.Ս.Արևշատյանի: Եր., 1980:
9. ***Դիսերվեգ Ա.***, Մանկավարժական ընտիր երկեր: Եր., 1963:
10. ***Եզնիկ Կողբացի*** Եղծ աղանդոց: Գրաբ. բնագիրը Կ. Մ. Մուրադյանի: Աշխարհաբ. թարգմանությունը Ա. Ա. Աբրահամյանի: Եր., 1994:
11. Ժամանակակից բուրժուական փիլիսոփայություն: Ուս. ձեռնարկ համալս. փիլ. ֆակ. համար: Խմբ. Բոգոմոլով Ա. Ս., Մելվիլ Յ. Կ., Նարսկի Ի. Ս.: Եր., 1983:
12. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ.3: ԳԱ հրատ., Եր., 1974:
13. ***Լառոշֆուկո Ֆ. դը,*** Մաքսիմներ և բարոյախոսական խորհրդածություններ: Եր., 1987:

14. Կոուպցիայի ընկալումը և ռիսկերը բարձրագույն ուսումնական հաստատություններում: ՄԱԶԾ, ՀՈՒՋ, Երևան, 2004:
15. ***Հովհաննիսյան Գ., Հովհաննիսյան Հ.,*** Բանավեճի մեթոդը ուսումնադաստիարակչական գործընթացում: Եր., «Գիտելիք» հրատ., 2006:
16. ***Հովհաննիսյան Հ. Հ.,*** Փաստարկման հարցերը հայ փիլիսոփայական մտքի պատմության համատեքստում: Գիրք 1; 2, Եր., 2005; 2009:
17. ***Կրուպեցկի Վ. Ս.,*** Մանկավարժական հոգեբանության հիմունքները: Եր., 1976:
18. ***Հովհաննիսյան Հ. Օ.,*** Վիճաբանության և փաստարկման փոխհարաբերության հարցի շուրջ: «Բանբեր Երևանի համալսարանի», N°3 (84), 1994:
http://www.ysu.am/files/01H_Hovhannisyan.pdf
19. ***Հովհաննիսյան Հ. Օ.,*** Վեճի տեսության հարցերը Հին աշխարհում: «Երիտասարդ գիտնականի ամբիոն», պր. 5, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 1996:
20. ***Հովհաննիսյան Հ. Օ.,*** Վիճաբանության իմացաբանական և մեթոդաբանական տեսանկյունները: «Երիտասարդ գիտնականի ամբիոն», պր. 5, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 1996:
21. ***Հովհաննիսյան Հ. Օ.,*** Քաղաքացիական և քաղաքական երկխոսության մշակույթ. համաձայնողական տեխնոլոգիաներ: «Խաղաղության մշակույթ. ժողովրդավարություն և մշակույթների երկխոսություն» միջազգային խորհրդաժողովի նյութեր: «Տիգիր» հրատ., Եր., 1999:
22. ***Հովհաննիսյան Հ. Օ.,*** Փոխակերպական տրամաբանության մեթոդաբանական և կիրառական տեսանկյունները: «Փոխակերպական տրամաբանություն»: Գիրք 2: Ընդ. խմբ.՝ Գ. Բրուտյանի: «Փիլիսոփայության միջազգային ակադեմիա» հրատ.: Եր., 2008:
23. ***Հովհաննիսյան Հ. Օ.,*** Բանավեճի մեթոդի առանձնահատկությունները դասավանդման և սովորողների մտավոր կարողությունների զարգացման գործընթացներում: «Մանկավարժական միտք»: 2016 (3-4), «Զանգակ» հրատ., Եր.:

24. ***Հովհաննիսյան Հ. Օ.,*** Փաստարկում և հռետորություն: Ձեռնարկ իրավաբանության ֆակուլտետների մագիստրանտների և իրավունքի ոլորտի աշխատողների համար: ՀՖՀՀ, Եր., «Արտագերս» հրատ., 2015:
25. ***Ղազար Փարպեցի,*** Հայոց պատմություն: Թուղթ Վահան Մամիկոնյանին: Քնն. բնագ.՝ Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի: Աշխարհաբ. թարգմ. և ծանոթագր.՝ Բ. Ուլուբաբյանի: Եր., 1982:
26. Մանկավարժություն: Դասախոսությունների դասընթաց: Ընդհ. խմբ.՝ Գ. Ի. Շչուկինայի, Ե. Յա. Գոլանտի, Կ. Դ. Ռադինայի: Եր., 1969:
27. Մակավարժություն: Ուսումնական ձեռնարկ մանկավարժական ինստիտուտի ուսանողների համար: Խմբ.՝ Յու. Կ. Բաբանսկու: Մաս 1: Եր., 1986:
28. ***Մատթեոս Ուռհայեցի,*** Ժամանակագրություն: Գրաբ. բնագ.՝ Մ. Մելիք-Ադամյանի և Ն. Տեր-Միքայելյանի: Աշխարհաբ. թարգմ. և ծանոթագր.՝ Հ. Բարթիկյանի: Եր., 1991:
29. ***Միրզոյան Վ. Ա.,*** Ճարտասանություն: Եր., 2010:
30. ***Ներսեսյանց Վ. Ս.,*** Սոկրատես: Եր., 1989:
31. ***Շտեկլի Ա. Է.,*** Գալիլեյ: Եր., 1984:
32. ***Պետրոսյան Ա.,*** Գործարար հաղորդակցություն: Եր., 2003:
33. ***Պոգորելով Ա. Վ.,*** Երկրաչափություն: Ուսումնական ձեռնարկ միջնակարգ դպրոցի 8-10-րդ դասարանների համար: Եր., 1986:
34. ***Ջիվելեգով Ա. Կ.,*** Լեոնարդո դա Վինչի: Եր., 1986:
35. ***Ջուհարյան Թ. Գ.,*** Հայ գրականության մեթոդիկա: Եր., 1980:
36. ***Վարդումյան Ա.,*** Կառավարչական հմտությունների զարգացում: Եր., 2014:
37. ***Վիներ Ն.,*** Ես մաթեմատիկոս եմ: Եր., 1969:
38. ***Алексеев А.П.,*** Аргументация. Познание. Общение. М., 1991.
39. ***Аль-Фараби,*** Философские трактаты. Алма-Ата, 1970.
40. Антология мировой философии. В четырех томах. Ред. коллегия: В.В.Соколов, В.Ф. Асмус, В.В. Богатов и др. М., 1969-1972.
41. ***Аристотель,*** Сочинения в четырех томах. Пер. с древнегреч. М., 1976-1983.

42. ***Асатрян М.В.,*** Экстраполяция и аргументация. В кн.: Философские проблемы аргументации. Под ред. Г.А. Брутяна, И.С. Нарского и др. Ереван, 1986.
43. ***Асмус В.Ф.,*** Логика. М., 1947.
44. ***Асмус В.Ф.,*** Учение логики о доказательстве и опровержении. М., 1954.
45. ***Бессараб М.Я.,*** Академик Л.Д.Ландау. Страницы жизни. М., 1988.
46. ***Библер В. С.,*** Творческое мышление как предмет логики. В кн.: Научное творчество. Под ред. С.Р.Микулинского, М.Г. Ярошевского. М., 1969.
47. ***Бройл Л. де,*** По тропам науки. М., 1962.
48. ***Бредемайер К.,*** Черная риторика: Власть и магия слова. Пер. с нем., М., 2005.
49. ***Брутян Г.А.,*** Аргументация. Ереван, 1984.
50. ***Брутян Г.А.,*** Очерк теории аргументации. Ереван, 1992.
51. ***Брутян Г.А.,*** Трансформационная логика. Ереван, 1983.
52. ***Быков Г.В.,*** Типология научных дискуссий. «Вопросы фиософии». 1978, № 3.
53. ***Бэкон Ф.,*** Сочинения в двух томах, т. 2, М., 1978.
54. «Вопросы философии». Вып. 4. Ред. коллегия: Мхитарян Г.Е., Джиджян Р.З. и др. Ереван, 1984.
55. «Вопросы философии». Вып. 6-7. Ред. коллегия: Мхитарян Г.Е., Джиджян Р.З. и др. Ереван, 1988.
56. ***Гегель Г.В.,*** Философия права. М., 1990:
57. ***Гельвеций К.А.,*** Сочинения в двух томах, т. 2, М., 1974.
58. ***Глазман М.С.,*** Творчество как диалог. В кн.: Научное творчество. Под ред. С.Р. Микулинского, М.Г. Ярошевского. М., 1969.
59. ***Гокиели Л.П.,*** Логика, т. 1, Тбилиси, 1965.
60. ***Горский Д.П.,*** Логика. Учебное пособие для педагогических институтов. М., 1958.
61. ***Диоген Лаэртский,*** О жизни, учениях и изречениях знаменитых философов. М., 1986.

62. ***Доватур А.И.,*** Политика и политии Аристотеля. М.-Л., 1965.
63. Древнеиндийская философия. Начальный период. Пер. с санскрита. Подготовка текстов, вступ. статья и коммент. В.В. Бродова. М., 1972.
64. Древнекитайская философия. Собрание текстов в двух томах. Вступ. статья В.Г. Бурова и М.Л. Титаренко. М., 1972-1973.
65. ***Ивакина Н.Н.,*** Основы судебного красноречия (риторика для юристов). М., 2007.
66. История античной диалектики. Ред. коллегия: М.А. Дынник и др. М., 1972.
67. История диалектики XIV-XVIII вв. Ред.коллегия: З.А. Каменский и др. М., 1974.
68. ***Карнеги Д.,*** Как вырабатывать уверенность в себе и влиять на людей, выступая публично. Как перестать беспокоиться и начать жить. М., 1989.
69. ***Карнеги Д.,*** Как приобретать друзей и оказывать влияние на людей. Киев, 1990.
70. ***Квинтилиан М.Ф.,*** Правила ораторского искусства. Кн. X, СПб, 1896.
71. ***Кессиди Ф.Х.,*** Сократ. М., 1988.
72. ***Кондаков Н.И.,*** Логический словарь-справочник. М., 1976.
73. ***Котарбиньский Т.,*** Избранные произведения. М., 1963.
74. ***Леви В.Л.,*** Искусство быть другим. М.,1980.
75. ***Лейбниц Г.В.,*** Сочинения в четыех томах, т.3, М., 1984.
76. ***Лернер И.Я., Скаткин М.Н.,*** О методах обучения. «Советская педагогика». 1965, № 23.
77. Материалисты древней Греции. Собрание текстов Гераклита, Демокрита и Эпикура. Общая ред. и вступ. статья М.А. Дынника. М.,1955.
78. ***Микулинский С.Р.,*** Научная дискуссия и развитие науки. «Вопросы философии». 1978, № 3.

79. ***Михайлов В.А.,*** О специфике аргументации в процессе научной дискуссии. В кн.: Философские проблемы аргументации. Под ред. Г.А.Брутяна, И.С. Нарского и др. Ереван, 1986.
80. ***Мицич П.,*** Как проводить деловую беседу. М., 1987.
81. ***Монтень М.,*** Опыты. Избранные главы. М., 1991.
82. ***Налчаджян А.А.,*** Конфликт, аргументация и адаптация. В кн.: Философские проблемы аргументации. Под ред. Г.А. Брутяна, И.С. Нарского и др.
83. ***Ойзерман Т.И.,*** Проблемы историко-философской науки. М., 1969.
84. ***Павлов И.П.,*** Полное собрание сочинений, изд. 2-е, т. 5, М.-Л., 1952.
85. ***Павлова К.Г.,*** Психология спора. Владивосток, 1988.
86. ***Павлова Л.Г.,*** Спор, дискуссия, полемика. М., 1991.
87. ***Петров О.В.,*** Риторика: учебник. М., 2004.
88. ***Поварнин С.И.,*** Спор. О теории и практике спора. «Вопр. философии». 1990, № 3.
89. ***Платон,*** Собрание сочинений в четырех томах. Пер. с древнегреческого. Под общ. ред. А.Ф. Лосева, В.Ф. Асмуса и А. А. Тахо-Годи. М., 1990-1994.
90. ***Плутарх.,*** Изречения царей и полководцев. «Застольные беседы». Ленинград, 1990.
91. Психологические исследования общения. Отв. ред. Б.Ф. Ломов и др. М., 1985.
92. ***Родный Н.И.,*** Очерки по истории и методологии естествознания. М., 1975.
93. ***Родос В.Б.,*** О правилах доказательства, аргументации и полемики. В кн.: Философские проблемы аргументации. Под ред. Г.А. Брутяна, И.С. Нарского и др.
94. Роль дискуссий в развитии естествознания. Отв. ред. М.Г. Ярошевский. М., 1986.
95. ***Сагатовский В.Н.,*** Вселенная философа. М., 1972.

96. Сборник упражнений по логике. Под ред. Клевчени А.С., Мн., 1977.
97. Сборник упражнений по логике. Под ред. Клевчени А.С. и Бартона В.И., Мн., 1990.
98. ***Семенов Н.,*** Наука не терпит субъективизма. «Наука и жизнь». 1965, № 4.
99. ***Слемнев М.А.,*** Васильков В.Н. Диалектика спора. Минск, 1990.
100. ***Соколов А.Н.,*** Проблемы научной дискуссии. Логико-гносеологический анализ. Ленинград, 1980.
101. ***Соловьев Вл.С.,*** Сочинения в двух томах, т.2. М., 1990.
102. ***Соминский М.С.,*** Абрам Федорович Иоффе. М.-Л., 1964.
103. ***Стешов А.В.,*** Как победить в споре. О культуре полемики. Ленинград, 1991.
104. ***Тургенев И. С.,*** Полное собрание сочинений в 30 тт. Т. 10., М., 1982.
105. ***Урсул А.Д.,*** Гносеологические особенности научной дискуссии. «Вопросы философии». 1978, № 3.
106. Философский энциклопедический словарь. Гл. ред.: Л.Ф. Ильичев, П.Н. Федосев и др. М., 1983.
107. ***Фролов И.Т.,*** Философия и история генетики. Поиски и дискуссии. М., 1988.
108. ***Хропанюк В.Н.,*** Теория государства и права. М., 1993.
109. ***Цицерон М.Т.,*** Речи в двух томах. Т. 1, М., 1962.
110. ***Чаттерджи С.,*** Датта Д. Введение в индийскую философию. М., 1955.
111. ***Чаттопадхьяя Д.,*** История индийской философии. М., 1966.
112. ***Черчилль У.,*** Афоризмы. Харьков, 2012.
113. ***Штельцнер В.,*** Логические проблемы дискуссии.- “Вопросы философии”. 1972, №6.
114. ***Щербатской Ф.И.,*** Избранные труды по буддизму. М., 1988.
115. ***Эрнст О.,*** Слово предоставлено вам. (Практические рекомендации по ведению деловых бесед и переговоров). М., 1988.

116. ***Ярошевский М.Г.,*** Дискуссия как форма научного общения. «Вопросы философии». 1978, № 3.
117. ***Dulek R. E., Filden J. S.,*** Principles of Business Communication. New York: Macmillan, 1990.
118. ***Dulek R. E., Filden J. S. and Hill J. S.,*** International Communication: A Executive Primer. New York: Macmillan, 1990.
119. ***Eemeren van F. H. and Grootendorst R. A.,*** Speech Acts in Argumentative Discussions. A Theoretical Model for Analysis of Discussions Directed Towards Solving Conflicts of Opinion. Foris Publication, 1984.
120. ***Eemeren van F. H, Grootendorst R., Kruiger T.,*** Handbook of Argumentation Theory. Foris Publication, Dordrecht-Holland/ Providence-USA, 1987.
121. ***Fisher R., Uri W.,*** Getting to Yes: Negotiating Agreement without Giving in. New York, 1991.
122. ***Hintikka J. A.,*** Spectrum of Logics of Questioning. In: «Philosophica», Gent, 1985, vol. 35, № 1.
123. ***Hintikka J. A.,*** The Role of Logic in Argumentation. In: «The Monist», January, 1989, vol. 72, № 1.
124. ***Keit A. B.,*** Indian Logic and Atomism. Oxford, 1921.
125. ***McLuhen H. M.,*** The Gutenberg Galaxy. Toronto, 1962.
126. ***Perelman Ch.,*** The New Rhetoric and the Humanities. Dordrecht, 1979.
127. ***Perelman Ch., Olbrechts-Tyteca L.,*** The New Rhetoric. A Treatise on Argumentation. Notre-Dame-London, 1969.
128. ***Sullivan J., Kameda N., Nobu T.,*** Bypassing in Managerial Communication. In: «Business Horizons», 34(1). Tokyo, 1991.
129. ***Toffler A.,*** The Third Wave. New York, 1980.
130. ***Diels H.,*** Die Fragmente der Vorsokratiker. Grechisch und Deutsch. Hrsg. von Kranz W. Bd. 1. Berlin, 1951.
131. ***Schopenhauer A.,*** Handschriftlicher Nachlass. Hrsg. von Ed. Grisebach. Bd. 2. Leipzig [s.a.].

132. ***Schopenhauer A.,*** Sämmtliche Werke in zwolf Bänden. Mit Einleitung von R. Steiner. Bd. 10; 11. Stuttgard: Gotta [s.a.].

Ինտերնետային կայքեր *(դիտումները՝ 29.10.2019 թ.)*

http://www.hist.msu.ru/ER/Etext/Zasulich.htm
http://ancientrome.ru/antlitr/t.htm?a=1267350009
http://www.armenianorthodoxchurch.org/archives/3337;
http://www.armenianorthodoxchurch.org/archives/3413
http://ancientrome.ru/antlitr/t.htm?a=1438015000
http://ancientrome.ru/antlitr/t.htm?a=1271386796#1-109
http://el-vowano.ru/cytaty-frazy/2013-05-15-12-45-34.html
https://www.e-reading.club/bookreader.php/1001858/Sudebnye_rechi-ya_izvestnyh_russkih_yuristov.html

ОВАННИСЯН ОВАННЕС ОНИКОВИЧ
ТЕОРИЯ И ИСКУССТВО ДИСКУССИИ: ФИЛОСОФСКИЙ ТРАКТАТ
Резюме

В работе изложен системный, философский анализ теоретических и практических проблем дискуссии.

Исследуется наследие, сформированное в течение истории философии, касающееся теоретических проблем и практических задач дискуссии. Раскрываются наиболее ценные этапы и эпизоды, важные достижения с точки зрения изучения актуальных проблем.

Дискуссия определяется как форма интеллектуального общения, которой свойственны открытое противостояние и борьба сторон по обсуждаемому вопросу (обсуждаемой проблеме, теме). Исследуется взаимосвязь дискуссии и аргументации, анализируются эти взаимоотношения в контексте соотношения целостной системы и элемента.

Обсуждается ряд вариантов классификации видов интеллектуальной борьбы по вопросам, вносящим расхождение во мнениях. Указываются недостатки распространенного в профессиональной русскоязычной литературе варианта классификации «по словам». Предлагается новый вариант классификации видов дискуссии на **аргументированные и неаргументированные.**

Обосновывается неизбежный, закономерный характер разногласий и дискуссий в процессах познания действительности и коммуникации.

Исследуются возможности и особенности применения метода дискуссии в процессах формирования и решения проблемы, выбора наиболее ценного из предложенных вариантов, проверки-экспертизы аргументированности точек зрения, выявления умственных возможностей, темперамента и характера собеседника, формирования активной жизненной позиции, получения информации, организации пропаганды и рекламы, а также в учебно-воспитательном процессе.

Исследуются логические правила и принципы, гарантирующие эффективность дискуссии. Исследуются важные в этом деле внелогические психологические, этические, когнитивные, языковые, процедурные, эстетические факторы. Анализируется ряд приемов красноречия, которые способствуют повышению эффективности общения и дискуссии.

Классифицируется и исследуется ряд тактических приемов и деструктивных уловк, используемых в процессе дискуссий.

Исследуются и предлагаются методологические способы и основные принципы нейтрализации деструктивных уловок.

HOVHANNISYAN HOVHANNES
THE THEORY AND ART OF DISCUSSION: PHILOSOPHICAL TRACTATE

Summary

The work outlines a systematic, philosophical analysis of theoretical and practical problems of discussion.

The legacy referring theoretical issues and practical problems of discussion formed throughout the history of philosophy is under consideration. Most valuable stages and episodes, significant achievements are revealed from the position of studying topical problems.

Discussion is defined as a form of intellectual interaction characterized by open opposition and struggle of the parties about the issue (problems, topics) under consideration. The research makes a study of interconnection between discussion and argumentation and these interrelations are analyzed in the context of a holistic system and element.

A number of options for classifying forms of intellectual struggle on issues causing disagreement are discussed. The shortcomings of the classification "according to words" widespread in Russian-language professional literature are pointed out. New options of classification of discussions are put forward - argumented and non-argumented.

The inevitable, regular character of disagreements and discussions in the processes of cognition and reality is substantiated.

The book studies opportunities and peculiarities of implementing the method of discussion in the processes of forming and solving problems; choosing the most valuable of the offered options; checking-examining argumentations from the point of view of revealing mental capabilities, temperament and nature of one's interlocutor; forming active position; acquiring information; organizing propaganda and advertising, and also its use in the educational process.

Logical rules and principles guaranteeing effective discussion (debate) are considered. Non-logical – psychological, ethic, cognitive, linguistic, procedural, aesthetic factors, so important for the issue, are

studied. A range of techniques of eloquence, which intensify and promote efficiency of communication and discussions, are analyzed.

Various tactical techniques (allowed tricks) and destructive tricks used in the process of discussion are classified and examined.

Besides, the work studies and offers methodological means and main principles to neutralize destructive tricks.

ՈՒՇԱԳՐԱՎ ՄՏՔԵՐ, ԱՖՈՐԻԶՄՆԵՐ ԲԱՆԱՎԵՃԻ ՄԱՍԻՆ

- «Վեճը ճշմարտության հայրն է»:

- «Վեճերի մեջ ծնվում է ճշմարտությունը, բայց դրանք կարող են նաև սպանել այն»:

Հին հունական իմաստություններ

- «Երբ վեճը եռում է, ճշմարտությունը գոլորշիանում է»:

Ռուսական ասացվածք

- «Պետք է առաջնորդվել փաստարկի՛ ուժով, ոչ թե ուժի փաստարկով, վիճելի հարցերը լուծել փաստարկի՛ իշխանությամբ, ոչ թե իշխանության փաստարկով»:

Գեորգ Բրուտյան

- «Վեճի մեջ լավագույն արդյունքի հասնելու միջոցը դրանից խուսափելն է»:

Դեյլ Քարնեգի

- «Եթե հակառակ կարծիքներ չեն արտահայտվել, ապա ինչի՞ց ընտրել լավագույնը»:

Հերոդոտ

- «Լավ փաստարկները նույնպես պետք է զիջեն լավագույններին»:

Ուիլյամ Շեքսպիր

- «Եթե մարդիկ երկար են վիճում, ապա դա ապացույց է, որ այն ինչի մասին նրանք վիճում են, պարզ չէ հենց իրենց համար»:

Ֆրանսուա Վոլտեր

- «Գտի՛ր, որ վիճաբանության մեջ քո բառերը լինեն մեղմ, իսկ փաստարկները՝ հաստատուն»:

Ջոն Վիլկինս

- «Վիճե՛ք, մոլորվե՛ք, սխալվե՛ք, սակայն, ի սեր Աստծո, խորհրդածե՛ք, և թեկուզ սխալ, բայց՝ ինքնուրույն»:

Գուրոլդ Լեսսինգ

- «Ինչպիսին մարդիկ են, այնպիսին էլ բանավեճն է»:

Կ. Մարքս, Ֆր. Էնգելս

- «Մարդիկ ճանաչվում են բանավեճի ընթացքում և ճանապարհին»:

Ջորջ Հերբերտ

- «Ով վիճելիս վկայակոչում է հեղինակությունների՝ նա կիրառում է ոչ թե իր խելքը, այլ ավելի շուտ հիշողությունը»:

Լեոնարդո դա Վինչի

- «Լավագույն եղանակը որոշելու համար՝ ինչն է ճիշտ և ինչն է սխալ, ոչ թե ուրիշներին դասեր տալն է, այլ զրուցելը, քննարկելն ու վիճելը»:

Ջավահարլալ Նեհրու

- «Վեճերն ավելի շատ ստվերում են ճշմարտությունը, քան նպաստում դրա պարզաբանմանը»:

Լև Տոլստոյ

- «Բանավեճը ճշմարտության մաղն է»:

Ստեֆան Գուցցո

- «Ով որոշել է կյանքում շատ բանի հասնել, չպետք է ժամանակ վատնի անձնական վեճերի վրա»:

Աբրահամ Լինքոլն

- «Մի՛ վիճիր արձագանքի հետ, վերջին խոսքը միևնույն է նրանն է լինելու»:

Ռամոն Գոմես դե լա Սերնա

- «Ստիպել մարդուն լռել, չի նշանակում նրան համոզել»:

Ջոն Մորլի

- «Կյանքն առանց վեճերի ձանձրալի կլիներ: Ամենը, ինչ ապրում է, քննարկումներ է առաջ բերում»:

Չարլզ Ս. Չապլին

- «Կարելի է առարկել միայն ավարտված նախադասությունը»:

Լյուդվիգ Վիտգենշտայն

- «Վիճաբանության մեջ համառությունը և չափից դուրս բորբոքվածությունը հիմարության ամենաճիշտ հատկանիշն է»:

- «Անհնար է ազնիվ ու անկեղծ բանավեճ վարել հիմարի հետ»:

Միշել Մոնտեն

- «Թույլ տու՛ր ազատ արտահայտվել, եթե ուզում ես լսել ճշմարտությունը»:
- «Ավելորդ վեճերի մեջ կորում է ճշմարտությունը»:

Պուբլիլիուս Սիրիուս

- «Երբ որևէ գիտության մեջ չկան հակադիր պատկերացումներ, չկա պայքար, ապա այդ գիտությունը գնում է դեպի գերեզման, գնում է թաղելու իրեն»:

Պյուրը Կապիցա

- «Ավելի լավ է ոչինչ չասել, քան ասել ոչինչ»:

Անատոլի Կոնի

- «Դուք կարող եք վեճի մեջ հաղթել, բայց դրա հետ միասին կորցնել ընկերոջը»:

Թոմաս Քարլայլ

- «Եթե դուք բանավեճի ընթացքում հաղթել եք ընդդիմախոսին, ապա նա վերջում անպայման կհայտարարի. «Ըստ էության՝ երկուսս էլ նույն բանն էինք ասում»»:

Կարոլ Իժիկովսկի

Կես լուրջ, կես կատակ.

- «Վեճերում վերջին խոսքը միշտ կնոջն է պատկանում: Ինչ էլ որ ասես հետո՝ նոր վեճի սկիզբ կդառնա»:

- «Իմաստ չունի վիճել տղամարդկանց հետ. միևնույն է՝ նրանք երբեք ճիշտ չեն»:

Սարի Գաբոր

- «Եթե վիճում ես հիմարի հետ, համոզվի՛ր, որ նա նույն կերպ չի վարվում»:

Օգդեն Նեշ

- «Վեճն այնպիսի երևույթ է, երբ երկու հոգի միաժամանակ ուզում են ասել վերջին խոսքը»:
- «Վեճը մի թնջուկ է, որն ունի երկու կողմ և չունի վերջ»:

Բենջամին Դիզրաելի

- «Ով մշտապես համաձայն է Ձեզ հետ, ամենայն հավանականությամբ ստում է նաև ուրիշներին»:

Ռոբերտ Կուիելլեն

- «Եթե Ձեր ընդդիմախոսն անսպսելիորեն ընդհատեց վեճը, դեռ չի նշանակում, որ Դուք ճիշտ եք: Հնարավոր է՝ նա հասկացավ, որ գործ ունի անհույս հիմարի հետ»:

Հովհաննես Հովհաննիսյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՕՆԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԲԱՆԱՎԵՃԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՎԵՍՏ. ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՔՆՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Լ. Հովհաննիսյան

Տպագրված է «ՄՌԱՎ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Նար-Դոս 1 նրբ., 16 տուն

Ստորագրված է տպագրության՝ 05.12.2019:
Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 17,875:
Տպաքանակը՝ 200:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am

Հովհաննես Օնիկի Հովհաննիսյան
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու (1996), դոցենտ (2000)

1996 թվականից դասավանդում է Երևանի պետական համալսարանում, 2002 թվականից՝ նաև Հայաստանում ֆրանսիական համալսարանում, 2004-2010 թթ.՝ Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանում, 2012 թվականից՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Փիլիսոփայական ընդհանուր դասընթացներից բացի՝ վարում է «Վիճաբանության տեսություն և արվեստ», «Քաղաքական բանավեճ», «Հռետորության հիմունքներ», «Հաղորդակցման տեխնոլոգիաներ», «Փաստարկում և ճարտասանություն» հեղինակային դասընթացները:

Արդյունավետ հաղորդակցման, փաստարկման, բանավեճի ու ճարտասանության հիմնահարցերի վերաբերյալ դասընթացներ է վարում ՀՀ արդարադատության ակադեմիայի, ՀՀ փաստաբանական դպրոցի, Արբիտրների բարձրագույն դպրոցի, Եվրոպայի խորհրդի քաղաքական դասընթացների երևանյան դպրոցի, ՀՀ քաղծառայողների որակավորման բարձրացման և դասախոսների վերապատրաստման դասընթացների ունկնդիրների համար: Այդ թեմաներով երեք հարյուրից ավելի պարապմունքներ է անցկացրել հասարակական և քաղաքական կազմակերպությունների ակտիվի ու առաջնորդների համար:

Մասնակցել է հայաստանյան և միջազգային հարյուր հիսունից ավելի գիտաժողովների, խորհրդաժողովների ու սեմինարների:

Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ տրամաբանություն, բանավեճի տեսություն և արվեստ, ճարտասանություն, իմացաբանություն և մեթոդաբանություն, սոցիալական համակարգեր և փոխակերպումներ, քաղաքացիական հասարակության հիմնախնդիրներ:

Հեղինակ է հինգ տասնյակից ավելի գիտական և հետազոտական աշխատանքների, այդ թվում՝ երեսունհինգ գիտական հոդվածի, վեց գրքի, երեք ուսումնական ձեռնարկի:

Պարգևատրվել է Հայոց փիլիսոփայական ակադեմիայի «Եռամեծ փիլիսոփա Դավիթ Անհաղթ» մեդալով (2007, 2012), Երևանի պետական համալսարանի պատվոգրերով (2009, 2014), Հայաստանում ֆրանսիական համալսարանի շքանշանով (2010), ՀՀ պաշտպանության նախարարության «Հայաստանի զինված ուժեր. 20 տարի» հոբելյանական մեդալով (2012):

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2019
publishing.ysu.am